# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
# ԱՐԻՍՏԱԿԻՍԻ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻՈՅ

ԵՐԵՎԱՆ
1963

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР—
«МАТЕНАДАРАН»

# ПОВЕСТВОВАНИЕ АРИСТАКЭСА ЛАСТИВЕРТЦИ

Текст подготовил и снабдил предисловием
К. Н. ЮЗБАШЯН

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

9(47.925)
Ա-30

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԻՍՏԱԿԻՍԻ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻՈՅ

Աշխատասիրությամբ՝
Կ. Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆԻ

1161
Отделение Общественных Наук Арм. ССР Библиотека

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1963

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

Արիստակես Լաստիվերտցու երկը XI դարի հայոց պատմության կարևորագույն սկզբնաղբյուրն է։ Ընդգրկելով 1000—1071 թթ. դեպքերը, հեղինակը կարևոր և արժանահավատ տեղեկություններ է հաղորդում Հայաստանի քաղաքական պատմության, հայ-բյուզանդական հարաբերությունների, թուրք-սելջուկյան արշավանքների, թոնդրակյան շարժման մասին։ Արիստակես Լաստիվերտցու Պատմության ներկա համեմատական բնագիրը կազմված է Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 9 ձեռագրերի, ինչպես նաև անդրանիկ տպագրության հիման վրա։

Գիրքը նախատեսված է արևելագետների՝ հատկապես հայագետների և բյուզանդագետների համար։

47484

# ԱՌԱՋԱԲԱՆ

Արիստակես Լաստիվերտցու Պատմությունը, որն ընդգրկում է 1000—1071 թթ. դեպքերը, պատկանում է հայոց միջնադարյան գրական լավագույն երկերի թվին։ Այն մեծարժեք է որպես և՛ պատմական սկզբնաղբյուր և՛ ժամանակակից հասարակական մտքի հուշարձան։

Քիչ բան է մեզ հայտնի հեղինակի մասին, այն էլ անուղղակի տվյալներից։ Արիստակեսի մականունը ցույց է տալիս, որ նա Լաստիվերտ գյուղից կամ գյուղաքաղաքից էր. ենթադրում են, որ Լաստիվերտը գտնվել է Արծնի շրջակայքում. հեղինակը Արծնը անվանում է «քաղաքս մեր»։ Լաստիվերտցու պատմությունը գրվել է ԺԱ դարի 70-ական թթ., վերջին էջերը նվիրված են Ռոմանոս Դիոգեն կայսրի պարտությանը Մանազկերտի մոտ (1071), հիշված է նաև Ալփ-Արսլանի մահը, որը տեղի ունեցավ 1072 թ.։ Հեղինակը պատկառելի տարիք ուներ, երբ ձեռնամուխ եղավ այդ գործին։ Նա որպես ականատես հիշում է անգամ ԺԱ դարի քսանական թվականների սկզբին Բարսեղ Բուլղարասպանի դեմ կազմակերպված ապստամբությունը։ Եթե ավելացնենք, որ Արիստակես Լաստիվերտցուն են վերագրում նաև որոշ դավանաբանական երկեր, ապա սպառված կլինեն այն տեղեկությունները, որ ունենք հեղինակի կյանքի մասին։

ԺԱ դարում քաղաքական խոշորագույն իրադարձություններ ցնցեցին Հայաստանը։ Բյուզանդական կայսրությունը և սելջուկները սպառնում էին հայոց աշխարհին։ Արիստակեսը նկարագրում է, թե ինչպես բյուզանդացիք թափանցում են Անդրկովկաս, զենքի և դիվանագիտության միջոցով իրենց ենթարկում տեղական իշխաններին։ Սակայն Լաստիվերտցին կարծես չի ուզում տեսնել արևմուտքից սպառնացող վտանգը և միայն, երբ հույները գրավում են քաղաքամայր Անին՝ անեծք է թափում Կոստանդին Մոնոմախի գլխին։

Արիստակեսի համար ամենաատելի թշնամիները սելջուկներն են։ Նրանք կործանեցին մայր երկիրը, ավերեցին հոյակապ քաղաքները։ Հեղինակը իր հոգու զորությամբ ըմբոստանում է սելջուկների դեմ և նրանց ուղղում սաստիկ զայրույթը։

Արիստակես Լաստիվերտցին ժամանակակից էր 1071 թ. դեպքերին, երբ թուրքերը գլխովին ջարդեցին բյուզանդական զորքերին և գերեցին կայսրին։ Փրկություն ոչ մի հույս չէր տեսնում նա և այստեղից է բխում նրա հոռետեսությունը, մի տրամադրություն, որն արտահայտվում է առաջին իսկ տողերից՝

«Ժամանեցին մեզ աւուրք չարչարանաց,
Եւ գտին զմեզ նեղութիւնք անհնարինք,
Քանզի լցեալ գնդաւ չափ մեղաց մերոց
Եւ ել աղաղակ մեր առաջի Աստուծոյ»:

Լաստիվերցին ապրում էր մի ժամանակ, երբ Հայաստանում օրըստօրե զարգանում էր քաղաքային կյանքը. նոր բովանդակություն էին ստանում քաղաքները, «միջնադարի ամենավառ ծաղիկները», որոնք աստիճանաբար դառնում են առևտրի և արհեստագործության խոշոր կենտրոններ: Քաղաքային վերնախավը ձգտում է կլանել մանր սեփականատերերին, ծնվում են դասակարգային նոր հակասություններ՝ արդեն քաղաքում: Դասակարգային պայքարը «հզորների» և «աղքատների» միջև զարգանում ու սրվում է, և, իբրև այդ պայքարի ամենացայտուն արտահայտություն, առաջանում են աղանդավորական շարժումները: Այդ երևույթները սարսափ են ներշնչում հեղինակին, որի սիրտն արդեն խոցված էր դրսից եկող ցավերով:

Արիստակեսը հոգևորական էր ոչ միայն զբաղմունքով, այլ ողջ էությամբ: Նա իր ժամանակի հավատարիմ զավակն էր և Հայաստանի վրայով անցնող փոթորիկը բացատրում էր միայն մարդու մեղքերով: Սակայն եթե հնում չարիքների պատճառը կապվում էր անհատի մեղքի հետ, ապա Լաստիվերցու մոտ մեղավորը ազգն է, որը և պետք է ապաշխարի իր փրկության համար: Միանգամայն իրավացի է Մանուկ Աբեղյանը, երբ ասում է, թե Արիստակեսի մոտ «ապաշխարությունը քարոզվում է տանջանքից ազատվելու և ազգի փրկության համար, որ այս աշխարհում պիտի լինի, այն էլ ոչ թե մարմինը մեռցնելով, այլ բարքերի մաքրությամբ, կյանքի բարոյական կարգավորությամբ»: Թերևս ավելի, քան ժամանակակից մի այլ հեղինակ, Արիստակեսը մեջբերումներ է անում Աստվածաշնչից, շրջասության ենթարկում մեծ ու փոքր հատվածներ սաղմոսից և մարգարեների գրքերից, սակայն նրա սեփական մտքերը չեն կորչում և կազմում են հատուկ գաղափարախոսական ամբողջություն, որի ետև կանգնած է մի ստվար հասարակական շերտ:

Արիստակես Լաստիվերցու երկը բաղկացած է պատմական մի շարք ակնարկներից, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է ինքնամփոփ մի թեմայի: Մեծագույն մասը հատկացված է սելջուկյան արշավանքներին՝ դեպի Հայաստան: Նա առաջին հայ հեղինակն է, որ գրում է սելջուկների մասին և որ ամենակարևորն է՝ գրում է իբրև ականատես: Այդ առումով նրա աշխատության համապատասխան էջերը ունեն աղբյուրագիտական մեծ արժեք: Պատմությունը ունի ժամանակագրական կուռ ատաղձ:

Լաստիվերցու օրոք հայոց միջնադարյան քաղաքը ապրում էր տնտեսական բուռն վերելք: Հեղինակն անդրադառնում է այդ նոր երևույթներին, ակամայից տեղեկություններ հաղորդում, որոնք հնարավորություն են տալիս (նյութական մշակույթի տվյալների հետ միասին) բացահայտելու Անիի, Արծնի և այլ քաղաքների կյանքը:

Պատմության երկու գլուխը նվիրված է Թոնդրակյան շարժմանը: Հոգևորական դասի ներկայացուցիչ Արիստակեսը ատելությամբ է լցված «հերձվածողների» դեմ, վարկաբեկիչ ածականներով է որակում աղանդավորների բարքերը: Սակայն այդ էջերի ճանաչողական արժեքը շատ բարձր է: Նա ակամայից ցույց է տալիս, թե ինչպիսի մեծ տարածում ստացավ Թոնդրակյան ուսմունքը, որին, բացի ժողովրդական լայն խավերից, հարում էին նաև արտոնյալ դասի որոշ ներկայացուցիչներ: Տարված բանավեճով, նա ակամայից հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Թոնդրակեցիների որոշ սովորությունների մասին, իսկ ԻԳ գլխի վերջին պարբերությունը պարզունակ կերպով ներկայացնում է Թոնդրակյան գաղափարախոսության հիմնական կետերը, որոնք կասկած չեն թողնում այդ շարժման սոցիալական նպատակասլացության վերաբերյալ. «Զեկեղեցի և զեկեղեցւոյ կարգաւորութիւն բնաւ ոչ ընդունէին. ոչ զմկրտութիւնն և ոչ զմեծ և զսքանչելի խորհուրդ պատարագին, ոչ զխաչ և ոչ զկարգաւորութիւն պահոց»:



Պետք է ասել, վերջապես, որ Արիստակեսի երկը ոչ միայն հայոց պատմություն է, այլև բյուզանդական, ավելի շուտ՝ կայսերական: Առանձին գլուխներ նվիրված են բյուզանդական կայսրության պատմությանը՝ «Թագաւորութիւն Կոստանդեայ», «Թէ որպէս թագաւորեաց Ռոմանոսն», «Թագաւորութիւն Թէոդորին, որ թարգմանի Աստուածատուր» և այլն: Այդ գլուխները մասամբ համընկնում են բյուզանդական պատմիչների շարադրանքին, մասամբ էլ նոր տվյալներ են հաղորդում բյուզանդական կյանքի մասին: Լաստիվերցին քաջ ծանոթ էր բյուզանդական առօրյային, վարչական կառուցվածքին, նա բազմիցս օգտագործում է առանձին վարչական տերմիններ՝ մերթ հայացնելով, մերթ պահպանելով հունարեն ձևը: Ոչ մի հայ հեղինակ այդքան լավատեղյակ չի եղել բյուզանդական կյանքին ու պատմությանը, որքան Արիստակես Լաստիվերցին:

Վերը նշված հանգամանքներն են, որ թույլ են տալիս Արիստակես Լաստիվերցու աշխատությունը դասելու հայոց ամենաարժեքավոր պատմագրական երկերի շարքում:

* * *

Արիստակես Լաստիվերցու պատմական երկը, որի ամբողջական խորագիրն է՝ «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցւոյ վարդապետի վասն անցիցն անցելոց ի յայլասեռ ազգաց որ շուրջ զմեւք են» առաջին անգամ լույս են ընծայել Վենետիկի մխիթարյանները (Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերցւոյ, Վենետիկ, տպարան ս. Ղազարու, 1844): Այդ բնագիրը երկու անգամ վերահրատարակվել է՝ 1901 թ. Վենետիկում և 1912 թ. Թիֆլիսում, «Ղուկասյան Մատենադարան» շարքով: Անդրանիկ հրատարակությունից են կատարվել աշխարհաբար[1] և ֆրանսերեն[2] թարգմանությունները:

Առաջին տպագրության «Զեկուցման» մեջ հրատարակիչները հայտնում են. «Ի բաղդատութեան օրինակացն էին ի ձեռս մեր օրինակք չորք անթուականք նոտրագիրք, գործք՝ որպէս յայտնի ցուցանի լեզուանիշ դարձուածոյ

[1] Արիստակէս Լաստիվերցի վարդապետի հայոց պատմութիւնք. Թարգմանեց Միհրան քահանայ Տէր-Պետրոսեանց, Ալեքսանդրապոլ, 1893:

[2] Histoire d'Arménie comprenant la fin du royaume d'Ani et le commencement de l'invasion des seldjoukides, par Arisdaguès de Lasdiverd, traduite pour la première fois de l'arménien sur l'édition des R.R.P.P. Mèkhitaristes de Saint-Lazare et accompagnée de notes par M. Evariste Prud'homme, Paris, 1864.

գրչացն. ի վերջ ութևտասներորդ դարուն գրեալք, և կամ ի սկիզբն առաջիկայ իննևտասներորդին»: Այդ չորս ձեռագրից բացի տպագրության ժամանակ հրատարակիչները ձեռքի տակ են ունեցել մի այլ գրչագիր, արտագրված ըստ իրենց ասածի 1825 թ. և «յոյժ նուազ զանազանեալ յայլոցն մասնկամբք և տառիւք ևեթ»: Այդ վերջին ձեռագիրը նշում է իր ցուցակում Ֆ. Մակլերը[1]:

Առաջին տպագրությունը պատրաստվել է մխիթարյաններին հատուկ եղանակով. տարընթերցվածքները բերված են ոչ թե ամբողջությամբ, այլ ընտրովի. հրատարակիչները չեն նշում, թե որ ձեռագրից է գալիս այս կամ այն ընթերցումը, այլ բավարարվում են անորոշ վկայակոչումներով. մի օրինակ, երկու օրինակ, այլ օրինակք, երբեմն ևս այսպես ունեն և այլն. Ձեռագրերի նկարագրությունը իսպառ բացակայում է: Պարզ է, որ այդպիսի հրատարակությունը ժամանակակից առումով քննական համարվել չի կարող: Այնուամենայնիվ, առաջին հրատարակությունը ընդհանուր առմամբ ճիշտ է ներկայացրել Արիստակես Լաստիվերտցու բնագիրը և իր ժամանակի համար պետք է գնահատել որպես հաջողված մի գործ[2]:

Անդրանիկ հրատարակության «Ձեռնարկման» մեջ կարդում ենք. «Ոճ մատենագրիս է քաջ հայկաբան. սակայն են ի նմա դարձուածք ինչ շարամանութեան թերի յաջողակութենէ. թէպէտ այդ մարթ է պատահել բազում մասամբք յանհմտութենէ օրինակագրաց»: Որոշ անհարթություններ, որոնք երևան են գալիս անգամ ներքին քննության ընթացքում, ներկա հրատարակության մեջ վերացված են: Սակայն պետք է ասել, որ լեզվի սայթաքումները չի կարելի ամբողջությամբ վերագրել գրիչներին. անգամ այնպիսի հռչակավոր ոճաբան, ինչպիսին էր մեր հեղինակը, շատ անգամ հեռացել է դասական գրաբարից:

Ներկա հրատարակությունը ներկայացնում է Արիստակես Լաստիվերտցու Պատմության համեմատական բնագիրը, կազմված 10 գրչագիր օրինակի, ինչպես նաև վենետիկյան տպագրության և նրա տարընթերցվածքների ուսումնասիրության հիման վրա:

Օգտագործված են հետևյալ ձեռագրերը.

A — Մաշտոցի անվան Մատենադարան, հայերեն ձեռագրաց հավաքածու, № 2865 (Գևորգյան շարք, № 249), թերթեր՝ 312, մեծություն՝ 33,5 × 25, նյութ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ տախտակ դրոշմազարդ, ունի մագաղաթյա երկաթագիր պահպանակներ, գրություն՝ երկսյուն, տողեր՝ 28—30, բոլորագիր, տարբեր գրչությամբ: Պարունակում է Մովսես Խորենացու Պատմությունը (4ա — 132ա), Ասողիկի Պատմությունը (137ա — 242ա) և Արիստակես Լաստիվերտցու Պատմությունը (242բ — 312բ): Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատությամբ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, էջ ԺԹ — ԻԱ[3]: Ձեռագրի

[1] F. Macler. Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale. Paris, 1908, № 224, p. 120. Ինչպես նշում է ցուցակի հեղինակը, ձեռագիրը արտագրվել է 1824 թ. սեպտեմբերի 1-ին և ոչ թե 1825 թ.:

[2] Պետք է չմոռանալ, որ նախքան բնագրի հրատարակումը, Արիստակես Լաստիվերտցու Պատմության բառացանկը պատշաճ ձևով օգտագործվել է «Նոր հայկազյան բառագրքում»:

[3] Այստեղ սխալմամբ ասված է, որ սույն՝ Գևորգյան շարքի № 249 ձեռագիրը Կարենյանցի ցուցակում կրում է 242 համարը, մինչդեռ Կարենյանցի ցուցակում այդ գրչագիրը առհասարակ բացակայում է, իսկ № 242-ին համապատասխանում է ոչ թե Գևորգյան շարքի № 249, այլ «հին» 249-ը («հին» կոչված համարները փակցված են եղել Կարենյանցի ցուցակում տեղ գտած համարների վրա):



մասին տե՛ս նաև Կ. Յուզբաշյան, «Արիստակես Լաստիվերտցու Պատմության մեկ տարընթերցվածքի մասին՝ վաղնջք և ոչ փաղնկք». Բանբեր Մատենադարանի, № 4, 1958, էջ 78:

Հիշատակարաններից պարզվում է, որ վերոհիշյալ մատյանը երկու անգամ նորոգվել է՝ 1567 թ. Իգնատիոսի (135ա — 136ա) և 1684 թ. գրիչ Դավիթ Ճնճղուկի և նրա որդի Ստեփանոսի ձեռքով (136բ): Արիստակեսի Պատմությունն ընդգրկող պրակները ենթարկվել են միայն մասնակի նորոգման՝ մնացած տեղերին թուղթ է փակցվել և գրությունը վերականգնվել:

Սույն ձեռագրում պահպանվել է նաև մի այլ հիշատակարան, որը տեղադրված է Ասողիկի Պատմությունից անմիջապես հետո, այսինքն հաջորդում է հեղինակի հիշատակարանին: Ստորև բերում ենք այդ հիշատակարանի կարևոր մասը.

«... Ընդ նմին և ես յետինս յամենեսեան և քան զնուաս յանցաւորս և անթիւ մեղաւք ծանրաբեռնեալս և արժանիս բազում մահուց և ոչ մի կենաց խաւարամածս ոգւով Յոհան գրիչ աղաչեմ յիշել յաղաւթս առաջի Քրիստոսի զիս և զծնաւղսն իմ և զեղբայրն իմ զԲամբկոցն որ յուսով սատարեաց ինձ ի գործանութիւնս, որպէս զի աղաւթիւք ձեր գտցուք ողորմութիւն ի Քրիստոսէ, և տէր տացէ զարիտուրն ձեզ բազում, ամէն»:

Այստեղ հիշատակված Յոհան գրիչը՝ սույն ձեռագրի ընդօրինակողն է:

Մի հիշատակագրություն էլ պահպանվել է Արիստակեսի Պատմության վերջին՝ ԻԵ գլխից հետո.

«Քրիստոս Աստուած որ հատուցանես ամենեցուն զվարձս, հատո Բամբկոցին հարիւրապատիկ և հազարապատիկ, զի ի քէն եմք եղեալ և քո ողորմութեանդ սպասեալ մնամք: Մի՛ ճշմարտութեամբ քո քննեսցուք, այլ գթութեամբ քաւեսցուք և քեզ փառս վեր առաքեսցուք յաւիտեանս յ<աւիտենից>» (թ. 309ա):

Գրչագիրը արտագրվել է նուրբ ձեռքով, առանց տառասխալների: Որոշ տեղերում կան ուղղումներ և լրացումներ, որոնք, թվում է, պատկանում են իրեն՝ գրչին, ուստի համեմատության ժամանակ հատուկ չեն նշվել: Ղ հնչյունը շատ տեղերում արտահայտված է դ տառով՝ այդ, Իսրայէդ և այլն: Գրության մեջ պահպանված են եւղ, կորեւն, եղջեւր, յարեւելս արխայիկ ձևերը: Աւ երկբարբառը երբեք օ-ով չի արտահայտվում՝ զաւր, աւրէն, պաշտաւն և այլն, բացառությամբ մեկ տեղի (290բ), որը նորոգված է: Բայերի անցյալ անկատարները ունեն եի, եիր վերջավորությունները:

Նկատի ունենալով այդ հանգամանքները և հատկապես գրության ձևը, կարելի է համոզված ասել, որ ձեռագիրը ԺԳ, ամենաուշը ԺԴ դարից է[1] և հանդիսանում է, այսպիսով, Պատմության մեզ հասած հնագույն օրինակը:

Գլուխները համարակալված չեն: ԺԱ գլուխը անմիջապես հաջորդում է Ժ-ին, սակայն Ձ նշանը, որը դրված է «Ի սոյն ամս բացաւ դուռն բար-

[1] Նույն կարծիքի են Խորենացու հրատարակիչները:

կութեան...» բառերի մոտ (ներկա հրատ. էջ 65. 4) ակնարկում է, կարծես, բացակայող վերնագրի մասին։

B — Մատենադարան, № 3160 (Գևորգյան շարք, № 1035), թերթեր՝ 312, մեծություն՝ 22×16, նյութ՝ մագաղաթ, կազմ՝ կաշեպատ տախտակ դրոշմազարդ, գրություն՝ երկսյուն, տող՝ 27, բոլորագիր։ Պարունակում է Մովսես Խորենացու Պատմությունը (4ա—133ա), Ասողիկի Պատմությունը (133բ—221բ), Արիստակես Լաստիվերցու Պատմությունը (222ա—276ա) և Անանիա Շիրակացու Աշխարհացույցը [«Մովսէսի Խորենացւոյ ասացեալ է երկրաչափ յաղագս աշխարհագրութեան տիեզերաց»] (277բ—286ա)։ Ձեռագրի մասին տես՝ Н. Марр. Из летней поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей. „Записки Восточного отделения Императорского Русского Археологического общества", т. V, вып. II—IV, 1891, стр. 213—214 և «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ ԺԹ։

Ձեռագիրը ընդօրինակվել է Սարգիս արքեպիսկոպոս Սանահնեցու համար Ներսես գրչի ձեռքով, Սանահնի վանքում (հիշատակարանները հրատարակված են Մառի մոտ, ինչպես նաև Մ. Խորենացու Պատմության առաջաբանում)։ Ինչպես ցույց է տալիս Ն. Մառը, ձեռագիրը արտագրվել է ԺԷ դարի առաջին կեսում[1]։ Ասողիկի պատմության վերջում պահպանվել է մի հիշատակարան ևս, որը հար և նման է նախորդ ձեռագրի համապատասխան հիշատակարանին, վերջում միայն ավելացված է «...զՆերսես գրիչ որ չեմ յիշելոյ աղաչեմ յիշել աղօթս առաջի Քրիստոսի և զծնօղն իմ տէր Ազարիայ քահանայն, որպէս գի աղօթիւք ձեր գտցուք ողորմութիւն ի Քրիստոսէ և տէր տացէ զարիւրն ձեզ բազումս, ամէն» (թ. 221բ)։ Ընդօրինակությունը բազմասխալ է, հաճախ սղված են առանձին տառեր և վանկեր։ Գլուխները համարակալված չեն։ ԺԱ գլխի վերնագիրը բացակայում է։

C — Մատենադարան, № 3502 (Գևորգյան շարք, № 248), թերթեր՝ 443 (թերթակալված է 444, սակայն 287 թերթահամարը պակաս է), մեծություն՝ 18,5×12,5, նյութ՝ թուղթ, կազմ կաշեպատ տախտակ դրոշմազարդ, ունի մագաղաթյա երկաթագիր պահպանակներ, գրություն՝ միասյուն, տողեր 23, նոտրագիր։ Գրչագիրը պարունակում է Մովսես Խորենացու Պատմությունը (1ա—201ա), Անանիա Շիրակացու Աշխարհացույցը (202ա—220բ), Ասողիկի Պատմությունը (առանց վերնագրի, 221ա—353ա) և Արիստակես Լաստիվերցու Պատմությունը (355ա—442բ), որին նախորդում է գլխացանկ (354ա—354բ)։

Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ ԺԸ։

«Աշխարհացույց»-ից հետո գալիս է գրչի մի հիշատակարան, ուր ասված է՝ «Գրեցաւ ի թուականիս հայոց հազար հարիւր և եօթն (=1658) ձեռամբ յոգնամեղ եւ սուտանուն Գրիգորի...»։ Ասողիկի Պատմությունից հետո գալիս է այն հիշատակարանը, որն ընդհանուր էր A և B ձեռագրերի

[1] Н. Марр. Из летней поездки в Армению. Записки Восточного отделения, т. VI, вып. I—IV, 1892, стр. 179.

[2] Այստեղ ևս սխալմամբ նշված է, որ Կարենյանցի ցուցակում այդ գրչագիրը նկարագրված է 241 համարի տակ, մինչդեռ Կարենյանցի № 241-ին համապատասխանում է «հին» 248-ը։



համար, որը և շարունակվում է «խաւարամածս ոգւով Գրիգոր գրիչ, որ չեմ յիշելոյ, աղաչեմ յիշել յաղօթս առաջի Քրիստոսի զիս և զծնօղսն իմ զՄուրատն և զԽանԲէկին և զեղբայրն իմ զԿարապետն և զՄարգարէն, որ փոխեցան առ Քրիստոս, որպէս գի աղօթիւք ձեր գտցուք ողորմութիւն ի Քրիստոսէ։ Եւ տէր տացէ զարիւուր ձեզ բազումս ամենէն» (354ա)։

Գրչագրի վերջում կա մի հիշատակարան ևս, չափածո, որի կարևոր մասը հրատարակված է՝ «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ ԺԸ։ Այստեղից պարզվում է, որ Գրիգորը ավարտել է ընդօրինակությունը (որը սկսել էր, ինչպես պարզվեց առաջին հիշատակարանից, 1658 թ.) «ի ծննդենէ մերոյ փրկչին ՌՈԿ և եռին», այսինքն 1663 թ.։ Արտագրության վայրը Երևանն է։

Ինչպես գլխացանկում, այնպես էլ բնագրում ԺԱ գլխի վերնագիրը բացակայում է։ Բնագիրն ունի աննշան ուղղումներ, որոնք կատարվել են այլ ձեռքով, այդ ուղղումները նշված են փոքրատառ C-ով։

D — Մատենադարան, № 3070 (Գևորգյան շարք, № 241), թերթեր՝ 438, մեծություն՝ 20×15,3, նյութ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ տախտակ դրոշմազարդ, ունի մագաղաթյա երկաթագիր պահպանակներ, գրություն՝ երկսյուն, տողեր՝ 28, բոլորագիր (վերջին տվյալները վերաբերում են միայն Արիստակես Լաստիվերցու բնագրին)։ Պարունակում է Հովհան Մամիկոնյանի Պատմությունը (3ա—46ա), Ասողիկի Պատմությունը (52բ—158բ), Արիստակես Լաստիվերցու Պատմությունը (159ա—225բ), Ղևոնդի Պատմությունը (239բ—305բ), Ջուանշերի Վրաց Պատմությունը (306ա—314բ) և մի շարք այլ երկեր։

Գրչագրի նկարագրությունը տե՛ս «Յովհան Մամիկոնեան. Պատմութիւն Տարօնոյ», աշխատությամբ և առաջաբանով պատմական գիտությունների թեկնածու Ա. Աբրահամյանի. Երևան, 1941, էջ XVII։ Ի. Աբուլաձե. «Քարթլիս Ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը». Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետին կից Պետական Ձեռագրատուն (Մատենադարան), «Գիտական նյութերի ժողովածու», № 1, Երևան, 1941, էջ 33։ «Քարթլիս Ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը, ուսումնասիրությամբ և բառգրքով լույս ընծայեց Իլիա Աբուլաձեն, Թբիլիսի, 1953, էջ 05—06 (վրացերեն)։ Այդ ձեռագրի Վրաց պատմությանը նվիրված հատվածից ԺԹ դարում կատարվել է մի քանի ընդօրինակություն. այդ կապակցությամբ բազմիցս նշվել է, որ սույն գրչագիրը պատկանել է Կարինի, ապա Թիֆլիսի առաջնորդ Կարապետ Բագրատունուն[1]։

Ձեռագիրը կազմված է տարբեր գրիչների ընդօրինակած մասերից։ 3—50 թերթերն ընդօրինակել է Դավիթ Ճընճղուկը 1669 թ. (48ա), ապա գալիս են Գրիգոր գրչի պրակները, որոնք ընդգրկում են 51—372 թերթերը (ուրեմն և Արիստակես Լաստիվերցու երկը)։ Այդ մասի գրչությունը քիչ տարբեր է, բայց պատկանում է, անկասկած, մի մարդու։ Ղևոնդի Պատմության վերջում պահպանված հիշատակարանը՝ «... որ և ցանկացող եղեալ

[1] Տե՛ս M. Brosset. Additions et éclairissements à l'histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'en 1469 de J.—C. St. Pétersbourg, 1851, p. 61, note 2. Н. Марр. Из летней поездки в Армению. Записки Восточного отделения, т. V, вып. II—IV, 1891, стр. 226 Ի. Աբուլաձե, «Քարթլիս Ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», էջ 31։

սորին տէր Համազասպ ի պատուաւոր յազգէն Մամիկոնեանց, ի հայալ արգեանս եւ հրաման ծրել փծուն գրչի Սարգսի...» պատկանում է, անշուշտ, օրինակին:

Բուն գրչի անունը հիշված է երկու տեղում. նախ Առաքելի Պատմությանը հաջորդող հիշատակարանում, որի համապատասխան տեղում հիշվում է Գրիգոր գրիչը (159ա, Գրքը հապավված ձևով), ապա 365բ թերթում՝ «Գրեցաւ սակաւ բանքս ի քաղաքս Վան, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի ՌՃԻԳ թվինն, ձեռամբ անարժան Գրիգոր երիցու...»:

Այսպիսով, երկրորդ մասը ընդօրինակվել է Գրիգոր երեցի ձեռքով, 1674 թ. Վանում: Այնուհետև գալիս է Վարդան Բաղիշեցու ընդօրինակած հատվածը (թ.թ. 373—391, հիշատակարան 391բ) և ձեռագրի վերջին մասը, որը կազմված է առնվազն 3 անանուն գրիչների կողմից ընդօրինակված թերթերից և պրակներից:

Արիստակես Լաստիվերտցու աշխատությունը գլխահամարներ չունի, ԺԱ գլխի վերնագիրը բացակայում է: Բնագիրը ունի բազմաթիվ ուղղումներ, որոնք կատարված են այլ ձեռքով: Պահպանվել է նաև ուղղողի անունը՝ Յոհան: Այն մնացել է 159ա էջի հիշատակարանում, ուր «Գրիգոր» անունը ջնջված է և վերևից ավելացված (նույն գրչությամբ, ինչ որ և այլ ուղղումները)՝ «Յոհան»: Այդ ուղղումները տարընթերցվածքներում նշված են փոքրատառ d-ով:

E — Մատենադարան, № 1482 («հին» 1661, Կարենյանց ցուցակ № 1619), թերթեր՝ 558, մեծություն՝ 31 × 23, նյութ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ տախտակ դրոշմազարդ, գրություն՝ երկսյուն, տողեր՝ 41, նոտրագիր, պարունակում է մի շարք պատմագրական երկեր: Նկարագրված է՝ «Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն», աշխատասիրությամբ Մեսրոպ վ. Տեր-Մովսեսյան, Վաղարշապատ, 1897, էջ ԻԵ և ԻԹ. Գալուստ Տեր-Մկրտչյան. Փավստոսի ձեռագրերը. «Հանդէս հայագիտութեան — Zeitschrift für armenische Philologie». Bd. II, Heft IV, 1904, ss. 269—270. «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատությամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանայանց, Տփղիս, էջ ԺԵ—ԺԶ. «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», էջ ԻԱ—ԻԲ. «Եղիշէի վասն Վարդանայ և հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան», Երևան, 1957, էջ XXXVIII—XL:

Արիստակեսի Պատմության վերջին էջում կա մի հիշատակարան. «Ով հայր սուրբք, Նարեկ վարդապետն զքահանայքն որ մատնեաց ի ձեռն Ղափլան փաշային՝ ես փախստական և անճարակ տեղի նստեալ գրեցի զայս տետրս. թվական էր ՌՃԻԷ փետրվարի ամսոյն ԺԶ, օրն շաբաթ» (111ա):

Այսպիսով, Արիստակես Լաստիվերտցու Պատմության մասը ընդօրինակվել է 1678 թ., մինչդեռ մյուս մասերը արտագրվել են ավելի շուտ, 1676 թ. (365ա): Մասնակցող գրիչներից հայտնի են՝ Գրիգոր քարտուղարը (365ա) և Թուման (442ա և ոչ թե 441բ, ինչպես սխալմամբ նշել են Ագաթանգեղոսի և Մ. Խորենացու հրատարակիչները). ստացողն է Մինաս բարունին կամ վարդապետը (442ա և 517բ): Այս ձեռագրում ևս պահպանվել է նախորդ գրչագրերում Առաքելից հետո ընդօրինակված հիշատակարանի սկիզբը, բայց որում բուն հեղինակի՝ Առաքելի հիշատակարանը նշված է ԽԹ համարով, իսկ գրչինը՝ Ծ-ով (89բ):



ԺԱ գլխի վերնագիրը բացակայում է, այդ գլուխը կազմում է Ժ գլխի անմիջական շարունակությունը: Հետին ուղղումները տարընթերցվածքներում նշված են փոքրատառ e-ով:

F — Մատենադարան, № 4584, ժամանակին պատկանել է Կարապետ Եզյանին, գրչագրից օգտվել են Ստ. Մալխասյանցը և Մեսրոպ Տեր-Մովսեսյանը: Թերթեր՝ 389, մեծություն՝ 27,5 × 20, նյութ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ տախտակ դրոշմազարդ, գրություն՝ երկսյուն, տողեր՝ 55, նոտրագիր: Պարունակում է մի շարք պատմագրական երկեր: Նկարագրված է՝ «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական» (աշխատությամբ Ստ. Մալխասյանց), Ս. Պետերբուրգ, 1885, էջ ԼԱ—ԼԹ. Գալուստ Տեր-Մկրտչյան. Փավստոսի ձեռագրերը, էջ 270. «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», էջ ԻԵ—ԻԶ, «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ ԻԳ, «Յովհան Մամիկոնեան. Պատմութիւն Տարօնոյ», էջ XVII, «Եղիշէի վասն Վարդանայ և հայոց պատերազմին», էջ XL—XLII: Բազմաթիվ հիշատակարաններից միայն մեկում են հիշված արտագրության վայրը և ժամանակը՝ «Գրեցաւ ձեռամբ Աբրահամ անարժանի ի Տիգրան<ակերտ> քաղաքի ի մատրանին սուրբ Սարգսի ՌՃԺԷ թվականին...» (73բ, Արիստակես Լաստիվերտցու Պատմության ԻԵ գլխից անմիջապես հետո): Ձեռագիրը, այսպիսով, արտագրվել է 1668 թ.: Ինչպես և նախորդ ձեռագրերում, ԺԱ գլխի վերնագիրը բացակայում է: Բնագիրն ունի որոշ ուղղումներ, նույն գրչությամբ պահպանվել է նաև մի հիշատակարան, ուր ասված է. «... Ողորմեաց անարժան գծողիս» (128ա): Ուղղումները նշված են փոքրատառ f-ով:

G — Մատենադարան, № 2796 (Գևորգյան շարք, № 625), թերթեր՝ 70, ունի նաև գրչի էջակալում՝ 140, մեծություն՝ 22,8 × 16,7, նյութ՝ թուղթ, կազմ՝ ստվարաթուղթ, գրություն՝ միասյուն, տողեր՝ 23, նոտրագիր: Պարունակում է միայն Արիստակես Լաստիվերտցու աշխատությունը: Ունի մի հիշատակարան միայն, ուշ շրջանից՝ «Ն. Յովհաննէս վարդապետ Գրիգորեան, առաջնորդ տեղապահ հայոց Պուլղարիոյ. յունվար 27, 1882, ի Ռուսճուք» (1բ, հապավումները բացված են): Մեսրոպ Տեր-Մովսեսյանի ձեռքով նշված է՝ «ԺԹ դ. Մ. եպս.» թվում է, որ կարող է լինել նաև ԺԸ դարի: Ունի գլխահամարներ՝ («գլ. Ա», «գլ. ԺԶ» են), 70ա—բ թերթում ունի գլխացանկ: Առաջին գլուխը կոչվում է և «Եւ եղև յետ մահուան Դաւթի Կիւրապաղատի» բառերից առաջ վերնագիրը կրկնված է՝ «Անցք ընդ աշխարհս հայոց. Գլ. Ա» (Ներկա հրատ., էջ 3):

H — Մատենադարան, № 1895 («հին» 1692, Կարենյանց ցուցակ № 1650), թերթեր՝ 72, մեծություն՝ 20 × 14,8, նյութ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ ստվարաթուղթ, գրություն՝ միասյուն, տողեր՝ 24, նոտրագիր: Պարունակում է միայն Արիստակես Լաստիվերտցու երկը: Հիշատակարաններ չունի, միայն Մեսրոպ Տեր-Մովսեսյանի ձեռքով նշված է «ԺԹ դ. Մ. եպս.»: Ունի գլխահամարներ՝ «գլուխ Ժ», «գլուխ ԺԵ» և այլն: «Եւ եղև յետ մահուան Դաւթի Կիւրապաղատի» բառերից առաջ, այլ գրչությամբ՝ «Յաղագս գոյատեան Վասլի կայսեր ի Հայս: Գլուխ Ա»: Ունի բազմաթիվ ուղղումներ, որոնք գալիս են համեմատությունից այլ ձեռագրերի հետ: Այսպես, լուսանցքում «ոմանք [վճար]մանէ» (4ա), «յայլս զօր յանձն» (12բ) և այլն: Այդ ուղղումները նշված են փոքրատառ h-ով:

I — Մատենադարան, № 6457 (Լազարյան ճեմարանի № 5, փակցված է

նաև մի այլ պիտակ Cod. Armen. Dom. Cultur. Armen. (Lazar. Inst.) 38. առաջին թերթին նախորդող չհամարակալված թերթի վրա գրանցված է նաև՝ «№ 15. ի գրեանց գրատան երկու եղբարց Աւետիքայ և Յամբարձումայ Էնֆիէճեանց». թերթեր՝ 150, մեծություն՝ 21,6 × 16, նյութ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ ստվարաթուղթ, գրություն՝ միասյուն, տողեր՝ 16, 18, 24, շղագիր: Պարունակում է միայն Արիստակես Լաստիվերցու Պատմությունը: Տիտղոսաթերթի վրա գրված է՝ «Գաղափարեաց ի հին ձեռագրէ գրեցելոյ ի թվին հայոց ՈԿԳ (1214) զայս պատմութիւն ի վայելս անձին իւրոյ Յովհաննէս Յարութիւնեան Երզնկեանց. Հին ձեռագիրն գտաւ յայլին Զանէրլի, պահարանի կալից վանացն ի 1827 ամի, ի Հաղբատ: 1840: Ի վանս սրբոյ Նշանին»: Գրչագիրը, այսպիսով, արտագրվել է 1840 թ. Հովհաննես Երզնկյանցի ձեռքով, 1214 թ. օրինակից:

Պատմության բնագիրը գլխահամարներ չունի, ԺԱ գլխի վերնագիրը բացակայում է: Կատարված մի քանի ուղղումները նշում ենք փոքրատառ l-ով.

Л—ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտ, հայերեն ձեռագրաց հավաքածու, B—66 (Բրոսեի ժողովածու), պահվում է Լենինգրադում. թերթեր՝ 85, մեծություն՝ 19,9 × 16,2, նյութ՝ թուղթ, կազմ՝ գորշ ստվարաթուղթ, գրություն՝ միասյուն, տողեր՝ 20, շղագիր: Պարունակում է միայն Արիստակես Լաստիվերցու երկը: Ձեռագրի մեջքի վրա Բրոսեի ձեռքով՝ Aristacès Lasthivard. Կազմի վրա նույն Բրոսեի ձեռքով՝ Histoire d'Arménie par Aristacès de Lasthivard copiée sur le m<anu-scr>it de Mr. Carapiet par Joan Nazarof. 1843: Ներքևում՝ վրացերեն մխեդրուլի գրչությամբ Բրոսեի ստորագրությունը՝ ბროსე:

Ձեռագիրը այսպիսով ընդօրինակվել է 1843 թ.: Ինչպես նշում է Ֆ. Մակլերը, Հովհաննես Նազարովը եղել է Պետերբուրգի հայոց եկեղեցու քահանա[1], պատկանել է այն գրիչների շարքին, որոնք Բրոսեի հանձնարարությամբ արտագրում էին հայերեն և վրացերեն ձեռագրեր[2]:

Մենք տեսնում ենք, որ նկարագրված ձեռագրերը (ինչպես նաև հրատարակված բնագիրը) ունեն խմբագրական աննշան տարբերություններ: Այն հանգամանքը, որ գրչագրերի մեծամասնությունը չունի ԺԱ գլխի վերնագիրը, կարելի է բացատրել նրանով միայն, որ այդ խմբի մայր ձեռագրում այն վերնագիրը բացակայում էր: Ժ և ԺԱ գլուխները շարադրությամբ տարբերվում են միմյանցից, բացի այդ անհավանական կլիներ, որ Արիստակես Լաստիվերցին, որը բաժանել է իր երկը շատ փոքր գլուխների, այդ դեպքում հանդուրժեր մի հսկայական գլուխ: Ինչ վերաբերում է առաջին գլխի բաժանմանը (ձեռագրեր GH, տպագրություն), ապա այստեղ պարզ երևում է կամայական մոտեցում: Նախ և առաջ աշխատության բոլոր վերնագրերը ունեն «Անցք ընդ աշխարհս Հայոց», որ պիտի դիտվի իբրև Ա գլխի վերնագիր: Գրիչներից ոմանց, ինչպես նաև մխիթարյան հրատարակիչներին շփոթեցրել է այն հանգամանքը, որ Ա գլուխը իր կառուցվածքով շեշտակի բաժանված է երկու մասի: Հեղինակը նախ խտացրած ձևով տալիս է իր ժամանակի ընդհանուր բնութագիրը, ապա ընդհատելով այդ մասը՝ գրում է. «Եւ այսքիկ

[1] F. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens, p. 120, № 220.

[2] Р. Р. Орбели, Грузинские рукописи Института востоковедения, вып. I, М.—Л., 1956, стр. 5.



այսքան. բայց ժամ է մեզ ի գլուխ պատմութեանս ընթանալ, և առաւել սկիզբն առնել, որպէս զի դիւրածան լիցի մեզ բանս» և անցնում իրական պատմության շարադրանքին. «Եւ եղև յետ մահուան Դաւթի Կիւրապաղատի...» և այլն:

Ընդհանրապես հնարավոր էր հենց այդ բառերից սկսել գլուխը, նախորդ մասը համարելով նախերգանք, սակայն այդպիսի դեպքում պիտի բոլորովին անտեսեինք ձեռագրերի տվյալները՝ անգամ G գրչագիրը, ուր վերնագիրը դրված է հենց այդտեղ, ընդհանուր խորագրից հետո ևս ունի «Անց<ք> ընդ աշխարհս Հայոց» վերնագիրը, որը այսպիսով, վերաբերվում է ամբողջ գլխին: Մյուս կողմից՝ «Անցք ընդ աշխարհս Հայոց» նախադասությունը ոչ մի կերպ չի կապվում Ա գլխի միայն երկրորդ մասի հետ: Արիստակես Լաստիվերցու վերնագրերը շատ կոնկրետ են, և միայն Վասիլ կայսեր գալստյանը նվիրված գլուխը նա չէր վերնագրի այդպիսի ընդհանուր ձևով՝ «Անցք ընդ աշխարհս Հայոց»: Խորագիրը նկատի ունի Ա գլխի առաջին, ընդհանրացնող մասը և դրանով միանգամայն արդարացված է: Ինչ վերաբերում է H ձեռագրի վերնագրին «Յաղագս գալստեան Վասլի կայսեր ի Հայս», ապա այն պարզապես նորամուծություն է: Մենք գիտենք, որ H ձեռագիրն ունի բազմաթիվ ուղղումներ, բայց այդ խորագիրը իր գրչությամբ տարբերվում է ինչպես բնագրի գրչությունից, այնպես և ուղղումներից, գրված է անփույթ ձեռքով և ոչնչով չի դրսևորում իր հին ծագումը:

Այսպիսով, Արիստակես Լաստիվերցու Պատմությունն ունի 25 գլուխ և «Բան յիշատակարանի նոյն գրոցս» հավելվածը[1]:

Օգտագործված ձեռագրերը խմբավորելիս, տեսնում ենք, որ պարզորոշ կապ գոյություն ունի միայն երկու մատյանների միջև՝ D-ի և Л-ի: Լենինգրադի ձեռագիրը ընդօրինակված է Մատենադարանի ներկայիս № 3070 ձեռագրից, որը, ինչպես ասվեց, ժամանակին պատկանել է Կարապետ Բաղրատունուն: Բրոսեի ձեռքով գրված ծանոթությունը նկատի ունի հենց այդ Կարապետին: Л ձեռագրի գրիչն ընդօրինակելիս նկատի է ունեցել D-ի սրբագրված բնագիրը (որը մենք նշել ենք փոքրատառ d-ով) ուստի d = Л:

Ներկա հրատարակության մեջ մենք մինչև 58 էջը նշել ենք ձեռագրի տարընթերցվածքները, որոնք ոչ մի կասկած չեն թողնում այդ գրչագրի օրինակի վերաբերյալ: Այն մի քանի շեղումները, որոնք զանազանում են Л ձեռագիրը d-ից՝ պարզապես Հովհաննես Նազարովի թողած վրիպակներն են:

Մյուս ձեռագրերի մասին կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ նրանք բաժանվում են հետևյալ ենթախմբերի՝ ABC, BCDI, EF, GH (վերջիններս մոտ են տպագրված բնագրին), ընդ որում այդպիսի բաժանումը պայմանական բնույթ է կրում:

Ներկա հրատարակության նպատակն է ներկայացնել Արիստակես Լաստիվերցու Պատմության համահավաք քննական բնագիրը: Այն վերականգնված է համաձայն ձեռագիր տարընթերցվածքների ընձեռած հնարավորությունների: Յուրաքանչյուր տարընթերցվածք ենթարկվել է գիտական քննության, և այդ հիման վրա փորձ է արվել վերականգնել հեղինակին պատկանող

[1] Ա գլխի առաջին մասը ողբագին մի երգ է, գրված հատուկ չափով. Ներկա հրատարակության մեջ ընդունված տողատումը կատարվել է հիմնականում ըստ Մանուկ Աբեղյանի (տես «Հայոց հին գրականության պատմություն», գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 41—42):

հարազատ ընթերցումները՝ գրչական բազմաթիվ սխալներից, որոնք նշվել են տողատակում: Մի քանի ընթերցում, որոնք չեն պահպանվել ձեռագրերում, սակայն որոշվել են բնագրի քննության ճանապարհով, շարվել են շղատառ: Այսպիսով, Արիստակես Լաստիվերտցու Պատմության ներկա հրատարակությունը կատարվել է ճիշտ այն եղանակով, որով և հրատարակվել են Ագաթանգեղոսը, Ղազար Փարպեցին, Մովսես Խորենացին, Եղիշեն և Կիրակոս Գանձակեցին:

Պետք է ասել, սակայն, որ այդ սկզբունքը՝ տողատակում նշել միայն այն ընթերցումները, որոնք համարվել են գրիչների վրիպակներ՝ կիրառվել է որոշ բացառություններով: Այսպես, հնարավոր չէ պարզել, թե որ դեպքերում լ հնչյունը արտահայտված է եղել լ-ով և երբ ղ-ով: Ստիպված ենք եղել պահպանել ներկայիս ուղղագրական կանոնները: Այնուհետև, որոշ գրչագրերում պահպանվել են արխայիկ ձևեր, որոնք, ամենայն հավանականությամբ, գալիս են սկզբնագրից՝ կօրեւն, աղբեւր և այլն: Սակայն այդ ձևերը կարող են պայմանավորված լինել նաև գրչի ուղղագրությամբ, ուստի խուսափել ենք դրանք բնագրի մեջ մտցնելուց:

Ինչ վերաբերում է օ տառին, ապա պահել ենք այն ընթերցումը դյուրացնելու համար, չնայած այդ տառը երևան է գալիս միայն ԺԴ դարում: Տարընթերցվածքներում օ և աւ գրությունները հատուկ չեն նշված:

Ներկայի ներգործական դերբայի ստուգաբանական վերջավորությունը պիտի լինի աւղ՝ գրաւղ, խնդրաւղ և այլն[1], բայց Արիստակես Լաստիվերտցու ժամանակ գրչության մեջ այդ կանոնը վաղուց մոռացված էր: Ուստի ներկա հրատարակության մեջ բառերը թողել ենք հիմնականում այն ձևով, որով նրանք ընթերցվել են հնագույն A ձեռագրում:

Ինչպես ասվեց, տողատակում նշվել են այն ընթերցվածքները, որոնք հարազատ չեն Արիստակեսի բնագրին և դիտվում են որպես գրիչների վրիպումներ: Սակայն C, D, E, F, H, I գրչագրերը ունեն հետին ձեռքով կատարված ուղղումներ, որոնք նշված են c, d, e, f, h, i տառերով և բերված են անխտիր կերպով, անկախ նրանից՝ համընկնում են բնագրի հետ, թե ոչ:

Նույնը վերաբերում է և առաջին տպագրության տողատակի ընթերցվածքներին, ըստ որում նշված են նրանք Ծ տառով («Ծանոթագրություն»), իսկ այդ տառից վերև դրված թվանշանը ցույց է տալիս, թե քանի ձեռագրում է հանդիպում այդպիսի ընթերցվածք:

Տողատակում նշված են բոլոր վրիպումները, անտեսված են միայն այնպիսի բացարձակ սխալներ, ինչպես օրինակ, ձեամբ—ձեռամբ, ամացուցեն—ամբացուցեն և այլն: Չի նշվել նաև վերջին յ-ի բացակայությունը զղջանա—զղջանայ, վերա—վերայ և մի քանի այլ աննշան տարբերություններ: Հատուկ անունների ամենաչնչին տարընթերցվածքները նշված են:

Մեջբերումները Հին և Նոր կտակարանից ամենուրեք վկայակոչված են. չակերտների մեջ են վերցված (և վկայակոչված) միայն բառացի մեջբերումները, որոնք, ի դեպ ասած, հաճախ զգալիորեն տարբերվում են կանոնական համարված բնագրից:

[1] Н. Марр, Грамматика древнеармянского языка. СПБ, 1903, стр. 229.



Ներկա հրատարակության հիմքում դրված են Մաշտոցի անվան Մատենադարանի ինը ձեռագիր: Հայտնի է, սակայն, որ արտասահմանյան գրադարաններում, հատկապես Վիեննայում, պահվում են Արիստակես Լաստիվերտցու մի շարք ձեռագրեր, որոնք անմատչելի մնացին մեզ: Բայց քանի որ Արիստակես Լաստիվերտցու բնագիրը, ընդհանուր առմամբ, հասել է մեզ լավ վիճակում, օգտագործված ձեռագրերի (ինչպես նաև առաջին տպագրության չորս գրչագրերի) միջև մեծ տարընթերցվածքներ չկան, ապա դժվար թե այդպիսիները լինեն և մյուս ձեռագրերում: Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի չորս ձեռագրերը Հ. Տաշյանը համեմատել է տպագրության հետ և կարևոր տարընթերցումներ չի նկատել[1]: Այնուամենայնիվ այդ ձեռագրերը ևս պիտի ուսումնասիրվեն և ապագան կթելադրի այն եղանակը, որով այդ ուսումնասիրության արդյունքները կդրվեն գիտական շրջանառության մեջ:

Կ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

[1] Տես Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, №№ 114, 288, 306, 551:

17477
1911
ԳՐԱԴԱՐԱՆ Библиотека

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԻՍՏԱԿԻՍԻ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՍՆ ԱՆՑԻՑՆ ԱՆՑԵԼՈՑ Ի ՅԵՅԼԱՍԵՌՆ ԱԶԳԱՑ ՈՐՔ ՇՈՒՐՋ ԶՄԵՒՔ ԵՆ

# ՏՈՂԱՑԱԿՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

*Մաշտոցի անվան Մատենադարան, հայերեն ձեռագրերի հավաքածու*

| | |
|---|---|
| A | *№ 2865, ԺԳ—ԺԴ դար* |
| B | *№ 3160, ԺԷ դար (առաջին կես)* |
| C | *№ 3502, 1658—1665 թթ.* |
| c | C *ձեռագրի հետին ուղղումներ* |
| D | *№ 3070, 1674 թ.* |
| d | D *ձեռագրի հետին ուղղումներ* |
| E | *№ 1482, 1678 թ.* |
| e | E *ձեռագրի հետին ուղղումներ* |
| F | *№ 4584, 1668 թ.* |
| f | F *ձեռագրի հետին ուղղումներ* |
| G | *№ 2796, ԺԸ—ԺԹ դար* |
| H | *№ 1895, ԺԹ դար* |
| h | H *ձեռագրի հետին ուղղումներ* |
| I | *№ 6457, 1840 թ. (արտագրված 1214 թ. օրինակից)* |
| i | I *ձեռագրի հետին ուղղումներ* |

*ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտի հայերեն ձեռագրերի հավաքածու*

| | |
|---|---|
| Л | *B—66 (Բրոսեի ժողոված), 1843 թ. (ընդօրինակված է* D *գրչագրից)* |
| ( ) | *Կլոր փակագծերի մեջ առնված բառերը պատկանում են բնագրին և եղած նշումները նրանց վրա չեն տարածվում:* |
| < > | *Անկյունավոր փակագծերի մեջ առնված են վերականգնված տառանշանները:* |
| [ ] | *Քառակուսի փակագծերը ցույց են տալիս, որ տարընթերցումը կամ ծանոթագրությունը վերաբերում է անմիջապես նախորդող բառին կամ նախադասության որևէ մասին:* |
| .... | *Բազմակետով ակնարկվում են այն բառերը, որոնք իրապես կան, սակայն բաց են թողնված ընթերցումը թեթևացնելու համար:* |

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԻՍՏԱԿԻՍԻ ԼԱՍՏԻՎԵՐՏՑՒՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՍՆ ԱՆՑԻՑՆ ԱՆՑԵԼՈՑ Ի ՅԱՅԼԱՍԵՌԻՑՆ ԱԶԳԱՑ ՈՐՔ ՇՈՒՐՋ ԶՄԵՕՔ ԵՆ

## Ա

## ԱՆՑՔ ԸՆԴ ԱՇԽԱՐՀՍ ՀԱՅՈՑ

*Ժամանեցին մեզ աւուրք չարչարանաց,*
*Եւ գտին զմեզ նեղութիւնք անհնարինք.*
*Քանզի լցեալ գնաց չափ մեղաց մերոց,*
*Եւ ել աղաղակ մեր առաջի Աստուծոյ։*
*Ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր,*
*Եւ երկիր լցաւ յանօրէնութենէ.*
*Արդարութիւն նուազեաց, և անառակութիւն յաճախեաց.*
*Ժողովուրդ և քահանայ ատեաց Աստուծոյ.*
*Որոյ աղագաւ ազգք օտարածնաց*
*Օտարացուցին զմեզ ի բնակութենէ մերմէ,*

---

1 H չիք *պատմութիւն* I *պատմութիւն հայոց մեծաց արարեալ* AEF *բառատակիսի* B *բաստակիսի* C *բըըստակիսի* GHS *արիստակիսի* [S *արիստակեայ*] *վարդապետի լաստիվերտացւոյ* ADEЛ *լաստիվերցւոյ* BC *լաստիվերոյ* EI *լաստիվերցւոյ*

2 CDEЛ *անցից* B *անէլոյ* C *անցելոյ* ABCDIЛ *յայլասեռ* ABCDEFGЛ *որ* H չիք *որք* CDGHIЛ *զմեօք* B *մեւք* ABDEFGHIЛ *անց* C *էանց* H *աշխարհն* h *աշխարհ* I *աշխարհիս*

Բոլոր ձեռագրերում Ա գլխի վերնագիրը կազմում է աշխատության ընդհանուր խորագրի անմիջական շարունակությունը:

S Ա գլուխը բաժանված է երկուսի, ընդ որում առաջին մասը վերնագրված է *«Նախերգանք»*, իսկ ողջ աշխատության խորագիրը և գլխի վերնագիրը նախորդում են *«Եւ եղեւ յետ մահուան Դաւթի կիւրապաղատի»* բառերին *(ներկա հրատ. էջ 22, տող 25) «Եւ եղե յետ մահուան Դաւթի»* բառերից առաջ G դարձեալ *անցք ընդ աշխարհս հայոց* h *յաղագս գալստեան վասլի կայսեր ի հայս*

Աշխատության վերնագրից առաջ G *Արիստակէս Պատմագիրք* H *Պատմագիր*

DЛ Ա գլխի վերնագրից հետո *աւգնութիւն ինձ ի տեառնէ եկեսցէ որ արար զերկինս և զերկիր ապա պատմութիւն* [Л *պատմագրութիւն*] *արիստակէսի լաստիվարէեցւոյ*

8 Ծ$^1$ *լցաւ* Ծ$^1$ *գնաց*

12 HS *արդարութիւնն* ABCDI *նուազեցաւ* HS *անառակութիւն*

13 H *ժողովուրդք* I չիք *և* H *քահանայք*

14 I *ազգ*

Եւ դարձան փառք մեր յապականութիւն։
Ոչինչ ի մեզ ոչ մնաց,
Եւ կորեաք ի համօրէն յուսոյ մերոյ.
Զօրացաւ մահ և եկուլ,
Եւ դժոխք շատ ասել ոչ կամեցան.
Ամենեցուն յարձակեցան ի մեզ ձեռք,
Եւ յանդման յաւուրս մեր ժամանակ ոչ ծանեաւ.
Զմնացորդս պատուհասին վճարմամբ անցելոց։
Յաջորդք ի յաջորդաց փոխանակեցին,
Եւ նուազեաց արդիւն արծարծիչ շնչոյ կենդանութեան։
Հաստատունք յաշխարհի ի պանդխտութեան ելեանց
Պանդխտեցան երկրորդ անգամ և եղեն վտարանդիք
Ի ձեռանէ պանդխտաց ապստամբաց.
Ի սիրելեաց քակեալք զորս ոչ սուր սատակեաց
Ցրուեցան զօրէն աստեղաց մոլորական կոչեցելոց.
Յոր յաւուրս մեր զարթեան պատերազմունք ի չորից կողմանց՝
Յարեւելից սուր, յարեւմտից սպանումն,
Ի հիւսիսոյ հուր, ի հարաւոյ մահ.
Բարձաւ ուրախութիւնք յերկրէ,
Լռեցին ձայնք քնարաց,
Լռեցին բմբիւնք թմբկաց,
Բարձրացան աղաղակք լալեաց...

Եւ այսոքիկ այսքան. բայց ժամ է մեզ ի գլուխ պատմութեանս ընթանալ, և աստի սկիզբն առնել, որպէս զի դիւրածան լիցի մեզ բանս։

Եւ եղև յետ մահուան Դաւթի Կիւրապաղատի, որ էր այր հզօր և աշխարհաշէն, մեծապարգև և աղքատասէր, որ էր արդարև սահման խաղաղութեան. քանզի յաւուրս նորա հանգչէր ամենայն մարդ, ըստ մարգարէութեանն, ընդ որթով իւրով և ընդ թզենեաւ։ Իսկ զկնի մահուան նորա խաղաց ինքնակալ թագաւորն Հոռոմոց Վասիլն՝ ի քսան և հինգե-

6 C չիք ամենեցուն c ամենեցուն I արձակեցան
7 B անդման Ծ1 յանդիման փխ յանդման Ծ3 յանդման
8 h ոմանք <վճար> մանէ DEFЛ անցելոյ
10 ABCDI նուազեալ
11 CGh աշխարհի A պանդըտութեան BC պանդխտութեանն
12 G պանդխտացան
14 DЛ զայրս փխ զօրս I զայս փխ զօրս
18 A հուսոյ B հիւսիւսոյ DF հիւսուսոյ Л հուսսոյ IЛ և յարեւմտից GЛS և ի հարաւոյ
19 Л երկրէ
21 B բմբիւք GHS բոմբիւնք
22 GH աղաղակ
23 Ծ1 եղև փխ է
24 C ուստի փխ աստի EF որպէս թէ զի B չիք մեզ HI բան
25 ABCDEFh կիւռապաղատի
26 B աղքատասէր
27—28 B մարգարէութեան
29 GЛS խաղայ G ինքնակալն և հաղթօղ C հոռոմոց h վասիլ A ի քսան և հինգ B ի քսան և ի Ե CEFG ի ԻԵ DHIЛ ի Ի և Ե BCDIЛ թագաւորութեան I չիք ի



որդ ամի թագաւորութեանն իւրոյ ծանր զինու. և դէմ եդեալ գայ հասանէ յԵկեղեաց գաւառ, զանց արարեալ զբազում օթեւանօք։ Եւ ընդառաջ ընթացեալ նմա ազատագունդ զօրքն Տայոց, և առատատուր պարգևօք մեծարեալ ի նմանէ իւրաքանչիւր ոք ըստ արժանեաց՝ յիշխանութիւն, ի պատիւ, ի գահ ժամանեալ՝ ցնծացեալ բերկրեցան յոյժ։ Բայց կատարեցաւ առ նոսա մարգարէութիւն հոգեբղխին Դաւթի, թէ «Ընդ առաւօտս որպէս զալարի բուսցին, ընդ առաւօտս որպէս զալարի զուարճասցին և ծաղկեսցին. ընդ երեկոյս թարշամեսցին, չորասցին և անկցին»*։ Քանզի թագաւորն անցեալ յաշխարհն Աղօրի՝ մերձ յամուրն որ Հաւաճիճն կոչի, երեկօթս առնէ։ Եւ ոչ գիտեմ յորպիսի պատճառանաց ընդ միմեանս անկեալ արեւմտական զօրն, որ կոչի Ռուզք, և ազատագունդն, և ի նմին տեղւոջ մեռան յազատացն երեսուն այր ի յոյժ պատուաւորացն։ Եւ այս ոչ եթէ առաւելի և ի զուր անց ընդ նոսա, այլ քանզի նոքա յաւուր մեծի հինգշաբաթին գեղ մահու խառնեալ ի խորհուրդ պատարագին արբուցին նմա, և հեղձամահ արարեալ զերանելի անձն՝ բարձին ի կենացս, ձանձրացեալ կենօք նորա, վասն առաջիկայ խոստմանցն՝ որ ի թագաւորէն առն ունէին. վասն այնորիկ Աստուծոյ արդարադատ իրաւունքն՝ ըստ գործոց նոցա հատոյց նոցա։ Եւ յայնմ օրէ և այսր ոչ յաջողեցաւ երբէք ազատ ի տանէ Տայոց եղանել, եթէ յերկարեաց զկեանս իւր, այլ վաղահաս մահու վճարեցան և բարձան ի կենաց։ Կշտամբեալ յանդիմանէ զնոսա բարձրն Եսայիաս՝ յորս ասէ. «Փոխանակ զի ոչ ախորժեաց ժողովուրդդ այդ զջուրն Սելովմայ որ գնայր խաղաղ, այլ կամեցան առնել իւրեանց թագաւոր զՀռասիմ և զորդին Տաբէէլայ, վասն այնորիկ այսպէս ասէ տէր. Ես ածեմ ի վերայ ձեր զջուր գետոյն զհզօրն և զյորդն, զարքայն Ասորեստանեայց և զփառս նորա»**։ Եւ այսոքիկ այսքան։

* Սաղ. ՂԹ. 5—6 ** Եսայ. Ը. 6—7

2 F օթէվանօք DIЛ ընդյառաջ
3 I զօրն I արատատուր Ծ1 պարգևեւալ
4 I իւրաքանչիւր իւր ոք ACDEHЛ յիշխանութեան F իշխանութիւն
5 C և ի գահ I բերկրացան
6—7 BCD չիք ընդ առաւօտս... բուսցին d որպէս զալարի բուսցին որպէս I առաւօտս բուսցին որպէս զզալարի
7 I չիք ընդ առաւօտս որպէս զալարի Л չիք ընդ առաւօտս DЛ զզալարի (զուարճասցին)
8 ABCDIЛ չիք և H չիք և ծաղկեսցին h և ծաղկեսցին
9 C ընդ յաշխարհն
11 H զօրքն E ազատագունդքն
12 C ազատացն
13 c անիրաւ փխ առաւելի
13 DIЛ և նոքա
15 AE անձն
16 B ձանձրացեալք
19 BG երկարեաց A այդ
20 C փախճանեցան փխ վճարեցան B յանդամանէ EF յանդիմանէր
21 H բարձր C զժողովուրդդ G ժողովուրդ
22 A սեղովմայ I սելվմայ Л սելովմա
23 EGHS տաբելայ DЛ տաբէէլա F տաբէլայ BEFЛ այնորիկ
24 ABCEF զյորդ
25 AEF ասորեստանեաց [A լուսանցքում ուղղված նույն ձեռքով ասորեստանի] BCDIЛ ասորեստանի

Եւ ի նմին աւուրս գայ հանդիպի թագաւորն Ափխազաց Բագարատ, և հայր նորա Գուրգէն, և մեծապէս փառաւորէ զնոսա ինքնակալ թագաւորն։ Եւ տայ Բագարատայ զպատիւ կիւրապաղատութեան և հօր նորա՝ զմագիստրոսութեան, և արձակէ զնոսա խաղաղութեամբ։ Եւ ինքն երթեալ անցանէ ընդ Հարք և ընդ Մանազկերտ և գնայ առեալ դառնայ ի վերայ Բագրեւանդայ և գայ ի քաղաքն Ուխթեաց, և աւրէ բազում գաւառաց և բերդից և քաղաքաց։ Եւ կացուցանէ ի վերայ նոցա գործակալս և դատաւորս և վերակացուս. և ինքն դառնայ զճանապարհս իւր խաղաղութեամբ, և հասանէ ի թագաւորական քաղաքն իւր ի Կոստանդնուպօլիս։ Այս եղև ի չորեքհարիւր լիսուն թուականիս և դադարեալ երկիրն հանգեաւ ամս չորեքտասան։

Եւ ինքն թագաւորն երթեալ վճարէ զնոցա արևմտական կողմանն. քանզի աւրէ Բուլղարաց աշխարհին, գաւառաց և քաղաքաց նոցա, զոր ի բազում ժամանակաց հետէ ի սկզբան թագաւորութեան իւրոյ՝ անհանգիստ պատերազմօք ո՛չ կարաց ընդ ձեռամբ առնել. իսկ այժմ պատեհութիւնքն նմա ի դէպ ելանէին։ Քանզի որ ունէր զաշխարհն՝ յաղթողն ի պատերազմունս, վախճանեցաւ իւրային մահուամբ. իսկ որդիք նորա՝ քանզի ո՛չ հնազանդեցան միմեանց, անձնատուր եղեալ եկին առ թագաւորն. քանզի «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ ո՛չ կարէ կեալ»*։ Այս է Բուլղարաց երկրի առնլոյն օրինակ։ Իսկ թագաւորն զորդիս Բուլղարաց բռնակալին հանեալ ի ժառանգութենէ իւրեանց զարմօք և ազգաւ, և տայ նոցա տեղիս յաշխարհն Հոռոմոց. իսկ զզօրսն աշխարհին՝ խառնօք ի մի վայր ժողովէ, որպէս թէ պարգևս տալ նոցա, և զրավ զհամար նոցա կալեալ՝ առաքէ զնոսա յարևելս անդրանալի եկիւք.

* Մար. Գ. 24

1 E ափխզաց
2 ABCDFՏ գուրգէն E գուգէն BCDIЛ ինքնակալն
2—3 CDIЛ թագաւոր
3 D բագարատա ABCEFH կիւռապաղատութեանն DIЛ կիւռապաղատութեան
4 ABCEF մագիստրոսութեան C և հօր նորա ըզմագիստրոսութեան DIЛ զմա- միստրոսութեան I չիք զնոսա
5 H «անցանէ ընդ» բառերից հետո մի բառ ջնջված է. h հարք ABCDIЛ լեալ առ- եալ [A ճորոգված է, C առնեալ] HՏ[2] վաղ առեալ hՏ' գնաց առեալ Տ վաղ առեալ
6 HՏ ուխտեաց
8 F ի ճանապարհս
9—10 A կոստանդնուպաւղիս D կոստանտնուպօլիս
10 B թվականի CDIЛ թվին G թը//ւիս BCDEF երկիր
11 Տ մզ
12 EFG զհող H զհողն
14 BCDЛ չիք ի BCDEFIЛ յի (սկզբան) G յսկզբան DЛ սկզբանէ
16—17 DEFGI յաղթողն H յաղթօղ
18 B յանձնատուր
19 EF թագաւորութիւնն A բարժանեալ
20 DEFG երկրին I աշխարհին փխ երկրին
22 BC հոռմոց GHՏ զզօրն
23 E պարգև
24 EFGHՏ համարս ADЛ յարևեալս DЛ չիք եկիւք



որք եկեալ զաշխարհս յաւեր դարձուցին։ Վա՜յ նոցա գալոյն յարևելս, և վա՜յ ուր նոքա անց և դարձ արարին. ահա ազգ չար և անօրէն, ազգ դառնասիրտ և հարկանող. ի դէպ է ասել առ նոսա զմարգարէական ողբսն. «Առաջ նորա դրախտ փափկութեան, և զկնի նորա դաշտ ապականութեան»*։ Եւ այսոքիկ այսքան. բայց մեք ի կարգ պատմութեանս դարձցուք։

Յամի չորեքհարիւրերրորդի վաթսներորդի չորրորդի թուականիս մերոյ՝ մեռաւ թագաւորն Ափխազաց Բագարատ, և թագաւորէ Գէորգի որդի նորա ընդ նորա. առ որ գրէ ինքնակալ թագաւորն Վասիլ հրովարտակ, որ ունի օրինակ զայս. եթէ՝ Զոր ի կիւրապաղատին բաժնէ ետու հօր քում ի պարգև՝ թո՛ղ, և քո հայրենեացն միայն լեր իշխան։ Իսկ նա ո՛չ առնու յանձն. այլ ի մանկական ուխտն հպարտացեալ՝ զընդդէմն առնէ պատասխանի, եթէ՝ Զոր իմ հայրն կալեալ է իշխանութեամբ, յանմանէ և ոչ մի չառամ ումեք։ Իսկ ինքնակալին լուեալ զայս, զօր առաքէ բռնութեամբ աւրել աշխարհին։ Որոց ընդդէմ եկեալ քաջացն Տայոց՝ մօտ ի մեծ աւանն Ուխթեաց, ի փախուստ դարձուցին զզօրս Հոռոմոց. բայց քաղաքին և այլ շինանիստ տեղեացն՝ չմեղան ինչ։ Այս եղև սկիզբն կործանման տանն Տայոց։

## Բ

## ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Յայնմ ժամանակի էր և Հայոց աշխարհին թագաւոր Գագիկ որդի Աշոտոյ, եղբայր Սմբատայ և Գուրգենայ, ի ցեղէն Բագրատունւոյ, այր հզօր և յաղթօղ ի պատերազմունս. սա ի խաղաղութեան կալաւ զաշխարհս Հայոց։ Ի սորա ժամանակս պայծառացան կարգք եկեղեցւոյ, և

* 4 Յովէլ. Բ. 3

1 AB յարևեալս
2 BC անօրզօրմ
3 F չիք է
3—4 Տ զմարգարէականն ողբս
5 6 BCD չիք բայց մեք . . . . դարձցուք d բայց մեք ի կարգ պատմութեան դարձ- ցուք I պատմութեան
7 DIЛ չորեքարիւրերրորդի ABCEF չորեքարիւրերրորդի BЛ վաթսուներրորդի D վաթսուներրորդի FՏ և վաթսներորդի H չիք վաթսներորդի չորրորդի h վաթսուներորդի չորրորդի G թուիս
8 EH ափխզաց ABCDEFGHIЛՏ Գէորգ [բնագրի Գէորգի ձևը՝ ըստ հաջորդ ըն- թերցումների]
9 HՏ չիք ընդ նորա hՏ[1] ընդ նորա EFH վասիլն
10 I ունէր Л ունէի ABCDEFIЛ կիւռապաղատին G ի տուն փխ ետու Տ[1] ի տուն
12 B մանգական
13 BCDEFGHIЛ թէ
16 hՏ ուխտեաց ADGI զզօր BCEF զզօրսն C հոռմոց
18 DЛ կործանմանն
20 EFGH թագաւորութեանն
21 I երկրին փխ աշխարհին GH թագաւորն
22 B եղբօր B սմպատայ Л սմբատա ABCDIЛ ցեղէ E բագրատունւոյ E յայր
23 HՏ պատերազմի BCF խաղաղութիւն
24 BCDEFGHIЛ կարգ A եկեղեցոյ

լուսաւորեցան մանկունք ուխտի սրբութեան. ի սորա աւուրս «Լցաւ երկիր գիտութեամբ տեառն՝ իբրև զջուրս բազումս որ ծածկեն զծովս»* ըստ մարգարէին կանխաձայնութեան: Քանզի ունէր զաթոռ հայրապետութեան տէր Սարգիս, սնեալ սրբութեամբ ի ծոց եկեղեցւոյ և վարժեալ կրօնաւորական հգնութեամբ ի կրօնաստանն՝ որ կոչի Սևանայ կղզի. զոր շնորհիւն Աստուծոյ կոչէին ըստ արժանաւորութեան. և նստուցանէին յաթոռ մերոյ Լուսաւորչին. որ նորին կարգօքն քաղաքավարեալ ի մարմնի, բարի հանդիսիւք աւարտեաց զկեանս իւր:

Եւ էին յայնմ ժամանակի վարդապետք՝ Սարգիս և Տիրանուն և Յենովք, որ կաթուղիկոսարանին էին վարդապետք. և Սամուէլ, որ Կամըրջացն Ձորոյ վանացն առաջնորդութեամբ հովուէր. և Յովսէփ որ Հնձուց վանացն էր նախագահ. և Ստեփաննոս Տարօնացին որ զաշխարհապատում գիրսն շարադրեաց սքանչելի յօրինուածովք, սկսեալ ի մարդն առաջին և զայ բովանդակէ զպատմութիւն իւր ի վախճան Գագկայ, վասն որոյ պատմութիւնս է. և Յովհաննէս ի նոյն աւուրս, զոր վերադիր անուամբ Կոզեռն կոչէին, որ զհաւատոյ գիրսն գրեաց. և Գրիգոր յոյժ իմաստուն բանիւք. և այլք բազումք, յորոց աւուրս բարձրանայր յոյժ եղջիւր եկեղեցւոյ ուղղափառ խոստովանութեամբ: Իսկ որք խէթ աչօք հայէին ի մեզ, ի սոցա վարդապետական հանդիսից կորակնեալք իբրև զմկունս ի ծակս որմոց սողոսկեալ մտանէին: Եւ այսքիկ այսքան:

Իսկ թագաւորն Գագիկ յերկար ժամանակս վարեալ զթագաւորութիւնն, և բարի յիշատակաց արժանի լեալ, ի խորին ծերութեան լուծանէ զկեանս իւր. և պայազատեն զիշխանութիւնն որդիք նորա Սմբատ՝ զոր Յովհաննէս կոչէին, և Աշոտ նորին հարազատն: Եւ էր Սմբատ մարմնով հարուստ և յոյժ թանձր, բայց իմաստութեամբ ասեն առաւել գոլ

* Եսայ. ԺԱ. 9

2 I աստուածագիտութեամբ փխ գիտութեամբ
3 C նախաձայնութեան փխ կանխաձայնութեան H աթոռն AEF հայրապետութեանն
4 GH տէրն
5 BC կրաւնաստան BCDIЛ սևան E սևանս ABCDEFIЛ շնորհն
6 dIЛ կոչէ dЛ նստուցանէ Л չիք մերոյ
9 GHՏ տիրան անուն
10 A սամուէղ ABCDEFHIЛ կամրջաց
11 Տ ձորոց Տ հնցուց DEIЛ ի հնձուց
12 Տ չիք վանացն CFՏ տարոնացին
13 I շարադրեաց
14 ABF բովընդակէ G բովանդակ HՏ վախճանն DЛ վաղճան
15 B զպատմութիւնս CDЛ յոհաննէս F յովաննէս H յօհաննէս I զերանուամբ փխ վերադիր անուամբ
17 A այլք DIЛ այլ DIЛ յաւուր G յաւուրս A եղջեւր B եկեղեցոյ
18 I խաղաղութեամբ փխ խոստովանութեամբ BDIЛ որ
19 ACI հանդիսեցս
20 G այսք փխ այսքիկ
21 FG երկար EFGhԾ$^{2}$ զկեանս և զթագաւորութիւնն BCDIЛ զթագաւորութիւն
23 BCDIЛ զիշխանութիւն
24 BDEFЛ յովաննէս C յովաննեսն BDIЛ կոչէն B սմպատ
25 DЛ առաւելն



քան զլոգունս. Իսկ Աշոտ բարեկարգ ունելով զդէմս մարմնոյն, քաջասիրտ և պատերազմասէր գոլով: Սոքա ընդ միմեանս անկեալք հակառակութեամբ վասն բաժնից երկրին՝ կարօտացան իրաւանց և դատաստանի: Որոց եկեալ թագաւորն Ափխազաց Գէորգի՝ ի խաղաղութիւն համոզեաց զնոսա. և տալ բաժին երկանուանն Սմբատայ՝ զամուրն Անի և որ շուրջ զնովաւ գաւառք, վասն անդրանկութեանն. իսկ Աշոտոյ զներքին կողմն աշխարհին՝ որ հայի ի վերայ Պարսից և Վրաց: Եւ հաւանեալ Սմբատ դարձաւ ի քաղաքն իւր. և ի ճանապարհին իջեւանս արարեալ վասն ծանրութեան մարմնոյն, յանհոգս ննջէր. Իսկ մի ումն յիշխանացն ի կողմանէն Աշոտոյ՝ ի դատ կացեալ առաջի Գէորգէ, ասէ՝ թէ Շատիկ իմ բնական տեղի է, զոր անիրաւաբար տարաւ յինէն Սմբատ: Զոր լուեալ Գէորգէ, մեծապատ ցասմամբ ի բարկութիւն բրդեալ՝ զօրս առաքեաց զկնի նորա. որք եկեալ հեղան յանկարծուստ ի վերայ նորա, և նա վասն ծանրութեան մարմնոյն ոչ կարաց նստել յերիվարն: Իսկ իշխանքն որ զհետ նորա, քաջապէս ի փախուստ դարձեալ՝ բազում կոյտս դիականց զհետ մաւլոցն ի ճանապարհին կացուցանէին մինչև ի դուռն Անւոյ: Եւ անտի դարձեալ, զեկեղեցին կաթուղիկոսարանին ի զարդուց կապուտ կողոպուտ արարին. և զրեհս խաչիցն հանեալ՝ նախատանօք ասէին՝ թէ Տանիմք և ձիոցն լաւին առնեմք. զոր ի դիպող ժամու հատոյց նոցա արդարադատն Աստուած ի ձեռն Հռոմոց, զոր յիւրում տեղւոջն ասասցուք: Իսկ զՍմբատ կալեալ տարան առ Գէորգի, զոր հրամայեաց ունել ի պահեստի. և ապա առեալ երիս բերդս՝ արձակեաց զնա:

Իսկ Աշոտ՝ վասն զի որ շուրջ զսահմանաւ նորա մեծամեծք էին, զբազումս ի տեղեաց նորա տարեալ էին անիրաւաբար, առ որս ոչ կարաց

1 ABCDEFI զլօրունս G յոգունս B ունել CDGHЛՏ մարմնոյ
2 B առ որ փխ սորա
3 I աշխարհին փխ երկրին I եւ փխ և
4 AE ափխզաց GՏ Գէորգ
5 BCD տայր B սմպատայ DЛ սմբատա
6 BDIՏ անդրանկութեան BCEՏ աշոտայ
7 ADEFIЛ կողմ BC հայէ
8 B սմպատ CD սմպատայ Л սմբատայ C դարձ F իջավանս H իջաւանս
9 BC չիք մի ումն
10 B իշխանացն EFG աշոտայ GHՏ գէորգի I ասէր
11 EF բնակատեղիք G տեղիք
11—12 B սմպատ
12 Տ գէորգի
13 BCD զզօրս
14 BCDIЛ նորա փխ նա G նստիլ C երիւարին
16 ABCDEHIЛ ճանապարհն
17 GH անւոյ AB անդի
18 C րեեոս C ի խաչիցն GIЛՏԾ$^{3}$ խաչին
19 ABE տանինք CD տանեմք BCDIЛ չիք և EFGH դիպօղ
20—21 C հռոմոց C իւրում
21 B զսմպատ DIЛ զսմբատն DIЛ առեալ փխ կալեալ DIЛ գէորգէ HՏ գէորգին
22 C չիք ապա
24 C զսահմանաւն I սահմանաւ
25 H չիք նորա h նորա

համբերել. վասն որոյ թողեալ զաշխարհն՝ երթեալ հասանէ ի դուռն թագաւորին Հոռոմոց. և հաճոյ եղեալ նմա՝ խնդրէր զօրս յօգնականութիւն, և առեալ գայ անցանէ յաշխարհն իւր: Եւ յաջողեալ նմա յԱստուծոյ, տիրէ բազում գաւառաց և բերդից. և զօրանայ քան զամենեսեան, որ յառաջ քան զնա էին. մինչ զի բազումք ի մեծամեծացն՝ զհայրենի տեղիս իւրեանց ի նա թողեալ, նմա զանձինս կամօք ի հնազանդութիւն տային: Մինչև ցայս վայր պատմութիւնս մեզ հեշտալի է:

Իսկ ի չորեքհարիւր վաթսուն և հօթն ամի թուականիս մերոյ՝ առաքէ ինքնակալ թագաւորն զնիկոմիտացի իշխան ումն, որ եկեալ մարդահարկ արկանէ երկրիս. և ժողովեալ բազմութիւն մարդկան՝ սկիզբն առնէ վերստին շինելոյ զԹէոդոսուպօլիս:

Եւ ի չորեքհարիւր վաթսուն և ութ թուականին՝ ձեռնադրի տէր Պետրոս ի կաթողիկոսութիւն առ կենօքն տէր Սարգսի: Եւ ի չորեքհարիւր եօթանասուն թուականին՝ դարձեալ խաղայ ինքնակալ թագաւորն ծանր զօրու և գայ յարևելս: Եւ եկեալ իջանէ առնէ յընդարձակ դաշտն Կարնոյ. և առաքէ դեսպանս առ Գէորգի վրաց իշխեցողն, գալ ինքեան ի հնազանդութիւն: Քանզի և եպիսկոպոս ումն վրացի ազգաւ՝ որ նստէր ի քաղաքն Վաղարշակերտ, երթեալ թագաւորին ընդառաջ, վստահութիւն տայր բանից, թէ Յորժամ լԵկեղեաց կամ ի Կարին եկանես, քեզ ընդառաջ գայ: Եւ նա նորա բանիցն հաւատացեալ, և յայն ապաստան՝ մնայր նորա գալստեանն օթևանէ յօթևանս փոխելով: Այլ նա ոչ առնոյր յանձն գալ ի կոչ թագաւորին. քանզի բազումք ի նորայոցն ահ արկանէին նմա, թէ ի տեսանելն զքեզ՝ կամ մեռանիս, կամ արգելական առնէ, և ոչ ժամանես ի քո պատիւն: Իսկ թագաւորն անցեալ ի Բասեան, երկուս և երիս պատգամաւորս առաքէ, քանզի յոյժ կամէր խաղաղու-

1—2 *S* չիք թագաւորին Ծ² թագաւորին հոռոմոց
2 BCDEI խնդրէ
3 D յաշխարհն
4 CDEFGHIЛ*S* զամենեսին *S* և որ
5 AEF մեծամեծաց
8 EF չիք ի A չորեքարիւր A և վաթսուն և եւթն BC ՆԿԷ IDЛ Դ.Ճ. և ԿԷ (468!) BC թվականին DЛ թվին G թուի H թուիս BC չիք մերոյ
9 ABCDEFGIЛԾ¹ զկոմինիտացի H կոմինիտացի Ծ² կոմինիտցի
10 Gh առնէ փխ արկանէ
11 DGIЛ*S* զթէոդուպօլիս H զթէոդոսուպօլիս hԾ¹ թէոդոսուպօլիս
12 CDЛ թվին GI թուականին
13 G կենօք
14 C թվին GIh թուին C ինքնակալն C չիք թագաւորն
15 FGH զօրօք ADЛ իջաւանս I իջևանն
16 ACEFI կարնայ BDЛ կարնս EFDЛ*S* իշխեցողն
18 F վաղարշկերտ CDIЛ ընդյառաջ
19 I բանիցն BCDGHIЛ եկեղեաց I եկանէ
20 CDIЛ ընդյառաջ GH*S* նորին
21 I չիք նորա dIЛ յօթևանէ F օթէվանէ C օթևանս F յօթէվանս
22 AC նորացն FG նորայնոցն
23 GHI*S* տեսանել
24 I ժամանեսցի I չիք ի
25 BC պատգամաւոր



թեամբ վճարել զիւր ճանապարհորդութիւնն, և աշխարհի մնալ 'ի շինութեան: Սակս ի սպառել պատգամաւորացն, ի բարկութիւն շարժեալ թագաւորն՝ հրաման տայր հրով և սրով և գերութեամբ ապականել զմեծ աւանն՝ որ կոչի Օկոմի, և որ շուրջ զնովաւ գիւղք և ագարակք որ ի բաժնին էին. զորոյ զգերեան առեալ, հրաման տայ խաղացուցանել ի գաւառն Խաղտեաց, և ինքն դէմ եդեալ անցանէ ընդ Բասեան, և հասանէ ի գաւառն Վանանդ, ի Կարմիր Փորակ: Իսկ Գէորգի զխղող ժամ գտեալ՝ հասանէ ի վերայ քաղաքին Ոլթեաց, և հրամայէ զօրացն հրով կիզել զգեղեցիկ դաստակերտս նորա, և յաւարի վարել զինչս նորա, բայց մարդոյ մի՛ ինչ մեղանչել: Իբրև լուաւ զայս թագաւորն, ևս քան զևս ի բարկութիւն բրդեալ՝ դառնայ ի վերայ նորա. և պատահեալ զօրքն միմեանց մերձ ի ծովակն որ կոչի Պաղակացիս, ահագին գդրդմամբ զմիմեանս հարկանէին: Ուստի ի շողալ սուսերացն և ի փայլիւն սաղաւարտացն՝ հրոյ փայլատակմունք զկերամբն անկանէին. և ի կոփիւն սուսերացն կայծակունք հրոյ հատեալ՝ յերկիր անկանէին: Ընդ որս և ինքն իսկ թագաւորն նայեցեալ՝ զարմանայր ընդ քաջութիւն պատերազմողացն, զի իբրև զլորձանս գետոց ընդ միմի հարեալ, այնպէս զօրքն Հոռոմոց ընդ նոսա հարեալ՝ ընդ կրունկն դառնային: Յորում տեղւոջ մեռաւ մեծ իշխանն Ռատ, մօրից պատահեալ երիվարին՝ ոչ կարաց անցանել. յորոյ վերայ սուր եդեալ սպանին զգովելի անձնն, որ մեծ սուգ հասոյց տանն Տայոց: Իսկ Գէորգի զօրաքն խրոխք երթեալ ամրանայ յամուրն Ակիսա-

1 h իւր DGIЛ ճանապարհորդութիւն DIЛ իշխանութեան փխ ի շինութեան
2 G սպառել H*S* պատգամացն Ծ¹h պատգամաւորացն B բարկութեան
3 DЛ տա FI տայ
4 *S* օկոմի ABEFGH գեղք CDIЛ գեօղք
5 CDIЛ բաժնի
5 H*S* գաւառն
6 EF բասեն H*S* բասեանն h բասեան
7 *S* չիք գաւառն A վանանդ երկու սյունակների արանքում CDEFGhЛ չիք վանանդ ADEHЛ կամիր փորակ h կարմիր *S* կամ ի Փորակ ABDEIЛ Գիօրգի
8 EF ուղթեաց H հրամայեաց
11 C և դառնայ
12 ABDI լուսանցքում զիմակսեան որը կապվում է պաղակացիս բառի հետ. CЛ զիմակսեան պաղակացիս [Л զիմակսեան բառը փակագծերում] H պալակացիս
13 B սղալ փխ շողալ A փայլիւն
14 H զկերամբքն
14—15 BC սուսերացն կայծակունք հրոյ հարեալ յերկիր անկանէին [9—10 տողերը կրկնվել են]
15 H*S* որ EGH չիք իսկ
16 B թագաւոր
17 B զորձայնս CDIЛ զորձանս C ի փխ ընդ (միմի) GH*S* այսպէս C հոռոմոց
19 E անցն
20 *S* սուգ մեծ B տան
21 AdHЛ Գէորգ I Գիորգի GH*S* զօրօք

ղաց. և թագաւորն ընդ չորս կողմանս աշխարհին զօրս առաքէ, ապստամբս արձակէ, պատուէր տայ մեծաստատ հրամանաւ՝ մի՛ ողորմել ծերոյն և մի՛ երիտասարդին, մի՛ տղային և մի՛ հասակաւ կատարելոյն, մի՛ առն և մի՛ կնոջ, և մի՛ ամենևին ամենայն հասակի. և այսու ձեռնարկութեամբ քանդեալ ապականէ զաւառս երկոտասան: Զորս ո՞ր տեսանել տեսութիւն ողորմելի և՛ բազում արտասուաց արժանի. քանզի բարձրաձեղուն ապարանք արքունաշէն տաճարաց՝ որք մեծամեծ ծախիւք և հնարագիտութեամբ ճարտարաց՝ ի սքանչանս տեսողաց և ի վայելս ուրախութեան բնակողացն շինեալ էին, հրայրեացք անկեալ կործանեցան, և որք նոցին տեարքն՝ առ նմին սրակոտորք: Ա՜ւաղ պատմութեանս, աւա՜ղ չար արարուածին. զի՞արդ կարացից ես աղքատս գիտութեամբ և տխմարս քան զամենեսեան ընդ գրով արկանել զայն ժամու զեղեալն, և կամ ողբալ ըստ արժանւոյն զմեր թշուառութիւնս. այսոքիկ Երեմիայի հոգւոյն են, որ գիտէ զողբսն ըստ թշուառութեանն յօրինել: Բայց մեք խուն բանիւք զերկայնս զայնոսիկ արձանացուցանեմք զպատմութիւնս ի յետ եկելոց ազգի՝ որ գալոց է. որպէս զի որդիք որ ծնանիցին՝ յարիցեն և պատմեսցեն զայս որդւոց իւրեանց. որպէս զի մի՛ մոռասցին զգործս Աստուծոյ, որ արդար կշռով հատուցանէ ամենեցուն՝ որք խոտորին յիրաւանց նորա, ըստ Յոբայ բանիցն. «Հատուսցէ, ասէ, յանդիման աւերեացն իւրոց, և ոչ յամեցուսցէ»*:

Արդ ո՛վ համարեա՛ ինձ զօրինակն զայն ժամու արարուածին և զպատահման և զհարկաւոր ալիս ծերոցն ընդ արեան և ընդ աղաժոյժ թաթաւեալ, զերիտասարդան սրակոտորս, զանթիւ և զանհամար զաչացուանցն զորոց զլուսարանս խաւարեցուցին: Կարծեմ թէ այսոքիկ ի դէպ անդ ընդ նոսա, փոխանակ զի զարքունագրոշմ նշանին բեռան հանել ի դուռն սուրբ կաթուղիկէին, նախատանօք ասէին՝ լուսին առնել երկիվարացն.

* Բ. Օրէնք. Է. 10

1 GHS չիք չորս
1—2 HS ապստամբ
2 GhԾ¹ զիմարեան (պատուէր տայ) GS ողորմիլ
6 BC զի փխ քանզի BC բարձրաձեղու
6—7 B ապարանաւք
7—8 I հնարագիտութեամբ
8 GH տեսողացն F չիք և
9—10 ABCDEFIЛ որ ABCDEFGHIЛ տեարք արքն
11 H գիտութեան DEFЛ տխմարս
12 A զլինալյն C զլալյն B չիք և
13 ABCEFI չիք ըստ ABCDF արժանոյն
14 BCDЛ թշուառութեան I թշուառութիւն
15 GHS յեկելոցն
16 S գալոցն GH ծնանին
18 HS արդարակ hԾ¹ արդար
21 GԾ¹ արարուածոցն H արարուածիցն DEFIЛ չիք և (զպատուական)
22 S զհարկեար B աղայժոյժ GHS աղաժում B թաւթաւեալ EF թաւալեալ
23 B զերիտասարդն DIЛ զերիտասարդս
24 DEFIЛ զլուսարանան
26 BCDGHIЛS չիք սուրբ B լուսինն BCDIЛ առնեմք C ձիոցն փխ երկիվարացն



այս իրաւամբք անդ ընդ նոսա, և որ առ սոքօք զառն տեսութիւնն: Ազատ կանայք ի հրապարակ ելեալ, և զքօղն ի գլխոցն ի բաց առեալ, անպատկառ ընդդէմ արեւու ի խայտառականս անկեալ. և որք հետի ոտիւք ի տես հեծելոց կամ յուխտի տեղիս հագիւ երթային, այժմ մերկ զգլխով և ոտամբ առաջի գերչացն զնան, մերկ ի զարդուց, անկեալ ի պատուոյ, մատնեալ ընդ բիւր անարգանօք: Իսկ զկաթնասուն տղայսն, զկէսն ի գրկաց մարցն առեալ զքարի հարկանէին. և զայլս ի գիրկս մարցն աշտէիւք խոցեալ՝ ընդ կաթն մարցն զարիւն մանկանցն խառնէին. և զկէսս ի կից ճանապարհացն ընկեցեալ ի սմբակս երիվարացն՝ առհասարակ սատակէին: Ո՜վ Աստուած քո յանժամ ներողութեանդ. ո՜վ թագաւորին անողորմ հրամանատուութեանդ: Սակայն այսու ամենայնիւ ո՛չ շիջաւ բարկութիւն նորա. այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է ա՛յլ ի վերայ սորին յաւելուլ չարիս: Եւ այսու գործով զբարեշէն երկիրն անմարդի արարեալ՝ յաւեր յամայի կացուցանէր մինչև ի գալ ձմերայնոյն:

Բայց ո՞չ գիտեմ որպիսի՛ օրինակաւ անց ընդ նոսա այս ամենայն՝ եթէ ըստ կարգի իրատու, եթէ վասն առաւելեալ ամբարշտութեանց բնակչաց երկրին, եթէ վասն զծնեալ բարուց արևմտական զօրացն ի խաժամուժ ազգաց ժողովելոցն: Իսկ թագաւորն դարձեալ ի ձմերոցն ի մարմանդսն Պոնտոսի, և իջեալ ի գաւառն Խաղտեաց՝ երեկօթս առնէ: Որում զհետ եկեալ հայրապետին Պետրոսի՝ հանդիպի նմա յաւուրս Աստուածայայտնութեան մեծի տօնին, և մեծարեալ պատուի ի նմանէ:

Իսկ ի լուսաւորութեան աւուրն, յորում օրէն է քրիստոնէից թագաւորաց և իշխանաց ի բարեպաշտութեան կացելոց՝ զի ընդ առաջնորդս եկեղեցւոյ հաւասարեն զանձինս, և հետի ոտիւք ի ջուրս իջանեն, և անդ կատարեն զխորհուրդ տէրունական մկրտութեանն՝ արդ ի հանդիպման աւուրն՝ հրամայէ թագաւորն հայրապետին Պետրոսի օրհնել զջուրն ըստ մերոյ կանոնիս, և Հոռոմոց եպիսկոպոսացն, որ անդ դիպեցան՝ ըստ

1 H իրաւամբ BCDЛ տեսութիւն
2 GHS հրապարակս ABCDEI գլխոյն
5 Ծ¹ ոտեամբ փխ ոտամբ DEFGЛ զարդուցն
6 ABDЛ բեւր BCEF զկէսս
9 HS զկէսն ABCDEFЛ ամպակս
10 ABCEFHI ներողութիւնդ D նեղութենէդ G նեղութիւն Л նեղութեանդ
11 ABC հրամանատուութիւնդ DEFHIЛ հրամանատուութեան
13 F չարին
14 ABCDEFGH յամայր փխ յամայի DE չիք ի
15 I չիք ընդ նոսա
16 B ամպարշտութեանց GH ամբարշտութեանն S ամբարշտութեան
17 C չիք վասն HS զծնաբարուց
18 DEFIЛ ձմեռոց
18—19 BCS մարմանդս
19 I պոնտոսի B գաւառ
20 I երթեալ փխ եկեալ G յաւուր
24 C ջուրն
25 BDIЛS մկրտութեան G չիք մկրտութեանն
26 C թագաւորին
27 C հռոմոց CDEFhIЛ եպիսկոպոսաց

իւրեանց կանոնին։ Եւ ի հնգոյ հայրապետին զմեռոնականն իւղն ի ջուրսն, ցնցուղս լուսոյ ճառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն. զոր տեսին առ հասարակ ամենեքեան, և փառաւորեցին զԱստուած. և բարձրացաւ եղջիւր հաւատոյս մերոյ։ Եւ եւս առաւել պատուով մեծարեալ ի թագաւորէն և ի սպայիցն հայրապետն Պետրոս դառնայ ի տուն իւր։ Բայց անդ եդև Հայոց կորստեան գիր և նամակ. քանզի Յովհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին, եթէ՝ Դրէ գիր և տո՛ւր կտակ թագաւորին, զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն. քանզի իւր ոչ գոյր որդի թագակալ թագաւորութեանն. վասն զի որդին նորա Երկաթ վաղ վախճանեցաւ, և չժամանեաց ի պատիւ հօրն։ Եւ թագաւորն երթեալ հասանէ ի ձմերոց յառաջասացեալ տեղիսն. և զօրքն զմարդագերին վաճառակուր արարին ի հեռաւոր ազգս։

Ի սոյն ժամանակս փոխի յաշխարհէ տուրբ և արժանաւոր հայրապետն տէր Սարգիս, և է գերեզման նորա ի Հոռոմոսի վանքն։

## Գ

## ԹԷ ՈՐՊԷՍ ԹԱԳԱՒՈՐՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԴԱՐՁ ԱՌՆԷ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ ՏԱՅՈՑ, ՅՈՐՈՒՄ ՊԱՐՏԵՑԱՆ ԶՕՐՔՆ ՎԵՌԽԱՑԻՈՑ

Իսկ ինքնակալն զձմերոցսն ի գլուխ հանեալ ի մարմանդսն Պոնտոսի, ի հասանել գարնանաբեր ժամանակին, խաղայ դարձեալ նոյն հետայն ի վերայ Տայոց. և անցեալ ընդ բազում օթեւանօք, գայ բանակի ի գաւառն Բասենոյ։ Իսկ բազումք յիշխանացն Հոռոմոց, զորս ընդ ժամանակս ժամանակս յայլեայլ պատճառս ի պատուոյ յիշխանութենէ ըն-

1 C կանոնին ADEF եւղն Л եօղն
2 ABDFIЛ ցնցուղս C յանկարծի C ջուրսն EFG ջուրց
4 ABF եղջեւր
5 AB սպաիցն EF պարսիցն փխ սպայիցն
6 CFI կորըստեան E կորստեանն BCEF յովաննէս D յովանէս
7 A թէ IЛ գրեա
8 DHIЛ վաղճանին AF տայց
8–9 DEFIЛ զգոյր փխ ոչ գոյր H չիք ի H ժառանգութեան DIЛ թագաւորակալ BDEFIЛ թագաւորութեան
10 Տ չիք երկաթ G երկաթն EFGHՏ չիք վաղ CDEIЛ վաղճանեցաւ ChՏ ոչ ժամանեաց G ոչ ժամանեցաւ H չժամանեալ երկաթ Ծ[1] որդին նորա երկաթ վախճանեցաւ Ծ[2] որդին նորա վաղ վաղճանեցաւ եւ չժամանեաց
13 I չիք և
13–14 ADЛ լուսանցքում գերեզման նորա ի հոռոմոսի վանքն [DЛ (վանքն) է] BCEFGHI (տէր Սարգիս) և է գերեզման նորա ի հոռոմոսի վանքն [I չիք է, հոռմոսի, EF վանք, I (վանքն) է] BC տողերը խառնվել են (փոխի յաշխարհէ) տուրբ գերեզման նորա ի հոռոմոսի վանքն է և արժանաւոր հայրապետն տէր սարգիս [C հոռմոսի, չիք հայրապետն]
18 B ինքնակալ
18–19 DGIЛ պոնդոսի
19–20 B այն փխ հետայն
20 EF օթէվանօք GH չիք ընդ BCGՏ բնակի
21 I բազում BCF իշխանացն
21–22 B չիք ժամանակս
22 A յայղ և այլ C այլ և այլ DEFIЛ յայլ և յայլ ABCDHIЛՏ իշխանութենէ



կեցեալ էր թագաւորին, որք իբրև առեւծունս ի զառածիրս մանչէին, սա գիւղօղ ժամ գտեալ՝ ի մի վայր ժողովեցան։ Եւ խորհուրդ վատ ի մէջ առեալ, խորհուրդ՝ զոր ոչ կարացին հաստատել, խորհեցան միաբանութեամբ ապստամբել ի թագաւորէն և կացուցանել թագաւոր զոր ինքեանք կամիցին։ Եւ իբրև յայս հաստատեցան, ապա յուսացուցին զխորհուրդն, յընդարձակ դաշտին բանակ կալեալ. յորում անթիւ բազմութիւն մարդկան ի մի վայր ժողովեցան, և սկսան զթագաւորական պատիւն յիրեարս հարկանել։ Եւ ապա միաբանեալ ամենեցուն բուռն հարին զորդւոյն Փոկասայ, զոր Ծռավիզն կոչէին, որ վասն հօրն մեղանաց ի վաղընջուց հետէ յիշխանութեան պատուոյ անկած էր։ Որոյ ոչ հաւանեալ՝ չառնու յանձն. որք ոչ թուլացան ի խնդրոյն, այլ բռնադատեալ հաւանեցուցին մինչև յանձն էառ։

Զոր իբրև լուաւ ինքնակալն՝ ի մեծի տարակուսանաց միջի անկեալ կայր, և երթեալ ամրանայ յամուրս բերդի միոջ որ կոչի Մազդատ. քանզի հին ամրութիւն է այս տանն Յունաց։ Բայց ոչ գիտեմ եթէ աստուածային իրաւունքն են այս, որ չէ պարտ ծառայից ի վերայ տերանց յառնել, և եթէ թագաւորին յայնժամ առանձինն բարեշնորհութիւն էր. զայս հաւաստեաւ գիտեմ, և աչօք իմովք տեսի, զի որք յարեան ի վերայ նորա՝ ծիծաղելի մահուամբ եղեն ի կենացս։ Որպէս յառաջինսն ի սկզբան թագաւորութեան իւրոյ ապստամբեաց ի նմանէ Վարդ որ կոչի Սկլառոս, և տարաւ զՀոռոմս՝ համարեա թէ զրնաւ զամենեն զհետ իւր, մինչ զի թագաւորին խնդրել զօր յօգնականութիւն ի Վրաց կիւրապաղատէն։ Որովք հարեալ զրնակալն՝ փախստական հանեն յաշխարհէն. որ երթեալ անկանի ի Բաբելոն ի քաղաքն Պաղդէացւոց։ Եւ ապա զհետ նորա զնոյն ախտ ախտացաւ նորին անուանակիցն Փոկաս, և տիրեաց ամենայն

1 ABEF առեւծունս ACDFIЛ մռընչէին E մըռնչէին
2 C ի գիւղօղ B զըտեալ
4 A ապստամպել G ապստամբիլ FGHՏ չիք և B կացուցին C կացուցանեն H թագաւորն
5 B յոյս փխ յայս
7 B սըկսան BDЛ պատիւ G պատւէն I չիք պատիւն
8 G իրեարս I յիրեարս hԾ[1] առ (յիրեարս)
8–9 BCDIЛ զորդւոյ
9 BCDIЛ փոկասա G փոկասու
9–10 ABCF վաղընջուց
10 CD պատուոյն C (անկած էր) վասն մեղանաց հօրն GHՏ որ փխ որոյ
11 C յանձնն A թուղացան A այղ
13 BCDIЛ մեծ HG տարակուսանացն
15 hI տան C թէ
16 BCDЛ իրաւունք G որ ոչ է
17 G չիք և I թէ I առանձին
19 BC յառաջին DIЛ առաջին DIЛ չիք յի G յսկզբան Տ ի սկզբան
20 F թագաւորութեանն A ապստամպեաց
20–21 C Սիկլառոս
21 C զհոռմս H եթէ HՏ ընաւ G չիք զրնաւ HՏ զամենայն
22 CDЛ խնդրեալ ABGDEFIЛ կիւռապաղատէն
23 D չիք փախստական d փախստական BDIЛ հանին
24 G բաբիլօն
25 B անուանակցին

արեւելից ամս եօթն։ Որ և չորս հազար մարդով միայն անցեալ գիշերի ընդ ծով, ի վերայ անկանի բիւրաւոր զօրացն ապստամբին, և յայնքան բազմութեան ոչ ոք մեռանի, բայց միայն ինքն ապստամբն գլխովին։ Զորոյ զգլուխն հատեալ՝ հրամայէ հարկանել փող խաղաղութեան։ Եւ ի դադարել պատերազմին՝ իւրաքանչիւր ոք ի զօրացն դառնան ի տունս իւրեանց. և ինքն Թագաւորն մեծաւ յաղթութեամբ երթեալ մտանէ ի քաղաքն իւր Կոստանդնուպօլիս։

Նոյնպէս և աստ ոչ ինչ յերկարեցաւ նոցա մանկական խաղուն արարուած, և կամ ի վերայ աւազոյ շինուած, որ ի բախել հողմոցն վաղվաղակի անկեալ կործանեցաւ. քանզի Դաւիթ որ Սենեքերիմ կոչիւր, որ նստեալ ի Պարսից՝ տալ զհայրենի ժառանգութիւն իւր զտունն Վասպուրականի յինքնակալն Վասիլ, և առնու փոխարէն զքաղաքն Սեբաստիա և որ շուրջ զնովաւ գաւառք։ Եւ այսոքիկ ոչ հեռի ժամանակաւ, այլ երկու կամ երեք յամօք առաջ գործեցաւ. և յայնմհետէ և այսր տիրեցին Հոռոմք արևելից։ Սա յայնժամ, ի խորհուրդ միաբան ապստամբիցն էր, և հաւատարիմ առ նոսա. որ յանկարծակի իբրև ի քնոյ զարթուցեալ, կամ իբրև զհզօր այր՝ զի թափէ զգինի, տեսեալ զգործոյն անպատեհութեան, և զի ո՛չ գոյր այլ իւիք հնար խափան առնել չար միաբանութեանն, ապա ի միում աւուր յեղակարծ ժամու՝ առնուն զոր Թագաւորն անուանեցին, եկին արտաքս ի բանակէն որպէս թէ ի խորհրդական բանից պատեհութիւն. և յանկարծակի սուր ի վեր առեալ սպան զնա։ Եւ հատեալ զգլուխն և տարեալ ցծառայսն իւր՝ փութապէս հասուցանէ առ Թագաւորն։

Իսկ ժողովրդքն՝ ի լինել այսորիկ այսպէս, այլ զաւամբ եկանէին փութապէս դանդաղաբար ի տունս իւրեանց հասանել. և առժամայն խափանեցան ամենայն խորհուրդք նոցա։

---

2 AB ապստամպին G այնքան
3 Gh մեռաւ C բազմութեանն I միայն այն A ապստամպն B ապստամբ
5 H դադարելոյ GՏ չիք ոք
7 CGՏ ի կոստանդնուպօլիս ADIЛ կոստանտնուպաւլիս
8 EF յերկարացաւ
9 G չիք և BC աւազու
10 B դաւթ ABCDEFIЛ սենեքերիմն Ծ[2] սենեքարիմ h լուսանցքում սենեքերիմ որդի <ունի> փոխան վասպուրականի առնու զսեբաստիա ի վաղէ
11 G ժառանգութիւնն I ժառանգութիւնս BCD չիք իւր d իւր
12 BCEFH սեբաստիոյ
13 A այդ
14 H յայսմհետէ
15 F չիք միաբան A ապստամպիցն HՏ ապստամբացն
16 EFG իբր
17 B զգին I ըզգինի BI զգործս AB անպատեհութիւն I չիք և
18 B միաբանութեան C և ապա
19 B եղակարծ I չիք յեղակարծ. . . առնուն
20 BC չիք ի GԾ[1] ի խորհուրդ պատեհութեան
21 Л հարեալ փխ հատեալ
22 EFՏ ցծառայս F հասուցէ
23 G այսոցիկ
24 G դանդաղապէս



Իսկ Թագաւորն տեսեալ զգլուխ բռնակալին, հրամայէ ի վերայ ձողոյ բարձրացուցանել ի տեսիլ ամենայն բանակին. քանզի էին բազումք ի նոցանէ որ թէպէտ ուրեմն ընթացիւք զհետ Թագաւորին էին, այլ բանիւ և խորհրդով ընդ ապստամբին միաբան էին։ Զայս առնէ ըստ իւր խորին իմաստութեանն, որպէս զի տեսեալ զայն՝ ի բաց կացցեն ի նանիր խորհրդոցն, և ուղղեսցեն զսիրտս իւրեանց ի հնազանդութիւն Թագաւորին։

Յետ այսորիկ իջանէ Թագաւորն զօրօքն յընդարձակ դաշտն Բասենոյ, և առաքէ հեծեալս ի հեթանոսական զօրացն կալանաւորս ապստամբին Փերսի. և ինքն խաղացեալ հասանէ ի սպառուածն Բասենոյ, ի տեղւոջն որ կոչի Սալքորայ, և խոր փոսիւ պատնէշ արարեալ շուրջ զբանակաւն՝ դադարէ անդ ամսական աւուրբք կամ ևս առաւելագոյնիւք։

Իսկ առաքեալքն ի Թագաւորէն կալեալ զՓերս և զԱնդրոնիկէ զնորուն փեսայն, որ էր համախորհ նորին, և ածեալ մինչև յամուրն որ կոչի Խաղտոյ Առիճ ի սպառուածն Կարնոյ, և հասեալ յագարակն՝ որ հայի ընդդէմ ամրոցին, իջևանս արարեալ, և յառաջ ածեալ զՓերսն և Անդրոնիկոսն՝ հատին զգլուխս նոցա։ Քանզի զայն պատուէր տուեալ էր նոցա Թագաւորին. վասն զի նոքա յապստամբելն իւրեանց դաշնաւորք եղեն Աւփխազին և խոստացան մինչև յայն տեղի տալ նմա ի բաժին. վասն զի յառաջ ժամանակաւ կալեալ էր զայն Դաւթի Կիւրապաղատի, բայց ոչ իբրև զիւր հայրենի ժառանգութիւն, այլ պարգևք էին այսոքիկ ի Թագաւորէն վասն նորա միամիտ հնազանդութեանն։ Եւ զի խոստացեալ էր՝ յետ իւր վախճանին զիւր գաւառն տալ ի Թագաւորն, նոքա զայն չածէին զմտաւ, այլ առատամիտ ի պարգևսն լինէին՝ որ չէր իւրեանց։ Վասն այնորիկ անդ հրամայեաց Թագաւորն զգլուխս նոցա բառնալ։

---

1 GHՏ հրամայեաց
1—2 B ձաղոյ
2 G տես
4 I խորհուրդով AB ապստամպին DIЛ չիք իւր
5 B իմաստութեան DIЛ իմաստութեան իւրոյ B ի բայց
6 I խորհուրդոցն GHՏ ուղղեսցին ի սիրտս h զսիրտս
8 GHՏ զօրօք H ընդարձակ I բասենայ
9 A ապստամպին
10 EF իջանէ և հասանէ
11 Տ սալքորա
13 ABDEIЛ զանտոնիկէ C զանտոոնիկէ
14 EG համախոհ
15 GԾ[2] առին AEF կարնայ BCDIЛ կարնա
16 AEFH իջեւանս G զփերս
16—17 ABCFI զանտոնիկոսն DE զանդրոնիկոսն G զանտրոնիկէ
18 AB յապստամպելն G ի յապստամբելն I ապստամբելն
19 ABDEFGHIԾ[3] բաժնի
20 DIЛ յառաջին ADEFIЛ կիւռապաղատի B կեռապաղատի C կիւռապաղատին
21 A այգ
22 DIЛ հնազանդութեան
23 Gh չիք ի GhԾ[1] Թագաւորին
24 DIЛ ոչ ածէին HՏ պարգեւ G չիք որ չէր իւրեանց
25 DIЛ բառնալ զգլուխ նոցա G զգլուխ

## Դ

## ՎԱՍՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ Ի ՇՂՓԱՅ

*Այլ թագաւորն զաւուրսն զորս եկաց ի Սալքորայ, քանզի երիս բերդս իւրեանց դաստակերտօքն խնդրէր ի Գէորգէ, զոր Գուրգենայ տարեալ էր ի բաժնէն Կիւրապաղատին անիրաւաբար, առաքէր առ նմա գեսպանս, և քաղցրական բանիւք գրէր առ նա, թէ Զոր քո չէ հայրենի ժառանգութիւն՝ թող, և կա՛ց խաղաղութեամբ ի քո բաժնիդ, և մի խափան առնէր իմ ճանապարհին որ ի Պարսիկս: Այլ նա ոչ առնու յանձն. յետոյ առաքէ զՋաքարիա՝ զոր յառաջ սակաւ մի յիշեցաք, զեպիսկոպոսն Վաղարշակերտոյ. որոյ երթեալ և հաւանական բանիւք պատրեալ զԳէորգի, որում յանձն առնու, և գրէ առ թագաւորն տալ զոր խնդրէրն. որոյ առեալ զգիրն դարձաւ ուրախութեամբ:*

*Եւ եկեալ օրագնաց մի ճանապարհ, ի յիջևանսն՝ յոր օթևանս առնելոց էր, փութանակի հասին զկնի նորա սուրհանդակք ի խնդիր գրոյն, քանզի զղջացաւ անմիտն. և առեալ դարձան անդրէն: Իսկ նա երթեալ հանդիպի թագաւորին, և պատմէ զեղեալսն. ապա հարցանէ թագաւորն վասն զօրացն, և վասն կազմ լինելոյ նոցա ի պատերազմական հանդէսս: Պատասխանի տուեալ Զաքարիայն ասէ, թէ Բազում զօրս ունի որպէս ոչ այլ ոք, և հզօրս զօրութեամբ և պատրաստ առ ի պատերազմել: Զոր լուեալ թագաւորին, ի բարկութիւն շարժեալ ասէ, թէ Եւ դու յապստամբիցն ես եկեալ, ահ արկանես ինձ: Եւ հրամայէ խաղացուցանել զնա ի Կոստանդնուպօլիս, ասելով. Ե՛րթ զաղարեա անդ, մինչև ես փախստական 'ի քեզ եկից: Եւ հրամայէ տարողացն հատանել զլեզու նորա: Որոյ երթեալ ոչ ևս դարձաւ ի տեղի իւր. այլ մնաց ի նոյն մինչև ցօր մահուան իւրոյ:*

2 DIЛ *շղփա* H *շղփայ եղև* [h *չիք եղև*]
3 A *այդ* DEF *զոր* AEDЛ *սալքորա* BC *սալաքորա* I *սալայքորայ*
4 DIЛ *խնդրէ* BCDЛ *գուրգենա* EHI *գորգենայ* F *գուր* Տ *գուրգենայ*
5 G *բաժնէ* ABDFIЛ *կիւռապաղատին* C *կիւռպաղատին* E *կիւռապաղատէն* h *կիւրապաղատին* GHՏ *կիւրապաղատէն* G *առաքէ*
6 F *գեսպան* GHՏ *քո ոչ է*
9 BDЛ *զզաքարիա* G *զզաքարիայ*
10 B *վաղարշակերտու* GՏ չիք *և* I *տարեալ* փխ *պատրեալ*
11 C *յորում* GhԾ[1] *զոր* A *առու* փխ *առնու*
13 GHՏ չիք *ի* FHՏ *իջավանսն* Ծ[3] *օրագնաց մի ի ճանապարհին իջավանսն* ABCF *որ* EF *օթէվանս*
13–14 CDFhIЛ *առնելոց* H *առնէր*
14 H *հասանին*
17 B *կազմելոյ* C չիք *ի պատերազմական հանդէսս* GHՏ *հանդէսն*
18 H չիք *ասէ* h *ասէ* I չիք *ոչ*
19 F *հզօր* I *անպատրաստ* G *պատերազմել*
20 C *թագաւորն* I *թագաւորին բարկութեամբ* ABCDEFIЛ չիք *ասէ*
20–21 A *յապստամպիցն* B *յապստամպից* C *ապստամբից* I *յապստամբից*
21 DЛՏ *խաղաղացուցանել*
22 ADЛ *կոստանդնուպաւլիս*
22–23 I չիք *փախստական*
23 CEFG *տանողացն*
24 GHՏ *և ոչ* A *այլ*



*Յետ այսորիկ թողեալ թագաւորին զրանակետղ իջևանին Սալքորայ, խաղայ զօրօքն յառաջին տեղւոջն որ կոչի Շղփայ: Զոր իմացեալ Աբխազին, մինչդեռ չև էին բանակեալ և պատնշաւ ամրացեալ, խորամանկի այսպիսի օրինակաւ: Գլխաւոր զոմն յիւրոց եպիսկոպոսացն դեսպան առաքէ և ինքն զկնի դեսպանին զօրօքն զհետ ընթանայ՝ որպէս թէ յանպատրաստից ի վերայ հասեալ՝ զարհուրանօք զնոսա ի փախուստ դարձուցանիցէ: Որք եկեալ սթափ ձիով՝ այր զընկեր յառաջէր ոչ պատերազմի օրինակաւ, այլ որպէս թէ յառ յաղուռ. որպէս ի հնումն յաւուրսն Յովրամայ՝ Մովաբացիքն ի վերայ Իսրայէլի եկեալ հարան ի սուր զատնութեան, նոյնպէս և սոցա հանդիպեցաւ: Վասն զի յանդգնաբար հասեալ ի վերայ երիվարացն, ի զօրութենէ պակասեալ՝ վասն ծանրութեանն և վասն երկաթակուռ զինուցն, և վասն արագ և յերկար ընթացիցն, որք առժամայն անաշխատ ի մէջ առեալ զնոսա զօրացն Հոռոմոց, կոտորեցին անթիւ բազմութիւն: Իսկ մնացեալքն թագաւորաւն իւրեանց փախըստական եղեալ՝ անկան ի յամուրն Աբխազաց. որոց զհետ երթեալ զօրացըն՝ կոտորեցին մինչև ի մուտս արևուն: Ապա հրամայէ թագաւորն զգլուխ սպանելոցն ի մի վայր հաւաքել, և առ մի մի բերողացն տալ մի մի դահեկան. որք խայց արկեալ ընդ ամենայն սահմանսն՝ զանկելոցն զգլուխսն առաջի թագաւորին ի մի վայր հաւաքէին. զոր հրամայէ ի վերայ ճանապարհին կոյտս դնել ի զարմանս և յերկիւղ անցաւորացն:*

*Յետ այսորիկ իբրև ետես Գէորգի զինքն անկեալ յամենայն յուսոյ, ապա աղաչէ զթագաւորն գալ ի խաղաղութիւն: Զոր լուեալ գթացաւ ի նա, և գրէ հրովարտակ առ նա օրինակ զայս. Մի կարծէր, ասէ, թէ յաղթեցի քեզ, աւելի ինչ խնդրեմ ի քէն՝ քան զոր յառաջն. այլ տո՛ւր զիմ հայրենիքն՝ զոր Կիւրապաղատն ինձ տուեալ է, և տուր զքո որդիդ*

1 C *զրանակեալ* փխ *զրանակետղ* H *զրանակն* h *զրանակետղ* ABEFH *իջավանին*
2 EFGHՏ *յառաջ ի* DGIЛ *յառաջ* Տ *տեղւոջ* A *շղփա* H *շղփայ*
4 C *իւրոց* ACDEFIЛ *եպիսկոպոսաց* DIЛ *դեսպանս*
5–6 GH *անպատրաստիցն* I *յանպատրաստից*
7 DI *եկեալք* Л *եկեալ* I *թագ ձիով* C *զերկել* փխ *զընկեր* DIЛ *ընկեր*
8 BC չիք *որպէս* GHIՏ *առ*
9 BI *յովրամա* ABC *իսրաէղի*
9–10 EF չիք *հարան... զատնութեան*
10 G *զիպեցաւ*
11 BCDEFGIЛՏ *ծանրութեան*
12 G չիք *և (վասն արագ)*
13 G *զօրաց* CI *հոռմոց*
15 ABCDEFIЛ *անկանին* GHՏ *անկանէին* ABCDEFGHIЛՏ չիք *ի* Ծ[2] *անկան ի յամուրն*
17 CD *ժողովել* փխ *հաւաքել*
19 GhՏԾ[2] *բերելով ի մի վայր* [G *բերելով* փակագծերում]
20 C *կոյտ կոյտս* A *յերկեւղ* G *անցողաց*
21 G *ամենայն*
22 Gh *աղաղակեալ* փխ *աղաչէ* BEFH *զորս*
23 E *առ նա հրովարտակ* HԾ[2] *հրաման* փխ *հրովարտակ* h *հրովարտակ*
24 H *քանզի*
24–25 EF *տուր ինձ զիմ*
25 ABCDEFHIЛ *կիւռապաղատն*

ինձ պատանդ. և այլ ընդ իս և ընդ քեզ խաղաղութիւն է: Որում հաւանեալ յանձն առեալ. և Թագաւորին իշխանս ի վերայ գաւառին կացուցեալ, բաժանեն առն առաջի և գեւղ առ գեւղ և ագարակ առ ագարակ, որպէս յառաջինն լեալ էր: Եւ Թագաւորին Վասլի առեալ զպատանդսն՝ և խոստացեալ զկնի երից ամաց դարձուցանել. և ինքն խաղացեալ զօրօքն պատի զՀայովք, և իջանէ բանակի յընդարձակ դաշտն Հերայ. և հրամայէ զօրացն կոտորել զծառաստանս քաղաքին: Իսկ որ քաղաքին իշխանն էր, աղաչէր հարկօք պաշտել զԹագաւորն և կալ նմա ի հնազանդութիւն:

Եւ մինչ նա այս խորհրդի էր, քանզի ամենայն աշխարհն Պարսից առ հասարակ զարհուրանօք պաշարեալ կային յերկիւղի, և խնդրէին հնարս փրկութեան, յանկարծակի խառնեան ամպովք երկինք և յորդութիւնք անձրևաց յերկիր հեղան. և զկնի այնր շնչեաց հիւսիսային կծու հողմ, և դարձոյց զանձրևն ի կարկուտ և ի ձիւն և ի սառն, և Թանձրամած խլիւք ծածկեաց զերեսս երկրին. քանզի և ժամանակն իսկ ձմեռնային էր այնմ, զի քաջ ի ձմերոց հասեալ էր: Եւ երկարեալ յորդութեան ձեանն, և խստութեան սառնամանեացն, ջոկք ձիոցն և ջորեացն ընդարմացեալ ոչ կարացին շարժել: Իսկ հետևակքն ի զօրացն՝ ի դառնութենէ սառնամանեացն ծայրք ոտիցն և ծայրք ձեռացն խլեալ ի հրոյ կիզեալք, հատեալք անկանէին. և վրանացն լարքն և ցիցքն ընդ երկիր կապեալ ի սաստկութենէ դառնութեան արկածիցն՝ անշարժ մնացին: Եւ այս որպէս ինձ թուի հատուցումն նոցա անողորմ սրոյն, զոր նոքա ի վերայ քրիստոնէիցն ածին. այլ Թէպէտ նոքա վասն մեղացն մատնեցան, որ նոցա պարտ էր ողորմել, որպէս և ցԲաբելացին ասէր Աստուած. «Ես մատնե-

1 A այդ Л չիք (ընդ) քեզ G յորում
2 G չիք և
3 B առն առն փխ առն առ առն ABDF գեւղ առ գեւղ CGHЛՏ գեօղ առ գեօղ E գեօղ առ գեւղ
4 I յառաջնն EF առեալ փխ առեալ A զպատանդսն
5 B չիք և
6 C իջեալ E իջանի AEF ընդարձակ GHՏ հերա H չիք յընդարձակ դաշտն հերայ h յընդարձակ դաշտն հերայ GHՏ հերայ հեծելովք [G հեծելովք փակագծերում]
7 I չիք որ
9 I մինչ դեռ նա
10 B երկիւղի CDIЛ յերկիւղէ
11 DIЛ խառացան G խառացան ABCDEFIЛ ամպով
12 C երկիր ABCDIЛ հեղաւ C հողմն
13 H զանձրեն ի կարկուտ դարձոյց h դարձոյց զանձրեն ի կարկուտ
14 C ձմեռնատու GՏ ձեռնատու Ծ[3] ձեռնատու
15 EF էր հասեալ
16 BCDIЛ ձիոց
17 G շարժիլ GdЛ հետևակք
18 BCDI ոտից CDFI չիք ծայրք (ձեռացն) Л չիք ծայրք... ձեռացն
18—19 AEF հատեալ
19 DGHIЛ վրանաց
21—22 ADFIЛ քրիստոնէից B քրիստոնէի
22 GH այլ որ Տ այլ փխ որ
23 B է փխ էր ABCDEFGIЛ ողորմիւ C ցբաբելացւոյն Gh առ ցբաբելացին BDIЛ ասէ



ցի զժողովուրդ իմ ի ձեռս քո. և դու ոչ արարեր ի վերայ նոցա ողորմութիւնս»*: Վասն այնորիկ դառն սառնամանեօք սատակեցան, ոչ ի բարձր լերինս, այլ ի խորագոյն դաշտս և ի կարի ջերմինս՝ ի տեսիլ Թշնամեացն իւրեանց. որպէս առ Մովսէսիւ Եգիպտոս հարաւ կարկտիւ և եղեմամբ, որ չէր լեալ բնութեան երկրին. ուստի բարբարոսքն ծանեան յայտնապէս, եթէ ձեռն ամենակալին պատերազմի ընդ նոսա: Եւ ի լինել այսորիկ այսպէս, որք ուժով և զօրութեամբ մնացին՝ ելեալ յերիվարսն Թագաւորաւն հանդերձ, իբր ի Թշնամեաց հալածեալք ի սառնամանեացն՝ ոչինչ փոյթ առնելով ընչից, անցանէին ի գաւառն Արծրունեաց: Զոր տեսեալ քաղաքին, յանկարծակի դրոհ տուեալ ի դուրս ելանէին, և մեծաւ խնդութեամբ դիմեալ ի վերայ, լցան աւարաւ ի ձիոց և ի ջորեաց և ի վրանից և յայլ կազմածէ, զոր նոքա չկարացին պէտ առնել, այլ ի ցրտոյն վարանեալ էին: Իսկ Թագաւորն նախատեալ յաւարառուացն՝ ծանեաւ յայտնապէս Թէ ձեռն տեառն մատնեաց զՎիրս ի ձեռս նոցա, որպէս ի գիրս Թագաւորութեանն գրեալ է. «Ոչ, ասէ, իւրով զօրութեամբ զօրանայ հզօրն, այլ տէր տկարացուցանէ զհակառակորդն»**: Ապա շարժեալ Թագաւորն զօրօքն՝ անցանէ ընդ բազում օԹևանօք, երԹեալ հասանէ ի քաղաքն իւր ի Կոստանդնուպօլիս. և կացեալ ամս երիս, արձակէ բազում պարգևօք զորդի Ափխազին, և ինքն զմահու ցաւ ջերանի:

Բայց քանզի Կոստանդին նորին հարազատն և Թագակիցն ի Նիկիացւոց գաւառին էր, զոր հրամայէ Թագաւորն խնդրակս առաքել, որպէս զի փութով առ նա հասցէ: Իսկ որք հրամանատարքն էին՝ բանիւք հաւանութիւն տային, բայց Թագուցանէին առ ինքեանս զհրամանս Թագա-

* Եսայ. խէ. 6. ** Ա. Թագ. Բ. 9.

1 CFGHՏ նոցա
2 GHՏ այսոցիկ AB սառնամանեւք
3 A այդ
3—4 ABCDEFIЛ Թշնամեաց
4 Gh և որպէս B մովսիսիւ dЛ մօսիսիւ FHՏ մովսէսիւն AB եգւպտոս
4—5 I եղեղմամբ
5 EF ոչ էր փխ որ չէր F բնութեամբ
6 GHՏ լինելն
7 A յերիւարսն B երիւարսն C երիւարս GHՏ յերիվարս
9 G առնելով փխ առնելով H ընչիցն
10 A դրոհ փխ դրոհ F դրոհ
11 BCDIЛ ուրախութեամբ փխ խնդութեամբ F չիք լցան GH լցաւ
12 B այլ EFGHՏ ոչ կարացին ABCDEIЛ այլ առ փխայլ ի FH չիք (այլ) ի
13 BCEFHI չիք էին h էին
15 BCDGIЛ Թագաւորութեան
16 A այդ BCDHIЛԾ[2] տէր առնէ
17 GHՏ չիք ընդ
18 CDFIЛ չիք ի (կոստանդնուպօլիս) A կոստանտնուպաւղիս DЛ կոստանտնուպօլիս AEF կեցեալ
19 BDI ապխազին B ջերմանի
20 ABDI կոստանտին
21 Տ որ փխ զոր Ծ[3] զոր GH հրամայէր G զխնդրակս
22 ACDEЛ որ B հրամանատարքնն GՏ հրամանատարք H հրամանատարք
22—23 BC հաւանութեան
23 C Թարուցանէին G զհրաման

ուրին. քանզի ոչ կամէին եթէ Կոստանդին թագաւորեսցէ: Զոր լուեալ թագուհւոյն հրամայական բանից ծանուցեալ ինքնակալին զխորամանկութիւն նոցա, հրամայէ սպասաւորացն՝ եթէ Զի ածէք ինձ. և յարուցեալ ի մահճացն նստաւ ի վերայ ձիոյն, և ելեալ արտաքս ի պալատէն ի տեսիլ քաղաքին. զոր տեսեալ բազմաց՝ լերկիւղէն ի խաւարչային տունս երթեալ սուզանէին: Այսպէս խնդրակքն ելեալ զԿոստանդին փութապէս առնել հասուցանէին, զոր տեսեալ թագաւորին՝ եդ զթագ թագաւորութեանն ի գլուխ նորա և հաստատեաց զնա թագաւոր, և պատուէր ետ նմա՝ որպէս Դաւիթ Սողոմոնի, զխռովիչս թագաւորութեանն, և զայնոսիկ որ ոչ կամէին զթագաւորելն նորա ի վերայ իւրեանց, ոչ պահել կենդանի. բայց ոչ որպէս Դաւիթ, թէ Պատճառաւ որսասջիր: Եւ ինքն առեալ զոտս ի մահիճս իւր՝ պակասեաց, և զկնի երկու աւուր բարձաւ ի միջոյ. որ թագաւորեաց ամս յիսուն: Բայց և ի մահուան նորա նշան իմն սքանչելեաց ցուցաւ յերկնից, ի ժամու երեկոյին՝ յորում նա զհոգին փչեաց, վերին եթերն հերձեալ հրոյ փայլակն յանկարծակի ի գուբս անկեալ. զոր առհասարակ ամենեցուն տեսեալ, զմահ թագաւորին, ասեն, գուշակէ:

## Ե

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ

Թագաւորեաց զկնի Վասլին Կոստանդին նորուն հարազատն՝ ամս չորս. և քանզի այր խաղաղասէր էր և առատ, յառաջին ամի իւրոյ թագաւորութեանն եկաց ի լռութեան. և հանգեաւ երկիր ի մեծամեծ տագնապէ. և զիշխանս որ գաւառակալք էին, զորս մեծն Վասիլ կարգեալ էր, ի նոյն հաստատեաց: Իսկ Կոմիանոս ումն՝ այր քաջ և պատերազմասէր, զոր կացուցեալ էր եղբայր նորին՝ տէր գաւառին Վասպուրականի, սա

1 BC չիք եթէ DIЛ թէ ADIЛ կոստանտին H կոստանտինն
2 C հրամանական GHS բանին HԾ² բանաւորին փխ ինքնակալին h ինքնակալին
2—3 GԾ³ ծանուցեալ զխորամանկութիւն ինքնակալին նոցա
4 ABCDEFЛ պաղատէն
5 EF խաւարաչին
6 GHS խնդրակք AI զկոստանտին
7 I հասուցանէին CI թագաւորութեան
9 BDFIЛ սողովմոնի GHS սողոմոնի BCDIЛ թագաւորութեան
9—10 C կամին
12 C աւուրց
14 C երկնից C ժամ AE երեկորին B երեկուին C որում
15 B հեծեալ փխ հերձեալ
15—16 EF ի խ<ա>ւարս GS ի ատորս փխ ի գուբս Ծ³ ի գուբս DЛ ամենեցուն առ հասարակ
16 B ասէ I չիք ասեն
18 FGh թագաւորութիւնն ABC կոստանտեա DEFЛ կոստանդեա
19 BCDIЛ վասլի A կոստանտին C նորին
20 BC Դ (3!) BDIЛ չիք այր C յառաջի GHS ամին EFI չիք իւրոյ
20—21 C թագաւորութեանն իւրոյ BDIЛ թագաւորութեան
22 E զիշխանսն E գաւառակալքն I զոր
23 BCDFGIЛ նոյն BC կոմիանոս G կոմնիոս Ծ¹ կոմնիաս G քաջ այր
24 DIЛ չիք էր



մեծամեծ գործս արութեան ցուցեալ ի գաւառն Պարսից, և եղև անուանի յամենայն արևելս. սա ի մահուան թագաւորին խորհուրդ վատ ի մտի արկեալ, դաշնակից լինի Գէորգեայ թագաւորել յարևելս: Զոր ծանուցեալ կապադովկացի զօրուն, միաբանեալ յանկարծակի ի վերայ հասին, և զլաբրս վրանին հատեալ ի վերայ ընկեցին. և կալեալ զնա և զնորին խորհրդակիցսն՝ եդին ի բերդի միոջ ի բանտի, և ծանուցին թագաւորին: Այս եղև յառաջին ամի թագաւորութեանն Կոստանդիանոսի, յորում էր թուականիս մերոյ ամք չորեքհարիւր եօթանասուն և հինգ:

Իսկ թագաւորն երբև լուաւ, ոչ եսեղեաւն չէած ինչ նմա պատուհաս. այլ ներեաց զամն ողջոյն, մինչև քաջ ի վերայ եհաս իրացն: Ապա ի գալ երկրորդ ամին, առաքեաց գահիճ, որ եկեալ խաւարեցոյց զլուսաբանս նորա և զորս ընդ նմա՝ արանց երից ումեք. որ յոյժ ապաշաւանաց արժանի է, թէ զի՞րդ զառածեալ անկաւ ի մտաց այնպիսի պատուական այր և բարեաց յիշատակաց արժանի. քանզի զԱրճէշ իւրով զաստակերտօքն նա ած ընդ ձեռամբ Հոռոմոց:

Իսկ ի գալ երկրորդ ամին՝ առաքէ թագաւորն յարևելս վերակացու աշխարհին զՆիկիտ ումն ներքինի, որ եկեալ անցանէ ի գաւառն Վրաց, և պատիր բանիւք զբազումս յազատաց աշխարհին հանեալ ի հայրենեաց՝ առաքէ ի դուռն թագաւորին: Զոր տեսեալ և ուրախացեալ՝ մեծամեծ պարգևօք և իշխանական գահու պատուէ զնոսա, և տայ նոցա ըստ արժանեաց գիւղս և աւանս գրով և մատանեաւ ժառանգութիւն յաւիտենից: Իսկ ի մտանել երրորդ ամին՝ ելանէ յարևելս Սիմոն ներքինի բազում զօրօք, որ ունէր զիշխանութիւն կէս թագաւորութեանն, զոր ըստ յունական լեզուին պառեկիմանոս անուանեն. որ եկեալ անցանէ յաշխարհն

1 C արութեան E արուութեան
2 C ամենայն A յարևեալս EF յարևելս BC վատի
3 GHS եղեալ փխ արկեալ hԾ¹ արկեալ ABC գէորգայ DIЛ գէորգա F գէորգեա A յարևեալս I թագաւորեալ
4 ABDEF կապուդակացի d կապադովկացի GHS կապուտակացի C միաբան
5—6 I խորհրդակիցն
6 DIЛ բանդի
7 B առաջին C առաջի CDIЛ թագաւորութեան AB կոստանտիանոսի C կոստանդնի
9 HIS ասեղեաւն h եսեղեաւն G նմա ինչ
10 C ողջ B իրաւանց փխ իրացն CDЛ իրաւանցն
11—12 BC լուսաւորսն DIЛ զլուսարանսն
12 B զզօրս փխ զորս I առանց
13 Gh եթէ B թէ արդ C յայնպիսի
14 C այրն HԾ² բարի h բարեաց DЛ իւր
15 BGS զաստակերտօք GS էած C հոռմոց
16 A յարևեալս
17 ACDEHIЛS զնիկիտամ B զկնիտամ FG նիկիտան. զնիկիտ ումն ձևն ըստ Ն. Ադոնցի „Notes arméno-byzantines", Byzantion, X, 1935, 1, p. 180, n. 1. BCDIЛ ներքենի
18 GHS բազումս C յայրենեացն
20 H չիք տայ h տայ
21 ABDEF գեւղս CGHЛS գեօղս
22 ABDЛ յարևեալս C արևելս ABCDEFIЛ սիմոն ABC ներքենի
23 F իշխանութիւն BCDIЛ թագաւորութեան
24 H պառեկիմանոսս Ծ¹ անուանէին

վրաց: Բայց չժամանեաց գործ ինչ վճարել, զի բօթ մահու թագաւորին գնեա եկն. զոր իբրև լուաւ՝ առանց յաջողանաց դարձեալ զօրօքն չոգաւ ի Կոստանդնուպօլիս:

## Թ

## ԹԷ ՈՐՊԷՍ ԹԱԳԱՒՈՐԵԱՑ ՌՈՄԱՆՈՍ

Բանզի Վասիլն, հզօրն ի թագաւորս և միշտ յաղթօղն ի պատերազմունս, որ զբազում աշխարհս կոխեաց ընդ ոտիւք, լարիական քաջութեանց ոչ պարապեաց առնուլ կին, և յարուցանել որդիս ժառանգ թագաւորութեանն, որպէս օրէն է ամենայն թագաւորաց: Զկնի նորա փոխանորդէ զթագաւորութիւն յառաջասացեալն Կոստանդիանոս նորին հարազատն: Եւ սորա ևս քանզի որդի ոչ գոյր, այլ էին դստերք երեք, տայ զՁոյի զանդրանիկն ի կնութիւն Ռոմանոսի, որ էր մի ի զօրացն սպայից Հոռոմոց, և թագաւորեցուցանէ զնա փոխանակ իւր, և ինքն մահուամբ ճեպի գնեա ամենայն երկրածնաց:

Սա յառաջին ամի իւրոյ թագաւորութեանն՝ զօրաժողով լինի, և ճանապարհ առնէ ի կողմանս Անտիոքացւոց. և կամէր երթալ ի վերայ քաղաքին որ կոչի Հալպ, առնուլ աւերել զնա: Եւ եկեալ հանդիպի լերինն որ կոչի Սեաւ, և տեսանէ անդ բազմութիւն վանորէից և զմենաստանս մենակեցաց, որք ի մարմնի գոլով զանմարմնոցն բերէին զնմանութիւն: Որք միով ալծէիւ կամ բաճկոնաւ շատանան, զՅովհաննու բերելով զնմանութիւն. բայց միայն զի նա մարախով և վայրենի քաղցու կերակրեալ լինէր, իսկ սոքա երկաթի բրիչ ի ձեռն առեալ՝ խոնջեալ աշխատին ի գործ սերմանեաց պատրաստել զօրապահիկն կերակուր: Այլ զզանազան

1 H չժամանեալ h չժամանեաց EF կատարել փխ վճարել I վճարեալ
2 DIЛ յաջողելոյ
3 A կոստանդնուպաւղիս I կոստանդնուպօլիս
5 BCDIЛ ռոմանոս G ռամանոս
6 I յաղթօղսն
7 EF բազում ABCDEFHIЛԾ[3] չիք ընդ (ոտիւք) CdGIЛ արիական
8—9 CDIЛ թագաւորութեան
10 CFGh թագաւորութիւնն BC յառաջնասացեալն ABD կոստանդիանոս EF սորին փխ նորին
11 G ոչ գոյր որդի
12 A զոյի DGHЛ անդրանիկն I չիք զանդրանիկն BC չիք ի (զօրաց) GHS զօրաց BCDGhЛ սպայիցն
14 Ծ[1] գնեա երկրածնաց Ծ[2] գնեա ամենայն երկրայնոց
15 C յառաջի BDIЛ թագաւորութեան B զօրաժողով
16 B անւոքացւոց CDFIЛ անտաքացւոց E յանտաքացւոց
17 G և աւերել BCDI ի լերինն
19 BDEIЛ մենակեցայց GhS միայնակեցաց AE բերեն
20 ABCDEFGHIЛ այծէիւք AB զովաննու CE զյովաննու DЛ զովաննուն I զովանուն
21 C բայց նա միայն DЛ չիք նա I չիք զի նա
22 I լինէր նա FG աշխատէին
23 Ծ[1] զար E պատրաստել B պաւրապահիկն փխ զօրապահիկն



խոտաբիկս և զբաղցրահամ կերակուրս հանդերձ արախարար գինւով զոր մատուակեն որթք այգեաց, զայսոսիկ զամենեսեան աշխարհամոլացն թաղին: Ի գլուխ լերինն բարձրացեալ նախամարգարէին կաճառակից գոլով՝ միշտ ընդ Աստուծոյ խօսին:

Զասս տեսեալ թագաւորին՝ հարցանէր արժանաւորաց իւրոց. Զի՞նչ են այս բազմութիւն հերձուածողացն: Եւ նոքա ասեն. Սոքա ամենեքեան երամք աղօթողաց են, որք աշխարհի խաղաղութեան և կենաց ձերոց առողջութեան միշտ խնդրուածս առնեն: Պատասխանի տուեալ թագաւորն ասէ. Չէ ինձ պիտոյ աղօթք նոցա. այլ գերեցէք յամենայն վանորէիցն աղեղնաւորս ի ծառայութիւն իմում թագաւորութեանս: Բանզի լայժ հաւանեալ էր քաղկեդոնական սահմանադրութեանն՝ առելի գոլով ամենայն ուղղափառ հաւատոյ: Որ և զԱսորւոց եպիսկոպոսն տարեալ ի Կոստանդնուպօլիս, ձաղ և ծանակ արարեալ, հրամայէ խուզել զմօրուսն, և ի վերայ իշոյ եդեալ շրջեցուցանել ընդ հրապարակս և ընդ փողոցս, թքակոծ առնել զնա. զոր լեալ հրամայեաց ի մեռեալս տանել զնա, որ և ի նորին իսկ վախճանեցաւ: Այսպէս խակամիտ ոմն էր թագաւորն. որ և զառաջին թագաւորսն չէած զմտաւ, թէ որպէս խնամակալութիւն ցուցին առ ազգս՝ զորս ընդ ձեռամբ ունէին. այլ ինքնօրէն հրամանաւ կամէր նորաձևս առնել յեկեղեցիս Աստուծոյ՝ ո՛չ յիշելով զտէրունական զանսուտ հրամանն, թէ «Ամենայն որ հարցի ընդ վիմիս ընդ այսմիկ՝ փշրեսցի. և յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ զնա»*: Վասն որոյ ի մօտոյ հասանէին արժանահաս դատաստանքն Աստուծոյ ի վերայ նորա: Որ և ի նմին ճանապար-

* Մատ. ԻԱ. 44.

1 BCDEFIЛ գինով GhS գինեաւ
2 DЛ զայնոսիկ GHS աշխարհամոլիցաց
3 DЛ թաղեալ
4 EGh խօսէին
5 G յարժանաւորաց
6 E իցեն փխ են B հերձուածողացս EF ասացեն
7 I և խաղաղութիւն ABCDEFGЛ խաղաղութիւն
8 G յառողջութիւն ABCDEFIЛ առողջութիւն H միշտ առողջութեան h առողջութեան միշտ BI առեալ փխ տուեալ S թագաւոր
9 GHS գերեցիք Ծ[2] գրեցէք ABCDIЛ վանորայիցն G վանորէից
10 G թագաւորութիւնս
11 BDIЛ սահմանադրութեան
12 G հաւատոյ DFHIЛS զատորոյ
12—13 A կոստանդնուպաւղիս BDIЛ կոստանդնուպաւլիս
13 Ծ[1] ծաղր փխ ձաղ DGHS զմորուսն BC զմուրուսն
14 Gh ընդ հրապարակս հրապարակս I չիք ընդ փողոցս C քթակոծ փխ թքակոծ
15 I չիք զոր... զնա
16 G իսկ ինքն EF թագաւորն H չիք և h և
18 E ինքն անօրէն DIЛ այլ ինքն հրամանաւն իւրով օրէնս նորաձևս կամէր առնել A ունէր փխ կամէր
19 I նշանաւոր փխ զանսուտ
20 B զեմս փխ վիմիս CDIЛ վեմս
21 BC յոր
22 F չիք նորա BCGHS չիք և

հի ելեալ զօր ի տաճկաց՝ ոչ աւելի քան զութ հարիւր կամ զհազար այր, և անկեալ ի վերայ բիւրաւոր բազմութեանցն, անչափ կոտորումն առնէին. և զգանձս թագաւորին և զօրացն առեալ յաւարի՝ դարձան ի քաղաքն իւրեանց։

Իսկ թագաւորն մեծաւ անարգանօք փախստական եղեալ՝ ձիաթափ անկանի ի քաղաքն թագաւորութեան իւրոյ։ Այս ցածուցեալ ի սաստիկ ամբարտաւանութենէն, կարաց ածել զմտաւ զբան դաւթական երգոյն որ ասէ, թէ «Բարի է յուսալ ի Տէր և յաղօթս սրբոց, քան յուսալ յիշխանս և ի գանձուց ստատութիւնս»*. քանզի ոչինչ օգնեն ինչք յաւուր բարկութեան։ Եւ յայնմ հետէ և առ յապայ ո՛չ ևս յաւել ելանել ի թագաւորանիստ քաղաքէն մինչև ցօր մահուան իւրոյ։

## Է

## ԱՌՈՒՄՆ ՈՒՌՀԱՅ ՔԱՂԱՔԻՆ

Որ քաղաքին իշխանն էր, զոր ինքեանք ամիրայ կոչէին, որ ի նախնեացն ունէր զժառանգութիւն տեղւոյն, մեռաւ անորդի. իսկ կին նորա զմի ի ծառայից իւրոց՝ որում անուն էր Սալաման, առ որդիական ցանկութեան սիրեաց զնա, և կացոյց զնա տէր քաղաքին ի տեղի առն իւրոյ։

Իսկ նա երկուցեալ ի գլխաւորաց քաղաքին՝ թէ ոչ հնազանդին նմա, առաքէ զմի ի հաւատարիմ ծառայիցն իւրոց առ Մանեակ, որ յայնժամ ունէր զիշխանութիւն յեգերս գաւառին Հոռոմոց, որ նստէր ի քաղաքին որ կոչէր Սամուսատ, զոր առեն ի հնումն շինեալ Սամփսոնի, որպէս զի զգացուսցէ թագաւորին, զի տացէ նմա իշխանութիւն և ժառանգութիւն յաւիտենից, գրով և թագաւորական մատանեաւ յաշխարհն Հոռոմոց. Եւ ես տաց, ասէ, առանց պատերազմի զքաղաքս ի ձեռս նո-

* Սաղ. ճժէ. 9.

1 GHS տաճկացն G զութն CDЛ և կամ
2 BDIЛ բազմութեանց CGHI այնչափ
3 G զգանձ S զգանձսն GS զօրաց DEFIЛ զզօրացն
5 ABCDEFIЛ ձի սթափ
6 ACDHЛ քաղաք
8 ABDIЛ յաղօթք C աղօթք d յաղօթս
8–9 C իշխանս
9 F չիք ի B յստատութիւնս Ծ¹ օգտեն
10 E աւել
10–11 CG թագաւորականն
13 C յուռհայ DIЛS ուռհա
14 BDIЛ իշխան DEЛ ամիրա ABCDEFHIЛ կոչին
15 B զժառանգութիւնն AB տեղոյն GԾ¹ տեղեացն B զկնի փխ կին
16 DHЛS անունն DЛ սալամա C առփական
16–17 C ցանկութեանն I ցանկութիւն
20 GHIS զմին ABDFGЛ ծառայից I ծառայից հաւատարիմ
21 E իշխանութիւն EF յեգերոյ C հոռմոց
22 BC սամուսատ BC չիք ի
23 B չիք և
25 C հոռմոց G տաց ես I չիք ասէ



րա։ Զոր լուեալ թագաւորին Ռոմանոսի, գրէ նմա գիր հաւանական. և առնէ զնա անթիպատոս պատրիկ, և զկին նորա պատուէ մեծ և երևելի պատուով։

Իսկ քաղաքացիքն իբրև լուան զձայն աղաղակին և զհնչիւն փողոցն, սրտաթափ լի զողութեամբ՝ ի դուրս ելանէին զարհուրեալք և խռովեալք, իբրև զալիս ծովու կուտակեալք զմիմեամբք զեղուին։ Եւ իբրև ոչ կարէին զելս իրացն իմանալ, որք մահմետական օրինօքն սովորեալք էին, ելեալ ի գիշերի՝ անկանէին ի մօտաւոր քաղաքսն, պատմելով նոցա զյանկարծահաս շտապ տագնապին որ եհաս նոցա։ Իսկ նոքա իբրև լուան, ձայն տուեալ ի մի վայր ժողովեցան բազմութիւնք զօրաց. և եկեալ ի վերայ քաղաքին՝ խրամատեցին զպարիսպ նորա, և մտեալ ի ներքս՝ բազում կոտորումն առնէին։ Ուստի բազումք ի քաղաքէն ի մեծ կաթուղիկէն ելեալ ամրանային, և այլք յամուր տեղիս կամ յաշտարակս։ Իսկ պաշարիչքն զբազում տեղիս հրով ապականեցին մինչև ի նոյն ինքն ի սուրբ կաթուղիկէն հուր ընկեցին։ Եւ բացեալ զգանձարանս տանն սրբութեան՝ զոր յառաջին թագաւորացն Հայոց ամբարեալ էր ի սպաս պիտոյից տաճարին տեառն, և հանեալ զամենայն մեծաւ շտապով՝ գնացին ի տեղիս իւրեանց։ Եւ յայնմ օրէ և այսր նուաճեցաւ քաղաքն ի ձեռն Հոռոմոց։

## Ը

## ՄԱՀ ՌՈՄԱՆՈՍԻ

Իսկ թագաւորն ոչինչ բարի յիշատակաց արժանի լեալ, յաւուր մեծի հինգշաբաթուն ելեալ ի պալատանն՝ հրապարակախօս լինէր ընդ զօրս իւր, մինչև ի հասարակ աւուրն տալ ըստ իշխանութեան զարքունատուր պարգևսն. և ապա պարապեալ ի գործոյն՝ հրաման տայ ոսկի լականաւ ջուր

1 G զոր թագաւորքն ռոմանոսի լուեալ H չիք թագաւորին h թագաւորին
2 ABEFhԾ² անթիպատուս C անթիպատոսս DIЛ անթիպատրոս Ծ² պատրուկ
BDIЛ զկնի փխ զկին DIЛ չիք. նորա I չիք և (երևելի)
5 BCDIЛ և զարհուրեալք
6 B ծովով DIЛ զմիմեամբ
7 BEFH եկս AFHS սովորեալ
8 B չիք ելեալ... անկանէին GHS քաղաքս
9 I յանկարծակի i <յանկ>արծահաս A տգնապին BDIЛ տագնապ C տագնապն
10 C բազմութիւն F զօրացն
12 I կոտորածս
13 E այլ H յայլուր փխ յամուր h յամուր
14 BCDIЛ բազում S այրեցին փխ ապականեցին Ծ¹ ապականեցին
15 EF չիք ի սուրբ
16 B սրբութեանն G յառաջն I յառաջի BCDIЛ թագաւորաց
17 G տաճարի I սպասուծոյ փխ տեառն
18 I չիք օրէ և այսր BC չիք և այսր G այս
19 ADEIЛ ձեռս C ընդ ձեռամբ C հոռմոց
21 A չիք մահ ռո(մանոսի) [պակասը առաջացել է վերանորոգման ժամանակ]
23 AEF պաղատանն BCDЛ պաղատն I պալատն B հրապարակախօս S լինել
24 G մինչև B տա G զարքունատար իշխանութեան

պատրաստել առ ի լողանալ նմա: Եւ իբրեւ եմուտ յոսկի ծովակն լցեալ ջերմ ջրով, սպասաւորքն բուռն հարեալ զգխոյ գլխոյ նորա ծածկեցին ընդ ջրովն մինչեւ վճարեցաւ ի կենաց՝ թագուհւոյն կամակից լինելով անօրէնացն: Որ կալաւ զթագաւորութիւնն ամս եօթն:

Թ

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՄԻԽԱՅԼԻՆ

Դանիէլ յիւրում մարգարէութեանն՝ զոր ետես, որոյ գլուխն ոսկի էր, և թիկունքն և ձեռքն արծաթի, իսկ մէջքն և կողքն պղնձի, սոքա անցեալ են. իսկ սրունքն և ոտքն երկաթի խառնեալ ընդ խեցի, որ է Հոռոմոց թագաւորութիւնն. զի ոչ ըստ ազգի վարի, որպէս և այլ ազգաց թագաւոր և որդի թագաւորի: Որ ի հօրէ և ի հաւուց ունի զիշխանութիւնն՝ այն երկաթն է. իսկ նկամուռն՝ որ չէ ի թագաւորական տոհմէ՝ այն խեցին է: Եւ այս յոլովակի լինի առ նոսա, որպէս և այժմ իսկ տեսանեմք յառաջի կացեալ թագաւորս: Սա ոչ ի թագաւորական տոհմէ, և ոչ որդի թագաւորի, և ոչ իշխանութեամբ յերեւելի սպայից. այլ այր մի աննշան ի պալատին պաշտօնէից, յոր տռփացեալ թագուհւոյն պոռնկական մոլեգին ախտիւն, ի պատճառս նորա չրահնգձոյց արար զայրն իւր որ և ի սպանողաց մի զսա առեն լինել: Իսկ զկնի սատանայական գործոյն ի գլուխ ելանելոյ, հրամայէ թագուհին զգլխաւորս քաղաքին կոչել առ ինքն: Եւ ցուցանէ զթագաւորն վախճանեալ՝ յանկարծամահ զնա համբաւելով. և տայ հուպ ընդ հուպ զՄիխայիլ զայս յառաջ ածեալ թագաւորեցուցանէ՝ այր իւր առնելով, որոյ գործս յայտնի

1 BCDEFHIЛ շոգանալ փխ լողանալ GS լուանալ Ծ[3] լոգանալ G ծովակ
2 B զգխոյն
3 GHS ջրովն B թագուհւոյն CDFIЛ թագուհւոյն
4 ABCDFIЛ Ե [Տ!] E հինգ
6 B թագաւորութեան C թագաւորութեանն B միխայելի CGH միխայէլին EF միխայիլին I միքայէլին S միխայելին
7 A դանիէղ F իւրում BDIЛ մարգարէութեան GHS գլուխ
8 B թիկունք BC պղընձի
10 I թագաւորութիւն
11 BCDI ազգաց թագաւորութիւն [C թագաւորութիւնն] dЛS թագաւորն DIЛ որք E ունին
11—12 BCDIЛ զիշխանութիւն E իշխանութիւն
12 G որ ոչ S որ ոչ է
13—15 I չիք այն․․․ տոհմէ
14 G տեսանեմք իսկ
15 DIЛ թագաւորին GHS սպայիցն
16 A այղ ABCDEFHЛ պաղատին B տռփանօք C տռփանօք
16—17 B թագուհւոյն DIЛ թագուհոյն
17 B չիք պոռնկական մոլեգին
18 ABDEFHIЛ զայր GHS սպանողացն H առեն զսա Ƕ զսա առեն I մի առեն զսա լինել
19 S գործոյն ACDEFHIЛԾ[1] ելելոյ BGԾ[3] եղելոյ
20 BCDIЛ մեռեալ փխ վախճանեալ
21 DEFЛ զմիխայիլս GHIS զմիխայէլս
22 S գործն



եալ ամենեցուն: Սա քանզի բազում ազգականս ունէր և եղբարս, զգլխաւորագոյն իշխանութիւնն ետ ի ձեռս նոցա: Զմի յեղբարցն առնէ մագիստրոս, և տայ զԹէսաղոնիկն ի ձեռս նորա, և հաւատայ ի նա զհօղս Բուլղարացն և արեւմտական կողմանցն. և զմինն անուանէ զմեռլիկոս, և առաքէ ի մեծն Անտիոք զՏաճկաստանի և զհարաւային կողման զհօղսն յանձն առնելով նմա: Իսկ զերրորդն յեղբարցն՝ որ էր այր ներքինի և աբեղայ, որում անուն կոչիւր օրթանոսոս, կացուցանէ զնա ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս՝ առնելով զնա սինկլիտոս, զամենայն հոգս և զիրաւունս պալատին տալով ի ձեռս նորա:

Եւ ինքն քանզի չարաչէս հարաւ ի դիւէ, մինչեւ յեկեղեցիս և ի հանդիսաս սրբոցն ընթանայր. բայց ոչ գիտեմ եթէ վրէժխնդրութիւն էր այս Ռոմանոսին մահուն՝ որ անիրաւապէս մեռաւ, եթէ ի բնէ ունէր զգիւահարութիւնն: Բայց առեն և այլ պատճառս, եթէ վասն զի չէր անդ նմա թագաւորութիւնն, վասն որոյ երթեալ ի քաղաքն Թեսաղոնիկեցւոց առ կին մի կախարդ, որպէս ի հնում առ Բաղաղի՝ երիտասարդին պատմին գործք ի ձեռն կախարդին, տուեալ զինքն ի ծառայութիւն հօրն ամենայն չարեաց: Որ ի ձեռն պոռնկական դիւին ջնեալ թագուհւոյն՝ առ զնա և կացոյց զնա թագաւոր ի վերայ աշխարհաց: Իսկ յետ գործոյն ի գլուխ ելանելոյ, ըստ օրինի թագաւորաց յեկեղեցիս ի հարկէ երթեալ ի տօնս տէրունականս, ոչ կարացեալ համբերել չար դիւին, ի յիւրմէ ապրստամբ զնա կործելով: Եւ զայս ասեն հաւաստարմացուցանեն՝ որ առեն, զի յաճախ թագաւորն ի Թեսաղոնիկն կայր, զոր կարծէին առ կախարդին լինել: Այլ թէպէտ այսպէս, թէպէտ այնպէս, սակայն մինչ ի վախճանն ոչ հեռացաւ ի նմանէ այսն որ լլկէր զնա:

1 G և առ BCDEFGIЛ եղբայրս
1—2 EF զլխաւորագոյնս
2 BDIЛ իշխանութիւն Л ձեռն B եղբարցն DЛ յեղբայրցն
2—3 ABCDEFIЛ մաժիստրոս H մագիստրոս
3 G զԹեսաղոնիկ C նոցա փխ նորա
4 B բուլղարաց G զիմեռլիկոս
5 ABCDFIЛ անտուք G յանտեոք S կողման
6 HIS զերկրորդն C եղբարցն BCDIЛ ներքինի
7 S օռթանոսոս
8 HS ի կոստանդնուպօլիս ABDЛ կոստանտնուպաւլիս AEF սինկղիտոս
9 ABCDEFGIЛ իրաւունս ABCDEFЛ պաղատին B ձեռն
10 GS դիւէ ABCEFI մինչ G մինչ զի
10—11 GHS հանդիսա
11 ABDEFIЛ սրբոց C վրեժխնդրութեան
12 GԾ[1] ի բնէ անտի
12—13 BCDIЛ զդիւահարութիւն
13 A այղ BFHIЛ անդ G անկ
14 BCDЛ թագաւորութեան I թագաւորութիւն
15 I երիտասարդն
16—17 F ամենաչարեաց
17 C թագուհոյն
18 GhԾ[2] ամենայն աշխարհաց
19 BCDIЛ երթալ H երթա h երթեալ
20 BC տունս փխ տօնս Տh չիք ի A ապստամբ
22 C թեսաղոնիկ
23 GH թէ այնպէս
24 GHԾ[2] այսն չար

Ի սորա թագաւորութեանն եղև մեծ կոտորած զօրացն Հոռոմոց՝ ի բերդաքաղաքն որ կոչի Բերկրի, որ է ի վիճակի Արծրունեաց աշխարհին, զոր վաղնջուց յափշտակեալ էր Պարսից՝ հանդերձ իւրովք գաւառակերտօքն, և ունէին ընդ ձեռամբ: Յորոյ վերայ եկեալ Կաւասիլաս ոմն՝ որ Վասպուրականի գաւառապետն էր՝ բազում զօրու, եառ զքաղաքն և կացոյց զունդս հեծելոց պահապան քաղաքին: Յայնժամ այլ ոմն փոխանորդեաց զիշխանութիւն նորա, և առեալ զայլ զզօրսն երթեալ դադարեաց հեռագոյն ի տեղւոջ ուրեք որ կոչի Արծակ, վասն առատութեան զարմանին և այլ պիտոյից հեծելոց: Իսկ տէր քաղաքին, որում անուն կոչիւր Խտրիկ, ի բերդին արգելական եղեալ՝ ազդ առնէ առ գլխաւորս Պարսից աշխարհին: Որք յանկարծակի ձայն տուեալ միմեանց՝ ի մի վայր ժողովեցան, և հասեալ ի վերայ քաղաքին պաշարեցին զնա պատնիշաւ: Իսկ զօրքն Հոռոմոց յանտակ գործոց և ի գինւոյ թմբրեալ, ոչ կարացին զգուշանալ անձանց: Այլ և պահապանն Իսրայէլի զերծ ի նոցանէ զօգնականութիւն իւր. յորոց վերայ սուր եդեալ կոտորեցին արս իբրև քսան և չորս հազար: Եւ այս եղև ո՛չ վասն արդարութեանն Պարսից, այլ վասն անօրէնութեան մերոց զօրացն, որք հարան ի սուր դատնութեան ըստ տեառն բանի, եթէ «Զչարան չարաւ կորուսցէ»*: Իսկ զօրքն որ յԱրծակ՝ ոչ ժամանեցին նոցա յօգնականութիւն: Եւ առեալ զօրացն Պարսից զկապուտ և զաւար սպանելոցն՝ չոգան յաշխարհն իւրեանց: Բայց ի ճանապարհին, քանզի ունէին բազում կալանաւորս, հրամայէ Խտրիկն յիշեանին ըստ անձին փորել զերկիր, և զկապեալսն զնել ի վերայ փորուածին՝ մինչև լի իսկ լինել, և մտեալ լուացաւ արեամբ սպանելոցն առ ի հանգուցանել զայրացս սրտին:

* Մատ. ԻԱ. 41.

1 ABCDEFIЛ *թագաւորութեանս* IՏ *թագաւորութեան* C *հոռմոց*
2 C *բերդաքաղաքին* ABCDEFIЛ *վիճակէ*
3 ABCDEFЛ *վաղընջուց* G *իւրով*
4 I չիք *և ունէին ընդ ձեռամբ* Տ *յորոց*
5 Hh *ի գաւառապետն* [h չիք *ի*] ABCDEFGHIЛ *և առ.* Տ *առ*
6 Gh *զզունդս*
7 GHՏ չիք *զայլ* H *զօրս* DhЛ *զօրսն* Л *լի* փխ *և*
8 BCEFH չիք *ի* h *ի տեղւոջ*
9 A *այդ* EFGh *էր* փխ *կոչիւր*
11 I *առեալ* փխ *տուեալ* BC չիք *միմեանց*
12 B *պատնշաւ*
13 C *գործոյ* I *գործւոյ*
14 A *այդ* A *իսրայէղի*
14—15 F *զօգնութիւն*
15 CDIЛ *յորոց սուր ի վերայ եդեալ* BC *այսր* փխ *արս* DIЛ *այրս*
16 C չիք *վասն* BDЛ *արդարութեան*
17 FՏ *անօրէնութեան* EF *մերոյ* BC *դատնութենէ*
18 C *բանին* CDGHIЛ *չարեաւ* H *յանկած* փխ *յարծակ* h *յարծակ* I *յարձակ*
19 C *յօգնութիւն*
21—22 AF *յիշխանանին* G *իշխանին*
22—23 GHՏ *փորուածոյն*
23 G *լինիլ* GHՏ *մտաւ*
24 GՏ *զայրաց* h *զայրացս* I *զայրոյթ*



Իսկ ի գալ երկրորդ ամին, դարձեալ մյլ զօրք տաճկացն ի Թագաւորէն, որք եկեալ մերձեալս և մանգղիոնս եդեալ, սկսան փլուզանել զպարիսպ ամրոցին: Եւ տեսեալ որք ի բերդին էին՝ թէ ոչ գոյ նոցա հնարս ապրանաց, քանզի և բազումք իսկ մեռան ի նոցանէ, աղաչեցին զզօրագլուխսն՝ զի արձակեսցեն զնոսա առանց վնասու յաշխարհն իւրեանց և ինքեանք կալցեն զամուրն և զգաւառակերտս նորա: Որք իբրև լուանն՝ արարին որպէս և ուսանն. և յայնմ օրէ և առ յապայ բարձաւ տէրութիւնն Պարսից ի տեղւոջէ անտի:

Ի սորա ի սկզբան թագաւորութեանն՝ խաւարեցաւ արեգակն յամսեանն Արաց, յաւուրն ուրբաթու ի գաւանալ աւուրն, էր և թուականիս մերոյ չորեքհարիւր ութսուն և երկու ամ: Զոր տեսեալ բազումք ի գիտնոց, կարծեցին գոլ ծնունդն Նեռինն զօրն գայն, և կամ մեծամեծ չարեաց գուշակս: Որ և եղև իսկ յաւուրս մեր, յորս պատմութիւն բանիս առաջնորդեալ տանի զմեզ, զոր տեսաք աչօք մերովք զաստուածասաստ հարուածսն, և զնորանշան պատուհասն որ եհաս ի վերայ տանս Հայոց վասն մեղաց մերոց: Նաև յառաջ ժամանակաւ մյլ իմն մեծ նշան երևեցաւ, որ յոյժ հիացումն բերէր տեսողացն. որ նման էր նշանացն վերջին աւերածին Երուսաղեմի, զորմէ սպառնալով Փրկիչն ասէր, թէ «Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեանց՝ որպիսիք ոչ եղեն ի ներքոյ երկնից ի սկզբանէ արարածոց, և մի այլ լիցին»*. փոխանակ զի ի տէրն և յարարիչն իւրեանց կատաղեցան՝ մարդ կարծելով զնա: Այր մի Անանիաս անուն ի մէջ քաղաքին Երուսաղեմի կացեալ՝ բարձրաձայն աղաղակաւ ողբս առեալ ասէր. Վա՜յ Երուսաղէմ, վա՜յ քաղաք արեան. հասին աւուրք վրէժխնդրութեանց, և որ այլն ևս, զոր մեծն Եւսեբիոս յեկեղեցական պատմութիւնս նըշանակէ: Նոյնպէս և աստ ի մերում ժամանակիս, նմին նման այր մի անծանօթ ամենեցունց, անոք, անուրեք, յարևելից կողմանէ եկեալ, ընդ

* Մատ. ԺԴ. 19

1 C չիք *այլ* c *այլ* ABCEF *զօրս*
2 ABCDI *մանկլիոնս* EF *մանկլիոս*
3 ABCDHIЛ *չգոյ* h *ոչ գոյ*
4 Տ *հնար* I չիք *իսկ* I չիք *ի*
5 BC *արձակեսցէ*
6 AF *կալցին* GHՏ *զամուրս*
7 Տ *լուան*
8 BCI *տէրութիւն* ABC *անդի*
9 G *սորա յսկզբան* I *թագաւորութեան*
9—10 BI *յամսեան* HԾ² *յամենայն արեանց* փխ *յամսեանն արաց* h *յամսեանն արաց*
10 BC *յաւուր* BC *արեւուրն* փխ *աւուրն* I *արեւուն* Л *և էր* B *թուականին* C *թվին*
10—11 BCDЛ չիք *մերոյ* EF *մեր*
11 A *չորեքարիւր* F չիք *ամ*
12 EFGHՏ *զծնունդ* GՏ չիք *և* A *մեծս* [Նորոգված տեղ]
12—13 G *գուշակք* Տ *գուշակ*
13 BCEFGHՏ չիք *և*
16 A *այդ* C *նշան մեծ*
17 GhՏ *էր նման* BCDEIЛ *նշանաց*
18 H *փրկիչն սպառնալով* h *սպառնալով փրկիչն* BI *փրկչին*
20 A *այդ*
24 H *որն* h *որ* GՏ *այլ* I *այն* GՏ *եւսեբի* ABCDEFIЛ *պատմութիւնն*
25 *նման նմին*
26 ABCFHI *յամենեցունց* E *ամենեցուն*

Ապահունեաց և ընդ Հարքայ գաւառն անցեալ, ի Մանանաղի իջեալ և Եկեղեաց անդաստանի գնացիւք, զայսոսիկ ի բերան առեալ ասէր անդադար ի տուէ և ի գիշերի. Եղո՜ւկ զիս, եղո՜ւկ զիս, բարձր բարբառով, և այլ ինչ աւելի չասէր ինչ: Եւ թէ ոք հարցանէր թէ Ուստի՞ կամ յորմէ՞ գաւառէ ես, կամ վասն է՞ր ասես զայդ, չասէր ինչ պատասխանի. այլ հանապազ զնոյն ասէր և յասելոյն ոչ դադարէր: Զոր տեսեալ անմիտ մարդիկ՝ իմացան անկեալ ի մտաց, բայց իմաստունքն ասէին. Այդ եղուկդ ամենայն երկրի լինելոց է: Արդ այս աստանօր զկայ առցէ բանս. այլ մեք ի կարգ պատմութեանս դարձցուք յառաջ ասացեալ թագաւորս:

Սա զքեռորդին իւր կեսար անուանէ. և կեցեալ ի թագաւորութեանն ամս եօթն և ամիսս ութ, հիւանդացեալ զքուն մահու ննջեաց: Իսկ թագուհւոյն զկեսարն՝ յորդեգիրս իւր արարեալ, թագաւորեցուցանէ ի տեղի առն իւրոյ. այլ նա փոխանակ շնորհ ունելոյ նմա վասն բարեացն՝ զոր արար նմա թագուհին, խորհեցաւ ազգականօք իւրովք ի հեռաւորնակ կղզիս յաքսորս առաքել զթագուհին, որպէս զի սեփհական իւրեանց լիցի իշխանութիւնն, զոր և արարին իսկ: Իսկ քոյր թագուհւոյն՝ որում անուն ճանաչիւր Թէոդորայ, կոչէ զգլխաւորս քաղաքին և ծանուցանէ նոցա զեղեալսն: Որք իբրև լուան՝ ձայն տուեալ արևմտական զօրուն՝ առ ինքեանս հաւաքեցին: Եւ բռնութեամբ ի վերայ հասեալ, խնդրէին թէ ցոյց մեզ զմեր ծիրանափառ թագուհին, որ ի հարց և ի հաւուց ունի զժառանգութիւն թագաւորութեանդ. քանզի բազմաց կարծիւր թէ մեռեալ իսկ է: Իսկ նա իբրև ետես զբռնութիւն և զմիաբանութիւն նոցա, յերկիւղի լեալ՝ փութապէս դարձուցանել հրամայեաց յաքսորեացն զթագուհին: Զոր իբրև ետես Թէոդորայ զքոյրն իւր, իսկոյն հրաման տայ ունել զթագաւորն իւրեանց ազգականօքն և որք նոցա մտերիմքն էին: Իսկ թագաւորն փա-

4 GHՏ չիք ինչ (աւելի) BCDIЛՏ եթէ
5 Տ ասեմ B չասար
6 BCDFGHIЛՏ զնոյն ABCDEFIЛ յասելոյ
7 CH մարդիկք C չիմացան GHՏ մտացն DIЛ իմաստունք
8 I աշխարհի փխ երկրի CDIЛ չիք այս B ասա փխ այս BCI առացէ
9 A այդ BC պատմութեանն DIЛ պատմութեան I ի յառաջ
10 BCDGHIЛՏ թագաւորութեան
11 Gh ի քուն H չիք զքուն
11—12 C թագուհոյն
12 ABCDEFIЛ յորդեգիրս GHՏ իւր յորդեգիր [G որդեգիր] DIЛ զանեղի փխ ի տեղի
13 A այդ
15 CI առաքեալ A սեպհական
16 BDIЛ իշխանութիւն G չիք և
17 ABD Թեոդոռ CEFIЛ Թէոդոռ G Թէոթոռայ Տ Թէոթուրա E գլխաւոր G չիք նոցա
18 H առեալ փխ տուեալ h տուեալ
18—19 G յինքեանս
19 I հաւաքելով
20 BCDIЛ զմեծ իրաւափառ փխ զմեր ծիրանափառ GH ծերափառ Տ ծիրանեփառ BC չիք ի հարց և GH ի հաւուց և ի հարց I չիք ի (հաւուց)
22 B չիք զմիաբանութիւն նոցա
23 C հրամայեաց դարձուցանել ABEGI յաքսորեաց ChՏ յաքսորանացն DЛ յաքսորայ F յաքսորանաց
24 AB Թեոդոռ CDEFIЛ Թէոդոռ G Թէոթոռայ Տ Թէոթուրա C զքոյր I ըզքոյրն F զթագաւոր I զթագաւորական
25 BCDEFHIЛ որ GHՏ մտերիմք



խստական եղեալ՝ կամէր յաւագ եկեղեցին մտանել՝ և ընդ սեղանոյն թաքչել և այնու ապրել: Բայց ոչ կարաց ժամանել. քանզի հետամուտքն փութով հասեալ և կալեալ դարձուցին, և յանտուր տեղւոջ յերկիր ընկեցեալ խաւարեցուցին զլուսարանս նորա, և որ զնմեալիկոն կոչիւր և զայլոց բազմաց. և հրամայէ զտունս նոցա յաւար, յաւեր, յապականութիւն դարձուցանել: Յորս շարժեալ քաղաքն առ հասարակ, բազում աւարառութիւնս արարին. և զմեծամեծ և զգեղեցիկ ապարանս մինչև ի հիմունս քակեալ՝ յապականութիւն դարձուցին: Եւ այնքան ծանրացաւ խռովական ամբոխն յաւարառութիւնս խանձեալ, մինչ զի զպարիսպն պալատին խորտակեալ՝ բազում գանձս ի թագաւորական գանձուցն արտաքս պեղեցին. զոր հազիւ կարացին դադարեցուցանել զամբոխն գլխաւորքն քաղաքին, արեգակն օգնական լինելով նոցա՝ զծայրս արևուն յինքն ժողովելով:

Իսկ թագաւորն որ երեկ յոսկի աթոռն նստեալ՝ հրաման տայր տիեզերաց, այսօր խաւարեալ ի լուսոյ՝ նստի յաթոռ նանրութեան և նախատանաց. և որ կարծէին ծովու և ցամաքի տիրել յաւիտենից, ի միում վայրկենի և զանձանց եւս կորուսին զփրկութիւն: Եւ եղեն արդարև ըստ մարգարէին, որպէս խոտ տանեաց, որ մինչչև ի բուն ելեալ էր՝ չորացաւ. յորմէ ոչ լցաւ բուռն հնձողին և ոչ լցան գիրկք բարձողացն զորայն. նաև բարեբանութիւն անցաւորացն ոչ կաթեաց ի յանկիս*: Այսոքիկ են առօրեայ պատմութիւնք կեսարուն, որ թագաւորեաց ամիսս վեց:

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ՈՐԴՒՈՅ ԹԷՈԴՈՍԻ, ՈՐ ԿՈՉԻ ՄՈՆՈՄԱԽ

Եւ սա ըստ մարգարէին տեսողութեան՝ ի խեցի մանէ. քանզի հայր սորա ի պալատին զդայխութեան ունէր զպատիւ, յորմէ ամենայն զա-

* Հմմ. Սաղ. ճԻԸ. 6.

1 BCDHIЛՏ յեկեղեցին
2 ADEFЛ թաքչել CI թաքչէլ
3 C չիք և CDIЛ յայն ուրբ CI տեղւոջն
4 GHՏ զիմեալիկոն
5 I չիք նոցա, C աւեր C չիք յապականութիւն DGIЛՏ և յապականութիւն
7 I մեծամեծ
8 GՏ այնպէս փխ այնքան Ծ² այնքան BCD խռական
9 EF զպարիսպ ABCDEFIЛ պաղատին
10 F յարտաքս
11 ABCDEFGIЛ գլխաւորք
12 AF արեգակնն G արեգական GhՏ առ ինքն
13 E էրէկ GI յերեկ HI յոկի GՏ աթոռ
15 BH ծովուն h ծովու I ցամաքին EI տիրեալ E և ի միում
16 EF վարկենի
17 BHI մինչև E չիք էր
18 BD հնձաւղին DЛՏ բարձողաց I բարցողաց ABCDEF զորայս H զորայսն I զօրայն
19 DЛ նա փխ նաև
22 ADEFI կոստանտեա BC կոստանդեա E որդոյ
23 AB մաւնումախ CDFIЛ մանումախ E մօնումախ H մավնումախ h կամ մոնոմախ
24 C մարգարէի C տեսողութեանն B չիք հայր I որ փխ հայր
25 ABCDE պաղատին ABCDEFIЛԾ¹ զդայխութեան GH զդայխութեանն [Prud'homme-ը, ֆրանս. թարգմ. էջ 55, ծան. 3. այդ բառը կապում է δικαιοσύνη—արդարադատություն բառի հետ] G ունի

տուորք աշխարհին առաջին։ Ցետ անկատար թագաւորութեան կեսարու՝ մանչեալ մատակ առիւծն ի վերայ ընկերին ի խշտիս իւր, քանզի ոչ սակաւ տարակոյսք զնա պաշարեալ պահէին, զի զոք յիւրայնոց չունէր արժանաւոր թագաւորութեան. և զոր առ յորդեգիրս, և արար տէր և թագաւոր աշխարհաց, նա փոխարէնս զայն հատոյց նմա, զոր խոսն մի յառաջ նշանակեցաք։ Եւ ապա զի՞նչ առնէ. ելանէ արտաքոյ կանոնական կարգաց, և կոչէ զայրս զայս յառաջ և առնէ այր իւր. և նստուցանէ զնա յաթոռ թագաւորութեան։ Զօր բազումք կարծեցին սիրելս զոլ նմա, բայց ես ոչ գիտեմ, եթէ այսպէս է և եթէ այնպէս. որպէս ինքն յիւրում հրովարտակին գրեալ էր լերախտիս աշխարհի, եթէ վասն աշխարհի խաղաղութեան ոչ խնայեցի լիս, և վասն այնորիկ յանարժան գործ համարձակեցայ։

Ի սորա յառաջին ամին ապստամբեաց որդին Մանեակ, որ ունէր զարեմտից կողմն, այր քաջ և անուանի. և զբազումս միաբանեաց ընդ իւր։ Եւ եկեալ բազում զօրօք մինչև ի դուռն թագաւորական քաղաքին, և այնքան բանացաւ ի վերայ ըստ ուժոյն քաջութեան, մինչ զի բազումք ակամայ կամօք եառն զանձինս նմա ի հնազանդութիւն. քանզի կարծեցին զնա զոլ թագաւոր վասն բազում պատեհութեանցն որ եղանէին նմա։ Քանզի երկիցս և երիցս եկին զօրք թագաւորին և ճակատեցան ընդ նմա և պարտեալ ի նմանէ, դարձան առ թագաւորն մեծաւ անարգանօք։ Իսկ ի զալ վերջին պատերազմին, յորում ուշ եղեալ էր ամենեցուն, զի զկնի այնր յաղթութեանցն՝ ամէնն նմա հնազանդեսցին և զնա արասցեն թագաւոր. բայց քանզի չխորհեցաւ Աստուծով թագաւորել, այլ ի զօրութիւն ուժոյն իւրոյ ապաստան եղև, զԱքիտոդոմայն ի հնուստ ասացու-

1 BDIЛ թագաւորութեան
2 CEF մորնչեալ H մանչեալ ABEF առեւծն
3 C յուրայոցն EFI յուրայոց
3—4 DIЛ չունէր ժառանգութիւն թագաւորութեան
4 BC ժառանգութեան փխ արժանաւոր թագաւորութեան C էառ CG որդեգիրս
5 EG փոխարէնսն I փոխարէն
6 B և ապայ ինչ
7 I չիք զայրս
8 GHS սեղեխ
9 CDIЛ չիք է B յորում փխ յիւրում
9—10 B հրովարտաքին GH հրովարտակի
10 EF խնդրեալ փխ գրեալ
11 DЛ ի լիս GS այնորիկ
13 B առաջի C յառաջի HS առաջին BCI ամի A ապստամպեաց BC որդի
16 S չիք և S ուժոյ
17 B ի նմա
19 A երիս EF չիք և (ճակատեցան) ABDFHIЛ նորա փխ նմա h նմա
20 AEFGHԾ$^{2}$ պարտաւորեալ BCDI պարտաւորուեցան dЛ պարտեցան
21 G յուշ
22 G աղթութեանց ABDEFIЛ ամէն S արասցեն զնա
23 A այդ
23—24 H զի զօրութիւն h ի զօրութիւն I զօրութենէ
24 BCDIЛ ուժոյ B ապաստան I հնուստ



եալ, արբեալ ամբարտաւանութեամբ, վասն որոյ զնորայն հատոյց զդատաստան։ Ի մէջ ճակատուն զտին զնա անկեալ, հզօր հրեշտակի աւանդեալ զոգի նորա, առանց ուրուք նմա ի դիմի հարեալ։ Զայս արարեալ և առնէ ամենիմաստապէս ամենեցուն տէրն և արարիչն, որ կարօղն է քակել զոգիս իշխանաց, ահաւոր զոլով քան զամենայն թագաւորս երկրի. զի «Մի՛ պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր, և մի՛ մեծն ի մեծութիւն իւր, և կամ իմաստունն յիմաստութիւն իւր, որպէս ի գրոց լուաք. այլ տերամբ պարծեսցի որ պարծին և արասցէ իրաւունս և գործեսցէ զարդարութիւն ի վերայ երեսաց երկրի»*։ Որ է արդարև յոյժ պարծանաց և զովութեանց արժանի, և յիշատակ նորա կայ մնայ յաւիտեան, և «Եղջիւր նորա բարձր եղիցի փառօք»** որպէս ի սաղմոսարանի անդ գրեալ է։ Այսպիսի էր և մեծն Դաւիթ. որ թէպէտ ի տեսանողէն օծաւ թագաւոր, և ընդ օծութեանն ընկալաւ ոգի զօրութեան և մարգարէութեան, որ զգազանսն բուռն հարեալ իբրև զուլս այծից ճեղքէր. յորս վստահացեալ, անպարտելի սկայազնին ընդդէմ ճակատեալ, զխեղապատակն նորա պարսաքարիւ ջարդեալ յերկիր ընկենոյր, բառնալով զնախատինս յիսրայելէ. բայց սակայն բազում անգամ հալածեալ ի Սաւուղայ, ներէր և անսայր կոչողին հրամանի. ոչ միայն չխնդրէր բռնութեամբ առնել թագաւորութեանն, այլև երկիցս ի ձեռն անկեալ հալածիչն, խնայեաց ի նա իբրև ի բարեգործ. և որ սպանանելն կամէր, սաստեալ նմա ասէր. «Մի՛ մխեր զձեռն քո ի դմա, զի օծեալ տեառն է»***։ Վասն որոյ հաճեալ Աստուած ընդ կամս նորա ասէր. «Գտի այր ըստ սրտի իմոյ, որ արասցէ զհաճոյս իմ»****։ Իսկ սա ոչ ած այսպիսի զմտաւ ինչ, և ոչ անսաց Աստուծոյ հրամանին. այլ կամեցաւ անձամբ առանց Աստուծոյ թագաւորել, մոռացեալ զաստուածային հրամանն՝ որ ի ձեռն մարգարէին զթագաւորսն Իս-

* Ա. Թագ. Բ. 10 և Երե. Թ. 23—24 ** Սաղ. ծԺԱ. 9—10.
*** Ա. Թագ. ԻԴ. 7 **** Գործ. ԺԳ. 22.

1 H զնորին h զնորայն
1—2 C զդատաստանն
4 C չիք ամենեցուն c ամենեցուն CDFI կարօղն E կարօղ
5 I զօքիս
6 CDЛ չիք մի
7 CDЛ չիք և
8 B այլ այլ սուրբ պարծեսցի C այլ սուրբն պարծեսցի I այլ ի տէր պարծեսցի H պարծին
9 I չիք յոյժ
10 I կայ և մնայ
11 ABE եղջեւր EF սաղմոսի
12 C այսպէս BC թէ փխ թէպէտ
13 B և ըստ աստուածութեան ընկալաւ CDIЛ օծութեան
13—14 CDIЛ չիք և մարգարէութեան
14 GS ի բուռն
15—16 HS զխեղապատակ
17 ADIЛ յիսրայելէ
19 BDIЛ թագաւորութեան A այլև G այլ
20 I չիք ի (բարեգործ)
22 I այրս I չիք ըստ BC չիք սրտի c սրտի
23 G այսպիսի ած C զմտաւ այսպիսի DЛ ինչ զմտաւ BCDЛ չիք ոչ
24 A այդ
25 GHS աստուծոյ հրամանին B և փխ որ H չիք որ h որ

բարկելի թշնամանելով ասէր. «Վա՜յ է նոցա զի կամեցան թագաւորել և ոչ ինեւ», և որ այլն ևս:

Արդ՝ ոչ եթէ թագաւորս այս գովութեանց ինչ արժանի է, և վասն այնորիկ արգահատեաց ի նա Աստուած, այլ զաթոռն պատուէ, և զամբարշտութեան աղբիւրն խնու. որպէս առ Հրէայսն Փրկիչն վարդապետելով ասէր. «Յաթոռն Մովսէսի նստան դպիրքն և փարիսեցիքն»*. որ թէպէտ ինքեանք կեղծաւորեալք էին, այլ վասն աթոռոյն՝ հրամայէ հնազանդ լինել: Ուստի և մեծն Պօղոս խրատեալ երանելի ձայնիւն այնուիկ գրէ առ Հռովմայեցիսն. «Ամենայն անձն, ասէ, որ ընդ իշխանութեամբ իցէ, ի հնազանդութեան կացցէ. զի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ»**. չասէ զիշխանէն, այլ զիշխանութենէն, այսինքն զաթոռոյն. քանզի ոչ եթէ զամենայն իշխան Աստուած յարուցանէ: Եւ ի վերայ էած, թէ «Որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ կայ. և որք հակառակն կան, անձանց դատաստանս ընդունին»***. որպէս և սմա իսկ եղև: Զի ոչ թէ ի մարդկանէ ումեքէ դատեցաւ, այլ յերկնաւորի Աստուծոյ դատաստանացն, որ զամենայն ինչ կշռով դատի և իրաւամբք. զի ահն է նորա արթուն, և ծածուկք մեր յայտնի են առաջի ամենատես գիտութեան նորա: Որպէս երանելին Դաւիթ սաղմոսելով խոստովան լինի Աստուծոյ. «Դու ծանեար զկեանս իմ և զառաջին իմ»****: Սմին նման և առաքեալն գրէ առ Եբրայեցիսն, թէ «Զի՞ք ինչ արարած աներևոյթ յերեսաց նորա»*****: Զոր և մանկունքն ի հնոցին գովելով ասէին, «Որ նստիս ի քերովբէս և հայիս յանդունդս, գովեալ ես և առաւել բարձրացեալ յաւիտեանս»******. զի ի բարձրութենէ տեսեալ՝ զստոյգ գիտութիւնն

* Մատ. ԻԳ. 2. ** Հռովմ. ԺԳ. 1. *** Հռովմ. ԺԳ. 2—3. **** Սաղ. ՃԼԸ. 5. ***** Եբրա. Դ. 13. ****** Դանի. Գ. 54.

1 B թշնամանալով GH չիք է
2 B ոչ է B այլ
3 C ինչ գովութեանց
4 S այսորիկ B| արգաշհատեաց H արգաշհատեաց A այգ I որպէս է փխ պատուէ
4—5 A զամբարշտանութեան I ամբարշտաւանութեան
5 ABEF աղբեւրն DEF հրէայսն
6 BdЛ մովսէսի [D բառի հապավված ձևը ջնջված է] FGI մովսէսի
7 ABCDEFIЛ եղծեալք փխ կեղծաւորեալք A այգ
8—9 I այնորիկ
9 C հռոմայեցիսն EH հռօմայեցիսն DGЛS հռոմայեցիսն
10 G չիք ընդ C է փխ իցէ
11 C աստուծոյ Gh ոչ ասէ A այգ
12 GS իշխանս G եւ որ
13 BDIЛ իշխանութեան
14 S հակառակք
15 ABCDEF չիք ոչ d ոչ A այգ
15—16 DIЛ յերքաւանց
16 DЛ յաստուծոյ
17 EFGHIS նա փխ նորա G և փխ նորա C ծածուկ
18 dЛ գիտութեանն DGIЛ չիք նորա
19 DIЛ չիք իմ (և) G զառաջինն
20 ABF առաքեալ ABDEFHЛ հեբրայեցիսն I եփրայեցիսն S եթէ BCDIЛ չիք ինչ
21 C երեսաց D մանկունք Ծ¹ գովելով
22 AEFG քրովբէս I քրոբէս ADEFIЛ նայիս C չիք ես և G չիք ես B յաւաւել
23 BC տեղեացն BCDIЛ զարոյգն գիտութեան



յայտ արարին ըստ սաղմոսողին երգոյն, թէ «Տէր յերկնից յերկիր նայեցաւ»*: Այս կերպ և բարձրն Եսայիաս. «Աչք տեառն բարձունք են, և մարդ տառապեալ. և խոնարհեսցի բարձրութիւն ամբարտաւանից, և բարձրասցի տէր միայն իրաւամբք և արդարութեամբ, և սուրբն փառաւորեսցի»**: Այսուքիկ եղեն ի սկզբան թագաւորութեան Կոստանդեայ, յորում էր թուականութեանս մերոյ ամք չորեքհարիւր իննսուն:

Իսկ զկնի երից ամաց եհաս կատարած կենաց տանս Հայոց. քանզի ի միում ամի դրաւեալ յատեացս՝ բարձան ի կենաց երկոքին հարազատ եղբարքն Աշոտ և Յովհաննէս, որ ունէին զթագաւորութիւն մերոյ աշխարհիս: Յորում շարժեցաւ աթոռ հաստատութեան նոցա, և այլ ոչ էառ զկայումն. յորում ելին իշխանքն ի հայրենի ժառանգութենէ իւրեանց, և եղեն պանդուխտ յօտար երկիր. յորում աւերեցան գաւառք և գնացին յաւար տանն Յունաց: Եղեն շինանիստ աւանք՝ բնակութիւն գազանաց, և անդաստանք նոցա՝ յարօտ երէոց: Տունք ցանկալիք, բարձրաձեղունք և մեծամեծք՝ եղեն բնակութիւնք համբարեաց և յուշկապարկաց, զոր ողբան սուրբ մարգարէքն զամայրանայն Իսրայելի. «Անդ հան ոզնի ձագս և սնոյց առանց երկիւղի զորդիս իւր»***: Եղեն հանդիսաւոր տեղիք վանորէից՝ այրք աւազակաց. և եկեղեցիք որ ի նոսա՝ որ զերկնից բերէին զնմանութիւն վասն պայծառ շինուածոցն, և վասն գեղեցկաշուք զարդարանացն, և վասն անշէջ լապտերացն և ջահիցն վառման, որոց լուսոյն առլցութիւն ընդ օդոյն տարածեալ՝ այսր անդր ճոճելով՝ զալեաց ծովու բերէր զնմանութիւն, որ ի հանդարտ ժամանակս ի քաղցրաշունչ օդոյն սողոսք ալեացն վէտս վէտս ի վերայ միմեանց շրջապատին. և

* Սաղ. ԺԳ. 2 ** Եսայ Բ. 11. *** Եսայ. ԼԴ. 15.

1 BCDEFIЛ սաղմոսին GHS սաղմոսի DIЛ երգոց HS երգոյն I չիք յերկիր
1—2 GS հայեցաւ
2 E բարձր
3 EF խոնարհեաց E անբարտաւանից
4 EFGS արդարութեամբք
5 DIЛ եղեն BCDIЛ սկիզբն EF թագաւորութեանն ABC կոստանտեա DЛ կոստանտեայ EF կոստանդեա
6 GHS թուականիս BDEFHIЛ մեր G չիք մերոյ
8 B հասանեաց A երկու BCDEFGHIЛ Բ
9 BDЛ եղբայրք C եղբայրքն ADEFЛ յովաննէս BC յովանէս
10 DIЛ աշխարհին C յաթոռ
11 AI իշխանք B հայրի
12 B պանտուխտ C պանդուխտք C յոտոր I օտար C երկրի I յերկիր
13 D աւար H բնակութիւնք
14 ABCDEFHIЛ յարաւօս G արօտս
15 BDЛ բնակութիւնք S համբարուաց AF յաւշկապարկաց BCdIЛ յուշկապարաց D յօշկապարաց S ուշկապարկաց
16 ABCDIЛ իսրայէղի B եհան
18 H վանօրէից C զոր փխ որ C յերկնից I չիք զերկնից
20 E արդարանացն H զարդարանաց A զապտերացն DGIЛԾ¹ որոյ
21 DHIЛS առոզութիւն h առոյզութիւն Ծ¹ առոյզութիւնք FHIЛS ճոճելով
22 BCDЛ ծովուն I ծովոյն B բերէ
23 B յօղոյն DIЛ սղոզք G սըղոխք H սխոզք

անուշաբուրակ խնկոցն գոլորշիք, որ ըստ առատութեան նուիրաբերացն հրոյն նւիրգործեալ, զգարնանաբեր ժամանակին բալիցն ցուցանեն զօրինակ, որ ի ծայրս լերանց նստեալ՝ արգելուն զճառագայթս արեգականն։ Իսկ զընակողացն ի նոսա ո՛ր բան բաւական իցէ առ ի պատմել զօրինակն. զքաղցրաձայնութիւն երգոցն և զանդադար սաղմոսերգութիւնն, զաստուածային գրոցն ընթերցմունսն, զտէրունական տօնիցն զհանդէս և զվկայիցն զպատիւս, զմիախորհ խորհողացն զկամս և զառ ի յաստուածայինսն նկրտումն, և այլ որ ևս։

Արդ որ այսպէս և այսքան էին յառաջ ժամանակաւ, այժմ է տեսանել յամենայնէ թափուր և աւրուգ, յամենայն բարեխառնութենէ մերկ և կողոպուտ զնոսա։ Փոխանակ քաղցրաձայնութեան երգոցն՝ այժմ բուէճք և տատաղեղունք են դասագլուխք. և փոխանակ սաղմոսական նուագացն, տատրակ և աղուէսի երգեն ի նմա, ըստ մարգարէին՝ քաղցրաձայնութեամբ կարդալ զձագս իւրեանց։ Ջահքն շիջեալք, և բուրումն անուշահոտ խնկոցն սպառեալ. և սեղան սուրբ խորհրդոյն՝ որ երբեմն ժամանակաւ իբրև զնորահարսն առագաստի չքնաղագեղ զարդու զարդարեալ էր՝ պսակ փառաց ունելով ի դէմս իւր, այժմ է տեսանել տեսութի՜ւն ողորմելի և բազում արտասուաց արժանի, մերկացեալ ի զարդուց, լցեալ փոշւով, լեալ հանգրուանք ագռաւուց։ Այսոքիկ ամենեքեան երկայնի պիտոյ բանի պատմութեան, նաև վերին շնորհին օգնականութեան, որպէս զի կարիցեմք ի նպատակ բանիս ուղղել։ Արդ ի վերջէ յառաջինսն տանելի է մեզ զպատմութիւնս։

1 ABCDEFIЛ խնկոցն C նիւարաբերացն F նըւիրաբերացն G նուիրացն
2 BCDEF ի հրոյն G հրոյ H զոյն փխ հրոյն h հրոյն I ցանկալիք ի հրոյն AB զգառնանաբեր
3 I ծայր BDGIЛ արեգական
4 E որ անբաւական F որ բեր անբաւական
5 BCDIЛ երգոց BCDIЛ անդադար BDIЛ սաղմոսերգութիւն C սաղմոսերգութեանց
6 BCDEHIЛ գրոց GՏ ընթերցմունս
7 B պատիւս Տ և զմիախորհ
7–8 B յաստուածայինս
8 A այզ Տ և այլն ևս
9 GHՏ չիք որ I չիք և այսքան
10 dIЛ չիք յամենայնէ BC թափուր dIЛ չիք և աւրագ C աւրուգ փխ աւրուգ
11 HԾ[1] բարէճք h բուէճք
12 ABCDEFGIЛ զտատաղեղունք H զաղեղունք h զտատաղեղունք կամ տատաղեղունք Տ տաղեղունք Ծ[2] զատտաղեղունք DGHЛՏ դասագլուխք են B նուագաց
13 Gh տատրակք hՏ աղուէսք
14 BC զծագս I զծակս CDEFHIЛ ջահք ABCDEFGHIЛ շիջեալ
15 ABCE խնկոցն F խնկոց
16 ABCDEHIЛԾ[3] զնոր հարսն ABCDEFЛ յառագաստի BC չքնաղեղ
17 F չիք է
18 I զարդուցն
19 DЛ փշւով EFHIՏ փշով G փշովք H հանրուանք h հանգրուանք I հանգուանք GHՏ չիք այսոքիկ G ամենեքեանն նոքա h ամենեքեանքն
19–20 ABCDEFGHIЛԾ[1] պիտարանի Ծ[1] պիտանի
20 C պատմութեանն GԾ[1] պատմութիւն C օգնականութեանն
21 ABCDEFHIЛ վէպատակ G վիպատակ Ծ[3] վիպատակ և վեպատակ C ի յառաջինսն HՏ յառաջսն Ծ[1] յառաջինսն



Յորժամ մեծն Կոստանդին հիւանդացաւ հիւանդութիւն՝ որով և մեռաւ իսկ, հրաման տայ որք մերձն կային եթէ ելեալ խնդրեցէք զայր ոք 'ի Հայոց զո՛ր և գտանիցէք, և ածէք այսր։ Եւ ելեալ խնդրակացն գտին զերէց ոմն Կիւրակոս անուն, որ կաթողիկոսարանին հիւրատէսն էր, և բերեալ առաջի թագաւորին, և տեսեալ զնա թագաւորին ետ զնամակն որ վասն Հայոց աշխարհին էր ցնա, և ասէ. Տա՛ր զգիրդ և տո՛ւր ի թագաւորն Հայոց. և ասա, թէ որովհետև հանգոյն ամենայն հողածնաց մահու հրաւէրս և մեզ ժամանեաց, ա՛ռ զգիր քո և տո՛ւր զթագաւորութիւնդ որդւոյ քո, և որդի քո որդւոց իւրեանց մինչև յաւիտեան։ Եւ ինքն առեալ զոտս իւր ի մահիճս վախճանեցաւ։ Իսկ նորա առեալ զնամակն պահեաց առ իւր մինչև ի ժամանակս Միխայլի թագաւորութեանն, և վաճառեալ նմա՝ առ գանձ բազում. Ո՜վ դառն վաճառոյն այնորիկ. քանի՜ արեանց զանձն պատճառ կացոյց. քանի՜ եկեղեցիք ի ձեռն վաճառոյն այնորիկ աւերեցան. քանի՜ գաւառք անմարդ, ամայի դարձան. քանի՜ մեծանիստ աւանք մարդաթափ ի բնակչաց եղեն։ Այլ զբովանդակն յիւրում տեղւոջն ասասցուք. և մեք զկարգ պատմութեանս որպէս սկսաք՝ յառաջ վարեսցուք։

Արդ ի հասանել համբաւոյ մահու թագաւորացն ի լսելիս իշխանակալին Հոռոմոց, և գտեալ զգիր նամակին Հայոց, իբրև իւրեան սեպհական ժառանգութիւն՝ հոգ տարաւ առնուլ զքաղաքն Անի և զաշխարհն։ Իսկ մի ոմն ի գլխաւոր ազատացն Հայոց Սարգիս անուն՝ եդ շուք անձինն թագաւորել ի վերայ տանն Շիրակայ և որ շուրջ զնովաւ գաւառք. զի զամենայն գանձսն գտեալ ի տան թագաւորին Յովհաննիսի՝ յինքն ժողովեաց. վասն զի ի մահուան նորա նա էր հազարապետ նմա։ Իսկ Վահրամ այր հզօր և անուանի, և բարեպաշտութեամբ յոյժ վեհ,

1 AE կոստանտին BCDIЛ կոստանդիանոս H կոստանդինն
2 EFG որ BDHЛ ելանել AEF խնդրեցէք I այր զոգի
3 Տ խնդրակաց
4 ABCDEI զերէց F զէրոց BCDGHIЛ Կիւրակոս G կաթողիկոսարանի
5 EF չիք զնա Տ չիք և տեսեալ զնա թագաւորին Ծ[3] եւ տեսեալ զնա թագաւորին
6 D աշխարհի EFGHՏ չիք էր BCDIЛ ասէր
9 B որդիք Л իւրոց
10 B չիք զոտս իւր... առեալ I ի մահիճս իւր DЛ վաղճանեցաւ
11 AB միխաիլի D միխայլիլի GՏ միխայէլի C թագաւորութեանն միխայլիլ DЛ թագաւորութեան
12 G զնա փխ նմա ABCDEIЛ վաճառուն
13 H արանց h արեանց BDEFIЛ վաճառուն C չիք վաճառոյն
14 ABCDEFGHIЛ յամայի ABDEFGH դարձաւ
15 A այղ
15–16 CI իւրում
16 G տեղւոջ F զկարգս B սակաւք փխ սկսաք
18 ABCDEFЛ համբաւու GH համբաւ C թագաւորացն հայոց
19 ADEFGHЛ չիք և BCDEFGHЛ և իբրև E իւրեանց
19–20 BDEFGHIՏ սեփհական
20 DЛ ժառանգութեան I զաշխարհս
21 ADIЛ ազատաց B ազատեաց
22 BC շիրակա CGHՏ որք
23 C քանզի փխ զի B ամենայն GHIՏ գանձս ABCDEFЛ յովանիսի G յոհաննիսի H յոհաննեսին I յոհանիսին

որպէս թէ ոչ ոք հաւատայ նմա Պահլաւ հանդերձ իւրովք ազգակցօք, որդւովք և եղբօրորդւովք իբրև երեսուն ազատօք. ոչ միայն նոցին ընդ նմա. այլ կոչեալ առ ինքեանս զԳագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց, և իմաստութեամբ և հնարիւք մտեին ի քաղաքն:

Իսկ Սարգիս իբրև եսես զեղեռն, զգանձս թագաւորութեանն առեալ՝ ի ներքին ամուրն մտանէ յանառն Անի: Այլ Գագիկ այրական քաջարութեամբ միայն իջեալ առ նա, և ողոքական բանիւք հաւանեցուցանէ զնա. և նա ելեալ յամրոցէն երթայ ի բերդաքաղաքն որ կոչի Սուրմառի. այլ զամուրն ո՛չ տայ ի Գագիկ, և ոչ զայլ ամուրսն զորս ընդ ձեռամբ ունէր. և երթեալ անդ՝ դարձեալ խորհի զխորհուրդ նենգութեան, տալ զոր ունէր՝ ընդ ձեռամբ Հոռոմոց, և ելանել առ նոսա: Իսկ Գագիկ սակաւ արամբք երթեալ մտանէ ի մէջ բանակին՝ ի խորանն ուր էր Սարգիսն, և ձերբակալ արարեալ զնա, մտանէ ի քաղաք թագաւորութեան իւրոյ: Եւ զոր պարտ էր զապստամբն բառնալ ի կենաց, նա զՍաւուղայն խորհեցաւ, զերկրորդ Ագագ խնայեալ՝ ընդ իւր ի կառսն նստուցանէր. վասն որոյ զՍաւուղայն ընկալաւ զհատուցումն, կեանք որ քան զմահ դառնագոյն էին:

Յայսմիկ յաւուրս հետամուտ եղեալ զօրքն Հոռոմոց, չորս անգամ զկնի միմեանց մտին յաշխարհն Հայոց, մինչև մարդաթափ արարին զերկիրն ամենայն սրով և հրով և գերութեամբ: Զորոյ զնշանակ չարեացն յորժամ զմտաւ ածեմ՝ լիմարի անձն իմ և ափշին միտք իմ, և յահագին զարհուրանացն զդողի առեալ ձեռինս՝ զոճ տողիս ոչ կարեմ յառաջ խաղացուցանել. զի դառն է պատմութիւնս, և բազում ողբոց արժանի:

Աշխարհ՝ որ երբեմն ժամանակաւ իբրև զդրախտ տնկախիտ առաջի իւր, կանաչագեղ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւորացն ցուցանէր. քանզի իշխանք նստէին յիշխանական գահս գաւառ-

1 ABCDEFGhIЛԾ² ազգաւ պահլաւ [ABCD պահգաւ Ծ² պալհաւ] S պալհաւ
2 BCDIЛ և փխ իբրև F եղբօրորդովք HSԾ¹ ազատք G չիք ոչ
4 G չիք և (իմաստութեամբ) ABDEFGЛ չիք և (հնարիւք)
5 B զանձս C զգանձսն BDEIЛ թագաւորութեան
6 C յամուրն F յանի
8 B երգայ
8—9 BCDHIЛ սուրբմառի EFG սուրբմօրի
9 A զայդ C որս
10 E ձեռամբն ABCDEFIЛ զխորհուրդ
11 C հռոմոց
13 D չիք զնա EFGH քաղաքն
14 A զապստամբն C զապստամբն բառնալ
14—15 F զսաւուղան
15 ABCDEFIЛ կառս
17 G չիք էին H էին hS է
18 C յայսորիկ I յայսոսիկ G յետ այսորիկ S աւուրս C հռոմոց
20 G զամենայն h զայսպիսի նշանակ չարեացն մերոյ աշխարհին յորժամ և Ծ¹ չարեացն մերոյ աշխարհին
21 B սափշին փխ և ափշին CD չիք և (ափշին)
22 B զարհուրանաց G զձեռինս ABCDEFGHI կարէ
24 B երբեմ
25 I կանանչագեղ
25—26 C անցաւորաց
26 EF իշխանքն



թահալեաց գլխօք, և զօրացն՝ զզարնանաբեր ծաղկանոցաց բերեալ զնմանութիւն՝ վառ ի վառ գունովք առաջի կացեալ, ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք. ուր և ձայնք փողոցն և ծնծղայիցն և այլ երգեցողական արուեստիցն զլսողացն անձինս լի առնէին ուրախական բերկրանօք: Անդանօր և՛ ծերք նստէին ի հրապարակս հարկաւոր և պատուական ալևօք բարգաւաճեալ. այլ և մարք զմանկունս ի գիրկս ընկալեալ, և մայրենի գթովքն աղէխարշեալ, վասն առատ ուրախութեանցն մոռանային զտխրական ժամանակս երկանց, զօրէն աղաւնեաց զնորափետուր ձագօքն միշտ թոթովեալ: Զի՞նչ ասացից և զհարսանցն ի սենեկի, և զփեսայիցն յառագաստի զփրահարուստ ըղձիցն զբորբոքումն և զանժոյժ բնութեանն զհակամիտութիւն: Այլ և ի վեր տանելի է մեզ բանս, առ հայրապետական աթոռն և առ թագաւորական պատիւն: Զի մինն զօրէն ամպոյ խառացեալ ի պարգևաց հոգւոյն՝ ի ձեռն վարդապետական շնորհին, ցօղէր զցօղ կենաց. որով պարարտացեալ պտղաբերէր եկեղեցւոյ դրախտ, արթուն պահապանս ի վերայ պարսպաց նորա կարգելով զառ ի յինքենէ ձեռնադրեալսն: Իսկ թագաւորն յառաւօտինն յորժամ ի քաղաքէն ելանէր, զօրէն փեսայի որ ելանէ յառագաստէ իւրմէ, կամ որպէս առընչենայլին արուսեակն որ ի գլխոյն արարածոց բարձրանալովն զամենայն տեսանելիս յինքն ձգէ, այսպէս և նա պաղպաջէր փաղփուն հանդերձիւք և մարգարտախառն թագիւն, և զամենայն մարդ ի տեսութիւն և ի զարմանս ցուցանէր. որ և սպիտակամազ նժոյգ՝ ոսկեզօծ զարդիւք առաջի ընթանալով, ի ճառագայթից արեգականն որ զնովաւ հարկանէր շլացուցանէր զտեսողացն տեսանելիս: Իսկ զօրացն բազմութիւն

1 S չիք զօրացն BC զզառնանաբեր
2 GHS կացեալք
3 BC լինին A այդ
4 G չիք արուեստիցն ... ուրախական
5 E աստանոր F անտանոր hS հարկեոր
6 ABE ալևք A այդ C մայրք
7 CH գթովք G գթովն G աղէխորով
8 C ժամանակն H երկանցս h երկանց H զօրէնս h զօրէն
9 I չիք և
10 A յադաստի
10—11 G զանժուժ
11 BCDI բնութեան D զհակամաութիւն GIS զհակամիտութեան A այդ H զբանս
12 G յաթոռն I հայրական BC չիք առ C առ
13 GH խառացեալ h խառացեալ S պարգևացն I ոգւոյն
14 S կենացն
14—15 B եկեղեցւոյ
15 CG պարսպացն CG չիք նորա
16 DG չիք ի BCDI ձեռնադրեալ E յառաւօտինս
17 G քաղաքն C քաղաքէն ելանել B յառագաստէ
18 EF առընջենայլին DGHIS առնչենանյլին G արուսեակք E արարածոց E բարձրանալով
19 ABCDEFHI պաղպաջէ
20 AB հանդերձիւն C մարգարտախառն ADEHI չիք և (զամենայն)
21 AB սպիտամազն D սպիտակամազն ABEFI նժոյկ
22 BC չիք ի G արեգական
22—23 GS հարկանէր

խուռն առաջի ընթանալով՝ զօրէն ծովային ալեացն զմիմեամբ կուտակելով: Նաև անապատական վայրքն լցեալ և խճողեալ էին կրօնաւորական դասուք, մինչ զի զգիւղս և զագարակս առ բարի նախանձ քահեալ՝ առնէին բնակութիւն կրօնաւորաց: Զայս և որ սոցին նման է, առաւել ունէր աշխարհս մեր: Եւ զայս զի գրեցի, զի յորժամ զսոցին հակառակն պատմեցից, ամենեցունց շարժեցից արտասուս:

Արդ այժմ թագաւորն անկեալ ի պատուոյ, իբրև զգերի կալանաւոր նստի ի հեռաւորական տեղիս. այսպէս և հայրապետական աթոռն ամայացեալ ի բնակողէն՝ ցուցանի տխուր դիմօք իբրև զկին նորահարսն՝ մնացեալ յայրիութեան: Հեծելազօրն անտէրունչ շրջեալ ոմն ի Պարս, ոմն ի Յոյնս, ոմն ի Վիրս: Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց, անկեալ ի ճոխութենէ, մռնչեն ուր և են իբրև զկորիւնս առիւծուց ի խշտիս իւրեանց: Արքունական ապարանքն աւերակ և անմարդի: Մարդաբնակ աշխարհն թափուր ի բնակչաց: Ոչ լսի ձայն ուրախութեան ի կալս ալցեաց, և ոչ բարեբանութիւն առ կոխօղս հնծանի: Ոչ խաղան մանկունք առաջի ծնողաց, և ոչ նստին աթոռով ծերք ի հրապարակս: Ոչ լսի ձայն հարսանեաց, և ոչ զարդարին առագաստք հարսնարանի: Պակասեաց այս ամենայն և կորեաւ և «Ոչ ևս յաւելուցու յառնել»* ըստ սաղմոսողին ձայնի: Այժմ յողբս փոխեցաւ մեզ ամենայն, և ուրախութեան պատմուճանն այն յարջնազգեստ խորգ փոխեցաւ: Ո՜ր լսելիք տանիցին զեշուառութեանս մերոյ զպատմութիւն: Ո՞ր սիրտ քարեղէն, որ ոչ լքանի հառաչմամբ և բեկանի հեծեծելով: Ժամ է ինձ յԵրեմիայի ողբոցն խառնել ընդ մեր հառաչանս. «Ճանապարհք Սիովնի, ասէ, սգան,

* Սաղ. Խ. 9.

1 BCDI խառն ABCEF ալեաց ABCDEFI զմիմեամբք Ծ[1] զմիմեանս
2 ABCDEFHIԾ[2] անապատագոյն h անապատական H խռճողեալ
3 A գեւղս CGHIՏ զգեօղս F ի նախանձ ABCD քահեալ
4 A բնակութիւն DI չիք զի DI ի սոցին
6 G արտասունս H յարտասուս h արտասուսն Տ զարտասուսն
7 I թագաւորքն
10 ABCDEFI յայրութեան H յարութեան h յայրիութեան DI հեծելազունդ զօրն G հեծելազօրքն HI անգերունչ ABCDEFHIՏ պարս Տ և ոմն
11 FGhՏ և ոմն G յազատաց
12 A զկորեւնս BCDEFGHIՏ զկորիւն DEFI առեծուց GHՏ առիւծուցն
13 A արկունական CG ապարանք BCDEFHI չիք և h և
14 C չիք ի CEGHՏ բնակչացն
15 ABDE հնձանի
16 B մանունք BCDEF ծնօղաց, GHՏ ծնողացն EF չիք ծերք
17 ABCDEFGI առագաստ DFGIՏ հարսնարանին HԾ[1] հարսանեաց h հարսնարանին կամ յաւ ևս հարսանց Ծ[1] յարսանց
18 CEFH չիք և (կորեաւ) F աւելուցու C առնել
19 G սաղմոսի փխ սաղմոսողին Ծ[1] սաղմոսին BEGHI ձայնին G յողբ I ողբս G այս ամենայն A ամենայնն
20 F յայն BC սերելիք փխ լսելիք D սիրելիք
20—21 B տանիցեն
21 d չիք որ
22 Տ հեծեծալով B յերեմիա CE երեմիայի
23 F սիոնի G սիօնի



զի ոչ ոք է որ մտանէ»*: Այսպէս ասացաւ յայնժամ յաւերն Երուսաղէմի, բայց կատարեցաւ այժմ:

Արդ այս ամենայն ի վաճառէն յայնմ հանդիպեցաւ Հայոց՝ զոր յառաջ սակաւ մի յիշեցաք: Այս վաճառ անմարդագոյն զոլ թուի ինձ քան զՅուդային. քանզի անդ թէպէտ վաճառողն ընդ պարսաւանօք, այլ վաճառն զին եղև փրկութեան ամենայն աշխարհի: Որպէս մեծն Պետրոս յընդհանրական թուղթն գրէ. «Ոչ, ասէ, ոսկեղինօք և արծաթեղինօք գնեալ ազատեցայք ի ձեր հայրենատուր սնոտի պաշտամանցն, այլ պատուական արեամբ որդւոյն Աստուծոյ»**: Իսկ աստ վաճառողն յոյժ ապառամն և տմարդի, զի այսքան չարեաց գանձն պարտական կացոյց. զի այգի զոր տնկեաց տէր, և մշակեաց կառաւարիչն մեր իւրով հնգետասանամեայ քրտնալից աշխատութեամբ, նա քակեաց զցանկ նորա և կործանեաց զաշտարակս նորա, և արար զնա կոխան անցաւորաց. մինչ զի «ապականեաց զնա խոզ անտառի, և կինճ վայրի ճարակեցաւ ի նմա»***, ըստ դաւթական երգոցն: Արդ այսոցիկ ամենեցուն լուր առ տէր հասցէ, և իրաւունք նմա 'ի տեառնէ եղիցի. և մեք ի մերն դարձուցուք զոճ բանիս:

Արդ 'ի չորեքհարիւր իննսուն և չորս թուականին առաւ Անի, ո՛չ պատերազմի օրինօք, այլ պատիր բանիւ. քանզի երդմամբ և խաչիւ հաւանեցուցին զԳագիկ՝ հրամանաւ թագաւորին, թէ Միայն ի տեսանելն զքեզ, դարձուցից ի քեզ զթագաւորութիւնդ քո, և գրեցից զքեզ ժառանգ յաւիտենից աշխարհիդ և քաղաքիդ քո. և քանզի իմաստունն երդնու և անմիտն հաւատայ, որպէս և իմաստնոցն բերին բանք. և դարձեալ, թէ բանք ստոյ պարարտ են իբրև զլոր, և անմիտք կլանեն զնա: Հաւատաց վասն երդմանցն և խաչին, եթէ վասն խակութեան մտացն եթէ

* Ողբ. Ա. 4. ** Ա. Պետ. Ա. 18—19. *** Սաղ. ՁԹ. 14

1 DI չիք յայնժամ
3 B վախճան փխ վաճառ
4 H թուին
5 BC արդ փխ անդ C պարսաւանօք A այդ
6 A զինք BCDEF զինք DGHI փրկութեան եղև EF չիք ամենայն աշխարհի B մեծ
7 E յընթանրական F յընթհանրական
8 GhԾ[1] հայրենական
9 I որդւոյ ABDFG ապառամ
10 G որ
12 BDH քրտալիր CHՏ աշխատութեամբն ABDFI զցանգ
13 D չիք զի GHIՏ մինչև
13—14 C յապականեաց
14 A յանդառէ CEF անտառէ D յանտառէ
15 ABCDEFGHIԾ[1] ողբոցն փխ երգոցն C ըստ ամենեցուն
16 H մեր
18 A այդ EF չիք այլ պատիր բանիւ
20 B քեզ
21 E յաշխարհիդ DՏ չիք և
21—22 B երդնդնու
22 HՏ չիք և (իմաստնոցն) ACEF իմաստնոց GԾ[1] իմաստնոյն
23 C չիք թէ
23—24 GՏ հաւատայ
24 GHՏ խաղաղութեան փխ խակութեան

վասն երկիւղածութեան բարուցն՝ ոչ գիտեմ. տուեալ զբանալի քաղաքին ի Պետրոս, որ յայնժամ ունէր զաթոռ հայրապետութեան Լուսաւորչին մերոյ, և յանձնեաց ի նա զամենայն հողս աշխարհին մեծաւ դաշամբ և ուխտիւ։ Եւ ոչ եկաց ի պատուէր Վահրամայ և այլ ազատացն որ թագաւորեցուցին զնա, այլ նենգաւորին Սարգսի սադրելոյն լուեալ՝ ել ի քաղաքէն, և չոգաւ ի Յոյնս զանդարձ ուղևորութիւն. իբրև զձուկն ի կարթէ ըմբռնեալ կամ իբրև զհաւ ի ծուղակաց։ Զոր տեսեալ թագաւորին՝ ո՛չ յիշեաց զերդմունսն, և ոչ զխաչին զմիջնորդութիւնն. այլ առ իւր արգել, և խնդրէր թէ Տո՛ւր զԱնի, և ես տաց քեզ փոխանակաւ զՄելիտինէ և զգաւառսն որ շուրջ զնովաւ։ Այլ նա ո՛չ առնու յանձն։

Եւ ի յերկարել խնդրոյս այսորիկ, Գրիգոր որդի քաջին Վասակայ, եկեալ և նա գնաց առաջի թագաւորին։ Եւ քանզի այր իմաստուն էր և խելամուտ յոյժ աստուածային գրոց, որպէս թէ ո՛չ այլ ոք, իբրև ետես եթէ ոչ են թողլոց զԴագիկ ի տեղի իւր, յառաջ կացեալ տայ զբանալին Բջնոյ ցթագաւորն, և զամենայն զիւր զհայրենի ժառանգութիւնն. և մեծարեալ ի նմանէ՝ առնու զպատիւ մագիստրոսութեան, և զանդիս բնակութեան ի սահմանս միջագետաց գիւղս և քաղաքս, գրով և ոսկի մատանեաւ յազգէ յազգ մինչև յաւիտեան։

Իսկ քաղաքացի գլխաւորքն որ նստէին յԱնի, իբրև տեսին թէ արգելաւ Գագիկ ի Յոյնս, խորհեցան երբեմն ի Դուինի տալ զքաղաքն ի Դունացին, քանզի քոյրն Դաւթի կին էր նորա, երբեմն ի Բագարատ թագաւորն Աբխազաց։ Իբրև ետես հայրապետն Պետրոս զայնպիսի խորհուրդ, թէ ո՛ւմ և իցէ՝ ի գնալ է քաղաքս, առաքէ առ այն որ ունէր

1 h երկիւղակի ABCDEF վարուցն H չիք ոչ գիտեմ h ոչ գիտեմ Ծ[2] գիտեմն AEFG զբանալիս BDI զբանալին
2 H պետրոս
3 G նմա փխ նա
4 A այդ
5 A այդ BCD սադրելոյն
6 E յոյնսն AFG ուղևորութիւնն
7 ABC ծուղակաց
8 G զերդմունսն յիշեաց BDFI զերդումսն E զերդմունս BDGH միջնորդութիւն A այդ
9 CD չիք և (խնդրէր) ABCDEFHI զմելտենի h մելիտինէ C փոխանակ
10 BCDHI զգաւառն
11 GH չիք ի ABCEF յերկարել
12 B և եկեալ ի նա C և նա եկեալ B և գնաց CHS չիք և (քանզի) h և քանզի B է փխ էր
13 BC եթէ փխ թէ DI և եթէ փխ որպէս թէ
14 C թէ փխ եթէ
15 E բճնոյ I բջնոց I թագաւորին B իւր. C չիք զիւր BCDEFHI հայրենի G զհայրենի ժառանգութիւնն իւր D ժառանգութիւն
16 ABCDEFHI մագիստրոսութեան
17 ABCF գեւղս DE գեղս GIS գեօղս H զգեօղս C գեօղս և քաղաքս
18 BDEFHI ազգէ
19 G գլխաւորք
20—21 ABCDHԾ[2] երբեմն ի դունացին [h չիք երբեմն]
21 I դաւթին G նորա էր
22 I թագաւոր A աբխազաց C իսկ իբրև
22—23 HS խորհուրդս
23 C որում փխ ում F չիք և



զիշխանութիւն արևելից կողմանն, որ նստէր ի քաղաքին Սամուսատ, զոր ասեն ի հինսն շինեալ Սամփսոնի և գրէ, թէ Տանո՛ թագաւորին թէ մեզ զի՛նչ հատուցանէ փոխարէնս, և ես տաց զքաղաքս և զայլ ամուրս որ յաշխարհիս են։ Իսկ նա իբրև լուաւ փութայէս ծանոյց թագաւորին. և լուեալ թագաւորին, զանձիւք և իշխանութեամբ հաճեալ զկամս նորա, և առնու տիրեցին Անւոյ և ամենայն աշխարհին։

Իսկ Գագիկ անհրախտի մնաց առ թագաւորն. որում առ մարդասիրութեան տուեալ նմա տեղիս, զոր ինքն կամեցաւ, որ յոյժ պակաս էր քան արժէիցն Անւոյ և այլ աշխարհին, զշնորհակալիսն և զորից տարան կաթուղիկոսին հատուցին, յորմէ զքաղաքն առին։ Եւ Գագիկ հրամանաւ թագաւորին առնու իւր կին զդուստր Դաւթի որդւոյ Սենեքերիմայ, և տիրէ նորին բաժնին. քանզի Դաւիթ վաղճանեցաւ չունելով այլ զաւակ ժառանգաւոր։

Իսկ իշխան ոմն Ասիտ անուն, որ յառաջ կալեալ էր զտէրութիւնն արեւելից, և զնա առաքէ թագաւորն տեղակալ քաղաքին Անւոյ։ Որոյ եկեալ՝ անչափ պատուով մեծարէ զհայրապետն Պետրոս, և նուաճէ զաշխարհն ընդ ձեռամբ. և ինքն բազում զօրօք խաղայ ի վերայ քաղաքին Դունայ։ Իսկ Ապուսուար տէր քաղաքին պատերազմ տուեալ ընդ նմա, անչափ կոտորածս առնէ ի դուռն քաղաքին, յորում տեղւոջ մեռաւ մեծ իշխանն Հայոց Վահրամ հանդերձ որդւովն, որ մեծ սուգ հասոյց Հայոց։ Եւ կեցեալ Ասիտն ի տէրութեանն Հայոց, փոխանորդէ զիշխանութիւն նորա Կամենաս ոմն, ի չորեքհարիւր իննսուն և երեք թուականիս մերոյ. և եկեալ՝ ոչ ըստ առաջին պատուոյն մեծարէ զհայրապետն։ Եւ սկսանի զըրավ ամբաստան լինել զնմանէ առ թագաւորն, և խարանօք հանէ զնա ի քաղաքէն տանելով, եթէ Հրամայեալ է քեզ թագաւորն տեղի բնակութեան ի Կարին գաւառի յԱրծին աւանի։ Եւ եկեալ հայրապետին զայ ի մեծանիստ և ի շահաստան քաղաքս մեր, և մեծաւ ուրախութեամբ լցոյց զանձինս տեսողացն, որ ցանկային նմա։ Եւ էր ժամանակն մերձեալ ի

1 F իշխանութիւն I սամուսա
7 GS յորում
9 ABCE աժէից DFGHI աժէիցն A այդ
11 G չիք դաւթի B սենեքերեմայ CD սենեքերիմա
12 ABCDEFGHI վախճանեցաւ G այլ զաւակ չունելով A այդ H զօրինակ փխ այլ զաւակ h զաւակ յայլս
14 BCEF զտէրութիւն
15 ABCI չիք և E չիք քաղաքին
16 H մեծարեալ h մեծարէ
17 ABDI դունա
18 B այնչափ
19 ABCDEH կոտորուածս G կոտորած
20 E վահրամն E որդւով F որդով
20—21 H չիք և... հայոց h և կեցեալ ասիտն ի տէրութիւն հայոց
21 ABCDEFGI տէրութիւն GS փոխանակէ
22 I չիք ի B թվականին CD թվին
23 G յառաջին C չիք և
24 I չիք զնմանէ H խափանօք
26 GHS գաւառին
28 D ժամանակ

տօն սրբոյ Աստուածայայտնութեանն. իսկ ի գալ մեծի տօնին իջեալ անչափ բազմութեամբ ի յորդախաղաց ջուրն՝ որ իջանէ ի լերանցն որ ի հիւսիսակողման դաշտին են. և կատարեալ անդ զխորհրդածութիւն աւուրն փառաւորապէս, որպէս և վայել էր իսկ. իսկ ի ժամ հեղլոյ զմէրոնական իւղն ի ջուրն, այր մի տաճիկ յառաջ եկեալ ի բազմութենէն՝ խնդրէ մկրտիլ ի ջուրն: Իսկ նորա հարցեալ զպատճառն վասն որոյ զայն խնդրէ, և տեղեկացեալ ի նմանէ ցանկալ նմա լինել քրիստոնեայ, և հրամայէ նմա իջանել ի ջուրն: Իսկ մեռոնակիրն մերձ կալով նմա, առեալ զշիշն ի ձեռն և հարեալ զձեռամբն, եւեթ զշիշն՝ տատանապէս հեղլով զիւղն ի վերայ նորակնքին և ջրոյն. և յայտնեալն թէկոր ինչ հարեալ կարեվէր խոցեաց զձեռն նորա, յորդութիւն արեան յերկիր հեղլով. զոր տեսեալ բազմաց ընդ խորանօք արկեալ զեղեալսն, ասելով՝ թէ Չէ բարւոյ ինչ նշան. որ և ի նոյն աւուր կատարեցաւ իսկ: Զանզի մինչդեռ ճաշաժամուն ի սեղանն էին. հասին կալանաւորք և առին զնա, տարան եդին 'ի բերդին՝ որ կոչի Խաղտոյ Առիճ: Եւ Ապա ածեալ ի Հայոց դքեսորդի նորին զԽաչիկ անուն. և եդեալ ի բերդին որ կոչի Սեաւ Քար. և մնացին անդ մինչև մերձ ի գարուն: Եւ ապա հանեալ զնոսա անտի, տարան ի Կոստանդնուպօլիս առաջի թագաւորին. քանզի և զԱնանիա զերէց եղբայրն Խաչկայ յառաջ տարաւ ընդ իւր ներքինի ոմն, որ անէր զպատիւ կէս թագաւորութեան:

## ԺԱ

## ՅԱՂԱԳՍ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՈՐ ԵՂԵՒ Ի ԳԱՒԱՌՆ ԲԱՍԵՆՈՅ ԵՒ Ի ԼԵԱՌՆ ՈՐ ԿՈՉԻ ՍՄԲԱՏԱՅ

Ի սոյն ամս բացաւ դուռն բարկութեան յերկնից ի վերայ աշխարհիս մերոյ. և շարժեալ զօրք բազումք ի Թուրքաստանէ, որոց երիվարքն

1 C չիք սրբոյ DEFI աստուածահայտնութեան ABCDEF էլեալ փխ իջեալ HIԾ³ եղեալ փխ իջեալ h իջեալ GIS այնչափ H այսչափ
2 ABCDEFI բազմութիւն CDI չիք որ ի
3 A հիւսւսակողման BC հիւսւսակողմանս DEF հիւսիսակողմանս GԾ³ հիւսիսակողմն C չիք են GH չիք անդ
4 BDGH չիք (էր) իսկ
5 ABEF եւղն C եօղն Ծ¹ այլազգի տաճիկ D բազմութեան I բազմութենէ GHS խնդրէր
7 BCDI չիք նմա h նմա C ցանկայր
9 ABDEHIԾ³ ձեռամբն F չիք ի ձեռն... զշիշն I ի ձեռն և հարեալ զձեռամբն եւեթ զշիշն I և հեղլով EF զեւղն
12 C չիք չէ I չէ ինչ բարւոյ
13 C նմին փխ նոյն B չիք որ և... կատարեցաւ
14 GI կալանաւորքն
15 GHS բերդն G առիճք
17 B զնա փխ զնոսա A անդի C անդէն
18 A կոստանդնուպաւլիս GH չիք և H զանանեայ
19 G երէց DEFI զէրէց B խաչկա C առաջ BD ներքենի
20 GH թագաւորութեանն
22 GH որք GHS եղեն HS բասենայ
22–23 ABCDEFI չիք յաղագս կոտորածին որ եղեւ ի գաւառն բասենոյ եւ ի լեառն որ կոչի սմբատայ
23 H սմպատայ
24 CG երկնից
25 ABCDEFHI զօր բազում h զօրք AC երիւարքն B իրաւարքն GHS երիվարք



արագունք իբրև զարծուիս, և սմբակք նոցա իբրև զվէմ հաստատունք. աղեղունք լարեալք, և սլաքեալ նետք նոցա, զօտեւորեալք քաջապէս, և անլուծանելի ունելով զխրացս կօշկաց: Եւ եկեալ ի գաւառն Վասպուրականի, յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս անյագեալս ի կերակուր. և եկեալ մինչև ի գաւառն Բասեան, և մինչև ի գաւառակերտն մեծ՝ որ կոչի Վաղարշաւան, և քանդեալ ապականեցին գաւառս քսան և չորս սրով և հրով և գերութեամբ: Ողորմագին և բազում ողբոց և արտասուաց արժանի է պատմութիւնս: Զոր իբրև զառիւծունս ընթացան, և իբրև կորիւն առիւծուց անողորմաբար արկին զդիակունս բազմաց գէշ գազանաց և թռչնոց երկնից. և կամէին այնու ձեռնարկութեամբ գալ ի քաղաքն Կարնոյ: Բայց որ ծովու եդ սահման՝ ասելով «Յայդվայր եկեսցես, և այլ մի ևս յաւելուցուս, այլ այդրէն ի քեզ խորտակեսցին ալիք քո»*, նա արկ զխաւար թանձրամած առաջի նոցա, և արգել զնոսա յընթացից իւրեանց: Զայս առնէ ըստ իւրոյ անճառ իմաստութեանն, որպէս զի աճիւ նոցա մեք խրատիցիմք, և նոքա ուսանիցին թէ ոչ իւրեանց զօրութեամբ ինչ արարին զոր արարին. այլ ձեռնն որ արգել զնոսա հզօրապէս, նոյնն արար ճանապարհ գնալոյ նոցա:

Արդ հեղ զբարկութիւնն իւր ի վերայ մեր ի ձեռն ազգի օտարի, վասն զի մեղաք նմա. և դարձեալ գթացաւ ի չարեաց իւրոց ածել ի վերայ մեր, զի ողորմած է. վասն որոյ ոչ ի սպառ բարկանայ և ոչ յաւիտեան պահէ ոխս: Միոյն ի մէնջ բանադատի՝ զիրաւացի դատաստանն ի մէջ բերելով, զի դատաւոր արդար է. և միւսոյն կանխէ յողորմութիւն, վասն զի հայր գթութեանց է. և միւսոյն զղջանալ ի վերայ չարեաց մերոց, քանզի Աստուած ողորմութեանց է: Որպէս և սաստաւին իսկ զերկ-

* Յովբ. ԼԸ. 11

1 CGHS զվէմս C հաստատուն
2 BC լարեալ G նետ
3 F կօշկաց C եկեալ փխ էլեալ
4 CG արձակեցան BC զգայլս
4—5 ABDEFI անապանեալս փխ անյագեալս H չիք անյագեալս h անյագեալս
5 I կերակրոց B մինչ ի BCDI բասենոյ
5—6 F չիք բասեան . . . գաւառակերտն
6 S չիք և
8 I զի փխ զոր H որ GHS որք
9 AB առիւծիւնս GHS առիւծս A կորիւն EF առեւծուց
11 F քաղաք AEF կարնայ
12 A այդ C մի այլես C աւելացուս A այդ (այդրէն) BCDEFGIS անդրէն B չիք ի քեզ
13 AB որ փխ արկ C արար փխ արկ D որ եդ փխ արկ I որ ետ փխ արկ EF խաւար
14 H զոր փխ զայս h զայս B իմաստութեան
14—15 B որպէս փխ ոչ
16 BCDEGHIS ձեռն BCDI նորա փխ որ
17 BCDGHIS նոյն
18 E հեղ BCDGI զբարկութիւն
19 BC չիք զի GԾ¹ մերոց փխ իւրոց
21 GS դատաստան
22 BDI միւսով C չիք վասն I ողորմութիւն
23 G զղջալ
24 BCDI չիք ի ABCDEFH սաստարին

սեանն եղոյց առ մեզ. ըստ արժանահաս վրիժուցն ծանրացոյց զձեռն իւր ի վերայ մեր և դարձոյ փութապէս անցոյց զբարկութիւն իւր, զի մի՛ ի սպառ սատակեսցէ զմեզ։ Այլ մեք զՓարաւոնին ախտացաք զծանրասրտութիւն, և զլոյծ յիմարին լիւրոց ախտակցաց, որ երբեմն տանջեալ՝ խոստովան լինի ասելով. «Մատն Աստուծոյ է այս»*. և յանցանել բարկութեան պատուհասին՝ արբեալ ամբարտաւանութեամբ ասէ. «Ո՛չ գիտեմ զտէր, և զԻսրայէլ ոչ արձակեմ»**։ Մինչև ուղերձեաց ի լինելն զվերջին պատուհասն՝ բնակից լինելով անդնդային խորոցն։ Բայց բարւոք ասէր վտաշտէրն, թէ մատն Աստուծոյ է այս. զի ձեռն տասն մատամբք ունի առ զործն զկատարելութիւն. որպէս և անդ ի միջէ սկսեալ՝ ի տասն աւարտեաց զհարուածոցն զկիրառ, և ապա արձակեաց զԻսրայէլ։

Արդ մեք ի հոլանիլ բարկութեանն և ի բորբոքիլ հրատին և ի շարժիլ եղեռնաւոր չարեացն, անիւ ահարեկ եղեալ՝ յոյժ զդողի հարեալ զարհուրեցաք. բայց ողորմեցաւ Աստուած, և խաւարաւ փակեաց զճանապարհս նոցա, և խափանեաց զընթացս արշաւանաց անօրինացն։ Կարծական եղև մեզ բարին, և չմարթոյ զտաք առ շնորհակալիսն. զի զոր պարտ էր ի ձեռն խրատու եղբարց մերոց ողջախոհանալ մեզ, և փութալ կանխել առ մարգարէն, և ուսանիլ ի նմանէ զկենցուցանող զխրատն, «Դադարեցէք, ասէ, ի չարեաց ձերոց, և ուսարուք զբարիս գործել»***, և որ զհետ սոցին զան բանք. և յանձանց ուղղութենէ հաշտեցուցանել զԱստուած, և շիջուցանել զգեհենաբորբոք պատուհասն, և զբարձրացեալ ձեռն խոնարհեցուցանել ի բարկութենէ ի ներումն. նա՛ և մոռացօնս եղև մեզ այս, և ոչ ծագեաց անգամ ի սիրտս մեր գիտութիւն նորա. այլ որ անօրինելոցն էր, անօրինէր, և որ անիրաւելոցն էր, անիրաւէր. մինչև ըստ օրինակի վարազացն՝ ի վերայ սրոյն մղեցաք զանձինս, զրոհան-

* Ելք. Ը. 19 ** Ելք. Ե. 2. *** Եսայ. Ա. 16—17

1 BCD չիք առ
3 GI զփարաւոնին Տ զփարաւոնի
4 DI յոյժ E յիւրոցն ABCDEFI ախտարակաց H ախտակարաց GhԾ1 ախտաւորաց Ծ1 ախտակրաց
5 B յանցել
5—6 ABCDEFHI չիք բարկութեան h բարկութեան
7 AD զԻսրայէղ GՏ չիք ի
8 BDI բանակից C բանակակից Ծ1 բնակակից ABEF անդընդային C յանդընդային
8—9 GՏ վատաշուէրն
10 GHՏ զմիջէ փխ ի միջէ
11 DEF հարուածոցն HՏ հարուածոց A զԻսրայէղ
12 GՏ արդ ի հատանել բարկութեանն HI հոլանել CDI բարկութեան GHՏ բորբոքել
13 B չիք ի GHՏ շարժել
14 ABCDEFI յորժամ ողորմեցաւ
15 I այնօրինացն
16 E չիք մեզ AEF զմարթոյ F չիք առ
18 D կանխիլ Տ զկենցուցանողն DEՏ խրատն
20—21 B չիք զաստուած և շիջուցանել
21—22 AEF ձեռնս
22 G նաև C մոռացունս
23 D չիք այս Տ սիրտ A այդ
24 G չիք անօրինելոցն . . . որ F զոր անօրինելոցն B չիք անօրինէր



դակն ի մեզ բերելով։ Թուէր մեզ թէ նոքա մեղաւոր գոլով՝ կրեցին զպատուհասն, և մեք ըստ արդարութեան մերոյ ապրեցաք. և ոչ գոյր ի յիշատակ մեզ տէրունական պատուէրն՝ խրատանացուցիչ խրատն. «Գալիլեացիքն, ասէ, զորոց արիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա, համարիք թէ նոքա մեղաւո՞րք էին քան զամենայն մարդիկ, ո՛չ. այլ թէ ոչ ապաշխարիցէք, նոյնպէս ամենեքեան կորնչիցիք»*։ Իսկ մեք ըստ ամովսական բանիցն, որովք նախատէր զԻսրայէլ, որք զպարգեւս զինին ըմպէին, և անուշ իւղովք փափկանային, և ի գահոյս փղոսկրեայս հանգչէին, և որ այլն ևս, և ոչ ցաւէր նոցա վասն բեկմանն Յովսեփու։ Քանզի խնդրէ Աստուած՝ զի յորժամ զոմանս տանջանաց մատնիցէ, մերձաւորքն ընդ նոսա վշտակից լինիցին. ըստ այնմ, «Լալ ընդ լացօղսն»**։ Այլ նոքա զհոգին հակառակն առնէին. ի միջէ արբենէ էին, և ընդ զերութիւն ցեղին Յովսեփու ցցաւէր նոցա. վասն այնորիկ լերդ արկեալ մարգարէն՝ ամբաստան լինէր զնոցանէ։ Այսպէս և ի մերումս հանդիպեցաւ։

Քանզի յամի չորեքհարիւրերորդի իններերորդի եօթներորդի Թուականիս մերոյ՝ որ էր երկրորդ ամ զերութեանն մերոյ, շարժեալ միւսանգամ մրուր զառնութեան լի բարկութեամբ ի տանէն Պարսից՝ անհաղին ծփանօք, և եկեալ հեղաւ յընդարձակ դաշտն Բասենոյ և Կարնոյ. և ցայտուկս հեղեղատին կոյլա զչորս անկիւնս երկրին. յարեւմուտս՝ մինչև ի Խաղտեաց զաւառն. իսկ ի հիւսիսի՝ մինչև ի Սպեր և մինչև յամուրսն Տայոց և Արշարունեաց. իսկ ի հարաւ մինչև ի Տարօն և մինչև ի զաւառն Հաշտենից մինչև յանտառս Խորձենոյ։ Եւ զեղ առեալ զաղաքեաց աւարս չորեքտասան, և ծախեալ ծածկեաց զլերինս և զմացառ վայրս, և

* Ղու. ԺԳ. 4—5 ** Հռոմ. ԺԲ. 15

1 H չիք թուէր մեզ G մեղաւորք
2 D չիք գոյր
3 F զտէրունական Տ և տէրունական
3—4 A զալիլեացիքն
4 A արեւնն
5 C մարդիկք A այդ
6—7 A ամովսական (նորոգված տեղ)
7 ABDI զԻսրայէղ
8 AEF փղոսկրայս
9 G յովսեփու
9—10 F խնդրէր
10 I առ աստուած G մերձաւորք
11 ABCEF զի փխ ընդ I նոցա փխ ընդ նոսա H ընդ զի նոցա h նոսա CDEF եթէ լալ
12 DF զհակառակն HՏ հակառակ GHՏ յարենէ
12—13 H չիք և ընդ զերութիւն ցեղին h և ընդ զերութիւն ցեղին GHՏ ցեղի
13 GՏ այսորիկ
14 AB ամպաստան C ապաստան
15 A չորեքարիւր երորդի A ևթներորդի
15—16 BC Թվականին
16 B մերոց C մերս ABCDEF զերութեանն
18 ACDEF կարնայ B կարնա
18—19 ABCEFI ցայտուքս
19 ABCDEF երկրի I չիք երկրին
20 I չիք ի (հիւսիսի) B հաւսի F հիւսի G յամուրն Տ յամուրս
21—22 Տ զաւառն
22 C և մինչև AB յանդառն [B ի յանդառն] GHIՏ յանտառն DEFI և մինչև F խորձենւոյ H զեաղ Ծ1 զաեղի

կալաւ բնաւ զաշխարհս. որ ինձ թուի յանապակ գինւոյն յայնմանէ գոլ նմա, զոր մանուկն Երեմիա ի տեսողութեանն իւրում ոսկի բաժակաւ մատուցեալ արբոյց թագաւորաց, ազգաց, քաղաքաց, իշխանաց և զօրաց նոցա. և յետ ամենեցուն արբոյց տանն Սիսակայ. ահա յայտնի կատարումն մարգարէութեանս գիտումն: Քանզի արբ տունս Հայոց յանապակէն յայնմանէ և արբեցաւ յարբումն չար. արբ և թմրեալ լիմարեցաւ. արբ մինչև զտրուանդակն լինքն ընկլաւ. և արդ անկեալ կայ ի կիցս ամենայն ճանապարհաց մերկ և խայտառակեալ, և կոխեն զնա նախատանօք անցաւորք ճանապարհաց: Ելեալ ի տանէ, օտարացեալ ի ծանօթից, հեռացեալ յընտանեաց և յազգականաց, գերի և կալանաւոր ամենայն ազգաց:

Ժամ է ինձ զմարգարէականն զայն բարբառել բանս, եթէ «Զմնացորդսն թրթրոյն եկեր մարախն, և զմնացորդս մարախին եկեր ջորեակն, և զմնացորդս ջորեկին եկեր գրուիճն»*: Իմ են և այսոքիկ, քանզի ի մեզ կատարեցան ամենայն կանխասացեալ բանք մարգարէիցն. արդ թրթուրն և մարախն այն անցեալ են. իսկ ջորեակն և գրուիճն սոքա են՝ վասն որոյ ճառս մեր արկեալ է: Քանզի յառաջին անգամոյն՝ յորժամ եկին Պարսիկք և այլ խուժադուժ ազգք հեթանոսաց, և մարդակոտոր սատակմամբ ապականեցին զաւառս բազումս, և առ և գերի բազում առեալ իջին յաշխարհն իւրեանց, աւետաւորք եղեն ազգաց և թագաւորութեանց. և հրաւէր տուեալ նոցա՝ ասեն ըստ մարգարէին, թէ «Գազանք անապատի եկայք կերէք զայս որ յանտառիս է»**: Եւ ի գալ միւսում ամին ժողովեցան իբրև արծուիք ի վերայ կերակրոյ անհամար բազմութիւնք զօրաց աղեղնաւորաց և սուսերամարտից. և մեծաւ խրախուսանօք ճեպ ի ճեպոյ

* Յովել Ա. 4. ** Եսայ. ԾԶ. 9.

1 I բնաւ կալաւ E գինւոյ
2 BEFH Երեմիայ DI Երեմիաս ABCDGHIS տեսողութեան
4 ABCDGHS յետոյ GHS չիք ամենեցուն BCDI Սիսակա H չիք և h և
5 CI չիք մարգարէութեանս գիտումն C էարբ
6 H յարբեցաւ ABCDEFI արբումն CI էարբ (և) AB թմբրեալ CDI էարբ (մինչև)
7 DI կիրցս
8 GHS ճանապարհացն ABCDEFI չիք և
10 B յընթանեաց GhS յընտանեաց և ի բարեկամաց B ազգականաց
13 ABCDEFGH զմնացորդսն GH թրթրուն
13—14 I չիք ջորեակն և զմնացորդս
14 չիք և
16 BDI մարախն DGI չիք այն d այն
17 A ոյ փխ որոյ ADEFHI զճառս ABC զամուն փխ անգամոյն DEF անգամուն I ժամուն փխ անգամոյն
18 I պարսիկքն C ազգ
19 GHS զգաւառս I չիք և առ C չիք բազում
20 E թագաւորաց
21 G չիք թէ
22 ABC յանդառիս E անտառիս G միւս
23 I զօրացն
24 GHԾ¹ սուսերամերկից h սուսերամարտից A ճեպ ի ճեպոյ լուսանցքում BCDEI չիք ճեպ ի ճեպոյ



ելին յաշխարհս մեր յամսեանն սեպտեմբերի, ի տօնի սրբոյ Խաչին յաւուր չորեքշաբաթու:

Աստանօր մեզ պատմութիւնս ողբոց և աշխարանաց է, և զամենեսեան հանդէսք պատմութեանս ի կոծ հրաւիրէ: Զի թէ Նինուէացիքն ի վերայ սպառնալեաց մարգարէին, և այն զի մի անձն եմուտ ի քաղաքն, օտարաշխարհիկ և անծանօթ յամենեցունց և առանց նշանաց, այնքան ահիւ ահաբեկ եղեալ՝ մինչ զի ի թագաւորէն սկսեալ մինչև յայն որ՝ յաղօրիսն նստէր, միաւոր եղև ամենեցուն կոծ, ամենեքեան խորգազգեցք, ամենեքեան արջնազգեստք, ամենեքեան հատեալք ի կերակրոյ, և բնութիւնն բանդագուշէին տատանեալ ողբովք, նաև զեղկրամայր կանայս ձայնակից իւրեանց կոչէին. «Թերևս, ասէ, զղջասցի Աստուած, և դարձցի սրտմտութիւն նորա ի մէնջ»*: Մերս քանիօ՞ն առաւել ողբոց արժանի է, որ ոչ սպառնալիք միայն, այլ պատուհաս բարկութեան հասեալ է ի գլուխ ելեալ, և մեք չարագանեալք և կործանեալք և տեսարան աշխարհի եղեալ. զոր և տաքեալն ի վերայ սրբոցն առնէ զրանս, և չար պատմութիւն թողեալ զկնի մեր ազգաց յազգս: Քանզի քաղաքք աւերեալք և տունք այրեցեալք, ապարանք հրացեալք, և արքունաշէն սրահք աճիւնացեալք: Արք ի հրապարակս կոտորեալք, և կանայք ի տանց գերի եղեալք, և կաթնասուն տղայք զքարի հարեալք, և գեղեցիկ դէմք պատանեկաց թառամեալք: Կոյսք ի հրապարակս ի խայտառակութիւն անկեալք, և երիտասարդք առաջի ծերոց սրախողխող եղեալք. պատուական ալիք ծերոց ընդ արիւն և ընդ ապաժոյժ եկեալք, և դիակունք նոցա թա-

* Յովնան Գ. 9

1 C տօն
2 BC չորեքշաբաթի I չորեքշաբաթ
3—4 Ծ² զամենայն
4 ABCDI հանդիսաւորք EF զհանդէսք H հանդէսաւոր h հանդէսք Ծ² հանդիսաւորք Ծ¹ պատմութիւնս
5 C յանձն
6 E ամենեցունց
7 C այն
7—8 ABC յաղօրիս DEFI յաղորիս G ազօրիսն
8 ACDEFI մի թաւր փխ միաւոր A խորգազգածք DHI խորգազգեացք
9 G չիք ամենեքեան առաջնազգեստք H առաջնազգեստ S կերակրոյ
9—10 BC զբնութիւն փխ բնութիւնն DGI զբնութիւն
10—11 BC ձայնակիր
12 G չիք է
13 A այդ h և (պատուհաս) AEFGH բարկութեանն
14 F չարագանեալք I չարագանեալ ABC կործանեալ I կործանելի G չիք և (տեսարան)
15 GHS չիք և DEFI տաքեալ
16 ABCDEFGHI մերոյ C ազգս
16—17 S մեր աւերեալք
17 G այրեալք H չիք և տունք այրեցեալք h և տունք այրեալք
18 G չիք և Ծ¹ անճոռնացեալ փխ աճիւնացեալք F տան
19 GS և կաթնասուն I գեղեցիկք
20 D կոյս
21 B եղեալ h լեալք փխ եղեալք
21—22 G չիք սրախողխող... ծերոց
22 C ծերոցն ABFh արեւն փխ արիւն H արեն

ւոյգլոր խաղացեալք: Սուրք թշնամեացն շլացեալք, և ձեռք նոցա ի զօրութենէ պակասեալք. աղեղանց նոցա լարք հատեալք, և նետք ի կապարճից նոցա սպառեալք. անձինք նոցա ձանձրացեալք, և սիրտք նոցա յողորմութիւն ոչ եկեալք:

Ո՜վ ողորմութեան քո Աստուած, որ այնքան ներեցեր անօրինացն խրախտալ ի վերայ խաշին արօտի քո: Յիշեա զժողովուրդ քո զոր ստացար ի սկզբանէ գալստեամբ միածնի քո, և փրկեցեր արեամբ օծելոյ: Ընդէ՞ր մերժեցեր, Աստուած, ի սպառ, բարկացար սրտմտութեամբ քո և մատնեցեր զմեզ ի ձեռս արանց անօրինաց, խստաց և ապստամբից: Մի՛ յիշեր զմեղս մեր, և մի՛ վասն մեղաց մերոց դարձուցաներ զերեսս քո ի մէնջ. այլ յիշեա զձեռն քո հզօր և զբազուկ քո բարձր, որով տիրէիր մեզ, և անուն քո կոչեցեալ էր ի վերայ մեր: Եւ արդ ահա դու բարկացար, և մեք մեղաք. վասն այնորիկ մոլորեցաք գերութեամբ ի բազում ազգս, և եղաք իբրև զպիղծս ամենեքեան: Հողմք մերժեցին զմեզ, և ոչ ոք իցէ որ կարդայցէ զանուն քո, և որ յիշեսցէ ապաստան առնել զքեզ. զի դարձուցեր զերեսս քո ի մէնջ և մատնեցեր զմեզ վասն մեղաց մերոց: Մի՛ յաւիտեան բարկանար մեզ, և ի ժամանակի մի՛ յիշեր զմեղս մեր:

Ո՜հ և աւաղ աւուրն այնորիկ լսանելոյ. զի լոյսն որ յաւուրն յառաջնումն անմարմին տեսակս ի բանէն Աստուծոյ գոյացաւ, և ի չորրորդում աւուրն ընդ մարմնոյ պարուրեալ՝ ի լուսաւորս բաժանեցաւ, իշխան տուընջեան և գիշերի լինելով, և աշխարհի ճանապարհորդք յաւիտենից. մինն զմարդ ի գործ յարուցանելով, և միւսն զգազանաց համարձակութիւն տալով: Այսօր միջօրեայ աւուրն այնորիկ՝ մեզ ի խաւար փոխարկեալ գիշերացաւ, և գազանաբար ազգն հեթանոսաց որք ի վաղընջուց ի խշտիս իւրեանց մանչէին, բաց մարգարէին ձայնի. և յԱստուծոյ

1 B խաղացեալ
1—3 G չիք և ձեռք... սպառեալք
2 ABCFI լար
3 H չիք անձինք նոցա ձանձրացեալք h անձինք նոցա ձանձրացեալք
4 F ողորմութիւն
5 ABCDEFG ողորմութիւն
6 H զժողովուրդս
7 GS գալստեան
9—10 AB ապստամբից GS ապստամբաց
10—11 G զերեսս
11 A այլ C չիք քո (հզօր)
12 B չիք էր
13 B գերութիւն
14 F զպղծոց
19 I չիք և H յաւուրն այնորիկ h չիք այնորիկ B չիք այնորիկ... յաւուրն
19—20 ABDEFGI առաջնում C յառաջնում
20—21 DFHI չորրորդումն
21 S մարմնոյն G չիք ի H ի լուսաւոր աւուր արժանացաւ ABDI բարժանեցաւ
21—22 h ի լուսաւորս բաժանեցաւ իշխան
22 DGHIS տուընջեան G և ի EF գիշերոյ
25 S չիք և ACDEFhIՏ[1] գազանաբար
25—26 ABCDEF վաղընջուց հետէ
26 EFGhՏ[2] խորշուրդս փխ խշտիս HՏ[1] խաւս փխ խշտիս



հօտիցն խնդրէին կերակուր իւրեանց, ի գիշերանալ մեզ աւուրն այնորիկ՝ ելին և տարածեցան ընդ երեսս երկրի, և գտին որս բազում և լցեցան կերակրովք, և նշխարեցին տղայոց իւրեանց յամս բազումս: Արդ թէպէտ և յամենայն տեղիս որս բաւականացէս պատրաստեցաւ նոցա, քանզի իբրև զդրախտ փափկութեան լի պտղով գտաւ երկիր առաջի նոցա. բայց առաւել ի գաւառն Մանանաղւոյ ի լեառն՝ որ կոչի Սմբատայ Բերդ. քանզի անդ ժողովեալ էին բազմութիւն անթիւ փախստէիցն, և անասնոցն որ ոչ գոյր թիւ: Յորոց վերայ հասեալ անօրինացն սպականեցին զամուրս նորա, և մտեալ ի ներքս՝ սուր ի վերայ եդեալ կոտորեցին զամենեսին:

Անդ էր տեսանել տեսութիւն ողորմելի և բազում ողբոց արժանի. զի զոմանս ի նոցանէ որք ի բուռն անկանէին՝ սրամահ առնէին և որք յառաջոյ տեղիս անկանէին և ամրանային, նետիւք խոցոտեալ սատակէին. և զբազումս ի վերայ անձաւին եկեալք մեծամեծ վիմօք գլաջարդ առնէին՝ որոց գլխոյակնքն գլաթաւալ ի վերայ միմեանց շեղջեալ իբրև զկոյտս փայտահարաց՝ զառաջիկայ զձորն լնուին: Վա՜յ և աւա՜ղ շատ դառն լսելոյ աւուրն այնորիկ. զի քաջ արքն վառեալ զինու և սրտմտութեամբ եռացեալք զումարէին և վաղքն թագկանային, կանացիքն յիմարէին և երիտասարդքն խիզախէին, այլ ելս իրացն ոչ կարէին իմանալ: Քանզի յամենայն կողմանց պատնէշ թշնամեացն պաշարեալ էր զնոսա. ոչ գոյր անդ սէր սիրելեաց և ոչ աւաղ բարեկամաց. մոռացաւ հայր զգութ որդւոց, և մայր զսէր նորածին մանկանց: Ո՛ր կարէր յիշել անդ կին նորահարսն զսէր փեսայի, և ոչ զմտաւ ածէր այր զգեղ ցանկալի ամուսնոյն իւրոյ. պակասեցան երգք պաշտօնէից ի բերանոյ քահանայից, և հատան

1 ABDEFI հօտից BCEFI զկերակուր
2 C յորսս փխ որս C բազումս
3 B ամս
4 I պատրաստեցաւ
5 I փափկութեան
6 H չիք ի գաւառն h ի գաւառն GHS Մանանաղւոյն BCDEFGHI Սմբատաբերդ
7 ABCEF անթիւք ABCdEF փախստէից I փախստէրատէիցն
7—8 ABCDEFGHIS անտառուն hՏ[1] անասնոցն
8 G յորոյ ABDEFHI և սպականեցին CG և սպականեցին
10 ABGI զամենեսեան
12 BE ցուցանէ փխ ի նոցանէ GS որ DI արկանէին փխ անկանէին GS ապանանէին փխ առնէին Տ[2] առնէին
13 H առյալպա
14 GS յանձաւէն վերայ H յանձաւէն ի վերայ ABCE եկեալ I չիք եկեալք
16 E զձորն
17 EF վառեցան
18 GHS չիք զումարէին G կանայքն S կանացիք
18—19 S երիտասարդք
19 A այլ I զելս
20 I չիք թշնամեացն BD զգոյթ
21 BC սէր
22 GH չիք անդ
23 CDEF փեսային B մտաւ ABCDEI ամուսնոյ F ամուսնոյ
24 AFH պակասեցին h պակասեցան H երգ GHS չիք ի բերանոյ քահանայից

ձայնք սաղմոսաց ի շրթանց սաղմոսողաց. կալաւ առ հասարակ զամենեսեան դողումն և երկիւղ: Եւ ի սաստիկ տագնապէն, բազում կանայք յղիգոլով՝ վիժեցին զմանկունս. և այսպիսօրէն զործով՝ խիթս վարմաւ որոտդաց թմբրեալ զլխաւոնն զօրն ամենայն՝ մինչև լքան և հատան ի զօրութենէ:

Իսկ ի գալ երեկոյին, առեալ զաւ և զգերի և զկապուտ սպանելոցն, չոգան ի տեղւոյն: Իսկ զկնի ելանելոյն նոցա, անդ էր տեսանել տեսութիւն ողորմելի, և քան զառաջինն ողորմագոյն և բազում ողբոց արժանի: Քանզի բազմադիմի էին օրհասք մահուն. զի ոմանք յանկելոցն դեռ յոգիս կէին, և լեզուք նոցա ի ծարաւոյ ցամաքեալք, նեղ և նուրբ ձայնիւ հայցէին հայթայթանս ծարաւոյն զատանել, և ոչ ոք էր որ տայր. իսկ կէսք չարապէս վիրաւորեալք, և ի ձայնէ պակասեալք, ուժգնակի շնչէին. և այլք ընդ փորիցն զենեալք՝ կիսամեռք գոլով, դժուարաւ խանչէին, իսկ ոմանք ի դժուարին խոցուածոցն մարմանջեալք՝ աքացէին ոտիւք, և եղնգամբք ձեռացն զերկիր գափ հատանէին: Բայց առ նոքօք և այլ ահագին էր տեսիլ տեսանել, որ և զքարինս անգամ և զայլ անշունչ արարածս շարժէ ի լալս և ի հառաչանս. քանզի անօրէնքն յորժամ զգերիսն հանէին ի լեռնէն, զաղայսն առեալ ի գրկաց ծնողացն՝ յերկիր ընկեցին, որովք ի բազմութենէ նոցա եռայր առհասարակ տեղի բանակի նոցա: Ոմանք ի յանկելոցն զքարի հարեալ սատակէին, և կիսոցն կուշտքն պատառեալ, և փորոտիքն յերկիր հեղեալ. իսկ զկենդանեացն զկառաչ ո՞ր լսելիք տանել կարէին. քանզի որ հետիոտիք ընթանալ կարէին, այսր անդր յածելով զմարս իւրեանց խնդրէին, յորոց ի բարձրաձայնութենէ լալեացն՝ արձագանք լերինն գնեա հնչէին, իսկ այլք որք չև ևս էին հա-

1 I ձայն B սաղմոսաց
1—2 ABCDEFI զամենեսեան առ հասարակ
2 AB երկեւղ G տագնապէն
3 GS վիժէին BDEI զմանկունսն AC այսպէսօրէն S խբբ CDI զվարմա.
4 S թմբրեալ էին S զլխաւոն GHS չիք զօրն
6 ABCd երեկորին C չիք զաւ
7 BCEFHI ելանելոյ
8 BDI զառաջին
9 B բազմագիմ C անկելոց BDhI յանկելոյ H յանկանելոյն
10 ABCDEFHI և նեղ
10—11 H չիք ձայնիւ h ձայնիւ
11 ABCDEG ծարաւուն DI չիք և
13 EF այլքն I զենեալք GS կիսամեռ
14 H չիք ի
15 BC եղընկամբք GHS եղնգամբ BC գափք H նոքա GhS նոսա A այգ C այլ եւ G չիք և (այլ)
16 EF չիք էր G զնոքօք և քարինս
17 GHS շարժէին B ողբս փխ ի լալս G չիք ի (լալս)
18 EF և զաղայսն B լեառնէն DHS զաղայս BDEHI գրկացն BHI ծնողաց DE ծնողաց C երկիր
20 GhS չիք ի EF անկելոցն GS կիսոց B կուշտն
21 I պատառեալ C երկիր BCDEFI ոքր
22 BC կամէին փխ կարէին C զհետիոտիւք
23 G ածելով BCDI զմայրս
24 B հնչէին փխ ընչէին S այլ ABDEFH որ



տատեալք յոտս, ի գուճն սողալով կառաչէին. իսկ որք քան զնոսա ՚ի տխեղծ հասակին էին, ոտիւք զերկիր հարկանէին. և ի սողալոյն պակասեալք ի ձայնս, ո՛չ կարէին արտաքս բերել զհագագն. և այսպիսի ողորմագին ձայնիւք և անհատ աղաղակաւ՝ զգառանց բերէին զնմանութիւն, որ զեռագեա ի մարցն բաժանեալ՝ ի հօրձիցն ելեալս առնէին վասն անժոյժ գոլոյ բնութեանն. և անդադար ողողանջիւք վիրաւորէին զօդն, և ձանձրացուցանէին զլսելիս լսողացն:

Այսոքիկ են չարաչար պատմութիւնք քո, ո՜վ լեառն. լեառն՝ ոչ ընդ որ հաճեցաւ Աստուած բնակել ի նմա, այլ լեառն արեան, կոխման և կորստեան: Ո՛չ է մարթ անուանել զքեզ լեառն, այլ խորխորատ աղմոց ի կորուստ ամենայն բնակչաց երկրի, քանզի ի քեզ դադանք օթագայեան, և ցինք և անգեղք արարին իւրեանց բնակութիւն. ի քեզ աղուեսունք երամակեալք, խայտացեալք, լցեալք ի կերոյ: Ո՛վ լեառն, ոչ ըստ Հերմոնի ի ցօղոյ երկնից պարարտացար ի քեզ կաթելոց, այլ ի ճարպոյ և յարենէ զիականց ի քեզ կոտորելոց: Ո՛վ լեառն, ոչ ըստ սինէականին Մովսէսի առ Աստուած խօսից եղեր միջնորդ, այլ զբազում քահանայս լռեցուցեր ի սաղմոսական երգոց, որք աղօթիւք միշտ խօսակիցք Աստուծոյ լինէին: Եղիա երկուցեալ ի մահուանէ, Յեզաբելայ փախըստական՝ ի Քորեբ անկեալ ապրեցաւ. և սոքա ի քեզ ապաստան եղեալ՝ մատնեցան ի ձեռն սրոյ, և բաժինք աղուեսուց եղեն: Ո՛վ լեառն, համաձայն տեսանեմ զքեզ լերինն Գեղբուայ, յորոյ վերայ անկան ազատքըն Իսրայէլի: Վասն որոյ ժա՛մ է ինձ զառ ի Դաւթայն զառ ի նա զասացեալսն՝ ի քեզ երկրորդել: Լերինք Ամբատայ, մի՛ անկցի ի վերայ

1 ABEFG հաստատեալ S գուճս
2 ABEH տհեղծ h տխեղծ S չիք էին ABDEFI զերկիրն
3 G չիք և
4 I զգառանցն
5 ABDI բարժանեալ F բաժանեալ էին ABCDEFI ելել
6 BCDI ընութեան ADEFI վիրաւորեն BC վիրաւորէին
7 ABCDEFI ձանձրացուցանեն ABC լսողաց EF լսօղացն
8 D չիք լեառն S լեառն ամուր ամրաստոյ DI ընդ որ ոչ
9 ABDFGI բնակել
10 B մարք I մարթ
10—11 ABFGI աղմոյ
11 B չիք ի
11—12 G յօթագայեան
12 F բնակութիւնք
13 B աղուեսուք ABCDEFI խայտան լեցեալք G խայտեալք H հայտեալ I կերակրոյ
14 G կաթլոց ABCDEFI կաթեցելոց
15 GS ճարպոց CHIS ըստ փխ ընդ
16 G մօսէսի
17—18 G խօսակից
18 E լինին աստուծոյ ABCD էղիա EFG եղիայ A յեզաբեղայ C հեզաբելայ DI հեզաբելա
19 BD քորեբ EF քորէբ
20 G լեալ փխ եղեալ B սրոյ փխ սրրոյ
21 DI գեղբուա
21—22 S ազատքն Ն[1] ազունք
22 BCDI առ ի դաւթայն C դաւթեանն
23 BCD ամպատա

ձեր անձրև, և մի՛ ցօղ. քանզի արբէք դուք յարենէ հաւատացելոց՝ արանց և կանանց ի ձեզ անկելոց։ Այլ որ վասն լերինն այնորիկ չար համբաւ պատմութիւն էր՝ զկայ ասացէ, թէպէտ ի բազմաց սակաւ ինչ ասացի։ Աստանօր ի մերս դարձուցից զոճ բանի պատմութեանս. և կամիմ ըստ ուժոյ իմոյ լամել ի բանս, որպէս զի ամենեցունց շարժեցից զարտասուս։ Կոչեմ և զձայնարկու կանայս ընդ Երեմիայ, զի ընդ իս զողբս յարդարեսցեն. քանզի ոչ եթէ լերանց և անձաւաց և անապատ տեղեաց առնեմ զպատմութիւնս, յոր մնացորդք փախստէիցն երթեալ բնակեցան։

## ԺԲ

## ՎԱՍՆ ԱՐԾԻՆՆ ԱՆՈՂՈՐՄ ԿՈՏՈՐԱԾԻՆ

Այլ քաղաքի, և քաղաքի այսպիսում, որ հոյակապ և սքանչելի էր ամենայն աշխարհաց, իբրև զքաղաք որ ի վերայ լերինն կայցէ. և ծով և ցամաք երկնէր և տատանայր կրել ի սմա զզօրութիւն իւր. որպէս բարձրն Եսայիաս վասն Երուսաղեմի մարգարէանայր։ Արդ սա յառաջինն մինչդեռ բարեաց առատութեամբն պսակեալ էր, ամենայն ինչ բաւ մօտ էր սորա. և նման իմն էր նորահարսն կնոջ, որ գեղոյն վայելչութեամբ և զարդուցն պայծառութեամբ՝ ցանկալի գոլ ամենեցուն։ Քանզի իշխանք սորա էին մարդասէրք, և դատաւորքն արդարադատք և կաշառացն նեղողք։ Վաճառականքն՝ եկեղեցեաց շինողք և զարդարիչք, կրօնաւորաց օթևանք և հանգուցիչք, և առ աղքատս ողորմածք և գարմանիչք։ Ոչ գոյր խաբէութիւն ի վաճառս, և ոչ նենգութիւն ի տուրևառից փոփոխմանցն։ Ընդ բամբասանօք էր վաշխից և տոկոսեացն շահք, և խոտեալ և անարգեալ էր ի նուէրս ընծայից պատարագ նոցա։ Ամենեցուն մի նախանձ էր բարեպաշտութեան. քահանայք սորա սրբակեացք և աղօթասէրք,

1 DI արբէք BC յարենի
2 E կանանցն ABCFG ընդ փխ ձեզ A այդ
3 ABE պատմութիւնն I ասացի փխ ասացէ
5 ABCEFH չիք զի DI զամենեցունց G ամենեցունցն
6 ABCDEF ըստ փխ ընդ h զձայնարկու լալական ABCDEFGI զողբսն
8 BD զպատմութեանս G յոր GHՏ մնացորդք
10 BC արծին C կոտորուածին
11 A այդ HՏ այլ քաղաքին A այսպիսում I չիք որ ABCDEFI յականաւոր
12 AF լերին
13 EF զզօրութիւնն
14 H եսայի h եսայիս
15 GIՏ առատութեամբ
16 EFH իւր փխ որ
17 BC չիք գոլ
18 BCDI դատաւորք
18—19 EFGI ներողք
19 I չիք վաճառականք . . . և զարդարիչք
20 ABCDEFI ողորմածս ABCDEFI գարմանիչս
21 C չիք ի (տուրևառից) B տուրևառից փխ տուր՛ևառից GՏ փոփոխմունս
22 H տոկոսացն Տ շահքն ABCDEFI չիք և (անարգեալ)
23 BC պատարագաց
24 B բարեպաշտութեան Gh նորա HՏ նոցա HՏ սրբակացք



և եկեղեցական սպասու հլուք և հպատակք։ Վասն որոյ վաճառականք սորա փառաւորք, և ազնօղքն թագաւորք ազգաց։ Եւ իբրև ակն մի պատուական լուսազեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենևին գեղեցիկ, բոլորովին զարդարուն։

Բայց յորմէ հետէ մտին յեկեղեցիս մեր Սեբաստացիք և Պինհոնացիք, և արդարութեան օրէնքն յանիրաւութիւն դարձաւ, և յարգի եղև արծաթսիրութիւն քան զաստուածսիրութիւն, և մամոնայ քան զՔրիստոս. յայնժամ ամենայն համեստութիւն կարգաց զառածեալ՝ յանկարգութիւն դարձաւ։ Իշխանք սորա գողակիցք եղեն գողոց, վրիժագործք և արծաթոյ ծառայք. դատաւորք սորա կաշառառուք և վասն կաշառոյ գողանային զիրաւունս. դատաստան որբոց ոչ առնէին, և յիրաւունս այրեաց ո՛չ խոնարհէին։ Վաշխից և տոկոսեաց օրէնք եղան, և ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու զարգասիս առ ի տալոյ զպտուղ ի ժամու իւրում առ ի կերակուր մարդկան։ Որ խաբէր զընկերն՝ պարծէր իմաստուն գոլ, և որ յափշտակէր՝ ասէր. Ես հզօր եմ։ Զտունս անակից աղքատացն, և զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն, և չկամէր ի լսելիս նոցա աստուածապատուէր անէծքն գրեալքն ի ձեռն Մովսեսի ծառայի տեառն. «Անիծեալ է, ասէ, որ յափշտակէ զարտս ընկերին»*։ Կամ զոր բարձրն Եսայիաս բողոք բարձեալ սաստէ այնպիսեացն. «Վա՜յ, ասէ, այնոցիկ, որ յարեն զտուն ի տուն և անդաստան առ անդաստան մերձեցուցանեն, զի զընկերին հանիցեն։ Նա աւանիկ ազգ եղև լսելեաց տեառն զօրութեանց այդ ամենայն»**, և որ ի կարգին է, լռեմ խնայելով ի ձեզ։ Զգոյր ի յիշատակ նոցա այգին Նաբաւթայ, և Յեզա-

* Բ. Օրէն. ԻԷ. 17 ** Եսայ. Ե. 8—9

1 GH հլու h հլուք I չիք (հլուք) և H հպատակ h չիք վասն որոյ Տ և վաճառականք
2 G օգնօղք փխ ազնօղք H օգնօղքն Տ օգնօղք E և թագաւորք H չիք մի
5 ABCEFI սեքարացիք D սեքարեցիք GHՄ[1] սեբրարայիք Տ սեքարայիք [Ճիշտ ընթերցումը վերականգնում է Ն ո ր ա յ ր Ն. Բ ի ւ զ ա ն դ ա ց ի ն. Հայկական բառաքննութիւն. ուղղութիւնք ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց և նշանակութիւն բառից ինչ. Կոստանդնուպոլիս, 1880, էջ 89] GH պինհոնացիք I փինհոնացիք
6 I չիք և G արդարութեամբ
6—7 I արծաթասիրութիւն
7 I չիք քան GhՄ[2] զաստուածպաշտութիւն փխ զաստուածսիրութիւն [G զաստուածպաշտութիւն] ABCDI մամոնա GՏ մամոնայն
8 GH համեստութիւն ամենայն
10 C չիք սորա GՏ կաշառոյ
11 GՏ և դատաստան D զդատաստան B որոց փխ որբոց
14 B չիք իւրում ABCDEFI խաբէրն F զընկեր
15 C չիք որ BCEFH անանկից G զտունս աղքատաց անանկաց I անկակից Մ[2] անանկաց
16 I զսահման
17 C ոչ կամէր փխ չկամէր BDGHIS գրեալք C գրեալ
18 C մովսեսի I մովսէսի ABCDEFI արտս փխ զարտս
20 ABCDEFI տուն G առ անդաստանս
22 E չիք և
23 C նաբութ GՏ նաբովթայ

բէ՝ որ յափշտակեաց զայն, թէ զի՞նչ կրեաց, որ մինչև ցայսօր փող հնչէ յամենեցունց լսելիս: Բարձաւ և ի քահանայից երկիւղ և բնութիւն սրբութեան. նեղին և մղին մերձենալ ի սեղանն և սպասաւորեն անճառ խորհրդոյն որ հրեշտակաց է զարհուրելի, թող թէ մարդկան, և զայն ի ձեռն արծաթոյ և ոչ Աստուծով. և ի մատացնս եղև սաղմոսական երգն որ ասէ. «Աստանեցին ախորժիկ որ ընտրեալ են արծաթով»*:

Զի՞նչ ասացից և որ առ կանայս ամբաստանութիւն է. բաւական են առ ի յԵսայեայ ասացելոցն, չխարոտանան մերում բանիցս: Քանզի նա զԵրուսաղէմի կանայսն՝ վասն զարդասէր լինելոյն այսպէս յանդիմանէ. «Փոխանակ, ասէ, զի հպարտացան դստերք Սիոնի, և գնացին ի բարձր պարանոցս»**: Նախ զարմատոյն ամենայն չարեաց բուռն հարկանէ, զամբարտաւանութենէն ասեմ. զի նա է մայր և սկիզբն ամենայն չարեաց, զի ի մարդկանէ զնա գործէ, և նոցին առնչանացն վիճակակից առնէ: Արդ՝ ամենեցուն չար է ախտս այս, բայց կարի առաւել կանանց ազգի. վասն այսորիկ նախ զնոսա զատի, և ապա ի կարգ արկեալ լիշէ զատորինսն ընդ երկիր զքարշելն, և զգինդսն, զմատանիսն, զապարանջանսն, զքօղէսն, զմեհեանզսն և զայլն ամենայն: Տե՛ս լսող, և զհատուցումն նոցին. «Փոխանակ, ասէ, ոսկի զարդուցն, գլխոյն կնտութիւն»***. զի ի զարդուցն մերկացուցեալ զգլուխն, զհերսն հատանէին ծայր առնելով զնոսա: «Փոխանակ ոսկի կամարացն չուան գօտի. և փոխանակ պատուական հանդերձիցն քրձազգեաց, ասէ, լինել»****. զի յորժամ ի գերութիւն հանդերձեցան, զերիչքն զայն չնորհեցին նոցա:

Ոչ վայրապար եղև ինձ անցանել ընդ այս ամենայն. այլ զի ցուցից, թէ որպէս բառ կարգի նոցա յանցանքն մեր, նոյնպէս լաւ նոցա պար-

* Սաղ. Կէ. 31 ** Եսայ. Գ. 16 *** Եսայ. Գ. 24 **** Եսայ. Գ. 24

1 H փողն
2 A երկեւղ
3 I սրբութեանց B ի մերձենալ I սեղան
4 C խորհրդոցն H հրեշտակացն
5 CDGS աստուծոյ CE մատացուցս BI երգ C երգոց
6 B խուտեայքն
7 EF ամբարտաւանութենէ
8 GI եսայեայ I չխարոտանան G մերում բանից B բանիս BCI չիք նա
9 FHI չիք վասն BC լինելութեան
9—10 E անդիմանէ F յանդիմանէր
10 EF սիոնի G սիօնի
12 H զամբարտաւանութենէն
13 G վիճակակից
15 CFHI այսորիկ ABCDEFI զնա փխ զնոսա ACDEFG անկեալ փխ արկեալ B անգեալ
16 EF զգինտսն DGIS և զմատանիսն
17 H չիք զքօղեսն h զքօղենսն և զմեհեանզսն GHS և զմեհեանզսն DI զմեհեանզս A զայլն GHIS զայլ EFI լսող
18 EF ոսկիազարդուցն EF կնդութիւն
18—19 H չիք գլխոյն... զարդուցն h գլխոյն կնտութիւն զի ի զարդուցն
19 ABCDEFHI զգլուխն
20 ABCDEFGhI և փոխանակ
21 ACDEF քրձազգեաց B քրձնազգեն GHS չիք յորժամ
23 CD վայրապար է զեւ ինձ [D եւ] I է փխ եղև BC անցեալ
24 DI չիք նոցա H յանցանք H նոցա նոյնպէս պարտ էր



էր և խրատ ընդունել մեզ, և առաւել ես: Զի թէ նոքա առանց օրինակի զայն կրեցին, մերս քանիօն առաւել պատժոց արժանի չիցեն՝ յետ զնոսա մեզ օրինակ ունելոյ, և Քրիստոսի խրատուն՝ որ աղաղակէ և ասէ. «Թէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոցն, ոչ մտանէք յարքայութիւնն երկնից»*: Եւ մեք ոչ յարդարութիւնն և եթ, այլ և ի մեղսն առաւել գտանիմք, և զո՞ր ներել թողութեան ունիցիմք:

Արդ տես զգիւրակշիռ և զդէպ հատուցմանսն: Եկին Պարսիկք ի վերայ Երուսաղէմի, եկին և ի վերայ մեր. աւերեցաւ Երուսաղէմ, աւերեցան և քաղաքք մեր: Մտին հեթանոսք ի տաճարն սուրբ, և յաւարի տարան զզարդարանս նորա, և պղծեցին զտաճարն սուրբ. մտին և յեկեղեցիս մեր, և համարձակեցան յանմատանելիսն, և պղծեցին պիղծ զարշապարօք զսրբութիւնս նորա. և կապուտ կողոպուտ արարին զզարդս նորա: Հրայրեաց եղև տաճարն սուրբ. այրեցան և ի մեզ փոխանակ միոյ տան՝ բազում եկեղեցիք. և առանց համարոյ անկան քահանայք նոցա ի սուր. և զմերոյս ո՞վ բերէ զհամար: Ժա՛մ է ինձ ի դաւթական բանսն եկանել, և նորին ձայնիւ զմերս յօրինել զողբս. «Ընդէ՞ր տէր կացեր ի հեռաստանէ, և անտես արարեր զմեզ ի նեղութեան մերում»**, յանօրինել անիրաւին ի սրբութիւնս քո, և ի պարծիլ ատելեացն դրեկ ի մէջ տօնից քոց. զի ահա մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո, և պղծեցին զտաճար սուրբ քո. այրեցին ի հուր զսրբութիւնս քո, և յերկիր խոնարհեցուցին զփառս եկեղեցւոյ քո. հեղին զարիւնս ծառայից քոց որպէս ջուր, ո՛չ որպէս յայնժամ՝ շուրջ զԵրուսաղեմաւ միայն, այլ՝ թէ ամենայն երկիրս լցաւ արեամբ սպանելոցն. իսկ զթաղելոց նոցա զհաշիւ և ի միտս անդամ ո՞ բերէր:

* Մատ. Ե. 20 ** Սաղ. (Ժ). 1

2 E պատժոյ
3 BCI օրինակ մեզ GH ետ ABCEFI ունելով GH առելով փխ ունելոյ
4—5 DI զփարիսեցւոց
5 BCDI յարքայութիւն B յարդարութիւն C արդարութիւն G արդարութիւնն
6 A այլ BDI չիք և (ի մեղսն) ABCDE թողութեան
8 B հատուցմանսն I պարսիկքն ABCH չիք և h և
9—10 GHS և աւերեցան
10 GHS չիք և H քաղաք
11 B զզարդարանսն
11—12 B չիք և (յեկեղեցիս) C եկեղեցիս
13 CI զարդս F զզարդարս
14 EF չիք և BD մերոյ փխ միոյ
15 C անհամարոյ փխ առանց համարոյ
16 B ի մերոյս փխ զմերոյս F համար բերէ
17 EFG ձայնիւն H յողբս
18—19 ABCDEFHI յանիրաւելոյ անօրինին
19 BC պղծել փխ պարծիլ D պարծել
21 FEI զսրբութիւն
22 I հօր փխ եկեղեցւոյ I քոյ A զարեանս B զարեւս
23 A այլ I չիք թէ CDF երկիր I աշխարհ փխ երկիր
24 EF լցան I թաղելոց

Բայց զքաղաքիս մերոյ զբազմադիմի և զանհնարին չարիս ընդ գրով ո՞վ կարիցէ արկանել. զի որպէս գրեալ է վասն սոդոմայեցւոցն, թէ «Արեգակն ծագեաց ի յերկիր, և տէր տեղաց ի Սոդոմ հուր և ծծումբ, և այրեաց զնոսա»*. Նոյնգունակ և աստ ի ծագել արևուն յերկիր՝ հասին ի վերայ անօրինացն ժողովք իբրև շունք քաղցեալք, և շրջապատեցին զքաղաքն. և մտին իբրև հնձողք ոճոյ ագարակի, և սուր առն ի վերայ եղեալ հնձեցին մինչև անջատեցաւ ի կենդանւոյ քաղաքս: Իսկ զփախուցեալսն ի տունս կամ յեկեղեցիս՝ հուր հարեալ այրեցին անողորմաբար, բարեգործութիւն զիրսն կարծելով, որպէս կանխաւ Փրկիչն ասէր. «Եկեսցէ ժամանակ, զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ»**. և զպատճառսն ինքն յայտ առնէ. «Եւ զայն արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ ծանեան զիս»***:

Նաև յօդոյ ձեռնտուութիւն եղև կործանական աւուրն. զի հողմ ուժգնակի շնչեցեալ՝ բորբոք աշխանէր հրատին, մինչև ծուխն ծառացեալ յերկինս համանէր. և ցնցուղք լուսոյ հրատին՝ յաղթէր ճառագայթից արեգականն: Անդանօր էր տեսանել տեսիլ ողորմագին և զարհուրական յոյժ. զի ամենայն քաղաքն լի էր զիակամբք անկելոցն, վաճառոյ փողոցք և նրբափողոցք և ընդարձակ սրահք: Իսկ զայրեցելոցն ո՞վ կարիցէ բերել զհամար. քանզի որք ի սրոյ շողալոյն փախստական եղեալ՝ ի տունս ուրեք ի թաքստի եղեն, ամենեքեան նոքա հրայրեացք եղեն: Իսկ զքահանայսն, զորս յեկեղեցիս ըմբռնեցին՝ հրով ծախեցին. և զորս արտաքոյ զմանս սպանեալ, և զմեծամեծ խաղկանն եդեալ ի գիրկսն առ ի նախա-

* Ծնն. ԺԹ. 23—24 ** Յովհ. ԺԶ. 2 *** Յովհ. ԺԵ. 21

1 G չարիսն
2 E կարէ ACEH սոդովմայեցւոցն I սոդոմացւոցն
3 I արեն փխ արեգակն EFGHIS չիք ի (յերկիր) BCD յերկրի CI տեղեաց E սոդովմ
4 EF արևոյն
5 BDI իբրև մտին
6 C զհնձողք DEFI հնձօղք BCI ագարակին E սուրն
7 H կենդանոյն BC քաղաքիս I փախուցեալսն
8 C եկեղեցիս C վառեալ փխ հարեալ
9 BC գործելով փխ կարծելով ABDI ասէ
11 GHS զպատճառն
12 B չիք ձեզ
13 S օդոյ H կործական h կործանական
14 C մինչ զի փխ մինչև I և փխ մինչև
14—15 ABCDEHI մինչև յերկինս h չիք մինչև (յերկինս)
15 H ելանէր h համանէր I ճառագայթին
15—16 I արեգական
16 DEFI անտանօր
17 EF զիակամբ GhS վաճառափողոցք
18 D ընդյարձակ B զայրեցելոց E զայրացելոցն ABCD բերիցէ փխ կարիցէ բերել
19 S շողալոյ
20 S թաքստի
20—21 BC քահանայս
21 BCFI զոր I եկեղեցիս E այրեցին փխ ծախեցին
22 B չիք և զմեծամեծ խաղկանն եդեալ E խաղկան



տինս մեզ, և յայպն կատականաց տեսողացն. իսկ զթիւ քահանայիցն, որք ի սուր և ի հուր վախճանեցան՝ զատ աւելի քան զհարիւր յիսուն, որք միճակի տեարք էին և եկեղեցւոյ. բայց զեկամտիցն, և որք յամենայն աշխարհաց անդր հանդիպեցան, զնոցա ո՞վ կարէ բերել զհամար:

Այսոքիկ են չարաչար պատմութիւնք քո, ո՛վ քաղաք երջանիկ և երանելի, յղփացեալ, ականաւոր ի մէջ աշխարհաց: Այժմ ամբարձ զաչս քո, և տե՛ս զորդիս քո վարատեալս ի գերութիւն, զտղայս քո անողորմաբար հարեալս զքարի, զերիտասարդս քո այրեցեալս ի հրոյ: Մեծահարկի և փառաւոր ծերք անկեալք ի հրապարակի. նորատի և բարեկեցիկ կոյսք և կանայք՝ անկեալք ի խայտառականս, և հետի ոտիւք վարեալք ի գերութիւն: Առ մեզ կատարեցան դաւթական ողբոցն երգք. «Մատնեաց, ասէն, ի գերութիւն զզօրութիւնս նոցա, և զգիւղս նոցա ի ձեռս թշնամեաց նոցա*» և որ ի կարգին է. բայց Քրիստոս յաւէտ զզարթնուլն, և ոչ որպէս յայնժամ:

Այլ որ վասն Արծնին տխրական պատմութիւնս աստանօր զկայ ասցէ. զի մեք զամենայն անցս չարեացն ոչ կարացաք ընդ գրով արկանել, այլ զթողեալն ի մէնջ՝ յաւերակացն ուսանի խնդրողն: Այսոքիկ երկուց էր տեղեաց՝ երկրին և քաղաքիս զողորմելի պատմութիւնս. զոր աչօք մերովք տեսաք և ընդ փորձ չարեացն անցաք, զայն միայն գրեցաք. իսկ զայլ գաւառաց և զքաղաքաց զանցս աղետից, այլ միոյ բանին: Այսոքիկ երկայն բանի պիտոյ են և ժամանակի. մեք զմերս ըստ կարի մերում համառօտեցաք:

* Սաղ. ՀԷ. 61

1 GHS այպն
2 I սուրս
3 B չիք և (եկեղեցւոյ) EF եկամտիցն
5 ABCDEFHI չիք և h և
6 BCDEFI չիք այժմ
8 H ի քարի h զքարի
9 BCI անկեալ I հրապարակս
10 BCDI անկեալ B խայտառակսն
10—11 I վարեալ
12 BCEFGI ասէ DI զզօրութիւն F զօրութիւնս ABD զգեւղս CH զգեօղս EFGS զգեղս
13—14 BCDI ի զարթնուլն
15 A այլ
16 ABCDFHI չիք զի Gh քանզի
17 A այլ F զթողեալ H չիք երկուց h երկուց I բայց փխ երկուց
18 S էր տեղեաց C տեղեացս GS քաղաքի GS ողորմելի
20 A զայլ GHS գաւառաց F քաղաքաց H ուր փխ այլ I որ
21 ABC պիտոյ F պիտոյ GhՏ² պիտոյանայ ABCEFGHS չիք են D զմեր GS զմերն
22 DI համառօտեսցուք

## ԺԳ

## ՅԱՂԱԳՍ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ ԵՂԵՒ Ի ԴԱՇՏԻՆ ԲԱՍԵՆՈՅ, ՅՈՐՈՒՄ ՊԱՐՏԵՑԱՆ ՀՌՈՄՔ

*Մարգարէն Եսայիաս՝ յորժամ զեգիպտացւոցն աւերանաց մարգարէանայր, գայսպիսի ասէր, թէ «Յիմարեսցին իշխանք Տայանու, որ էին իմաստուն խորհրդականք թագաւորին»*. որ և այս մեզ հանդիպեցաւ: Քանզի հեծելազօրքն Հոռոմոց ոչ սակաւք էին յարևելս պահապանք աշխարհին, որ մինչև ցվաթսուն հազար առն եթէ էր թիւ բանակին. որոց գլխաւորք էին Կամենաս՝ որ թարգմանի կրակ, որ ունէր զիշխանութիւն տանն Հայոց՝ և Ահարոն՝ որդի Բուլղարին, որ ունէր զկողմն Վասպուրականի, և Գրիգոր՝ Հայոց հզօր իշխանն, որ ունէր զպատիւ մագիստրոսութեան: Եւ քանզի գլուխք առն եթէ՝ բազմիշխանութիւն ամբոխեալ է և անյարմարական և մերձ ի լուծումն. որ և սոցա հանդիպեցաւ: Զոր պարտ էր միահաղոյն միաբանութեամբ զյաղթօղն ի պատերազմի պահէր Աստուած կարդալ յօգնականութիւն, որպէս օրէն էր առաջին յաղթողացն. «Քանզի ո՛չ թէ իւրով զօրութեամբ զօրանայ հզօրն, այլ տէր քաղէ զզօրութիւն հակառակամարտին»**: Իսկ նոքա ոչ այնպէս խորհեցան. այլ որ անօրինեալցն էր ի նոսա՝ անօրինէր. և կարծէին մարդկօրէն հնարագիտութեամբ զբորբոք անհագին հրատին շիջուցանել: Վասն որոյ ի ծուփս անկեալ, միոյ միոյ բանից ոչ հաւանէին. քանզի եբարձ Աստուած զիմաստութիւն ի խորհրդոց նոցա վասն չխնդրելոյ նոցա զնա: Եւ այս ի գործոցն յայտնի է, զի զԼիպարիտն հայցէին գալ ի յօգնականութիւն, զՍաւուղային ախտացեալք առ վհուկն ընթացեալք. կամ որպէս Հրեայքն, որ բարձեալ ի վերայ ուղտուցն զգանձս իւրեանց՝ տանէին առ ազգ մի, որ ոչ գոյր ի նոսա լոյս օգնականի: Եւ զայն ո՛չ ածին ի յիշատակ զԴաւթայն որ առ մանեղէն բլուրն, որ մեծաւ խրոխտանօք նախատէր զԻսրայէլ. որոյ պարսաքար մի միայն բաւական եղև առ ի զխելապատակ ուղղոյն նորա ջարդել. կամ զԵզեկիային՝ որ աղօթիւք միայն զհարիւրութսուն հազարսն յԱսորւոց ի ձեռն հրեշտակին՝ աներևոյթ արար յերկիր յուսայնեաց:*

*Արդ՝ եկն Լիպարիտն բազում աղաչանօք և գանձուց առատատուր պարգևօք, և ոչինչ վճարեցաւ այնու. քանզի և ինքեանք իսկ չէին միաբան առ միմեանս: Վասն որոյ ի խմբել պատերազմին, որդի Բուլղարին իւրայնովքն ի թիկունս դարձեալ՝ համարձակութիւն տայր թշնամեացն. որք մեծաձայն աղաղակաւ զմիմեանս յորդորէին, և ի մէջ փակեալ զԼիպարիտն իւրով քաջ արամբքն զմանս սպանանէին, և զերիվարի նորա զջիլսն հատեալ սուսերաւ՝ զինքն ձերբակալ առնէին: Զոր տեսեալ այլ զօրացն՝ ի փախուստ դառնային. որոց զհետ մտեալ թշնամեացն, անչափ կոտորածս առնէին, զմանս սրով, և զբազումս՝ վասն զի գիշերացաւ ժամն, ի գահից և ի քարանձաւաց գահավէժ առնէին. և մնացեալքն մերկ կողոպուտ հետիոտիւք ուր կարէին՝ ապրեցան: Իսկ թշնամիքն լցեալ աւարաւ առաւել քան զառաւել, ուրախ լինէին. իսկ մերքս վայիւք և ողբովք լի: Եւ յայնմ օրէ և այսր՝ իբրև շունք գիշախանձք, կամ իբրև գայլք արտաքսեցիք՝ ոչ յագեցան երբէք արեամբ քրիստոնէից, մինչև սպառեցին և բարձին ի միջոյ: Եւ եղև երկիրս ամենայն իբրև անդաստան հասեալ ի հունձս, զորոյ զհետ հնձողացն ընթանան որ զորայն քաղեն,*

* Եսայ. ԺԹ. 11 ** Ա. Թագ. Բ. 9—10

2 S մեծի պատերազմին GHS ի մեծ [h չիք մեծ] C բասենոյ
3 BC հոռմք
4 BCDI եսայի H յորում ժամանակի փխ յորժամ h յորժամ BC զեգիպտացւոցն GՄ[1] զեգիպտական ABCFHI աւերանացն GhՄ[1] աւերացն
5 BCDI տայանոյ
6 C իմաստունք
7 ABGHS հեծելազօրք ABDEFH հոռոմ C հոռմ A յարենեալս
9 S գլխաւորքն D թարգմանի
10 H որդին A բուլխարին BCDEFHI բուխարին ABDEF զկողմ
11 HS չիք հզօր G իշխան հզօր
11—12 ABCDEFH մաժիստրոսութեան I մաժիստրոսութեան
12 AF բազում իշխանութիւնն B բազում իշխանութեան C բազմիշխանութեան DEI բազում իշխանութիւն H բազում իշխանութեամբ h բազմիշխանութիւն
13 H հանդիպեցաւ սոցա
14 BCDI միահաղուն B և զյաղթօղն F զյաղթօղ H զյաղթողն
16 BGS եթէ A այլ
17 GHS այնպէս A այլ
18 S անօրինեալցն
22 DI գործոց ABCDEFGI զԼիպարիտ H չիք գալ h գալ DGHS չիք ի D յօգնութիւն
23 BC սաւուղայն GS ախտացեալ



1 ABCEFGHS չիք ի վերայ ABCDEHIS ուղտուց
2 BCI նոցա փխ ի նոսա D չիք ի նոսա DEI ածէին HՄ[2] զիւէին փխ ածէին h ածին ABDFIՄ[2] չիք ի
4 A զիսրայէղ B պարսաքարի
4—5 F խելապատակ
5 BCDEFGHS ուղղոյ ABCEFI ջարդեալ A զեզեկիային
6 FH յասորոց
7 B երկիր I յուսա այնեաց
8 B աղաչօք
9 G պարգևօքն
9—10 GS միաբանք
11 ABCEFH իւրայովքն
12 e առեալ փխ փակեալ
12—13 ABCDEFHI զլիպարէն h զլիպարիտն
13 S իւրով GIS արամբք
14 B ձերբակալեալ
14—16 I չիք զոր . . . առնէին
15—16 H այնչափ
16 ABCDH կոտորուածս
17 DI գահոյից S քարանցաւաց Fh քարավէժ
18 C լցեալք
20 F այնմ C գիշերախանձք H չիք կամ
21 I գայլ
22 B անդաստան
23 G հունձ B զոր H չիք որ զորայն քաղեն h որ զորայն քաղեն

և այպէս զհասկաքաղն և զխաղողն միայն թողուցուն յարօտ երէկոյ: Արդ յետ պատերազմին յաղթութեան, առեալ զաւառ և զգերի՝ դարձին յաշխարհն իւրեանց, և անչափ ուրախութեամբ լցին զերկիրն ամենայն. իսկ զիշխանն Վրաց տարեալ եդուն ցխալիփայն իբրև զմեծ ինչ և քան զամենայն զե-րին հաճելի նմա. զոր առեալ և ընկալեալ ի շնորհակալիս, և մեծաւ պարգևօք արձակեաց խաղաղութեամբ յաշխարհն իւր: Այս աստ մինչև ցայս վայր:

## ԺԴ

## ԹԷ ՈՐՉԱՓ ԵՂԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՊԵՏՐՈՍԻ ՄՆԱԼ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ, ԿԱՄ ՈՐՊԷՍ ԴԱՐՁՆ

Թագաւորին տեսեալ զնա՝ բազում պատուով և մեծարանօք ընկալաւ, և տաստ ռոճկօք հրամայեաց պաշտել զնա. բայց առ իւր պահեաց զնա ամս երիս, քանզի կասկածէր թողուլ ի Հայս՝ թէ երթեալ ապստամբեցուցանէ զԱնի: Իսկ Աշոտ որդին Սենեքերիմայ առեալ զնա յերաշխիսաւ ի քաղաքն իւր ի Սեբաստիապօլիս. և տուեալ նմա տեղի բնակութեան զհանգիստ սրբոյ Նշանին, զոր իւր շինեալ էր բազմայարդար զարդարանօքն և մեծապայծառ վայելչութեամբ, յորում տեղւոջ կեցեալ ամս երկուս, փոխեցաւ ի Քրիստոս: Եւ կացուցանէն ի տեղի նորա զԽաչիկ զնորին քեռորդի, որ զձեռնադրութիւն հայրապետութեանն վաղնջուց ընկալեալ էր: Զոր իբրև լուաւ թագաւորն՝ առաքեաց խնդրակս, և տարաւ զնա առ իւր և զգանձս՝ զոր և գտին թէ անդ և թէ ի Հայս. քանզի յոյժ գանձուց սիրող էր Պետրոս, որ և բազումք վասն այնր եպերէին զնա: Իսկ յետ երից ամաց արձակեցաւ տէր Խաչիկ ի թագաւորանիստ քաղաքէն, և եկեալ ի սահմանս Երկրորդ Հայոց՝ ի գաւառն որ կոչի Տարօնայ, անդ դադարեաց. քանզի անդ հրամայեցին նմա տեղի բնակութեան:

1 AC հասկաքաղն EF հասկաքաղ G հասկաղն I հասաաքաղն D էրէկոյ I էրէկոյն
2 C յաղթութեանն
3 H այնչափ BCDGI իշխանն
4 C ցխալիֆայն
5 h հաճեալ ի նա C չիք ի
6 A յաշխարհ I յաշխարհէն
10 AD կոստանդնուպաւլիս E որպիսի B դարձան C դարձաւ
11 G թագաւորն G պատուօք
11—12 B ընկաւ փխ ընկալաւ
12 F ռոճկօք
13—14 A ապստամբեցուցանէ
14 ABDEG որդի I որդ D սենեքերիմա CF երաշխիս G յերաշխի
16—17 C զարդարանօք
19 BCDI հայրապետութեան ABDEF վաղընջուց C ի վաղընջուց
21 E չիք զնա B իւր գանձս G զգանձսն I եթէ փխ և թէ B հայքս փխ հայս
22 GHS գանձուց սիրող էր DEFI սիրող G չիք և H այն h այնր
25 AEFHS տարօնայ BCDI տարօնոյ
25—26 B բնակութեանն



Իսկ ժամանակ կալելոյ նորա ի Կոստանդնուպօլիս՝ այս է պատճառն, ընդ հարկիւ կամէին արկանել զնա. իսկ նա ոչ առնու յանձն, թէ զոր մինչև ցիմ ժամանակս չէ լեալ՝ և ոչ ես հաւանիմ: Եւ այսպէս ի հարց և ի փորձ արկեալ, և տեսանելիս եւ յաւելուին եթէ ոչ ելանիցես աստի, եթէ ոչ զհրամայեալսն ի մէնջ յանձն առնուցուս. իսկ երանելին անձն այն և մեծի Լուսաւորչին մերոյ փոխանորդն՝ ոչ ինչ զանգիտեալ ի նոցա բանիցն, այլ ի նոյն և ի նմին եկաց հաստատուն: Յետ այսորիկ արք երկու, մինն իշխան և միւսն վանական ի Հռոմայ, յառաջ կացեալ, եթէ վասն նախանձ արկանելոյ նմա եթէ ճշմարտիւ, ոչ գիտեմ, խնդրեցին զվերակացութիւն եկեղեցւոյ և հատուցանել զհարկն. որ և երկոքեանն չարամահ սատակեցան: Ապա ի վերջ եկեալ արձակեաց զնա առանց հարկի, տուեալ նմա գրով և ոսկի մատանեաւ զոր ի Հայս իւրեանց տեղիք էին, և երկու վանս ի Տարօնայ:

## ԺԵ

## ԹԷ ՈՐՊԷՍ ԱՆՀՆԱՐԻՆ ՀԱՐԱՒ ՔԱՂԱՔՆ ՅՂՓԱՑԵԱԼ, ՈՐ ԿՈՉԻ ԿԱՐՍ

Քաղաքս այս ի բազում ժամանակաց հետէ չէր զփորձ չարեաց առեալ. վասն որոյ յանհոգս և յանկասկածի կէին, հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ: Արդ ի գալ մեծի յայտնութեան տեառն մերոյ, ի գիշերին՝ յորում ուրախական ձայնիւ դասք քահանայից հանդերձ բազմամբոխ ժողովրդովքն զպաշտօն աւուրն կատարէին, յանկարծակի ի վերայ հասին զօրք անօրինացն: Եւ քանզի առանց գիշերապահաց էր քաղաքն, մտեալ ի ներքս, սուր ի վերայ ան եղեալ, անողորմ կոտորեցին զամենեսին, որ յոյժ ողորմ արժանի է պատմութիւնս: Քանզի օրէն է քաղաքաց ի տէրունական տօնսն բազում զարդարանօք վայելչանալ արանց և կանանց, ծերոց և տղայոց ըստ ումեմ և

1 A կոստանդնուպաւլիս D կոստանդնուպօլիս
2 B հարկիւ D վասն զի ընդ հարկիւ C անդն
3 ABCEH չիք մինչև h մինչև CG իմ
4 S թէ
5 ABDFHIS զհրամայեալ E զհամայեալս
6 C չիք այն
7 A այդ
8 CF Բ մարդ փխ արք երկու S մին C հռոմոյ
11 D չիք զնա
13 BCDI տարօնոյ EFGH տարընոյ
15 B անհնարինք
16 BCDI կարս
20 G գիշերի I ամենայն փխ յորում
21 DI ժողովրդօքն
22 BC չիք հասին DI զօրքն [D լուսանցքում նաև ազգին] h չիք առանց
22—23 EFh քանզի առանց գիշերապահաց ոչ կայր ի քաղաքն [E գիշերապահաց]
23 DI ներս ABCDEFI սուր ած ի վերայ եղեալ [I սուր]
24 AG զամենեսեան
26 AF կանայ

ըստ կարողութեան, ըստ նմանութեան դարձանաբեր ծաղկանոցաց: Որ և զսոսա այսպէս գտեալ, յանկարծակի վայիւք և ողբովք լի եղև քաղաքն: Զքահանայսն ի պաշտամանցն լռեցուցին, և զսաղմոսասացսն ի սաղմոսական երգոցն. հատաւ երգ օրհնութեան ի բերանոյ դպրաց և տղայոց: Անդանօր էր տեսանել տեսութիւն ողորմագին որ զքարինս և զանշունչ արարածս անգամ շարժէր յողբս հառաչանաց, թո՛ղ թէ զզգայունս և բղկենդանիս: Մեծահարկի և պատուական վաճառականք չարաչար մահուամբ սպանեալք. երիտասարդք և ըմբշամարտք ի փողոցսն սրակոտորք. պատուական ալիք ծերոցն արիւնաշաղախ առ նոքօք անկեալք. և այսպիսօրէն գործովք սպառեցաւ քաղաքն յարանց. և թէ ոք ժամանեաց յամուրն ելանել որ ի վերայ քաղաքին կայ, նա միայն ապրեցաւ: Եւ մնացեալ զօրն ողջոյն ի տեղւոջն խիլ արկեալ բրեցին զտունսն, և ապա հուր հարեալ այրեցին զքաղաքն, և ինքեանք առեալ զգերի և զկապուտ քաղաքին գնացին յաշխարհն իւրեանց:

## ԺԶ

## ՎԱՍՆ ԳԱԼՈՅՆ ՍՈՒԼՏԱՆԱՅ

Զկնի այսր պատմութեանս, ի գալ տարւոյն էր թուականիս մերոյ ամք հնգհարիւր երեք: Ի նոյն ամսեան և ի նոյն քանիս ամսոյն, որ զառաջին աշխարհս գերի տարան, զԱրծն այրեցին, և զայլ քաղաքս և գաւառս, խաղաց գազանն մահաշունչ արիւնարբու և մարդախոշոշն Սուլտան անհամար զօրօք, փղօք, և կառօք և երիվարօք, կանամբք և որդւովք, և բազում պատրաստութեամբ: Զանց արարեալ զԱրճիշաւ և զԲերկրաւ՝ եկեալ բանակեցաւ շուրջ զքաղաքաւն, որ կոչի Մանազկերտ, ի գաւառն Ապահունեաց, և կալաւ բովանդակ զընդարձակ վայրս դաշտացն: Եւ արձակեաց ասպատակս յերեսին կողմանս աշխարհիս, ի հիւսիս՝ մինչև

1 B զառնանարբեր B ծաղկանոց
3 BCEG պաշտամանց BC DI զսաղմոսասացն
4 BCDI երգոց H հատան CG երգք BC անութեան փխ օրհնութեան
5 DEFG անտանօր DI ողորմելի փխ ողորմագին B զքար
6 BCDFGHI զգայունս
7 GHS բանդի մեծահարկի H վաճառանք
8 CD սպանանեալք BD ըմբշամարտիք I ըմբշամարտեկք
9 B արիւնաշախախ C արիւնաշաղախք
9—10 ABCD այսպէսօրէն
10 ABCDEFI գործով h յարեանց ABCDEH եթէ փխ և թէ h և թէ
11 H չիք վերայ h վերա
12 E ողջոյն
12–13 BC վառեալ փխ հարեալ
17 C թվին D թվականիս G թուիս
18 DGIS ամիս
19 I աշխարհ ABCDEFGHI և զածն ABCDF քաղաք
20 BC արիւնարբոյ B մարդայխոշոշն ABCEFGh սուլտանն H չիք սուլտան
21 HS և կառօք
22 ABCDEFH պատրաստութեամք ABCDHI զԲերկրով
23 G բնակեցաւ
24 I ապահունեաց AB բովընդակ C վայրս
25 B յերեսս CI յերես GS աշխարհին ABF հիւսոյ CEGH հիւսիսի D հիւսիսէ I հիւսիսոյ



յամուրն Ափխազաց և մինչև ի լեառն որ կոչի Պարխար և մինչև ցստորոտն Կովկասու. և յարևմուտս՝ մինչև յանտառն Ճանեթոյ, իսկ ի հարաւ մինչև ցՍիմն կոչեցեալ լեառն. և բովանդակ կալեալ զաշխարհս իբրև հնձօղք ոճոյ ագարակի:

Արդ զայնմ ժամու զչարիսն՝ զոր նոքա աշխարհիս հասուցին, ո՞վ կարէ ընդ] գրով արկանել, կամ ո՞յր միտք բաւեն ի համար ածել. զի ամենայն աշխարհս լի էր զինակամբք, շէնք և անշէնք, ճանապարհք և անապատ տեղիք, քարանձաւք և տապարք, անտառախիտ մայրիք, և ափափայ վայրք՝ և յամենայն շինանիստ տեղիս հուր հարեալ ապականեցին զտունս և զեկեղեցիս, որոյ բոց հրատին առաւել բարձրանայր քան զհնոցին Բաբելոնի. և այսպիսի ձեռնարկութեամբ ապականեցին զաշխարհս ամենայն, ո՛չ միանգամ, այլ երիցս անգամ մի ի միոյ վերայ դարձ արարեալ՝ մինչև առհասարակ հատաւ երկիրս ի բնակչաց, և բարձաւ կառաչ անասնոց:

Զայս արարած տեսեալ՝ սուգ առ և կործանեցաւ երկիր, վասն զի կործանեցան բնակիչք նորա. բարձաւ ուրախութիւն յերեսաց ամենայն երկրի. յամենայն տեղիս ողբք և հառաչանք. ամենայն ուրեք կոծ և լալականաց հանդէսք. ոչ ուրեք քահանայից երգք. ոչ ուրեք լսի փառաբանութիւն Աստուծոյ: Ոչ ուրեք բանին գիրք առ ի խրատ և ի մխիթարութիւն լսողաց. վասն զի ընթերցօղքն սրամահք ի հրապարակս, և ինքեանք այրեցեալք և աճիւնացեալք: Ոչ ուրեք լսի ձայն հարսանեաց, և ոչ աւետիք նորածին մանկանց. ոչ նստին ծերք աթոռով ի հրապարակի, և ո՛չ խաղան մանկունք առաջի նոցա. ոչ երամանան անդեալք ի յարօտս, և ոչ խայտան գառինք ի մարգս: Ո՛չ լնու հնձող որայիւ զգիրկս, և ոչ լսէ բարեբանութիւն յանցաւորաց. ոչ լնուն կալք ցորենով. և ոչ գե-

1 ABCDEFHI յամուրս AE ափխզաց AF լեառնն DԾ[1] զուռն փխ լեառն
2 H կովկասոյ ABCDEF յանդառն GHS յանտառն
3 G ցսիմ I զաշխարհ
4 A հնձաւղք EF ոճոյս
5 I զայն
6 BDI որ փխ ոյր
7 I աշխարհ E է
8 H տեղիս ABCD անդատախիտ
9 ABCDEFI ամփամփայ GH ամփոփայ G վարք C ամենայն Ծ[1] արկեալ փխ հարեալ
10 B չիք և
10—11 G չիք զտունս . . . ապականեցին
11 GS զհնոցն A բաբիզովնի B բաբիլովն CDF բաբիլովնի
12 FGS մեր փխ ամենայն A այգ H չիք այլ h այլ
13 H բնակչացն
14 H անասնոցն
15 C սուգ առեալ երկիր կործանեցաւ
16 G երկրի փխ նորա BC երեսաց F չիք ամենայն
19 H չիք և
20 D լսողացն B չիք զի EF ընթերցօղք
21 H հարսանեացն
24 C չիք ոչ Fh լնուն I չլնու փխ ոչ լնու CFGh հնձօղք DE հընձօղ HI հնձօղ C որայիւն
25 DI լսի BC զբարեբանութիւն BCI անցաւորաց EF ի յանցաւորաց

դան զուրք գինւով. ոչ լսին ձայնք ուրախութեան ի կուսն այգեաց և ո՛չ ծանրաման պահառք ի սառմանեաց: Բարձաւ այս ամենայն, կործեալ և ո՛չ երևի: Ո՞ր Երեմիա ողբասցէ զմեր կործանումնս, ի ճանապարհաց և ի լերանց յերկարելով զողբսն. ո՞ր Եսայիաս անհնարանչի մխիթարչացն զի յագեսցի ողբովք: Վա՜յ ինձ որ վիպասանեմ զայսոսիկ, հիմնացի երիտասարդին նման զոլով իմ՝ զուժարկու եղէ, ո՛չ միում գիւղի կամ միում քաղաքի, այլ ամենայն աշխարհաց, ազգաց լեզուս մինչև ի կատարած ժամանակաց. քանզի չիք ինչ ժամանակ կամ զործ որ զմերն հնացուցանել կարէ, բայց թէ որ զպղծոյն անապատի զդուշացուցանեն գիրք: Արդ զի՞նչ արարից. թողի՞ց ի պատմելոյ զանհնարին չարիսն որ եհաս ի վերայ քրիստոնէից՝ խնայելով ի ձեզ, եթե չարժեցից ողբս և հառաչանս ամենեցուն որք հանդիպակից էք այսմ դժոխալուր պատմութեանս. բայց գիտեմ որ կամիք լսել. վասն որոյ և ես ի բաց եդեալ զանձին զանդադանս, գրեցից զգլխաւոր անդեաց մի ըստ միոջէ զանհնարին չարիսն:

Զմորձեան և զհանձէթ յորժամ լիշեմ և որ ինչ ի նոսա գործեցաւ հասկլիմ արտասուօք, փղձկի սիրտ իմ, և լիմարին միտք և զդողի հարկանի ձեռքս և ոչ կարեմ զոձ ասելս յառաջ խաղացուցանել: Բազում և անհամար հոգիք ի վերազոյն գաւառացն, վասն ահեղացն ամրութեան՝ անդր ժողովեալ էին: Յորոց վերայ հասեալ անօրինացն արագապէս որպէս թռչունք, անողորմաբար որպէս գազանք, սրամտութեամբ եռացեալք որպէս վրէժխնդիրք, և խիլ արկեալ ի քարանձաւս և յանտառախիտ մայրիս՝ անյագաբար կոտորեցին զորս և գտին: Մինչ զի արիւնն զօրէն զարնանաբեր ժամանակին, յորժամ ի ջերմութենէ օդոյն ջուրն ծորեալ նլանէ ի ձեանն սառս սառս վիժելով, զհող երկրին զինի իւր հեղեղատելով, այսպէս և յայնժամ լինէր. արեան սառք ի դիականցն անկելոց

1 I չիք զուրք ABCD գինով I գինեաւ BCI լսի ABCDEFI ձայն B ուրախութեամբ
2 ABCHԾ պակառք h պահառք GHS սառմանեաց I սոմանեաց
3 Ծ[1] ոչ երևի նոր եսայիաս B երեմայ EFG երեմիայ AEF կործումնս C կործանումս G կործանումն I կործանմունս
4 Gh անհնադանդ
5 GHIS վիպասնեմ ABCDEI հիմնեացի
6 G կամ փխ իմ ABCDEFH հիւղէ փխ գիւղի h գիւղի I հիւղէ
7 B չիք ի
9 B պոյն փխ պղծոյն
10 H զանհնարին ինչ [h չիք ինչ]
11 I չիք վերայ AG քրիստոնէիցն H յողբս
12 BCDHI որ ABCDHԾ[2] յանդիպասէր h հանդիպակից
14 E գրեցի DI և զգլխաւոր
16 C հանձէթ HS զհանձէթն h զհանձէթ EFG չիք և (որ)
17 AD փղծկի BCEFI փղցկի BCG լիմարի S միտք իմ G դողանի
18 G չիք և (ոչ) GhԾ[2] քանզի բազում
19 ABCDEFI գաւառաց GhԾ[2] լիշեալ գաւառացն
22 ABCDH յանդատախիտ
23 dH յանյագաբար A արիւնն BH արեն CDI արիւն EF արենն h արիւնն
24 AB զառնանաբեր
25 H ձայնն h ձեանն B վրիժելով
26 BCDI դիականց DGHS անկելոցն



նլեալ, ի զառ ի կող տեղին ի լորդութենէ զնացեալ զհող երկրին հեղեղատէին:

Այլ զու յայնժամ եղեալն ա՛ծ զմտաւ, զկրօնաւորացն դաս և զքահանայից՝ որ անդ հանդիպեցան, կամ զկրամս ծերոցն, կամ զերիտասարդացն զրազմութիւնս, որոց զեռաբոյս մօրուացն՝ իբրև զնկար զեղեցկայարմար զայտոն զարդարէին, և խոպոպք վարսիցն փաղփեալք ի վերայ ճակատուն զօրէն վարդի վառ ի վառ զունով զգլխս երեսացն պայծառացուցանէին՝ թէ ո՛րպէս յանկարծակի ի սրոյ թշնամեացն իբրև ի կարկտոյ հարեալք՝ լերկիր թաւալ անկեալ գլոր խաղային: Ե՛ւր ի մէջ և զաղայոցն համար, զորս առեալ ի գրկաց մարցն լերկիր ընկենուին, որ մեծակական հառաչմամբ զմարսն խնդրէին. իսկ զծնօղսն զանալից հարուածովք՝ առ շառայ ի նոցանէ բաժանէին: Ո՛ր սիրտ քարեղէն, որ զայս լսելով ոչ հեղձնու արտասուօք ընդ բազմադիմի չարեացն յաճախութեամբ: Կայսք ի խայտառականս անկեալք, նորահարսունք յարանց բաժանեալք և ի գերութիւն մատնեալք. ի միում վայրկենի երկիրն՝ որ իբրև զքաղաք մարդախիտ առատութեամբ խճողեալ էր, եղև անմարդ ամայի, լերկուս բաժանեալ կամ սրակոտոր կամ գերի: Ո՜վ Քրիստոս քո յայնժամ ներողութեանդ, ո՜վ մերում չարեաց, ո՛րքան զառն մահու մատնեալ եղաք:

Իսկ զոր ի Դերջան և լԵկեղեաց և ի միջասահմանս նոցա եղև կատարումն, զայն և ընդ գրով արկանել չէ քո բաւական. բայց դու սասցելովքս կշռեա՛ զայն: Իսկ որ ի Տայոն մտին, առեալ զերկիրն և հասեալք մինչև ի գետն մեծ՝ որ կոչի Ճորոխ, և զինի գետոյն դարձեալ իջին յաշխարհն Խաղտեաց. և առեալ զառ և զգերի գաւառին՝ դարձան, և եկեալ մինչև ի բերդաքաղաքն որ կոչի Բաբերդ, հանդիպի անդ զունդ մի ի

1 GHS տեղիս GS յորդութեան
1–2 ABDI հեղատէին
3 C զեղեալսն
3–4 S զքահանայիցն
4 BCDEFGhI ծերոց
4–5 C երիտասարդացն
5 ABCDI զրազմութիւնսն EFGh զրազմութիւնն BC մօրուացն H մօրուացն
5–6 I զեղեցկահար
6 H հոպոպ EFG վարսից
7 BC չիք ի վառ I երեզացն
8 BDI չիք ի կարկտոյ
9 H մէնջ D չիք և
10 BCEFGH զաղայոց D տղայոց I և զաղայոց C համարս G զմայրսն H զմայրս
13 ABCDEFGI չարեաց ABCDI յաճախութեան EF յաճախութեանն Gh յաճախութեամբն H չիք յաճախութեամբ
14 BC չիք ի
15 BCD չիք և
16–17 C երկուս
17 EF բաժանեալք
18 ABI ներողութիւնդ EF ներողութիւն
19 ACD չիք և (ի միջասահմանս)
20 ABCEFGI կատարած ABCDEF և զայն H չիք զայն h զայն
21 B չիք իսկ որ... առեալ ACDEFGI առյս C հասեալ
22 G ծորախ փխ ծորոխ
22–23 C ի յաշխարհն
24 ABCD բայբերդ I բազբերդ HS և անդ

զօրացն Հոռոմոց որ կոչին Վառանգք, որք յանդէտս մինեանց ի դիմի հարեալք ճակատեցան. և յօգնութենէն Աստուծոյ զօրացան զունդն Հոռոմոց, և յաղթեալ Թշնամեացն, զգլուխ զօրուն սպանին և զբազումս ընդ նմա, և զայլսն ի փախուստ դարձուցեալ, զառ և զգերի զամենայն թափեցին, բայց փախստէիցն զհետ ոչ իշխեցին լերկարել, քանզի երկեան թէ գուցէ ծանր զօրու հանդիպեսցին: Իսկ գերիքն որ ազատեցան, գոհացեալք զԱստուծոյ, չոգան ի տունս իւրեանց: Իսկ որ ի վերայ Հայոց գնացին, զոր և զուին՝ ի սուր և ի գերութիւն ծախեցին, և լցեալ աւարաւ՝ դարձան անդրէն: Եւ եկեալ ի սահմանս Վանանդայ, որոց ի դիմի հարեալ քաջազուն իշխանքն Դաւթայ որդւոյ Աբասայ, և բազում նախճիրս ի սուսերն գործեալ: Որոց ի վերայ հասեալ զօրք անօրինացն ի մէջ փակեցին. և քանզի լերկարել պատերազմին և յաճախել կոտորածէն ի զօրութենէ պակասեալք էին ինքեանք և երիվարք իւրեանց, վասն որոյ ոչ կարացեալ զպատնէշ թշնամեացն պատառել և ելանել, յորոց սուր ի վերայ եդեալ կոտորեցին յազատացն այս երեսուն:

Իսկ զմի ումն յազատացն կալեալ, որում անուն էր Թաթուլ որ էր այր հզօր և պատերազմասէր, զոր առեալ տարան առ Սուլտանն: Եւ քանզի կարեվէր խոցեալ էր զորդի Արսուրանայ Պարսից ամիրային, զոր իբրև ետես Սուլտանն՝ ասէ. Եթէ դա ապրի, զքեզ ազատեմ. ապա թէ մեռանի, զքեզ զմա մատաղ հրամայեմ առնել: Որ յետ սակաւ աւուրց մեռաւ: Իսկ նորա պատասխանեալ. Թէ իմ է զարկածն, չէ կենաց. ապա թէ այլում է, զայն ոչ գիտեմ: Սուլտանն իբրև լուաւ թէ մեռաւ, հրամայեաց սպանանել զնա, և զաջ բազուկ նորա հատեալ, ետ տանել Արսուրանայ ի մխիթարութիւն, թէ ի վատ բազկէ չէ մեռեալ քո որդին:

1 C հոռմոց BCDEFI ֆառնգք G ֆառնկք HS փառնկք [վառանգ—հուն. βάραγγος. տես՝ Կ. Յուզբաշյան. Արիստակես Լաստիվերտցու Պատմության մեկ տարընթերցվածքի մասին՝ վռանգք և ոչ փռանկք. «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 77—79] EFG որ
2 B յօգորմութենէ H զօրացաւ
3 GH զօրացն
4 EF զայլն E և զառ
5 I փախանըստէիցն փխ փախստէիցն
6—7 G գոհացան
7 H չոգան
8 d չիք զոր և զուին C լցան
9 C սահմանսն G վանանդոյ DI չիք ի
10 C քաջազօրուն A որդոյ B աբասա F ամենայն փխ բազում
11 DI գործեցաւ DI չիք ի (վերայ) H զօրքն GS անօրինաց
12 ABGI յերկարեալ F աճագին EF կոտորածէն G կոտորածուէն
13 G պակասեալ
14 DI կարացին BI պատառել G որոց
15 BD այրս
16 F ազատացն D անունն G չիք էր (Թաթուլ)
18 B արսուրանա CDEFGHIS արսուրանայ
19 C թէ փխ եթէ
21 EF ոչ է փխ չէ GS չիք ապա
22 A այզում B այլում
22–23 I հրամայեց
23 BC աջ B հատ I հատել
23–24 ABCEFGHIS արսուրանայ (հմմ. 18) D արսուրանա
24 C չիք ի (վատ) G բազկաց



Արդ զի՞նչ է ինձ մի ըստ միոջէ զանկանգնելի կործանումն քրիստոնէից ընդ գրով սահմանել. որ իբրև ծով ի սաստիկ հողմոց յուզեալ՝ ահագին ծփանօք, և փրփրադէզ կուտակօքն յամենայն կողմանց գայ ի ծփանս, այսպէս և մեզ հանդիպեցաւ. աշխարհս ամենայն յանկարծակի լի եղև խռովութեամբ, և ոչ ուրեք գտանիւր տեղի ապաւինի. զի վասն անհնարին չարեացն՝ բարձաւ յոյս կենաց յամենայն մարդկանէ: Զայս և Փրկիչն յառաջագոյն գուշակեաց, իբրև ծովու խռովութեանց նմանեցուցանելով զեղեռնաւոր չարիսն, յորս բազումք ի մարդկանէ թալկացեալք՝ ո՛չ կարէին պահել զոգիսն առ ինքեանս, յերկիւղէ և ի կարծեաց եկելոցն:

Բայց դու թողեալ զայս, եկ զարմացի՛ր ընդ Սուլտանայ անմտութիւնն և ընդ Աստուծոյ բազմապատիկ իմաստութիւնն. ընդ նորա անմտութիւնն, զի ամենակալ համարեէր զինքն և Աստուծոյ աթոռակից. և ընդ Աստուծոյ իմաստութիւնն, զի միով սամր խաղաց ընդ նմա, և լի անարգանօք դարձոյց յաշխարհն իւր: Եւ արդ դու միտ դիր ասացելոցս. ի կարգի յառաջին անգամուն յորժամ եկեալ անհամար զօրօքն շրջապատեաց զքաղաքն՝ և նոքա յանպատրաստի էին ի մարդոյ և յանասնոյ, և յայնժամ թէ տասն օր ի վերայ էր կացեալ, առեալ էր զքաղաքն: Բայց Աստուած որ ոչ ի սպառ բարկանայ և ոչ յաւիտեան պահէ ոխս, և ոչ ըստ մեղաց մերոց առնէ, այլովքն հանդերձ, արկանէր ի միտս նորա խորհուրդ նանրութեան: Յետ երից աւուրց շարժեալ ամենայն բանակաւն, խաղայ իջանէ ի Տասրածոյ Տափ. և անտի իջանէ ընդարձակ դաշտն Բասենոյ առ անուն ամրոցաւն որ կոչի Աւնիկ, յորում ետես աշխարհաժողով մարդոյ և անասնոյ, և ոչ ինչ փոյթ արար. քանզի ի հայելոյն միայն ծանեաւ թէ անառ է. և անցեալ առ նովաւ գայ ի գլուխն Բասենոյ, մերձ ի գիւղըն՝ որ կոչի Դու: Եւ եկեալ անտի սակաւ արամբք յանդէտս ի վերայ

1 A միառ միոջէ
2 H յողմոցն DHI յուզեալք C յահագին
3 E կուտականօքն F կոտակօքն C գայ յամենայն կողմանց.
4 I աշխարհս
5 B աւինի փխ ապաւինի DI վասն զի
7 G և խռովութեանց
8 HS չարիս
9 C զոգիս G յինքեանս
10 BDI անմտութիւն C անմտութեանն
11 C իմաստութեանն DHI իմաստութիւն BCI անմտութիւն
12 C քանզի փխ զի
13 BDI իմաստութիւն
14 C զաշխարհն
15 EFh անգամուն
16 C անպատրաստի E անպատրաստ CF անասնոյ
17 I ի վերայ էր կացեալ S կացեալ էր
19 A այլովքն C արկանէ
20 E բանակօքն
21 ABCDG անդի H անդ
22 FGh ամրոցն
23 D չիք ի d հայելոյն
23—24 H ծանօթեայն անէ h ծանեաւ թէ
24 ABDEFI գլուխն
24—25 ABDEF գեւղն CGHS գեօղն
25 ABCD անդի F չիք անտի

գաճին որ հայի ի Կարին, եւ ես զքաղաքն վառեալ ամենայն պատրաստութեամբ. և նայեցեալ յերկար ժամս՝ դարձաւ անդրէն: Իսկ արքն Մանազկերտոյ անկասկած ի դուրս ելեալ ի քաղաքէն՝ պատրաստեցին առատապէս դարմանս մարդոյ և անասնոյ. քանզի ժամանակն հնձոց իսկ էր: Եւ մինչ Սուլտանն զայսու զայնու եղեալ դարձաւ անդրէն, նոքա յանհոգս եղեալ էին. և ապա եկեալ նորա վառեալ սրտմտութեամբ, գնէ մարտ պատերազմի ընդ քաղաքին: Իսկ իշխանն որ ունէր զհոգ վերակացութեան քաղաքին, քանզի այր բարեպաշտ էր, զամենակալն Աստուած կարդայր յօգնականութիւն՝ պահօք և աղօթիւք հրահանգելով զինքն. և այնու սպառազինեալ՝ քաջապէս հաւատովք արիանայր: Եւ առ Աստուած աղաղակելով ասէր. «Ո՛չ երկեայց ի չարէ զի դու ընդ իս ես»*. և զմիւսն, թէ «Ո՛չ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց նոցա, որ շուրջ են զինեւ»** և որ ի կարգին է: Եւ առ արս քաղաքին և առ զօրս խրախոյս տուեալ ասէ. «Քաջալերեցարուք ընկերք և եղբարք իմ, քաջալերեցարուք և մի՛ երկնչիք. գործ մի զիւրին է Աստուծոյ այս. նոքա զան ի վերայ մեր կառօք և երիվարօք, մեք զանուն տեառն մերոյ կարդասցուք, և Աստուծով պարծեսցուք յաւիտեան, և անուան նորա խոստովան եղիցուք, զի նա տացէ զօրութիւն և հաստատութիւն ժողովրդեան իւրոյ, որ է օրհնեալ յաւիտեան: Զքահանայս յորդորէր յաղօթս և յերգս սաղմոսաց, որք անհատական աղաղակաւ առ Աստուած կարդային ի տուէ և ի գիշերի, որք խաչիւ և ժամահարաւ բարձրաձայնութեամբ ի վերայ պարսպացն զԱստուած աղաչէին գալ յօգնականութիւն վտանգելոցն: Յորմէ ձանձրացեալ լսելիք բռնաւորին, հարցանէր թէ զի՞նչ է այն անհասն աղաղակն, և ուսանէր ի գիտնոցն՝ թէ առ Աստուած աղաղակեն:

Արդ ամսականօք աւուրբք կացեալ ի վերայ քաղաքին, առ մի մի օր երկիցս անգամ գնէր մարտ պատերազմի ընդ քաղաքին, մի ի լուսա-

* Սաղ. ԻԲ. 4 ** Սաղ. Գ. 7

1 BC չիք որ հայի DI չիք որ հայի ի
1–2 I պարարտութեամբ
2 C նայեցաւ
4 E հընձոց
5 E սուլտան E այսու I անհոգս
6–7 D պատերազմել I պատերազմիլ
7 C ի փխ ընդ G քաղաքն G չիք վերակացութեան
7–8 I չիք իսկ... քաղաքն
8 ABCDEFI կարդայ H կարդաց
10 DGI հաւատով AEFH արեանայր CDI արուանայր
11 B երկայց F երկեայց
12 BCF երկայց ABCDH ի նոցանէ փխ նոցա DI որք շուրջ F չիք զինեւ
13 C չիք է C այրս փխ արս
13–14 BDFG քաջալերացարուք
14 B եղբայրք BDF քաջալերացարուք C քաջալերեցուք
16 ABG տեառն աստուծոյ I չիք և ABCDEFG պարծեցարուք
18 ABDEG յաւիտեանս dI յաւիտեանս ամէն
19 AEFG զքահանայսն DI յորդորէր ի պահս և յաղօթս HS չիք և
20 H կարդալով h կարդային FHS որ
21 EF պարսպաց
23 D չիք այն
25 GHS եկաց



նայ աւուրն և մի ընդ երեկն: Բայց դու տես տե՛ս զԱստուծոյ իմաստութիւնն թէ ո՛րպէս գիտէ հակառակօքն զհակառակին պտուղն շահել: Արդ մինչդեռ քաղաքն յայս տարակուսի և ի վտանգի կայր, արկանէր խորհուրդս բարւոք ի սիրտ իշխանի միոջ, որ էր յոյժ ի մտերմաց Սուլտանայ, որ զառ ի նմանէ խորհրդականն ծանուցանէր քաղաքին՝ կամ բանիւ կամ գրով: Բազում անգամ գրեալ ի քարտիսի ի սլաք նետին կապէր, և պատերազմի օրինակաւ մերձեալ ի պարիսպն՝ ձգեալ ի քաղաքն ընկենոյր. և այնու զամենայն կռուոյն օրինակն ծանուցանէր նոցա, թէ՝ Առ վաղիւն այսպէս և ըստ այսմ ձեւոյ է կռուոյն օրինակն. և եթէ յայս նիշ տեղւոջ ի գիշերի կամին ի ներքոյ պարսպին զերկիրն փորել և մտանել ի ներքս. բայց դուք պինդ և ամուր կացէք, և ի տեղեացն վերայ զգուշացարուք:

Զայս տանէ Աստուած, որ գիտէ ի հեռուստ հիմն արկանել մեծամեծ իրաց. որ զԲաղաամ առ Բաղակաւ մարգարէ գործեաց՝ ի տեսչութիւն ժողովրդեանն, և զանխօս անասունն մարդկեղէն բանիւ ետ բարբառել. և զԵղիա ի ձորն Քերիթթու ագռաւօքն զերիս ամս ի սովին կերակրեաց: Զի՞նչ թէ և աստ ի ձեռն հակառակորդացն զփրկութիւնն քաղաքին տնօրինեաց:

Արդ յո՛ր կողմ և նոքա ի պատերազմ կացին թէ ի գիշերի և թէ ի տուընջեան, սոքա վառեալք և պատրաստք անդր զտանէին: Յետ այսորիկ մեքենայս կանգնեալ, այնու պատերազմէին: Իսկ երէց ոմն ի մերոցս հնացոյն ունելով զաւուրս, որ յոյժ տեղեակ էր արուեստին, և սա իւր կանգնեալ փիլիկուանն. և լինէր յորժամ նոքա քար եդեալ ի պարսատիկս մեքենային և ձգէին ի քաղաքն, երէցն զիւր քարն դէպ ուղիղ նո-

1 AEF երեակն C երեկին EF տասցես փխ տես տես
1–2 BDI իմաստութիւն
2 G հակառակօք
3 C այս D յայսպիսի I յայնպիսի CDI չիք ի ABCEFGI արկանէ
4 BC սիրտս E չիք ի
4–5 AEG սուլտանին
5 BCDI խորհեալս EFh ծանուցանէ Gh չիք կամ
6 EGhIS քարտիզի
7 DI օրինիւ
8 HS կռուոյ B օրինակս DI օրինակն
9 BCE չիք առ CDI այս BDI և թէ
10 ADS գիշերի H չիք կամին h կամին BDHS զերկիր h զերկիրն
11 BCD պինդ E չիք ի BI տեղեաց
14 ACEF զԲաղաամ D զԲաղուամ փխ զԲաղաամ H Բաղաւ h Բաղակաւ
15 ABCDEFHI չիք ետ h ետ
16 H զեղիայ BCD զոր ABCI Քերաթու EFGԾ¹ ագռաւօքն ի լերինն H ամիսս փխ ամս
17 H աստ I չիք թէ BCDEFHI զփրկութիւն
19 C կողմն B կամին փխ կացին CdI կամէին փխ կացին H կային h կացին CD չիք ի (գիշերի)
20 GHIS տուընջեան CDEF չիք և E պատրաստ
21 DEFI էրէց
22 BCDFH աւուրս E աւուրցս
23 ABCDEF փելիկուան GHI փիլիկուան
24 DEFGHI էրէցն

ցա քարին արձակէր, որպէս զի դիպեալ քար երիցուն ի քար անօրինացն, ի վերայ խուեանց ընկենոյր: Զայս արարեալ անօրինացն եօթն անգամ, ոչ ինչ կարացին վճարել. քանզի զօրացաւ քարն երիցուն ի վերայ քարի նոցա:

Ապա ա՛յլ պատերազմական գործի պատրաստեալ, զոր ինքեանք բաբան կոչէին, որ յոյժ ահագին էր, զոր ասէին թէ չորս հարիւր սպասաւորք էին նորա, որք զպարանսն քարշէին, և վաթսուն լիտր քար եդեալ ի պարսատիկսն՝ ի քաղաքն ձգէին. և առաջի նորա պարիսպ կանգնեցին ի բամբակի բեռանց և յայլ բազում կարասւոյ, զի մի՛ քար երիցուն հասցէ ի նա: Եւ իբրև զայս այսպէս յարդարեցին, արձակեցին քար մի, որ դիպեալ ի պարիսպն ուժգնակի, փլոյց և խոռնաց զնա. զոր տեսեալ քաղաքին՝ յոյժ զդողի հարան, և առ Աստուած աղաղակեցին մեծաւ հառաչմամբ, գալ յօգնականութիւն. իսկ անօրինացն լինէր մեծ ուրախութիւն: Իսկ ի գալ երկրորդ աւուրն որ Դեյլմից զօրուն իշխանն էր, առեալ զզօրս իւր եկեալ մարտ եդեալ կռուէր ընդ մերոյն, քանզի այր քաջ էր. եկեալ խոռին կամէր հզօրապէս ի ներքս մտանել, և յանկարծակի գլորեալ երթեալ անկաւ: Իսկ որ ի վերայ պարսպին էին, ձգեալ զճանկ երկաթի՝ կալան զնա և քարշեալ ձգեցին ի ներքոյ պարսպին. և զօրացն տեսեալ՝ դարձան լի տրտմութեամբ ի բանակն. իսկ քաղաքին լինէր ուրախութիւն ոչ սակաւ:

Յայնժամ մի ոմն զօրաւոր ի զօրացն Հոռոմոց պատրաստեալ հուր նաւթիւ և ծծմբով. և արկեալ յաման ապակեղէն, և նստեալ ի վերայ ազնիւ երիվարի, քաջասիրտ և արի գոլով, վահանաւ միայն զթիկունս ամրացուցեալ, և ելեալ ընդ դուռն քաղաքին՝ մտանէ ի բանակն այլազգեացն, մանդատոր ձայնելով զինքն՝ այսինքն թղթաբեր: Եւ երթեալ մին-

1 H զէպ h դիպեալ Ծ զէպ քար երիցուն կամ զէպ քարի երիցուն G իրիցուն
2 A խուեանցն C նոցա փխ խուեանց B ընգենոյր ABCDEFGH եւթն
3 BCEFHI քար փխ քարն G իրիցուն
5 A այգ BC չիք այլ EF գործիս AB ինքեան
7 B զպարանս B լիտրն
8 B պարսաւիկն CD պարստիկն
9 ABCDEFHI բազմակի G բամպակի h բամբակի BHI ի յայլ G իրիցուն
10 I զայսպէս DI յարձակեցին
11 H փլուց
12 Տ աղաղակէին
13 BCDI էր փխ լինէր G չիք մեծ
14 B չիք ի BCDI չիք որ F դեյմի H տեյմից G տիլմեղ Տ արտեւմից՝ որ զօրուն իշխանն էր Ծ³ դեյմից [Տես «Բանբեր Մատենադարանի», № 5, 1960, էջ 307—309]
15 CDI զօրս
16 Տ չիք և D խոռին dF մերձ խոռին E մեծ խոռին
18 GHՏ զճանկ HՏ չիք յիներեանս G և զնա յիներեանս h յիներեանս
21 BC հոռմոց DE ի զօրաւոր զօրացն
22 B նաւթիւն h նաւթիւ B յարկեալ
23 EI զթիկունսն
24 F ընդ փխ ի d բանակ
24—25 I այլազգեաց
25 ABEF մանտատոր CDHՏ մանտատօր G մանտադօր h մանտադօր այսինքն թղթաբեր I մանաատոր ABCDEFHI չիք այսինքն թղթաբեր



չև ի բաբանն՝ շուրջ անցեալ զնովաւ, և յանկարծակի ի վեր առեալ զշիշըն հեղ ի վերայ բաբանացն, և նոյնժամայն բորբոքեալ հրոյն՝ բոց ծիրանի ի դուրս ելանէր, և ինքն դառնայր փութապէս: Զոր տեսեալ անօրինացն, ի հիացման եղեալ, հեծեալ երիվարսն, զհետ մտեալ և ոչ կարացին հասանել: Եւ նորա եկեալ խաղաղութեամբ եմուտ ի քաղաքն, օգնականութեամբ Աստուծոյ ոչ ինչ ունելով վէրս յանձին: Իսկ Սուլտանն իբրև ետես զեղեալսն, ցասմամբ մեծաւ հրամայեաց զպահապանսն սրակոտոր առնել:

Տեսանե՞ս զԱստուծոյ մարդասիրական խնամսն, թէ ո՛րպէս մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա. տեսանե՞ս, որպէս գիտէ փոքր խրոք մեծամեծացն յաղթել. ո՛րպէս առ Մովսեսիւն Ովգայ՝ որոյ բարձրութիւնն ինն կանգուն էր հսկայի կանգնով. կամ որպէս մանկամբն Դաւթի՝ Գողիաթու. կամ որպէս Սիսարայ սպայազինն այլազգեաց, ի ձեռն Յայելի՝ կնոջն Բարեկայ. կամ որպէս զՀողեփեռնէսն՝ ի ձեռն այլում կնոջ: Զայս ասացի, զի մի՛ վհատեցիմք յորժամ ի մէջ անհնարին փորձանաց անկանիցիմք: Զի սովոր է Աստուած ներել առ վայր մի յայնպիսի վտանգաւոր նեղութիւնս, զի համբերողքն արժանասցին պսակին փառաց, և անօրէնքն ընկալցին զխուեանց չարեաց զհատուցումն յարդարադատ դատաստանաց: Զոր և ի հնոցին առ մանկտանն տեսանեմք լեալ. քանզի ներեաց Աստուած մինչև թագաւորն զիւր սրտմտութեան զայրացմունսն զամենայն ի լոյս էած, և հնոցն պատրաստեցաւ, որոյ բոցն ի քառասուն և ինն կանգուն բարձրանայր. և նա առ սաստիկ ամբարտաւանութեանն՝ ասէր, թէ Ո՞վ է Աստուած որ փրկէ զձեզ ի ձեռաց իմոց. տե՛ս առ նմին և զմանկանցն սրտապինդ հաւատոն թէ ընդ որպիսում զաղանի կացեալ ի յատենի, առնէին պատասխանի համարձակագոյնս,

1 B բաբան
2 EF և եհեղ G և հեղեալ G նոյնժամ G ի հրոյն
3 I զուրս
4 C երիվարսն
6 Տ օգնութեամբ G առնելով փխ ունելով
7 CH զպահապանս
9 BCDI զաստուծոյ խնամութիւն և զմարդասիրական [B որ փխ և] H խնամքն
11 ACDF Մովսեսիւ DI ովգա Gh ովբայ
11—12 DI բարձրութիւն H դաւթայ
12 B կանգուն I հսկային DI կանգնեաւ H դաւթայ
13 ABCEFHI գողիադու DI սիսարան
13—14 B յայլի GH չիք յայելի
14 ABCDI կնոջ BCDI բարեկա ABCDEFI զհողեմփեռնէսն A այլում
15 B զհատեցիմք
16 B այնպիսի
17 C արժանաւորացին ABCDEFHI պսակի ABCDEFHI և փառաց
18 A ?CDEFhI չարեացն H արդարադատ h յարդարադատ
19 BC դատաստանին HՏ դատաստանացն GՏ լեալ տեսանեմք
20—21 BCDI զայրացմունս H զայրացմունն h զայրացմունսն
21 HՏ ի լոյս էած զամենայն h չիք զամենայն H չիք ի (քառասուն)
22—23 BCDI ամբարտաւանութեան G ամբարտաւանութեանէն
24 DI զմանկանց C սրտապինդս HՏ հաւատոյ
25 BCDI չիք ի H համարձակագոյն

որ լոյծ քամահանաց բանսուրին էր. Ոչ ինչ է, ասէ, վասն այդր տալ մեզ քեզ պատասխանի. և ապա զի՞նչ։ Յորժամ թագաւորի սպասաւորքն վճարեցան, և նոքա կապանօքն արկան ի հնոցն, յայնժամ եհաս ի թիկունս՝ որ արագն է յօգնականութիւն, և ոչ ամաչեցուցանէ զայնոսիկ՝ որ կարդան առ նա ճշմարտութեամբ։ Տե՛ս աստանօր զԱստուծոյ իմաստիցն զխորսն՝ յոր չհասանէ ոք. զի հուրն յերկուս բաժանեալ զքաղդէացիսն. զոր գտանէր՝ կիզոյր. իսկ մանկանցն ցօղէր հրեշտակ, որ ո՛չ մերձենայր ամենևին ի նոսա, ո՛չ տրտմեցուցանէր՝ և ոչ նեղէր զնոսա. որ և զբարբարոսն ի զգաստութիւն էած, որ ի վերայ անպատում սքանչելեացն խոստովան եղեալ ասէր. Եկայք արտաքս ծառայքդ Աստուծոյ, զի և ես ընդ ձեզ օրհնեմ՝ որ օրհնեալն է յաւիտեանս։ Նոյնպէս և աստ ի ձեռն աննշան առնն՝ եցոյց մեծամեծ սքանչելիս։ Արդ այս մեզ ի խրատ և ի վարդապետութիւն եղիցի։

Իսկ Վասիլն՝ որ քաղաքին իշխանն էր, հրամայեաց ռամկին ի վերայ պարսպին մեծաձայն աղաղակս առնել և թշնամանել զՍուլտանն, որ յետ երկուց աւուրց շարժեալ բանակաւն գնաց ի տեղւոյն և երթեալ՝ հանդիպի քաղաքի միոջ, որ կոչի Արծկէ, որ է ի մէջ ծովուն Բզնունեաց, և ունի մօտ յինքն բերդ ամուր և անառիկ. և քաղաքացիքն յայս ապաստան եղեալ ի ծովն և յամրոցն, յանհոգս կային։ Իսկ արիւնարբու գազանքն ծանծաղ տեղի գտեալ ի ծովուն, եթէ առաջնորդութեամբ ուրուք, և եթէ իւրեանց հնարագիտութեամբն, մտին ի քաղաքըն. և սուր ի վերայ եդեալ կոտորեցին զամենեսին. և առեալ զգերին և զկապուտ քաղաքին, ելին ի տեղւոջէն։ Եւ այս սոսին գիր եղև Սուլտանին, և գնաց մեծաւ տրտմութեամբ յաշխարհն իւր. քանզի ոչ զոր ինչ կամէր՝ կարաց վճարել ինչ։

1 I ասէ
2 GS չիք քեզ BCEFI Թագաւորին
3 BC անկան
3–4 C Թիկունս նոցա
5 C տեսանես զաստուծոյ
6 ADEF զխորս I զխորն ABCDEFI չհասանի ABCDGHI զհուրն
7 ACDEFI հեշտական փխ հրեշտակ G հրեշտակն
8 BCDI չիք ոչ... նոսա
8–9 F բարբարոսն
9 ABDFGHI ած
10 EF և զի
11 CI օրհնեալ BC չիք և G յաւիտեան
12 BCD առն
13 Gh եղիցի յաւիտեան
16 ABCE ոչ փխ որ E տեղոյն
17 EG չիք է
18 B անառիկ
19 EFG ի յայս DI յապաստան G անհոգս
19–20 BC արեանարբոյ DI արեանարբու
20 ABCEHS գազանն h գազանքն EF ձանձաղ
21 BEF հնարագիտութեամբ C հնարագիտութեամբ իւրեանց
22 DGI զամենեսեան Ծ[2] զամենայն
23 BCI զկապուտն C գերին
23–24 EFGhS սուլտանին
24 C գնացին B իւրեանց փխ իւր
25 I չիք ինչ



# ԺԷ

## ԿԱՏԱՐԱԾ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՄՈՆՈՄԱԽԻՆ

Գրէ երջանիկ և աստուածային Սողոմոն, եթէ «Թագաւոր արդար կանգնէ զաշխարհս, իսկ անօրէնն կործանէ»*։ Զոր և իսկ աչօք մերովք տեսաք առ մեօք եղեալ. քանզի թագաւորաց օրէն է աշխարհի խաղաղութիւն և շինութիւն հոգալ, որպէս Աստուած յիւրմէ եղելոցն նախախնամէ ամենեցուն, իսկ սա ո՛չ այնպէս. այլ միշտ ուտելեաց և ըմպելեաց պարապեալ, զայլոս մեծացուցանէր, և զգանձս, զոր ի հարկաց ամենայն աշխարհաց ժողովէր, զոր պարտ էր ի պէտս հեծելոց բաշխել և բազմացուցանել հեծելազօրս ընդդէմ թշնամեաց՝ որ զաշխարհս ի խաղաղութեան կարէին պահել յաղթելով թշնամեացն, որպէս առնէր երանելին Վասիլ յիսուն ամ թագաւորեալ, ոչ ոք ի թշնամեաց համարձակեցաւ յաշխարհն նորա մտանել։ Իսկ սա զգանձսն զոր ժողովէր, ի բոզից ծախսըն վճարէր և ոչինչ ցաւէր նմա աշխարհի աւերումն. քանզի այնքան պոռնիկ և բոզասէր էր՝ մինչզի Կոստանդնուպօլսոյ կանամբքն չյագեցաւ, այլ ի հեռաւոր աշխարհաց տայր ածել կանայս, և զօրն ամենայն նոքօք վարանէր։ Վասն որոյ համարձակեալ թշնամեացն որպէս գայլք քաղցեալք որք յորժամ գտանեն զհօտն առանց պահապանի՝ յանխնայ կոտորեն, նոյնպէս և ի սորա ժամանակս եղև յարևելից և յարևմտից առհասարակ կործանումն քրիստոնէից, զոր ի վերայ փոքր ի շատէ նշանակեցաք։ Եւ սա այսպիսի գնացիւք վարեալ զկեանս իւր՝ վախճանեցաւ. որ թագաւորեաց ամս երեքտասան, ոչինչ բարի յիշատակաց արժանի եղեալ։

Իսկ Թէոդորայ որ էր դուստր թագաւորին Կոստանդեայ, կալաւ զթագաւորութիւնն իբրև գիր սեպհական ժառանգութիւն հայրենի՝ որում

* Առակ. ԻԹ. 4

2 ADEFGHIԾ[3] կատարած B կործան C կատարուած AEFGH մաւնումախին BCDI մանումախայ
3 B աստուածային FHS սողոմոն G սողոմօն H ասէ եթէ
4 C աշխարհն I աշխարհ ABCDEFGHԾ[3] այժմ իսկ
4–5 EFGH աչօք մերովք տեսաք [H մերով]
5 ABCEFGH եղելոց
7 ABCDEFGI այսպէս A այղ
8 ABEFH զայլեւս ChI զայլիս
10 BCD թշնամոյն I թշնամւոյն
10—11 AG խաղաղութիւն BCDI չիք ի խաղաղութեան
11 H յաղթեաց h յաղթելով
12 dI որ յիսուն
13 DFGI յաշխարհ F յաշխարհի I գանձս
13—14 ABC ծախս
15 ABCD կոստանդնուպօլսի EF կոստանդնապօլսի A այղ D կանամբք
16 B տարածել փխ տայր ածել CI տարածեալ
17 B վայր ունէր փխ վարանէր
18 I չիք որք EG անխնայ
19 C արևմտից
20 B կոտորումն փխ կործանումն
24 ABCDEFGHIS Թէոդոռն ABCD կոստանդեա d կոստանդեայ EF կոստանդեա
25 BD զթագաւորութիւն B սեփհական

ոչ ոք կարացէ ի վերայ յառնել: Եւ որ առաքէ Սուլտանն տաճկաց՝ դեսպանս, և գրէ առ նա հրովարտակ, որ ունէր օրինակ զայս. եթէ Կամ տուր զքաղաքս և զգաւառս ինձ, զոր նախնիքն քո տարեալ են ի տաճկաց, կամ տո՛ւր յամենայն աւուր հազար դահեկան: Իսկ նորա առեալ ձիս և ջորիս ոսկիապատակազմս, և բազում գանձս և հանդերձս ծիրանիս եւ առաքեաց նմա: Իսկ նորա մեր ի վերայ ընկալեալ՝ զտարօղ գանձին առ իւր արգել, ճանապարհ առնելով նորա աշխարհն Բաբելացւոց. և էր թուականիս մերոյ ամք հինգհարիւր չորս:

Եւ ի սոյն ամի եկին Պարսից զօրքն յանուն Սուլտանայ, բայց ասեն թէ Ապուսուարայ էին՝ այն որ զԴուին և զԳանձակ ունէր, և էր փեսայ Թագաւորին Հայոց Աշոտոյ, որք եկեալ էին յաշխարհն Հայոց: Յարոց հինէ՝ մարդաբնակ տեղիքն փախուցեալ՝ ի քաղաքն Անի ժողովեցան, և ոչ ժամանեալ ամենեցուն ի ներքս մտանել, քանզի երեկոյացաւ ժամն և ածին զդրունս քաղաքին: Իսկ զօրքն Պարսից գիշերադնաց եկեալ, կալան զդուռն քաղաքին, և սուր ի վերայ եդեալ՝ անհնարին կոտորածս առնէին, որում ոչ ոք գոյր օգնական. զորոց առեալ զաւ և զգերի, գնացին յաշխարհն իւրեանց:

Իսկ ի կողմանս Տարօնոյ Թէոդորոս որդի Ահարոնի, զոր Աւանն կոչէին ըստ իւրեանց լեզուին, զգիրն պակաս ունելով, որ նա էր իշխան գաւառին: Եւ որ եկեալ գունդ մի ի Թուրքաստանէ՝ հնազանդեցան նմա, և կամեցան զմխամտութիւն ցուցանել. մտեալ ի գաւառն Խլաթայ և առեալ աւար բազում, ածին ի Տարօն: Իսկ ժողովեալ զօրք ի Պարսից և ի Թուրքաստանէ լցեցին առ Թէոդորոսն՝ թէ Կամ տո՛ւր զապստամբսդ ի մեզ, կամ թէ ոչ՝ զերկիրդ գերի տանիմք: Որում ոչ առեալ յանձն, յետ որոյ եկեալ ճակատեցան ընդ միմեանս երկիցս և երիցս, և բազում արութիւնս ցուցեալ իշխանին, յետոյ կարեվէր խոցեալ՝ յետ սակաւ աւուրց վախճանեցաւ: Որ յոյժ ապաշաւանաց արժանի էր նորա վախ-

1 B առնել ABCDFHI չիք սուլտանն տաճկաց h սուլտանն տաճկաց
2 GS դեսպան CDEFH նմա h նա HI զօրինակ
3 A տուք AdEFI քաղաքս BD քաղաք C քաղաքն ABCEFI գաւառս
4 ABCDEFH ամենայն C աւուրս
5 ABCDEFHI ոսկիատակակազմս ABCDEFGHI և փխ եւ
6 D զտարօղն d զտարօղ
8 BDI թվականն Gh թուիս B մեր
9 C պարսիկ ABDI զաւրք
10 G ապուսվարայ I ապուսուարայ B չիք թէ... այն H զդվին I զգանձակ
11 BCG աշոտա I աշոտոյ թագաւորին հայոց ABCDFI չիք էին
12 E քաղաք
13 H քանզի և
14 BCDEFH զօրն h զօրքն
15 ABCDHIS կոտորուածս
18 I տարօնոյ A ահարօվնի G ահարօնի
19 CD կոչեն AEFHԾ[3] ունել ունելով
21 B զմխամտութիւն C խլաթա
22 DI զօրքն
23 ABCDI զապստամպսդ EF զապստամբդ
26 EG արութիւն C յետ որոյ B յետս
27 DI վախճանն նորա G չիք նորա



ճանն. մանուկ հասակաւ և գեղեցկաշուք կերպարանօք զԴաւթի մարգարէին ունելով զնմանութիւն, և քաջութեամբ առաւել քան զբազումս, որ տարաժամ բարձաւ ի միջոյ:

Իսկ ի գալ ձմեռանին, յաւուրս աստուածայայտնութեան տօնին՝ գիշերադնաց եկեալ զօրք անօրինացն, և եկեալ ի քաղաքագիւղն Հարքայ որ կոչի Մանկան Գոմ, և կալեալ զնոսա յանհոգս մինչդեռ նոքա զգիշերական պաշտօնն կատարէին, սուր ի վերայ եդեալ կոտորեցին զամենեսեան, և որ շուրջ զնովաւ գիւղք և ագարակք էին. և առեալ զգերի և զաւար, չոգան ի գիւղն Արածանի, քանզի ընդ այն խել անցանելոց էին: Եւ հանեալ ի վերայ պաղին զառն և զգերին, յանկարծակի հատեալ պաղին, զորս ի վերայ կային՝ զամենեսեան ընդ իւրեաւ ծածկեաց:

Ո՜վ քանի՜ դառն է պատմութիւնս և ողբոց արժանի. այլ թերևս ոք մեղադիր լինիցի մեզ, թէ մինչև ցե՞րբ զվշտաց և զնեղութեանց արկանես առաջի մեր զրոյցս: Մարգարէքն քանի՜ սպառնական բանս մարգարէանային, որ յետ ժամանակաց լինելոց էր. ժողովուրդն ընդ այն դժկամակ լինէին: Իսկ ես ոչ թէ սպառնալեաց եմ քարոզ, այլ դիպեալ և զգլուխ եկեալ իրս պատմեմ. որպէս զի ամենեցուն՝ որք լսիցեն. շարժեսցին արտասուս թէ ո՞րքան դառն ժամանակի հանդիպեցաք: Կարծական եղև մեզ այս կեանքս. եթէ մեղք հարցն՝ մերոց ընդ մեզ եկին, որպէս մարգարէն ողբալով զհարցն ամբաստանէր, ապա աւա՞ղ է մեզ որ մեք զպարտիս հարցն մերոց վճարեմք: Եւ ո՞ւր է այն զոր Աստուած ընդ Եզեկիելի խօսելով ասէր. «Որդի մարդոյ զի՞նչ է առակդ այդ զոր ասեն ի մէջ Իսրայէլի, եթէ հարքն ագոխ կերան, և որդւոցն ատամունքն առին: Կենդանի եմ ես, ասէ տէր, եթէ լինիցի առակդ այդ ի մէջ Իսրայէլի.

1—2 B զդաւիթ E մարգարէի
4 CI ձմեռային DGh ձմեռայնին C աւուրս
5 H զօրքն H անօրինաց, E չիք ի AB քաղաքագեւղն C քաղաքագեօղն EFG քաղաքագեղն
5—6 C հարքա
6 G յանհոգս անհաւատքն HS անհաւատքն փխ յանհոգս h յանհոգս GHS զեռ փխ մինչդեռ
7 H զգիշերային h գիշերական
8 AD գեւղք C գեօղք EFG գեղք
9 AD գեւղն EF գեղն BCGHIS գեօղն
9—10 AEFGHS անցանէին փխ անցանելոց էին
11 B զոր
12 C ոհ փխ ով A այդ
13 EFG լինիցի մեզ
14 BC զրուցս hԾ[2] զրոյցս առեմ ABCDEFGhI քանզի փխ քանի
16 S դժկամակս ABCDEI եթէ H սպառնացեալ h սպառնալեաց A այդ G այլ զի
17 B լսեցին
17—18 C շարժեսցեն
18 H յարտասուս H յանդիպեցան
19—20 H չիք ընդ մեզ... հարցն մերոց h ընդ մեզ... հարցն մերոց [զհւրոց, որք]
22 A եզեկիիելի B ասէ I ի մարդոյ
23 ABCDI իսրայէղի DGHIS թէ h եթէ CD հայրքն B որդոց GH որդւոց
24 ABCDI իսրայէղի

զի ամենայն անձինք իմ են, որպէս անձն հօր նոյնպէս և անձն որդւոյ»* - և որ ի կարգին է. և ազատեաց զորդի ի պարտուց հօր: Եւ եթէ վասն մերոց չարեաց եկին այս ամենայն ի վերայ մեր, ապա ողորմելի եմք քան զամենայն մարդիկ. աշխարհ ամենայն ի խաղաղութեան բնակէ, և մեք գերիք և կալանաւորք, սրակոտորք և տնաւերք, և յընչից կողոպտածք:

Զորք աթոռք թագաւորութեան ունէր Հայք, թո՛ղ թէ զհիւրապատւին իշխանութիւն, և զոր ի Հոռոմոց: Եւ հայրապետութիւն մեծ և նախանձելի ամենայն ազգաց. և վարդապետք ճշմարտախօսք, հանդոյն առաջին վարդապետացն՝ ի խորս գիտութեան հասեալք. յորոց բանից ամենայն փաղանգք հերձուածողացն կործանեալք և ընդ գետին մտեալք, ո՛չ կարէին ի փարախ հօտի հաւատացելոց մտանել. քանզի և զհովուապանն ոչ ընդունէր զհոտս, որ ճանաչէ զձայն և ճանաչի ի յիւրոցն: Եւ եկեղեցիք մեր իբրև զնորահարսն զարդարեալ ամենայն վայելչութեամբ առ ի հաճել զկամս անմահ փեսային. և նորածին մանկունք յանախտ արգանդէ մօրս մերոյ Սառայի իբրև զձագս աղաւնեաց երամացեալք կոկորդալիր ձայնիւ զհրեշտակականն երգէին զերգս:

Արդ՝ ե՛կ և տե՛ս զչար և դառանց մխիթարութեան զփոխարէնն զոր ընկալաք: Ո՞ւր թագաւորացն աթոռք, ահա ոչ երևի. ո՞ւր զօրացն բազմութիւն որ իբրև զամպ խռնեալ առաջի նոցա, զորէն գարնանաբոյս ծաղկանց գունակ գունակ հանդերձիւքն փայլէին. ահա ո՛չ են, և ոչ ևս երևին. ո՞ւր հայրապետական աթոռն մեծ և հրաշալին զոր երանելի այրն Աստուծոյ մեծն Գրիգորիոս իջեալ ի խորութիւն վիրապին՝ քրտնալիր աշխատութեամբ զհնգետասան ամ փորձեաց, և ի վերայ առաքելական աթոռոյն եդ զաթոռ իւր. այսօր տեսանի թափուր, զատարկ ի բնակչաց,

* Եզեկ. ԺԸ. 2—4

1 G զի որպէս
2 H որդւոց GS չիք ի (կարգին) CEFh հօրն H հօր
3 ABCEF մերոյ C չարեացն E եկն
4 CFH մարդիկք E մարդիք
5 CDEFHI և սրակոտորք [h չիք և] CDEFhI չիք և (տնաւերք) h չիք և B յըն- չիցն C ընչիցն
7 H աթոռ BC էր փխ ունէր
7—8 ABCDEF թող զի ի հիւրապատւին իշխանութենէն dI թող զոր ի H թող զի [h չիք զի]
8 GH իշխանութիւնն BC ի հայրապետութիւն
9 H ճարտարախօսք Ծ[2] ճարտարախօս
10 G վարդապետաց EF խորագիտութեան
11 B ազանց փխ փաղանգք C ազանդք DI փաղանք E միաղանդք h կործանեալք
15 ABCDEFhI ի հաճ և ի կամս G հաճիլ H հաճել G կամս
16 H յարգանդէ
17 DEGHS զհրեշտակական h զհրեշտակացն ձայնիւ I զհրեշտակականն
18 ABCDEFHI զփոխարէնս
19 ABF աթոռքն
19—20 AH բազմութիւն
20 GS զամպս
21 GS հանդերձիւք
22 ABCEF մեծն
24 ABCDFGh փորեաց
25 CDI թափօր ABCDEFGH բնակչացն



մերկ ի զարդուց, փոշւով և սարդի ոստայնիւ լցեալ, և ժառանգ աթոռոյն յօտար աշխարհ հնացեալ իբրև զգերի և զկալանաւոր: Վարդապետաց ձայնք և քարոզութիւնք լռեալք. և հերձուածողացն դասք, որ առ նոքօք իբրև ծակամուտ մկունս այսր անդր թաքչէին հալածեալք ի նոցա աստուածաբանական բանիցն և յուղղադաւան խոստովանութենէն, այսօր իբրև առիւծունս հզօրեղապէս աներկիւղ ելանեն ի խշտից բերանաբաց՝ թէ զո՞ կլանիցեն յանմեղ անձանց: Զի՞նչ ասացից և վասն եկեղեցւոյ, որ յառաջն այնպէս զարդարուն էր և վայելուչ, բազմածնունդ գերերջանիկ. որ և զմարգարէն ի հիացումն շարժեաց. իսկ այսօր նստի անշուք, անզարդ, մերկացեալ յամենայն գեղեցկութեանց իբրև զկին մի այրի անորդի, մերկացեալ ի զարդուց, անկեալ ի պատուոյ, պատառատուն հանդերձիւ նստեալ առանց մխիթարի. այնպէս և աստ տեսանի. ջահք շիջեալք և ճրագունք անցեալք, խնկոց բուրմունք և անուշահոտութիւնք սպառեալք, պաակ տէրունական սեղանոյն փոշւով և մոխրով ծածկեալ: Զառ ի սմանէ մանկտիս է տեսանել, որ ի դրունս սորա բնակետ ի ձեռս առեալ զդաւթական երգս երգէին, այսօր ի դուրս զեւարհնակ կադաղանացն՝ զոր մզկիթն կոչեն, անդր կաքաւեն ուսանելով զմահմետաւանդ զառացեալսն: Նաև կանայք պարկեշտք և ողջախոհք՝ որ զօրինաւոր ամուսնութիւնն յարանց իւրեանց մեծ թախանձանօք ընդունէին, այսօր յանառակ և յայլանդակ խառնակութիւն սովորեալ են:

Արդ եթէ այս ամենայն զոր պատմեցաք, վասն մեր չարեացն եհաս ի վերայ մեր, ձա՛յն տուք երկնի և որ ի նմա և որ ի վերայ նորա. ձա՛յն տուք երկրի և որ ի նմա կենդանիք. ձա՛յն տուք լերանց և բլրոց. ծառոց և անտառախիտ մայրեաց, թող լան և ողբան զմեր կործանումն:

1 D զարդուցն ABDEF փոշով C փշով BCD սարդի ոստայնով
2 C օտար H յաշխարհ
3 HS հերձուածողաց G հերձուածոցն
4 H և իբրև DI զծակամուտ
4—5 ABDEFGHI յաստուածաբանական
5 E ուղղադաւան
6 B առիւծունս A աներկեւղ H չիք աներկիւղ h աներկիւղ B ելանեն ABEFHI խշտեաց
7 GS յանձանց անմեղաց
8 ABCDEFhIԾ[1] և երջանիկ
9 HԾ[1] բարկացումն փխ հիացումն Ծ[1] զարմացումն
9—10 DI և անզարդ
10 C ամենայն
11 FG զարդացն
12 BCDI մխիթարութեան I այսպէս
13 GS չիք և ABCEFGhI ճրագք ABD խնկոց
14 I պատուական փխ տէրունական E պաակք ABCDEF փոշով I փշով
15 I զառ ի նմանէ
15—16 I բնակէին և ի ձեռս
16 H ընդ դաւթական h զդաւթական AEFGH երգսն
17 H մզկիթ BC ուսանել
17—18 G զմահմետականն
18 F պարկեշտ B ողջախոհք
19 CDI ամուսնութիւն G ամուսնութիւնն
20 DGS այլանդակ S սովորեալք H չիք են h են.
22 I ձայնատուք
24 AC անդառախիտ ABCDEI կործանումս

Զայս և մարգարէքն ասէին ի յուրախութիւնսն. լերանց և բլրոց խայտալ հրամայէին, և գետոց ծափս հարկանել և ծովու զուարճանալ և մայրից ցնծալ: Քանզի սոքա ամենեքին համատոհմք են մեր, յուրախութիւնս մեր ուրախակից մեզ լինին՝ պարտին և սգոյն հաղորդիլ. զոր օրինակ և յառաջինն՝ խոնարհեցան ընդ մեզ յաւուր խոնարհութեան և տառապանաց մերոց, զի վասն մեր իսկ եղեն: Բայց և այս չէ մեզ օգուտ ի մխիթարութիւն, զի զմեռեալ՝ թէպէտ բազում ժամանակ լան և կոծեն և ի խաւարի փակեն, չերէ ինչ նմա օգուտ. զի՞նչ եղև օգուտ հրէիցն՝ Երեմիայի լացն, կամ Քրիստոսինն՝ Երուսաղեմի կամ Յուդայինն. սաս՛ ինձ. և ոչինչ. վասն որոյ զայս գիտելով, պարտիմք յանձանց ուղղութենէ հաշտեցուցանել զԱստուած. զի թէ այս յարդարիցի, և թշնամեաց սուրն պակասի ի սպառ, և գժուարինքն մեզ ի դիւրինս փոխի, և տառապարքն ի հարթ ճանապարհ. և տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ: Զի թէ Աստուած ի մեր կոյս լինիցի, ո՞վ կարիցէ կալ մեզ հակառակ. քանզի ինքն յօրէնսն հրամայեաց, թէ «Թշնամեաց քոց թշնամի եղեց, և դատեխս քո սատակեցից»*. և դարձեալ, թէ «Ոչ թողից զքեզ և ոչ ընդ վայր հարից»**. միայն թէ ընդ Աստուած խաղաղութիւն ունիցիմք, և առ նա սրտի մտօք կարդայցեմք՝ զգործս բարիս ի միջի դրաւական ունելով, չիք ինչ ի հակառակացն որ զմեզ տրտմեցուցանել կարիցէ: Տէրունի է և այս զոր յԵսայեայ գտանեմք ի գիրսն, եթէ «Մինչչև իցէ քո կարդացեալ, ես լուայց քեզ. և մինչդեռ խօսեսցիս, ասացից եթէ զի՞նչ խնդրես»***. որ ընդ ամենայն ջերմագութ հարամբ անցանէ այս բանս: Իսկ յանարժանիցն ձեռնթափ լինի ասելով. «Ոչ եղիցի անձն իմ ընդ նոսա»****. և դարձեալ, «Իցէ՞ զի կարդայցէք առ իս, և ես ոչ լուայց ձեզ. խնդրեսցեն զիս չարք, և ոչ գտցեն»*****. և դարձեալ. «Յորժամ համբառնայցէք

* Սաղ. ժէ. 41. ** Եբրա. ժԳ. 5 *** Եսայ. ԿԵ. 24 **** Առակ. Ա. 28 ***** Եսայ. Ա. 15.

1 H չիք ի H ուրախութիւնսն h յուրախութիւնսն
1—2 H խայտեալ h խաղալ
2 B ծով
2—3 I մայրի
3 AGI ամենեքեան
3—4 E յուրախութիւնսն
6 ABCDE չէ ինչ մեզ d չիք չէ ինչ
7 C զմեռեալն dGI զմեռեալս B չիք թէպէտ... լան BCDEI կոծին
8 B խաւարին ABCDEFHIS փակին G չիք նմա DI նմա ինչ C նմա յօգուտ
9 FGS և փխ կամ
11 BC յարդարիցէ G յարդարեսցի G ի թշնամեացն G սուր
12 G դիւրին BCDI տառապարք FG տառապարն
14 B չիք ի G չիք կալ H մերս փխ մեզ
15 H զի h քանզի BCDI չիք թէ
16 I եթէ
17 I ոչ զվայր
19 H չիք կարիցէ h կարիցէ
20 I չիք է D յեսայեա C գտանիմք F գտանիցեմք HS թէ
22 BCDH ջերմագոյթ GԾ[1] ջերմագոյն
23 ABCDEFHI անարժանիցն
24 C չիք ես



զձեռս ձեր ի վեր, դարձուցից զերեսս իմ ի ձէնջ. և եթէ յաճախիցէք յաղօթս, ոչ լուայց ձեզ». քանզի զի՞նչ հաղորդութիւն է լուսոյ ընդ խաւարի:

Երկիցո՛ւք եղբարք և ակն ածեսցուք յերկնակոչման պատգամացս. մի՛ լիցուք յանծանօթից նորա, զի մի՛ ասիցէ, թէ՝ Ոչ ճանաչեմ զձեզ. այլ լիցուք ի բարեկամաց կարգի նորա, զի ասիցէ ցմեզ. «Եկա՛յք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զանպատում զկեանսն»*:

## ԺԸ

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԹԷՈԴՈՐՈՒՆ ՈՐ ԹԱՐԳՄԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Յետ մահուանն Մոնոմախին, մնջեալ առիւծաբար զազանութեամբ մատակ առիւծն ի խշտիս իւր, այն որ յառաջ ցուցաւ Դանիէլի ի տեսողութեան իւրում, և կոչեալ զգլխաւորս քաղաքին, և զմեծամեծս իշխանացն, ասէ ցնոսա. Թէ ոք ի ձէնջ վստահանայ ելանել զօրօք յարևելս, և զաղարեցուցանել զգոռն Պարսից, և նուաճել զաշխարհն ի խաղաղութիւն, յանձնառ թո՛ղ համարձակ գայ նստի թագաւոր. յԱստուծոյ իրաւանց նա է արժանի թագաւորութեան. իսկ թէ ոք չառնու յանձն զառացեալս, տեղապահ ես բաւական եմ: Զայս լուեալ իշխանացն, գնացին առանց պատասխանի տալոյ յիւրաքանչիւր ի բայաթ:

Իսկ թագուհւոյն զՍուլտանն իբրև զքաղցեալ գազան՝ տրոց առատութեամբ յագեցուցեալ, մինչզի մոռանալ նմա զի վերայ մեր զյանումն. այլ անդրէն ի Բաբելոն և որ զնովաւ կողմամբքն յաղէր զմարտն.

* Մատ. ԻԵ. 34

1 F զերեսս H չիք և
4 BCDI չիք և ABEF յերկնակոչման DI յերկնակոչ d յերկնակոչմանի Ծ[2] երկնային կոչման CEFH պատգամացս
5 C անծանօթից h յանծանից C ասիցի C չիք թէ
6 A այգ
7 BDI զկեանս
9 C թագաւորութիւնն E թէոդոսնին HS թէոդոսին ABCDEFGhIԾ[2] աստուածատուր H աստուածատուր
10 AEFHI մաւնումախին BCD մոնումախին Gh մոնումախին AB առեւծաբար
11 AB առեւծն H չիք այն h այն BCDI յառաջն A դանիելի B դանէլի
12—13 C իշխանացն
13 G եթէ CDI չիք զօրօք ABDI յարեւելս
14 GԾ[1] զարձուցանել փխ զաղարեցուցանել Ծ[3] զգոռոյն DE զաշխարհին FGHIS զաշխարհս
14—15 DI խաղաղութեան
15 BCDI յաթոռն թագաւոր
15—16 G իրաւանցն
16 G թագաւորութեանն
16—17 B զառացեալ EF զառացեալսն H զառացեալսս
18 B իւրաքանչիւր dI չիք յուրաքանչիւր ABCDEFG դրայաթ փխ ի բայաթ dI չիք ի բայաթ H տեղիս այն է դրայաթ hԾ[1] դրայաթ այն է տեղիս S պալատս փխ ի բայաթ Ծ[3] դրայաթ Ծ[1] սրբագրված է ի պալատ ամենայն հավանականությամբ բայաթ բառը փոխառված է արաբերենից՝ بيت հոգն. بيوت տուն, պալատ իմաստով
19 F թագուհւոյն
20 C ի փխ զի
20—21 F զյանունմնն
21 A բաբեղովն G բաբիլոն S բաբելոն

քանզի յոյժ պատերազմասէր էր այրն: Բայց որ մերոյս էին սահմանակիցք և դրացիք՝ խանձեալ, ոչ դադարեցին զամառն և զձմեռն յապականելոյ զաշխարհս Հայոց. քանզի գիտօք որոնէին, և ուր լսէին զմարդաբնակ տեղեաց, գիշերագնաց եղեալ՝ յանկարծուստ ի վերայ անկանէին, և նորանշան հարուածովք անողորմաբար զամենեսեան ահաւասարակ սատակէին: Եւ անհնարացեալ յերկիւղէն՝ բազում աւուրս առնէին ի տեղւոջն, մինչև խիլ արկեալ տանցն, եթէ ուրուք կայր ինչ ի թաքստեան՝ զամենն հանեալ, և բնաբարձ ակերմամբ քանդեալ զվայրն, առեալ զաւ և զգերի՝ յաշխարհն իւրեանց դառնային:

Եւ քանզի աւան մի էր ի գաւառին Բասենոյ՝ մերձ առ ստորոտով լերինն որ կոչի Ծիրանիս, և անուն նորա Օկոմի, մարդաշատ և ընչաւէտ: Յորոյ վերայ գիշերագնաց եղեալ անօրինացն յաւուր մեծի աստուածայայտնութեան տօնին, և քանզի ի սաստիկ սառնամանեաց դաշտին բորբոքեալ էին ձեռք և ոտք մարդադէմ գազանացն, որք յորժամ հասին մօտ ի շէնն, գտին խոտ բազում ի դարմանս անասնոց դիզեալ, որում հուր հարեալ, և ի հրատին բորբոքմանէ ահաւասարակ դաշտն ամենայն իբրև միջօրէիւ լուսաւորեցաւ. առ որ կացեալ ջեռան ինքեանք և երիվարք իւրեանց: Եւ ապա լարեալ զաղեղունս և մերկացուցեալ զզէնսն՝ յարձակեցան ի վերայ շինին, հեշտացեալք իբրև յամարայնի, և սուր ի վերայ եդեալ կոտորեցին ահաւասարակ զամենեսեան ոգիս իբրև երեսուն հազար, ոչ մնալով ի բնակչաց տեղւոյն և ոչ մի, բայց թէ ի ճանապարհի ուրեք ոք կայր: Եւ արարեալ ի տեղւոջն աւուրս երիս, և բարձեալ եզանց և իշոց և ձիոց զամբարս ցորենոյ և զմթերս ընչից, և սակաւ ինչ ի պիտանեաց, զորս առեալ գերի, գնացին յաշխարհն իւրեանց: Այլ զբազմադէմ չարիսն, զորս նոքա անդ գործեցին ընդ գրով ո՞վ կարիցէ արկանել: Եւ այսպիսի ձեռնարկութեամբ ամայացաւ ի բնակչաց երկիրս ամենայն, ոչ մնալով կենդանի՝ բայց եթէ յամրոց ուրեք:

1 B չիք էր HS մերս h մերոյս
2 E դադարէին
2—3 BC յապականել
6 DI յերկիւղալից CDFEHI չիք բազում e բազում
7 B առանցն փխ տանցն B թաքստեան
8 H ակերամբ h ակերմամբ
9 I յաշխարհ
10 D չիք Եւ BI աւանն B բասեն
11 DI ծիրանի F կոկոմի GS օկոմի H անկաւմի
13 BCDI տեառն տօնին HS սառնամանեաց I դաշտի
13—14 ABCFH ցրտաց էին DhIՄ² ցրտացեալ
14 C չիք մարդադէմ գազանացն որք
15 CHS դիզեալք B ուրում C յորում
16 H դաշտ
17 B իբր BC մէջաւուրէիւ G միջօրէի Տ կացեալք
18 BCDI զաղեղունս
19 ABDEFHI յամարանի h յամարայնի
21 BCDI ոք ուրեք
23 EF իշույ BCDI մթերս
24 A այդ ABCDEFI զբազմադիմի HՄ² զբազում h զբազմադէմ
25 ABCDEFGI զոր
26 HS բնակչացն
27 I թէ



Իսկ Թագուհւոյն կալեալ զթագաւորութիւնն ամս երկուս, և հասեալ ի խորին ծերութիւնն, հիւանդացաւ զհիւանդութիւն, որով և մեռաւ իսկ: Որում եկեալ առաջի գլխաւորք քաղաքին՝ խնդրեն, թէ՝ Մինչդեռ կենդանի ես, կացո՛ զոք թագաւոր, որպէս զի մնասցէ առանց խռովութեան քաղաքս: Որում հաւանեալ Թագուհւոյն, հրամայէ զոմն ածել ի գլխաւորաց քաղաքին Միխայիլ անուն, որ իւր հարանցն ժամանակաւ լեալ էր ի պաշտօնէից պալատանն, այր հասակաւ խոնարհեալ յալիս, և ընչաւէտ յոյժ: Եւ կացուցանէ զնա թագաւոր հաւանութեամբ քաղաքին. և ինքըն զկնի երից աւուրց չոգաւ զճանապարհ ամենայն երկրի, ուր ի միասին թագաւորք և տնանկք ըստ դաւթական երգոյն: Իսկ իշխանք աշխարհաց մեծամեծք և փոքունք յորժամ լուան զնորա թագաւորելն, եկին ամենեքին նմա ի հնազանդութիւն: Եւ զոր պարտ էր նմա ողոքական բանիւք և պարգևաց առատութեամբ զամենեսեան ուրախ առնել, և ընդ ինքեան իշխանութեամբ ի հնազանդութիւն նուաճել. իսկ նա չմարթի գոլով՝ զթոռոփամուն ախտացեալ, զոմանս յիշխանաց պահէր՝ անարժան զոլ իշխանութեանն: Իսկ ընդ մեծամեծսն առնախօս եղեալ, ասէ. Կամ եկէք ընդդէմ Պարսից ի պատերազմ, և մի՛ տայք զերկիր ապականել. կամ թէ ոչ, զձեր հողն հարկեցից Պարսից, և պահեցից զաշխարհս ի խաղաղութեան: Որում ոչ հաւանեալ իշխանացն՝ եկին առանց պատասխանւոյ յերեսաց թագաւորին, և միաբանութեամբ զաշն արարեալ՝ անցին ընդ ծովն, և ժողովեցան զօրք բազումք, որոց ոչ գոյր թիւ: Որոց առաջնորդք էին Կոմիանոսն որ և թագաւորեացն իսկ և Կամենոսն. և ապստամբեալք ի թագաւորէն երդմամբ չափ ոչ հնազանդել նորա թագաւորութեանն: Եւ այս եղև ի հինգհարիւր վեց թուականիս մերոյ, յորում հոռոմ գիրտոնի էր տասն:

1 C թագուհոյն BDI զթագաւորութիւն
2 A ծերութիւն BCDEFI ծերութեան B հիւանդաց F հիւանդութիւն
4 B կացոյց
5 C թագուհոյն
5—6 C գլխաւորացն
6 A միխաիլ GS միխայէլ ABCDEGHI յիւր
7 ABCDEF պալատանն G այլ փխ այր BCDI չիք և
9 BCDI երկուց փխ երից G չոքաւ EFGՄ¹ չոգաւ զկնի EFG չիք զճանապարհ
CI զճանապարհս GՄ¹ ուրք փխ ուր H որ
9—10 BCDEFGhՄ¹ միասին են
10 GՄ¹ գաւթեան BCI երգոցն
11 BCDI թագաւորելն
12 AHI ամենեքեան
14 BCDEFH իշխանութեան ABCEF չմարթու DI չմարթի
15 G զոռոփամայն ABDEF ախտաց CdGhl ախտացաւ H ախտեաց DI յիշխանացն
16 BCDI յիշխանութեան
17 BI տաք
19 BC խաղաղութիւն
19—20 BEFG պատասխանոյ
20 BCDI միաբանեալ EF միաբանութեան B չիք զաշն արարեալ
21 E որ փխ որոց (ոչ)
22 GHS կոմինոսն փխ կամենոսն
23—24 BDGHI թագաւորութեան
24 E չիք ի B թվականին CI թուին Gh թուիս H զթուականիս

Վա՜յ տարւոյն, վա՜յ աշխարհաւեր խորհրդոյն, յորում կործանեալ ապականեցան բնակիչք երկրի. քանզի դարձաւ յառաջին անզարդութիւնն ըստ աշխարհապատում բանին. «Երկիր, ասէ, էր ամայի և անպատրաստ. վասն զի մարդ չէր որ գործէր զերկիր»*: Զի զոր օրինակ գեղեցիկ դէմք առն՝ ի ծաղկի հասակի սիրուն և ցանկալի տեսողացն ցուցանի, իսկ յորժամ զարդարիչ հոգին մահուամբ բաժանի ի նմանէ, յառաջին պայծառ և գեղեցիկ զարդուցն ահարկելի և անշուք ցուցանի տեսողացն, նաև գութըն ընդ նմա հատանի. ըստ այնմ, եթէ «Մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ ի սրտէ»**: Ըստ նմին օրինակի և զերկիր է տեսանել. զի յորժամ մարդաբնակ շինութեամբ հաստատեալ, յայնժամ երկրագործք սատարութեան սերմամբ զանդաստանս լնուն. որք յորժամ բուսանին, կանաչագեղ տեսլեամբ զվայլրան վայելչացուցանեն, և բարձրաբերձ աճմամբ ի վեր ընձիւղին. և յորժամ զհասկիցն զկերպարանս ի դագաթունն երևեցուցանեն, յայնժամ թանձրախիտ բարձրութեամբն ամպաձև տեսողացն ցուցանի, և ի քաղցրաշունչ օդոյն՝ ճօճի, ճեմի զօրէն ծովային ալեաց: Այսպէս և հօտք անդէից արօտականաց ի հովիտս դալարաբեր բուսոց առ ցուրտ աղբերականօք խայտան խաղան, և երկիր իբրև զդայեակ՝ գեղեցիկ զիմօք զարդարի նորօք, ըստ այնմ, եթէ «Ծնծացեն դաշտք, և ամենայն որ է ի նոսա»***:

Իսկ այժմ զնորին հակառակն տեսանեմք. երկիր աւերակ, թափուր ի բնակչաց. քաղաքք կործանեալք, և անդաստանք խոպանացեալք և փշաբերք, ահագին և զարհուրելի անցաւորացն ցուցանի: Նաև քաղցրաձայն հաւուց տարմք, որք մարդասէր բարոյիւք ընտանի գոլով մերային ագինս, որ քաղցրանուագ եղանակօք զվայլրան հնչեցուցանեն, և յառաւօ-

* ԾՆՆ. Ա. 1 և Բ. 5. ** Սաղ. Լ. 13 *** Սաղ. ՂԵ. 17.

1 CDEFGI և (վայ աշխարհաւեր)
2 EF ապականեալ BDGI անզարդութիւն
4—5 BD առն դէմք
5 B և փխ ի
6 G զարդարեալ
7—8 BCDI գոյթն
8 DEFI նմին HS թէ
8—9 H չիք մեռեալ h մեռեալ
9 GS չիք և Ծ1 երևեի ցուցանի զերկիր. C զերկիրս
10 ABDEFGHI շինութիւն C շինութիւնն EF երկրագործ
10—11 GHS սատարութեամբ
11 GԾ1 սերման I կանանչագեղ
12—13 BC չիք ի... յորժամ
13 A ընձիւղին
14 H բարձրախիտ h թանձրախիտ
16 BD արաւտականայ BD հովիտս
17 H աղբերականմբ h աղբերականօք ABCEFH դայեակ
18 C յայնմ
19 D չիք է
20 B իսկ փխ երկիր DI թափուր
21 EFG բնակչաց I քաղաք
23 I բարուք
24 DEFGI որք ABCDEFHI ձայնիւք փխ եղանակօք h եղանակօք B զվարբըն CDI զվայլըն G հնչեցուցանէին



տինսն հուսկան երգովք և բարձրաձայն կարկաչիւք զերկրագործսն ի քնոյն զանգազանաց իբրև խթանաւ զարթուցեալ, խրախճանչիւր արտևատից պատրաստաբար յարդարէին: Բայց այժմ շէնք աւերակք և ամայիք և անմարդիք, և նոցա ոչ գոլ տեղի բնակութեան. զի ո՞ւր տատեղանքն բոյն կառուցանեն, և ո՞ւր տկարք ի թռչնոց ի նոսա ապաւինին ըստ սաղմոսին ձայնի. և կամ ո՛ւր ծիծառն զխուր վարանից բունիկն յարդարէ՝ աներկիւղ սնուցանելով զառ ի յինքենէ ծնեալսն: Արդ այս առատնօր զտեղի կալցէ բանս. մեք ի գլխոյն սկիզբն արասցուք դժուարալուր և չար պատմութեանս:

Արդ յորժամ յերկուս բաժանեցաւ տունն Յունաց, և գաւազանն երկաթի՝ գաւազան եղեգնեայ ջախջախ եղև, զոր Ասորեստանեայն զԵգիպտացւոց թագաւորութիւնն նախատելով՝ այսպէս անուանէր. և կաթսայն որ Երեմիայի յեռանդն ցուցաւ՝ որ ի հիւսիսոյ ի հարաւ ձգէր յայնժամ զցնցուղս եռանդեանն, այժմ ի հարաւոյ ի հիւսիս ահագին եռանդեամբ, և կիզեալ ապականեաց զազգս քրիստոնէից: Քանզի ըստ տէրունի հրամանին՝ թագաւորութիւն բաժանեալ ոչ կարէ կեալ, այլ կործանեալ է՝ արդարև եղև իսկ. քանզի յորժամ Պարսիկք գիտացին զօգցա մարտ և զհակառակութիւնս առ միմեանս, համարձակապէս ելին ի վերայ մեր անդադար երթևեկս առնելով, տարաւ յանդ զաշխարհաւեր կործանումն:

Արդ ի սկսանել տարւոյն, զորոյ զյիշատակն վայիւ արարաք, և նոքա իբրև զգայլս զիշախանձս՝ որք հանդիպին հօտի՝ որոյ ոչ գուցէ հովիւ, զի ոչ թէ իւրեանց կերովն միայն շատանան, այլ զամենայն ջանան կոտորել: Նոյնպէս և ի Պարսից ելեալ զօրքն՝ ոչ թէ աւարաւ յագենային,

1 G երգօք ABF կարկաչիւնք GhԾ2 կարկաչանօք Ծ1 կարկանչիւք
4 ABCDEFHI անմարդիկք G անմարդիկ S գոյր ACDEFI տատեղունք B տատեղուք G բուն
5 B թռչոց
5—6 A սաղմոսղին
6 I զի փխ զխուր H բունիկ H յորդորէ h յարդարէ
6—7 A աներկեւղ
7 GHS սնուցանել ABCDEFHI չիք ի
8 ABCDFGH գլխոցն I գլխոյն
10 H չիք յորժամ h յորժամ B երկուս
10—11 B չիք գաւազանն երկաթի CI գաւազան երկաթի
11 Gh եղև ջախջախ AB ասորեստանս այն DEFI ասորեստանեայն
11—12 AI զեգիպտացւոց
12 BDI թագաւորութիւն EH զկաթսայն
13 H յերեմիայի ABC յեռանդան DI յեռանդեան EFHI չիք ի (հիւսիսոյ)
14 BCI զցնցօղս ABC եռանդանն E յեռանդեան F եռանդան ABDF հիւսիսի CHS հիւսիսի h հիւսիս A եռանդամբ DEF եռանդմամբ
15 B չիք և H և քանզի [h չիք և]
16 ES կալ
17 A յորժ C մարտն
18 BCDI երթալ
19 ABCDEFGHԾ1 տարեալ ABCDEFGIԾ2 յանդեալ
20 B զոր որ GI յիշատակն
21 I իբր B զայլս փխ զգայլս E զգայլ G զգողս զիշերախանձեալ I գայլս C զիշխանձս DI որոց փխ որք ABCDEFI որոց փխ որոյ
22 H կերակրովն h կերովն HԾ2 չիք այլ զամենայն ջանան h այլ զամենայն ջանան A այլ
22—23 GS կոտորել այլ զամենայն ջանան
23 I նմանապէս

այլ անլագ քաղց մերոյ սատակմանն ունէին. զի զոր աչօք տեսանէին, անհնար էր նմա ի ձեռաց նոցա ապրանել, մեծ բարեգործութիւն համարելով զայն։

Արդ ի լինել մարտին Հոռոմոց, որդի Լիպարտին Իւանէ անուն, որում տուեալ էին ի պարգևի տեղիս բնակութեան զմեծ աւանն Երիզայ ի գաւառին Հաշտենից, և որ շուրջ զնովաւ դաստակերտք, սա իբրև լուաւ զայն՝ թէ թագաւորութիւնն յերկուս բաժանեալ է, գնաց և խաբանօք էառ զամուրն Եղանց Բերդ կոչեցեալ, և տարեալ զայն ընդ իւրով ձեռամբ՝ դառնայ անդրէն ի գաւառն Ազորի, և յամուրն որ կոչի Հաւաճիչ։ Եւ բարեկամարար ել քաղաքն ընդ առաջ նորա. և զդատաւորն որ ունէր զհոգս արևելից՝ որ յայնժամ անդ հանդիպեցաւ, զոր իբրև ետես՝ վաղվաղակի ունել հրամայեաց։ Եւ առեալ ի նմանէ զանձ անչափ, և ձիս և ջորիս և զամենայն զոր ինչ և նա յարևելից ժողովեալ էր, և զինքն եդ ի յեղնուտն ի բանտի. և ինքն փոյթ ընդ փոյթ չոգաւ ի վերայ ամուր քաղաքին Կարնոյ։ Եւ առժամ մի ջանայր խաբանօք, ասելով թէ՝ Ի թագաւորէն հրաման ունիմ, իմ է քաղաքդ, բացէք զդրունս, զի մտից։ Եւ իբրև այնու ոչ կարաց հնազանդեցուցանել, ապա մարտ եդեալ, պատերազմաւ կամէր առնել քաղաքին։ Իսկ որ քաղաքին իշխանն էր, վաղվաղակի ծանուցանէր իշխանին որ նստէր յԱնի և ունէր զպատիւ մագիստրոսութեան. որ իբրև լուաւ, զմի ի գլխաւորացն հանդերձ զօրու առաքեաց ի վերայ նորա։ Իսկ նա իբրև ծանեաւ զայն, ապաստակաւ առ զերկիրն և դարձաւ ի տեղի իւր. և առաքեաց ի Պարսիկս բերել զօրս յօգնականութիւն իւր. այս եղև սկիզբն անհնարին չարեացս որ անց ընդ մեզ։

Զոր իբրև լուան անօրինացն ժողովք զհրաւէրն, ձայն տուեալ միմեանց, առժամայն ի մի վայր եկեալ, փութապէս առ նա հասանէին. իսկ նա իբրև ետես զբազմութիւն զօրացն, զահի հարաւ. և քանզի ոչ

1 I մերոց BCDI չիք զի... տեսանէին
3 BC զայրն փխ զայն C զայն
4 ABCDEFGHI մուտին փխ մարտին C հոռմոց DEFGHIS իւվանէ
5 I որոյ DI երիզա G երեզայ
6 ABCDEFHI գաւառն h գաւառին
7 BD թագաւորութիւն ABCDEFGhI բաժանեցաւ փխ բաժանեալ է
8 I եղանց
9 GHS ազորի
10 D յառաջ
12 C չիք և (ձիս)
14 BCI չիք ի (յեղնուտն) C զեղնուտն
15 AEF կարնայ BC կարնա EF խաբանօք ջանայր
19 DGI ծանուցանէ
19—20 ABCDEFHI մագիստրոսութեան
20 ABDEFI գլխաւորաց
21 C էառ
22 ABCEFI զաւր
23 C չարեացն G չարեաց C էանց
25 HS անօրինաց ժողովքն h անօրինացն
26 DI չիք վայր F փութայպէս
27 H տեսեալ h ետես ABCDEFh վասն զի փխ քանզի



զոյր հակառակ ոք, քանզի իշխանն այն, յորոյ պատճառս նոքա եկին, յորժամ զխօշիւն առ զնոցա գալոյն, մտեալ ի մեծ ամուրն, ամրանայր։ Յայնժամ եկեալ զօրքն առեն՝ Մեզ ճանապարհ ցոյց աւարի, զմեզ դատարկ մի՛ դարձուցաներ. իսկ նա անճարեալ, առ նոցա առաջնորդ լինելոյն, որք եկեալ և գիշերագնաց եղեալ ընդ անապատ վայրս, հասին ի վերայ գաւառին Խաղտեաց. Եւ յանհոգս կալեալ զնոսա, ըստ իւրեանց արիւնարբու բարուցն, որոց պատահեցան՝ զարսն զամենեսեան սրակոտոր արարին մինչև ի Խրթի անուանեալ Ճաննեթոյ. և առեալ անչափ առ և գերի, դարձան մեծաւ յաղթութեամբ։ Եւ եկեալ առ չարեաց առաջնորդըն՝ մեծատուր պարգևօք շնորհակալիս մատուցին նմա վասն ճանապարհի յաջողութեանն որ պատահեաց նոցա. և ապա գնացին յաշխարհն իւրեանց։ Եւ քանզի տեսին զերկիրն անտէրունչ և առանց պահապանի, վասն այնորիկ հուպ ընդ հուպ դարձ արարեալ եկին ի նոյն՝ չարին արբանեակք. և իջեալ ի գաւառն Մանանաղւ, բաժանեցան յերկուս։ Մի բաժինն չոգաւ ի յԵկեղեաց, և անկեալ գիշերայն ի վերայ քաղաքին որ ի նմա, և զոր ի նմա գտին անպատրաստ և առանց զգուշանալոյ։ Զորոյ զաղետաւոր և զողորմագին չարեացն չեմ բաւական ընդ գրով արկանել. զի ի լուանալ յալագին առաւօտուն՝ էր տեսանել տեսութիւն լի խառնվութեամբ, որ և զքարինս անգամ և զանշունչ արարածս բաւական էր յողբս հառաչանաց շարժել. զի ո՞յր ուրուք ի տեսողացն ոչ բեկանէր սիրան, և ոչ զդողի հարկանէր անձն, և ոչ խաւարամած միգաւ մթանայր լուսաւորանք երեսացն. զհրապարակս լի դիակամբք տեսանել, և զատենս և զընդարձակ սրահս և զնրբափողոցս և զցանգս այգեաց։ Եւ գրեթէ ամենայն սահմանք քաղաքին ներկեալ էր արեամբ կոտորելոցն. ուր և

1 H հակառակ ոչ զոյր ոք CF որոյ BCDI պատճառ
2 AC խօշիւն C էառ
3 B աւար HԾ² աւանի h աւարի
4 ABH դարձուցանէս
4—5 DEF յիւրայոցն
5 ABGIS ի փխ և I չիք ի... եղեալ ABCEFI յանապատ
6 G անհոգս
7 ADEFI արեանարբու BC արեանարբոյ B բարոյցն BCHԾ² զօրսն փխ զարսն ch զարսն HS զամենայն
8 ABCDEF անդառն Gh աննեթոյ H ճաննեթոյ HS արարեալ H անչափ
9—10 H առաջնորդ
10 ABCDEFI հատուցին փխ մատուցին
11 BDI յաջողութեան DI պատահեցաւ C աշխարհն
12 ABCDEFI զերկիրս BCI անտեսուչ D անտէրուչ H անտէրունջ I պահապանէ
13 GHS այնորիկ
14 CG մանանաղւոյ
15 B քաղքին
16 ABCDEFGhI չիք և (զոր) ABCDEFGhI չիք ի նմա
17 F զոր
18 FGHS առաւօտուն յալագին h յալագին առաւօտուն
20 ABCdEFI տեսողաց
21 Gh զզողանի H զզողի AEF անձնն
21—22 BC մթանար
22—23 B զատուն
23 D սրահ G զցանկս

զբաղումս դեռ ի հոգիս էր տեսանել, հատեալս ի ձայնէ դժուարապէս շնչելով, և զայլս անողորմաբար չարաչար մկրատեալս. զկիսոցն զփորոտիսն հեղեալ և զլեարդն հանեալ և ի բերանն եդեալ, էր զի կենդանւոյն իսկ ուտել բռնադատէին: Ո՞վ քո, Աստուած, յանժամ ներողութեանդ. ո՞վ մերոյ չարեացս առաւելութեան. զի այս երկքտասանամ է որ զայսպիսի անհանդուրժական կիրս կրեն ազգ քրիստոնէից, և չշիջաւ սրտմտութիւն բարկութեան տեառն. այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է՝ լի բաժակաւ յանապակ գինւոյ արբուցանել՝ արբուցումն չար: Ոչ ևս ի ներումն և յողորմութիւն, այլ ի հատուցումն առնելոց. այսոքիւք պաշարեալ զքաղաքն և որ շուրջ զնովաւ գիւղք և ագարակք. մինչև չըմնալ կենդանւոյ ուրուք ի մարդկանէ, բայց եթէ յամուրս ուրեք: Իսկ անօրինացն լցեալք և յագեցեալք աւարաւն, հուր հարեալ քաղաքին, առեալ զգերի և զկապուտ գաւառին, դարձան անդրէն: Այսոքիկ վշտամբեր պատմութիւնք քո, ո՞վ քաղաք, ոչ ես քաղաք ապաստանի, այլ խորխորատ կորստեան ի քեզ բնակողացն, ի բազմադիմի չարեացն սակաւ ինչ նշանակեալք:

Եւ եկեալ անօրինացն՝ հասեալք ի գաւառն Կարնոյ մերձ ի գիւղն որ կոչի Բլուրս, և քանզի բնակիչք տեղւոյն շրջապատեալ պարսպաւ զբլուրն՝ ի վերայ հողոյ եդին զհիմունս նորա, ըստ տէրունական առակին, վասն որոյ ի գալ անօրինացն զօրէն յորդառանդն հեղեղի, ի բախելն զնա՝ ոչ կարաց վայրկեան մի կալ ընդդէմ, այլ վաղվաղակի կործանեցաւ, և եղև կործանումն նորա աշխարհալուր և անմոռաց մինչև ի կատարած յաւիտենից: Արդ զոր նոքա յոյս փրկանաց և տեղի ապաւինի կարծէին, եղև նոցա գուբ ապականութեան. և քանզի որ յայս կոյս գետոյն Եփրատայ

2 h շնչեալ A զայլս G զի կիսոցն H զկիսոց
2—3 BC զորորոտիսնան փխ զփորոտիսն
3—4 BCDI էր զկենդանւոյն
4 EFGh բռնութեամբ
4—5 G ով քրիստոս աստուած յանձամ քո ներողութիւնդ BDEFH ներողութիւնդ
5 G մերոց ABCEFH առաւելութիւն
6 F կիր G կիրք I ազգք
7 H չիք սրտմտութիւն h սրտմտութիւն A այդ
8 BCI յանապական D յանապակն I արբումն
9 A այդ H այսոքիք
10 ABCEFI քաղաքն AB գեւղք C գեօղք EFGH գեղք
10—11 B չմնալ
11 CGHI թէ
13 G զկողոպուտ փխ զկապուտ
13—14 H կշտամբեր
14 ABCDEFGI պատմութիւն ABCDEFH չիք ով քաղաք h ով քաղաք A այդ
14—15 BC զխորխորատ
15 ABCDFHI բնակողաց EF չիք ի բազմադիմի չարեացն
17 CI հասեալ ABCDEF կարնեայ d կարնոյ ABEF գեւղն C գեօղն D գեղն. d գիւղն
19 C և վերայ
20 DI անօրինաց ABCDEFHI յորձանաղին G բախելն
21 ABCEFH վայրկենի h վայրկեան GH կեալ EF ընդդիմի A այդ
22 CDEFI չիք և A կատարածս (եղծված տեղ)
23 ABCDEF յաւիտենից
24 CI չիք որ G զի որ HS եփրատայ



էին գիւղք և կրօնաստանք, ամենեքեան անդ էին հաւաքեալք. այլև յԱրծինն աւանէ բազումք, յորոց վերայ հասեալ թշնամեացն՝ առժամայն առին զամուրս նորա: Եւ մտեալ ի ներքս՝ ի փայլուն սուսերացն և ի ձայնէ լարից աղեղանցն, զզօղի հարեալ ամենեցուն յիրկիւղէն՝ իբրև շղթայիւք կապեալ եղեն: Եւ քանզի ոչ գոյր իշխան և առաջնորդ, որ ահիւ և խրախուսանօք զնոսա յոգի զօրութեան վառէր ընդդէմ թշնամեացն, նահատակս քաջս յորդորելով՝ որպէս օրէն է ամենայն պատերազմողաց՝ վասն այնորիկ անտերունչք գոլով, ի տեսլենէ միայն լքան, լուծան, և խառնեցան, սասանեցան և ամենայն իմաստութիւն նոցա ընկլաւ: Եւ ըսկսան ի միմեանց զողանալ զանձինս. ոմանք ի գալ գիշերոյն ընդ պարիսպն իջեալ՝ փախստական եղեն, և այլք կամօք անձնատուր եղեալ. իսկ որք ի ներքս մնացեալ, զպատերազմի հոգս թողեալ, խորափիտս փորեալ, ընդ հողով ծածկէին: Յորոց վերայ համարձակեալ անօրինացն՝ սկսան կոտորել զնոսա, ո՛չ պատերազմի օրինակաւ, այլ իբրև զոչխարս արգելեալս ի բակի. զոմանս բուռն հարեալ և բերեալ առաջի, սուսերաւ զգլուխն հատանէին: Կրկին մահուամբ բառնային ի կենաց. շողալով սուսերին ի վերայ՝ որ քան զմահ դառնագոյն է, և մահու վճռաւ. և զոմանս ի դիմի հարեալ սուր ի ձեռին ունելով, և ի պատահելն գազանաբար ի վերայ յարձակեալ՝ հարեալ սուսերաւն զսիրտն, առժամայն սատակէին. իսկ զթանձրամարմինսն և զհարստակողսն յերկիր ի գուճս արարեալ, և պարզեալ զձեռսն ի ցիցս վարեալս՝ ի գետինն պնդէին, և կորզեալ զմորթսն եղնգամբք հանդերձ յայսկոյս և յայնկոյս ընդ բազուկ և ընդ թիկունս մինչև ի ծայրս ձեռինն երկրորդի բռնաբար քարշեալ և հանեալ, լար աղեղանցն առնէին: Ո՜հ. քանի՜ դառն է պատմութիւնս:

Իսկ զերիցանց և զկրօնաւորաց ո՞ր լսելիք տանին զնորանշան չարիսն՝ զոր նոքա կրեցին. զորոց ի կրծիցն ի վեր քերթեալ զմորթս՝ տարեալ երեսօքն հանդերձ զգլխովն շրջէին, և այնպիսի դառն տանջա-

1 ABD գեւղք d գիւղք EF գեղք CGHS գեօղք CDEFGI անդր A այդ և
2 H յաւանէ
3 փայլուն
4 F յերկիւղէ
5 D շխթայիւք
7 FS և նահատակս ABCDI յորդորելով I ամենեցուն
8 G անտերուչ H անտերունչք C տեսլենէն ABCDEFGHS լուան d լուծան HS չիք և h և
9 EFGh չիք սասանեցան ABCDEFHI իմաստութիւնք
11 I չիք եղեն D այոք d այլք C յանձնատուրք
12 FG որ
13 B յորոյ
16 EF շողողով
17 ABCDHI էր ABCFI մահուն B վճառու
19 A հարեկ EFԾ[2] հասեալ փխ յարձակեալ Gh յասեալ I յարձակեալ
20 DI զհարստակողս F հարըստակողն I երկիր GH գունճս
21 I զձեռնն
22 S զմորթն C եղնգամբ S եղնգամբքն
23 BCDI ձեռին E երկրորդին
24 B աղեղանց
25 HIS զերիցանցն GHS զկրօնաւորացն H զնորանշանս
26 BCDI զորոց զկրծիցն EF ի վայր DI զմորթն GHS զմորթս
27 G զգլխով

նօք տանջեալ, յետոյ ապա սպանանէին. որ զի քան զայս զի՞նչ այլ ոք զատն և անհնարին տանջանս իմանայցէ, որ և ի սրբոց վկայութիւնս չերևի ուրեք եղեալ:

Արդ այսպիսօրէն գործով հատին սպառեցին զամենեսեան ի կենաց, մինչև խիլ արկեալ, և զկենդանւոյն թաղեալսն աշտէիւք չարաչար խոցոտելով սատակէին. որ և տանջելոցն վայլիւք հնչէին առհասարակ արձագանք լերանցն: Եւ յորժամ վճարեցին զամենեսեան ի կենաց, ապա զանկելոցն զամենեցուն զկուշտսն ծակեալ և զլեղիսն հանեալ՝ ի յամանս ժողովէին, զերի կանանցն զհետ իւրեանց եառն տանել: Այսպէս եղև վախճան կործանական բանակին. այսպէս մատնեալք եղաք ի ձեռս արանց չարաց և անողորմից. և ո՛չ եղև մեզ այցելութիւն ի տեառնէ, վասն զի ոչ լուաք նմա մինչ ի խաղաղութեան էաք: Նա կոչէր զմեզ աղերսական ձայնիւ ի ձեռն մարգարէիցն. «Եկայք, ասէ՝ լուարո՛ւք ինձ, և կեցցեն ի բարութեան անձինք ձեր, և եթէ ախորժելով լուիջիք ինձ՝ զբարութիւնս երկրի կերիջիք»: Մեք ապախտ արարաք զբանս նորա. վասն այնորիկ և նա ո՛չ լուաւ մեզ ի ժամանակի նեղութեան, այլ դարձոյց զերեսս իւր ի մէնջ: Եւ մատնեալ եղաք ի ձեռս թշնամեաց մերոց, և առեալք մեր նեղեցին զմեզ, և արբեցաւ նետ նոցա յարեանց մերոց, և սուր նոցա եկեր զմիս անկելոց վիրաւորաց՝ արանցն պատերազմողաց մերոց. և գնացին այսու յաղթութեամբ յաշխարհն իւրեանց: Իսկ զթիւ համարոյ անկելոցն և գերեացն՝ եօթն հազար ասացին՝ և կրօնաւորացն՝ վաթսուն:

## ՎԱՍՆ ԱՒԵՐԱՆԱՑ ԵՐԿՐԻՆ ՄԻՋԱԳԵՏԱՑ ԵՒ ՈՐ ԻՆՉ Ի ՆՄԱ ՔԱՂԱՔՔ, ԵՒ ԱՆՁԱՓ ԿՈՏՈՐԱԾԻՆ

Այն զոր յառաջն յիշատակ արարաք՝ թէ յորժամ իջին ի սահմանս Մանանաղւոյ բաժանեցան յերկուս, առաջինն զայս գործեաց զոր գրեցի.

27 Եսայ. Ա. 18—19.

1 H սրբան զի զայս h որ զի քան զայս BCDF ինչ
2 A սրբոցն G իմանայցէս BC վկայութեանս
4 ACEF այսպէսօրէն I այօրէն I ի կենաց զամենեսեան
4 5 C ի խիլ E չիք մինչև... ի կենաց
5 F զկենդանեայն HS թաղեալս
6—7 G արձանք I արձականք
7 GI լերանց
8 C զկուշտն BDI զլեղիս C զլեղիսն BCDI չիք ի BCDI յաման
9 A տանել
9—10 ES վաղճան
11 H չարեաց I եղեալք GH այցելութիւն մեզ BC չիք զի c զի
12 A խաղաղութեանն CDEFHI և նա H չիք զմեզ
13 BC չիք ինձ
14 DI չիք ձեր
16 A այդ
17 CDEFGhI մատնեալք
19 H անկելոցն H վիրաւորացն ABCDFGH արանց
20 DI յաղթութեամբն I յաշխարհ BC համարոց
21 BDI անկելոց ABCDEFIS կրօնաւորս B չիք վաթսուն
23 H աւերանացն B երկիր
24 B այնչափ A կոտորուածին BCDI կոտորուած էին
25 B որ ACDEFGHI յառաջ BDEF յիշատակ արար dI յիշատակեցաք BCEFG սահմանն
26 C երկուս BDI առաջին ABI գրեցիս



իսկ երկրորդն ձիաթափ արագաժէտ ընթացիւք ընդ Հանձէթ և ընդ Խորձեան, ո՛չ խոտորելով յաջ կամ յահեակ, այլ որպէս նետ որ ի ձեռաց աղեղնաւորին ելանէ, ուժգին ձգմամբ երթեալ նպատակին հանդիպի. նոյնպէս և նոքա, ոչ տալով քուն աչաց և նինջ արտևանաց, գիշերադնաց եղեալ, յանկարծակի յեղակարծումն ժամու իբրև զկարկուտ քարախառն հեղան ի վերայ բնակչաց քաղաքին հարաւոյ: Եւ քանզի անպատսպարան վայրս ունէր քաղաքն, վասն այնորիկ ծովային ալեաց նմանեալ բնակչացն՝ ծուփս առեալ յետ յառաջ, բայց ելս իւրացն ո՛չ գտանէին: Աւա՜ղ գործոցն որ յայնժամ անդր գործեցան: Ցորոց վերայ սուր եդեալ անօրինացն՝ կոտորեցին զմայր առ մանկամբ և զորդի առաջի հօր. և առժամայն եղև քաղաքն բարեշէն՝ գուբ արեան: Եւ քանզի ի սաստիկ խուճապէն, և յանկարծահաս օրհասէն մոռացեալ եղև սէր սիրելեաց և գութ արեան, իւրաքանչիւր ոք հնարէր հալածմանս գտանել՝ զի թերևս կարիցէ ապրեցուցանել զինքն ի գեհենաբորբոք բարկութենէն. վասն որոյ փախստական եղեալ ի լայգիսն՝ որ շուրջ զքաղաքաւն էին, յայնս անկեալ ընդ տերևախիտ որթովքն թաքչէին. զոր ծանուցեալ անօրինացն, խոյզ արկեալ, աշտէիւք խոցեալ զամենեսեան սատակեցին. որոց արհամբքն ներկեան ողկոյզք խաղողոյն. որք յետոյ սինլքորք մնացեալ էին, զմեռեալս իւրեանց գտանէին ընդ որթովքն, գնոստ ծածկէին ընդ հողով. բայց զայգիսն խղճէին կթել կամ ի խաղողոյն ճաշակել, ասելով թէ մարդոյ արիւնք են ի յաւեւ: Իսկ անօրինացն պարապեալ ի կոտորածէն, դարձան ի քաղաքն՝ և խիլ արկեալ տանցն՝ եթէ ոք զիւր ընչսն թաքուցեալ էր ուրեք, և կամ ի գարանս, մեծաւ հնարագիտութեամբ արտաքս պեղէին: Եւ ապա հուր հարեալ քաղաքին, կիզեալ ապականեցին, և առեալ զառ և զգերի՝ ելին ի տեղւոջէն: Նոյնպէս և որ շուրջ զնովաւ

1—2 Gh խորձեանն HS խորձանն
2 EF ահեակ A այղ D չիք որ
3 I հանդիպի նմա
4 B քունն I զքուն CDEFI և ոչ ABCDEFHIԾ[3] ներհ փխ նինջ
6 BCDEF հարաւայ h հարաւոյ
8 G և յառաջ H առաջ BCD իւրացն
9 ABCEFI գործոյն B որոց
12 BCDI աւրհասին
15 F քաղաքաւն ABCEFI յայն
16 GH թաղչէին IS անօրինաց
17 BCDI սատակէին
17—18 C արեամբն
18 ABCDEIS ներկան FGh ներկեցան BCDI չիք էին ABCDEFGHIS որք մնացեալ G մնացեալք
19 d և փխ գնոստ
19—20 D չիք ծածկէին... բայց I չիք գնոստ... բայց
20 H զայգիս S խաղողոյ
20—21 dI ասելով թէ արիւնք են մարդոյ ABCDEFH արեան են [A արեւն, EF արիւնք]
21 dGhS չիք ի յաւեւ Ծ[2] ի յաւեւ ABCDHS կոտորուածէն
22 Ծ[1] ընչուցն Ծ[1] ընչուքն
23 S թաքուցեալ G չիք և
24 F արտաք C վառեալ փխ հարեալ

գիւղք և ամանք՝ զամենեսեան ապականեալ սրով և հրով և գերութեամբ, մինչև ոչ մնալ կենդանւոյ ուրուք՝ որ բանայր զերդանն և ծուխ հանէր:

## Ի

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿՈՄԻԱՆՈՍԻ

Կոմիանոս, քանզի առատաձեռն էր և գանձիւք հարուստ, բազում զօրս ժողովեաց իւր: Թագաւորն իբրև ետես եթէ պատեհութիւնքն նմա ի դէպ գան և ելանեն, յաղերս անկեալ՝ սկսաւ դեսպանս առաքել. պարգևս խոստանայր և զԿիւրապաղատին իշխանութիւնն յաւելլու տալ նմա՝ Միայն թէ ի խաղաղութիւն դառնայ, որ քրիստոնէից արեանն խնդիր առնէր. այլ նա ոչ հաւանեաց և ոչ առ յանձն: Ապա ի սպառել դեսպանացն, որ թագաւորին էին մտերիմք ջանային պատերազմի յաղթութեամբ հնազանդեցուցանել զնա:

Եւ հանդէս արարեալ բազում զօրաց՝ եկին ի վերայ նորա, և հասեալք առ միմեանս՝ ճակատեցան ի պատերազմ. ուր բազում արիւնհեղութիւնք եղեն, զորոց ասեն եթէ այնպիսի կոտորած ի մի տեղի ի Հոռոմս չէ ոք տեսեալ. յորում տեղւոջ և բազումք ի գլխաւորացն իսկ անկան, և այս յերկոցունց կողմանցն. բայց յաղթեաց զօրն Կոմիանոսին: Եւ քանզի պատրիարքն ի կողմն Կոմիանոսին էր, զբազումս ի գլխաւորաց քաղաքին միաբանեաց ընդ ինքեան. և տարեալ ի ներքս զԿոմիանոս, թագաւորեցուցին: Եւ զՄիխայլն արեղայ արարեալ, ի կղզի անցուցին. բայց ասեն թէ ինքն յօժարութեամբ չոգաւ: Այս ամենայն յաշխարհաւեր տարւոջ գործեցաւ:

1 AEF գեւղք B և գեւղք CG գեօղք ABCDFGHI ապականեալք
2 EF կենդանւոյն ABCD ուրեք ABDEFHI ծխ
4 GH կոմիանոսին
5 C հարուստք
6 I զօր C իւր թագաւորութեանն C և իբրև FI թէ
7 ABCDEFHIԾ² կան փխ գան H անկանել h հանկեալ H դեսպան
8 ABCDEFI զկիւռապաղատին CDI իշխանութիւն AB յաւելլոյ
9 AF եթէ F արեան
10 A այդ C էառ անձն EFGhI և ապա ABCDEFGI սպառել
14 DGHS արեանհեղութիւնք
15 DI թէ ABCDHS կոտորուած h կոտորած
16 B որում ABCDEFGI գլխաւորաց
17 BCD յայս d այս I երկուցունց B կոմանոսին C կոմիանոսի
18 ABCDEFGHS պատրիարգն ABDGHI կողմ E ի կոմիանոսին կողմն էր HS որ զբազումս
19 GHS ինքեանս G չիք զկոմիանոս
20 A զմիխայիղն DI զմիխայէլն G զմիխայէլ B կղզին
21 H յինքն



## ԻԱ

## ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՄԵԼԻՏԻՆՈՅ ՇԱՀԱՍՏԱՆ ՔԱՂԱՔԻՆ

Գաւազան տանջանաց և ոչ խրատու՝ առ ի ձեռն Աստուած զԹուրքաստան և զառանն Պարսից, և նոքօք դատեաց զմեզ ըստ իրաւի իւրոց դատաստանացն. զի խրատու գաւազանն՝ հայրական է, իսկ տանջանացն՝ դատաւորի, որպէս Դաւիթ զտանջանս մեղաւորաց ասէ. «Բազում տանջանք են մեղաւորաց. և խրատք քո ուսուցէ զիս». սմին համաձայն և Պօղոս Եբրայեցւոցն գրէ. «Զի թէ ի խրատու կարգի կայք, ասէ, իբրև յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած»*:

Արդ Քրիստոս ի կենարար իւրում ուխտադրութեանն. իւրում երկնաւոր հօրն տարեալ՝ մերձ կացոյց զմեզ նմա յընտանութիւն՝ և պատուիրեաց ամենայնիւ նմա նմանող լինել, և բարոյիցն քաղցրութեամբ զազգականութիւն պահել հաստատուն, բայց մեք ապստամբեցաք ի մեր քաղցր և ի բարի հօրէն, և յընտանութենէն օտարացաք. վասն այնորիկ ի ժամանակի նեղութեան և չարչարանաց մերոց՝ անտես արար զմեզ, և մատնեալք եղաք ի ձեռն ազգի օտարի. և զօրացան ի վերայ մեր թշնամիք մեր, և առելիք մեր լափշտակեցին զմեզ. և խոնարհ եղեն մինչև ի հող անձինք մեր, և յերկիր մածեան որովայնք մեր: Եւ որպէս առ Մովսեսիւ տասն հարուածեալ գաւազանաւն տանջեալ զԵգիպտոս ասէր Աստուած, թէ «Այս է զօրութիւն իմ մեծ»**. այժմ ամենայն մեզ հանդիպեցաւ: Նոցա ջուրն յարիւն փոխեցաւ, մեր գետք և ջրաշեղջք և գրեթէ բովանդակ հող երկրիս՝ յարիւնն ներկաւ յարեանց մերոց. ի նոցա մարմինն խաղաւարտ եռաց, մերս բովանդակ մարմին որակտոր եղեալ՝

* Սաղ. ԼԱ. 10 և ժէ. 36 ** Եբրա. ԺԲ. 7

2 AEF մելտենւոյ BC մելտին H մելգենոյ DGIS մելտինոյ EFHS քաղաքի [բնագրի Մելիտինոյ ձևը՝ ըստ հաջորդ ընթերցումների]
3 B տանջաց
4 F զառւն HԾ¹ պարսից և սկիւթացւոց AB նոքօք ABCEFI զատեցաւ h զատէ C մեզ
5 G դատաստանաց
6 ABCDEFI ի դատաւորի
6—7 C զտանջանսն G զտանջանաց
7 ABDEF են ասէ C մեղաւորաց ասէ ABCDEFI քո ասէ
8 ABDEF հեբրայեցւոցն H յեբրայեցւոցն I հեբրայեցւոց H խրատոյ
10 ABCEF յիւրում dI չիք իւրում DGI ուխտադրութեան C յիւրում
11 BI տուեալ փխ տարեալ
12—13 ADFG զազգականութիւնն
13 ABD ապստամբեցաք
14 G և ի քաղցր բարի հօրէն
15 F արարեր
17 F յառելիք DGhS ապականեցին փխ լափշտակեցին Ծ³ լափշտակեցին
18 BCDGIS մածան
19 I վաղիւ փխ մովսեսիւ H հարուածոյ h հարուածեալ AB զեգուպտոս
20 I էր
21 A յարեւն CI և մեր
22 ABD բովընդակ A յարեւն C յարին BC ներկեաւ D իսկ փխ նոցա d նոցա
22—23 S մարմինս
23 ABDEFGHI խաւարտ h խաղաւարտ I մեր AD բովընդակ Ծ¹ զորս փխ եռաց

անդամ անդամ յօշեցաւ. ի նոսա շանաճանճ և մժեխն՝ որ զտիրական դէմս երեսացն շիթոցօքն հարեալ կուրացուցանէր. իսկ ի մեզ նետիցն յարձակմունքն, որ ես դառնագոյն վիրաւորեցին. նոցա զերիս աւուրս լոյսն ի խաւար փոխեցաւ, իսկ մեզ շիջաւ իսկ լոյսն, զի լուսոյն իսկ ընդունարանն անկեալ մահուամբ, և ոչ ես յաւելու տեսանել զբարութիւն տեառն ի կեանս իւր. ի նոցա աւուրս դժուարահալեաց ժխժմակն սողեալ մտանէր, մերս տունք և եկեղեցիք, որ սարսափումն գայ ինձ ասել, ապականագործ ախտիւք այլև դժուարաւ՝ հոտեալ ապականեցան. ի նոցա անդրանիկսն զընդալ մահաբեր հրեշտակն, մերս բովանդակ տունն բնակչօքն սպառեալ սատակեցաւ: Ծովն միայն էր ի մէնջ պակաս. բայց թէ կշռես ըստ գործոյն, և զայն ես տեսանեմ ի մեզ եղեալ. քանզի ո՞ր անդունդք անհնարինք քան զԹուրքաստան կամ զեզերս երկրի խորագոյն է, յորս մեր գերիքն հեռացեալ կորեան իբր ի Կարմիր ծովուն, որ արեամբ նոցին գերեացն ներկեալ էր: Ի նոցանէ զարդ ոսկւոյ և հանդերձից խնդրեցին Իսրայէլացիքն ի վարձ՝ ընդ որոց ծառայեցին նոցա. բայց մեզ ի բնաւից կապուտ կողոպուտ արարին, և մեք նոցա չեմք ինչ մեղուցեալ: Ոհ, աւա՜ղ և վա՜յ ի վերայ անմխիթար կործանմանս: Եգիպտացւոցն երկփիմի էր պատուհասիցն իրաւունքն. մի՝ վասն դառն ծառայութեան, որով նոքա զԻսրայէլ նեղեցին, որոց ի դատ եկեալ Աստուած աւէր. և երկրորդ՝ զի ծառայեցին արարածոց, և ոչ արարչին որ է օրհնեալ յաւիտեանս. մեք խոստովանող լեզու ունիմք, թէպէտ ի բարի գործոց թափուր եմք, և զնոցա կիրս կրեմք, քանիօ՞ն ողորմելի եմք և ողբոց արժանի: Ո՞վ տէր և արարիչ և Աստուած, ընդէ՞ր մերժեցեր զմեզ ի սպառ, և արարեր զմեզ կոխան հեթանոսաց, ծաղր և այպն կատականաց թշնամեաց մերոց: Զարթիր և զարթո՛ զզօրութիւնս քո, և եկ ի

1 C յուշեցաւ ABCDEF մժխն
2 C շիթոցօք
3 I յարձակմունք
5 EF չիք և
7 C որս ի C ասելն
8 ABCDEI այպանեցան
9 ABD բաւընդակ F բաւանդակ
9—10 HS բնակչօք
10 BCDGHI սատակեցան CS պակաս ի մէնջ
11 ABCEHI եղեալ ի մեզ h ի մեզ եղեալ
12 HԾ[1] զպարսկաստան քան BC թուրքաստանք
13 BC կորեալ կորեան S իբրև
15 C որ
16 S բնաւից B մենք ABCDEF չենք d չեմք
17—18 AB եգւպտացւոցն
18 GI իրաւունք
18—19 BDHS ծառայութեան d ծառայութեանն
19 ACD զիսրայէղ
20 AEI երկու B արարածւոց
21—22 BC ունիմք զնոցա թէպէտ ի բարի գործոցն թափուր եմք [C գործոց]
22 D թափօր d թափուր BCD չիք և զնոցա կիրս կրեմք H քանզի անողորմելի h
քանիօն ողորմելի G չիք և
24 I մեզ B այպն



կեցուցանել զմեզ, Աստուած զօրութեանց դարձիր առ մեզ և հատո զրացեաց մերոց եօթնպատիկ ի ծոց նոցա:

Արդ այլ քաղաքաց և գաւառաց աւերմանց ժամանակն ի պակաս աւուրս յանգէր, ի տասն կամ ես աւելի կամ պակաս. իսկ քաղաքս այս՝ զորմէ մեր դնաս արկեալ է, սա մինչդեռ ի շինութեանն էր՝ երինջ երեմեան գոլով յատուկ ուժի քաջութեան, ըստ Մովսէսի, գիրգ և փափուկ գոլով. որոյ վաճառականքն փառաւորք երկրի, և ադնօղք սորա՝ թագաւորք ազգաց, որք ի գահոյս փղոսկրեայս հանգչէին, և միշտ զպարզեալ գինին ըմպէին և առաջին իւղովքն օծանէին: Եւ քանզի ամենայն չարեաց սկիզբն աստի առնու, որպէս և Մովսէս զԻսրայէլէ ամբաստան լինի, «Գիրացաւ, ասէ, ստուարացաւ և սոնքացաւ, եթող զսէր Աստուած զարարիչն իւր»*. նաև Սոդոմայեցիքն յղփալի կենաց խանձեալք՝ անկան յանհնարին չարիսն, որպէս Եզեկիէլ իսկ յայտ առնէ ի հացի լիութենէ և ի յղփութենէ կենաց՝ զմայլեալս զնոսա. նաև առաջին մարդն ի դրախտին բարիսն մին օր անարատ չկարաց վայելել: Եւ զի այսքիկ են բնութեանս մերոյ սահման, յաղքատանալն տրտնջեմք և մեղադիր լինիմք Աստուծոյ, և ի հարստանալն՝ ամբարտաւանիմք, և իբրև զանմահս՝ զաշխարհէս բուռն հարկանեմք: Վասն այնորիկ փոխ առ փոխ փոփոխմամբն ուսուցանէ զմեզ ի չափու ունել զանձինս, և քան զմեր սահմանն աւելի չամբառնալ, զի մի՛ մեծագոյնս անկանիցիմք: Քան զհող անարգ և խոնարհ այլ զի՞նչ ոք իմասցի. և մեր սկիզբն ի նմանէ է, և դարձն անդրէն ի նոյն. և որ բնութեանս մերոյ ստեղծիչն է, չկամի թէ ոք կորիցէ, վասն այնորիկ չթողու արձակասուն զոք. որքան և տեղի լինի խրատու՝ քաղցրութեամբ և հայրաբար խրատէ. և յորժամ անլսելի խրատուն լինիցիմք, տիրական իշխանութեամբն տանջէ. զկէսս ի մեղաւորաց աստ զա-

* Բ. Օրէնք ԼԲ. 15

1 S չիք աստուած զօրութեանց դարձիր առ մեզ
2 BDF եւթնպատիկ
3 A այդ
4 DI զբաղաքս
5 E իշխանութեանն փխ ի շինութեանն B շինութիւն CDFGI շինութեան
6 B երեմեան
7 DHS որով GHS օգնօղք փխ ադնօղք
9 B չիք և... օծանէին S անոյշ փխ առաջին Ծ[3] առաջին ACEFG իւղովք HS իւղով
10 ACD զիսրայէղէ I որպէս և վասն երուսաղէմի ամբաստան BC չիք և
12 ABC սոդոմայեցիքն D սովովհայեցիքն E սոդօմայեցիքն CDFHIS յղփալի
13 A եզեկիէղ D լիութենէ
14 GDFI յղփութենէ C առաջին
15 C չկարեաց EF պահել փխ վայելել DI են այսորիկ G այսորիկ կամ այսքան են
H այսքան h այսորիկ
16 E սահմանն AB յաղքատալն
17 I ամբարտաւանեմք F չիք և F զանմահ
18 B փոխմամբն S փոփոխմամբ
20 ABCDEI չհամբառնալ F անկանիցիմք
21 AE սկիզբնն BC սկիզբանն
22 BCD չիք է E ոչ կամի
23 H զոք արձակասուն
25 DI իշխանութեամբ GHS զկէսս

տի, զի անդ թեթեւագոյն առնիցէ զտանջանսն. և զկէսս հանդերձելոցն պահէ, և են որ աստ տանջին և անդ, որպէս Սոդոմայեցիքն. և են՝ որ աստ միայն, որպէս Ղազարոսն. և են՝ որ անդ միայն, որպէս մեծատունն: Այլ այս աստանօր զկայ առցէ բանս. մեք ի կարգ պատմութեանս դարձցուք:

